Յակոբայ Շահամիրեանց

ԳԻՐՔ ԱՆՈՒԱՆԵԱԼ ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ

Վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան:

Շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց՝ Նոր Ջուղայեցւոյ առ 'ի օգուտ յազգին Հայոց:

'Ի Հայրապետութեան Տեառն Սրբազան Սիմէօնի ամենայն Հայոց կաթուղիկոսի, 'ի Վաղարշապատ:

'Ի թագաւորութեանն Յոգոստափայլ Տեառն Երկրորդի Հէրակլիոսի 'ի Թիպղիս:

Յամի Տեառն Փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Եվ 'ի թուին թուականութեան Հայոց 1222:

'Ի Հնդիկս եւ 'ի Մայրա'քաղաքն Մադրաս:

'Ի տպարանի նոյն Յակոբայ Շահամիրեանց:

Սխալանք բոլոր գրքիս տառի եւ բառի ընթերցողդ 'ի ձայնէ բառից ճանաչիր 'ի պատճառն անծանօթութեան արհեստին Շարադրօղիս զի ոչ գիտաց զանազանութիւն տառից այսինքն դ թ ծ հ ձ յ վ տ ց ւ սոքայ գտնիս մինն 'ի տեղի միւսի դու ինքդ 'ի միտս քո փոխարկէ, որն որ արժան է:

ՆԱԽ ԵՐԳԱՆՔ ԱՌ ՊԱՏՈՒԵԼ'Ի ԸՆԹԵՐՑՕՂԴ.

Ճարտարաբանութեամբ Գովաբանօղն Աստուծոյ Մարգարէն Դաւիթ՝ ասէ ընկալ գծառայս քոյ 'ի բարի զի մի' ամբարտաւանք զզուեսցեն զիս. այսպէս, յոյս իմ առ Տէր՝ եւ ակն իմ առ ամենայն բարեպաշտ ընթերցողք Օգնական իմոյս տկարութեան լինելով՝ հասանիլ 'ի թիկունս բարեմիտ յ'որսողիս, պահելով զլարն յ'որոգայթին պընտապէս, զի մի' անկարգ անձինք 'ի գայթագղութենէ կալանաւորութեանց իւրեանց զզուեսցեն զիս:

Եւ ես կատարելապէս սիրօղս Յազգին իմոյ եւ յ'աշխարհին Հայոց, խոնարհաբար Գրքաւս ընծայեմ ձեզ զմիրգն անուանեալն խնձոր զունով կարմիր, տեսլեամբ գեղեցիկ, հոտով անոշ, եւ թոշակաւ քաղցր ընդ ճաշակս ամենայն բարեպաշտ անձանց եւ բնութեամբ առողջարար յ'ազգին Հայոց. որ տայ տեղի եւ յորդորէ ամենեցուն սիրով ընդունիլ զինքն, նոցայ որք բնականապէս առողջ անդամօք. եւ յստակ խառնուածօք ունին կեանս յանձին իւրեանց: Եվ կալանաւոր առնէ այնոցիկ որք 'ի պատճառէ եռացեալ մաղձին 'ի ջերմութենէն արեանն 'ի ցնորից փոփոխական կարծեաց սրտից, եւ 'ի սառնութենէ բալղամին ծուլացելոց կան 'ի գործս անկարգութեան մաքրելով տացէ նոցայ կեանս առողջարարս, առ 'ի Օգուտ հոգւոյ եւ մարմնոյ, զսպելով վարքս անձին իւրոյ, յուսալով զի տացէ կեանս յաւիտենականս: Ո'չ 'ի կամաց եւ 'ի մտաց եւ 'ի այգոյ պտղէ իմմէ եթէ ոչ 'ի ընդհանրական եւ արդարապէս կառաւարութեանցն բարեպաշտ Թագաւորաց Քրիստոնէից 'ի վաղնջուց ժամանակէ երկայնամտութեամբ տնկեցեալ այգոց իրաւանց եւ արդարութեանց ծառի պտղաբերութենէ:

Ուրեմն, ճաշակեցէ'ք եւ տեսէք. զի եթէ քաղցր է եւ առողջարար, սիրով ըստացէք զբարեգոյն ընծայն իմ. եւ արարէք սովորութիւն՝ ձեզ լսել, տեսանել, ճաշակել, եւ ապա' վկայել հաստատելոյ, 'ի այսմ մտածութեան, զի դնելով ուխտս ձեր կալով մնասցուք կատարող ըստ բանին Տեառն՝ որպէս ասաց եղիցի ձեր այոն այո' եւ ո'չն ո'չ. այլ եթէ 'ի պատճառէ մեղաց եւ 'ի տարաբախտութենէ ժամանակին, եւ կամ 'ի ռամկութենէ ուսմանց, գեղեցիկ ընծայն իմ տգեղ երեւեսցի 'ի ակն ձեր եւ խօսք իմ ծանր 'ի ունկս ձեր, ուրեմն Ես պաղատեմ առ նախահայր մեր, եւ սիրելին յԱստուծոյ Նոյի որդոց նորա յատկապէս ջոչ Պապին իմոյ Յաբեթայ, եւ Հայկա' եւ 'ի սերնդոց նոցա Արամայ, Տիգրանայ, եւ առաջին հաւատացեալն փրկչին մերոյ Ապկար Արշամայ եւ այլն, զի նոքայ որպէս ժառանգորդ գոլով յաշխարհին Արարատեան, նոքա բարեխօս լինիցին առ տէր եւ Արարիչն մեր զի տացէ Շնորհ հոգւոյ մերոյ եւ դարձուցէ ինքնակամ սիրտս ձեր առ 'ի կամս խորհրդիւ եւ հաճեցուսցէ սիրտ ձեր առ ամենայն իրաւունս եւ արդարութիւն:

Եւ որպէս ո՛չ ոք ’ի բնութենէ մարդոյ կարէ խաբել զԱստուած, եւ ոչ սուրբս նորայ, այսպէս Ես ոչ յիշխեմ խոստանալ ինչ եւ խնդրել ’ի տեառնէ տրիտուր վասն ապա՛ գործելոյ մեզ բարիս բայց ’ի ձկտմանէ մտաց բանական հոգւոյ ասեմ, զի մեզ այս աննշմարելի փոփոխական բնութեանս հարկաւոր է որոգայթ մի անբեկանելի կազմեալ իրաւամբ եւ արդարութեամբ, զի կալով մնասցէ ընդ մէջ մեր պատրաստ վասն կալանաւոր առնելոյ նոցայ որ ’ի որ ոք պատճառէ որ իցէ՛, եթէ կամիցին ուխտազանց լինելով գործել զչարիս իսկոյն ըմբռնեսցի անձն ամենայն ըզգայարանօք նորա պահելով անշարժ, զի ձեռ չարագործին մի՛ գտցի Շարժում գործելոյ չարութիւն մինչեւ հատուցանելով վարձ գործոց չարութեան իւրոյ, եւ բժշկեսցի ’ի տկարութենէ չարեաց իւրոց, եւ ապա՛ գտցի արձակումն, եւ կալանաւորութիւնս լինիցի դարման նշաւակութեան ապագայ տկարացելոց մերոց, վասն որոյ հաւատալով ’ի այս բնական պատճառ որ կարէ պահել մեզ հաստատուն ’ի վերայ որ ոք բարեպէս ուխտաղրութեանց մերոց, ուրեմն տայ տեղի զիս զի յոյս առ Արարիչն իմ պահելով խոստանամք զի կալով մնասցուք հաստատուն ’ի վերայ Օրինաց արդարութեան մերոյ, եւ ’ի վերայ յայսմ հաւատոյս, աղաչեմ զձեզ ամենայն սուրբք յԱստուծոյ մի՛ երկմտիք ’ի վերայ Օրինօք եւ արդարութեամբ վարելոյ զկեանս մեր, այլ անխտրանօք բարեխօս լերուք առ Տեր Աստուածն մեր զի ներեսցէ մեղս յանցանաց իշխանաց, եւ ժողովրդոց, նախնեաց եւ մերոց, եւ աղաչեցէք զի յեղիցէ ’ի վերայ հոգեւոր յազգին Հայոց Շնորհ եւ իմաստութիւն իւր սուրբ, զի կարող լինիցուք կալ եւ մնալ հաստատուն ’ի վերայ իրաւանց եւ արդարութեանց Օրինաց մերոց, եւ ազատապէս Պաշտեսցուք ամենայն սուրբ անուն նորայ, եւ բարեպէս կառավարեսցուք յազգ եւ աշխարհս մեր, զի սովաւ դադարեսցի ձայնք զրկելոց, կողոպտելոց, գերելոց, եւ թշուառացելոց ’ի յականջէ Արարչէ մերմէ, եւ անդրադարձն ելցէ ձայն Օրհնութեան, գոհութեան, փառաբանութեան եւ հոտ անոշից խնկարկութեան, ’ի աշխարհէ եւ յազգէ մերմէ առ Աթոռ Արարչին մերոյ առ ’ի պարծանս բարեխօսչաց սրբոց մերոց եւ խաղաղութիւն յաշխարհին մերոյ եւ բարեպէս կեանս հոգոյ եւ մարմնոյ մերոյ աստ եւ ’ի հանդերձելումն ամէն:

Եղեւ Մաղրասումն Օգոստոսի ամսոյ 15:

Յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Ձերոց փոքրիկ սպասաւոր

Յակոբ Որդւոյ Շահամրի,

Շահամիրեանց:

Ես ստորագրողս որ եմ մի ’ի փոքրկանց Հայոց եւ խոնարհ սպասաւորն ձեր նախ խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ մարդկան, որ ո՛չ ունիմ ցանկութիւն ըստ անձի, ո՛չ իշխանութեան, եւ ո՛չ հարստութեան եւ փառաց, բայց միայն կատարեալ սիրով կապակցել կամ ընդ սերիական ազգն իմ եւ աշխարհն մեր, այլ տարբերութիւնն ժամանակին զիս ձքեաց ’ի տարր աշխարհ որում գտի զիս ’ի ներքոյ կարաւարութեան այլ ազգաց Քրիստոնէից ազատաց, նայելով եւ ընթեռնլով արժանաւորութիւնն բազում երկրից մէջ աշխարհիս, եւ զանազան ազգաց ըստ իւրաքանչիւր ’ի վերայ ազգին եւ ’ի մէջ աշխարհին իւրեանց համեմատելով իմ աշխարհ ընդ աշխարհի, մարդ ընդ մարդոյ, հօդ ընդ հօդոյ, բոյս ընդ բուսոյ, բարեգոյն քաղցրագոյն, եւ Պատուականագոյն գտա երկիրն Արարատեան քանթէ բոլոր երկիրք ’ի ներքոյ արեգական, որում կարի ասել երկիրն Արարատեան ընդ բարձրաբերձ լերամբ Մասիսաւ թագաւոր արար Տէր ’ի վերայ ամենայն երկրի եւ ’ի վերայ ամենայն լերանց, զի որպէս Դրախտն եդեմայ նախամայր եղեւ բնակութեան նախահօրն մերոյ Ադամայ, այսպէս Արարատն Մասիսեաւ երկրորդ մայր եղեւ բնակութիւն երկրորդ հօրն մերոյ Նոյի:

Ուրեմն մի՛ լիցի առանց պատճառ զի Տէր եւ Արարիչն ամենայն բարձրաբերձ լերանց հաճեցաւ իջուցանել միայնակ արդարն եւ սիրելի այր նախահայր մեր Նոյ ’ի վերայ լերանն Մասիսու եւ զօրհնութիւն իւր ’ի վերայ տանն Նախիջեւանու եւ երկրին Արարատու:

Մի՛ լիցի առանց պատճառ առաջին արիութիւնն եւ ընդ դէմ անձնահաճոյ ինքնակալութեան քաջութիւնն որում սկսեաց Նախնին մեր քաջազանգուր եւ հաստաբազուկ հզօրն զօրութեամբ Հայկ, որ ’ի բարձրութենէ գոռոզութեան, եւ ’ի զարշելի հպարտութենէ խոնարհեցոյց եւ երկիր թաւալեցոյց հպարտացեալն Բէլ ’ի յերեսս յերկրին յաշխարհին մերոց Տուրուբերան ’ի ոտն Սիմ լեռան անուանեալն Հայոց Ձոր ’ի տեղի որում անուանեցաւ գերեզման:

Մի' լիցի առանց պատճառ զի առանց քարոզ բանից վարդապետաց, եւ առանց մարգարէից ասածութեանց եւ առանց տեսանելոյ հրաշից, եւ առանց ոչինչ նշոյլ ծանօթութեան հաւատաց մարդեղութիւն բանին Քրիստոսի, Յիսուս Նազովրացի որդի Աստուծոյ կենդանւոյ, այսինքն Ապկարոս Արշամայ թագաւորն Հայոց 'ի վերայ երկրին Արարատեան:

Մի' լիցի առանց պատճառաւ զի միմիայն միայնակ անճառելի հրաշքն որ եղեւ 'ի վերայ երկրին Արարատեան զի սուրբն Գրիգորիոս Բալհաւունին որում հայրն նորա Անակ այնքան սիրեաց աշխարհ մինչ 'ի վերախոստման պարգեւի միոյ սնոտոյ Արտաշրի թագաւորին Պարսից դաւաճան եղեւ ընդ դէմ ազգականի իւրոյ մինչեւ սպան Խոսրով թագաւորն Հայոց, զի գտցէ փառս 'ի թագաւորէն Պարսից, այլ բարեգոյն որդին սորա ընդ դէմ ցանկութեան հօր գարշելի համարելով ամենայն փառս աշխարհի՝ եմոյծ զինքն 'ի մէջ բուրաստանին անոշահոտ խոնարհութեան եւ յանձն էառ չարչարանս այնքան տուժելի, որում սա' միայն գտաւ 'ի վերայ երկրի եւ 'ի ներքոյ արեգական հնգետասան ամաւ չարչարանօք կալով մնալով կենդանի ընդդէմ բնութեան հարուածոց, մինչ գտաւ Շնորհս 'ի Տեառնէ՝ զի մկրտեաց նոր ընծայն Քրիստոսի Տրդատէս թագաւորն Հայոց ազնիւք իշխանօք եւ անհամար ժողովրդովք հանդերձ 'ի Եփրատ գետն, որում ոռոգանի Արարատէն առ Ովկիանոս:

Մի' լիցի զարմանք փոքր, զի միջոցաւ իբր ամաւ չորս հարիւրով մինչեւ ցայսօր որ բարցաւ թագաւորութիւն 'ի տանէն եւ 'ի յազգէն Հայոց, եւ լծորդեցաւ ծառայութիւն 'ի ձեռն անօրինաց գերելով ուստերք եւ Դստերք, կողոպտելով զարդ եւ ամենայն ստացուածքս մեր, ճշտելով 'ի ներքոյ ծանտր հարկի հասուցանելով մեզ մինչեւ յետին թշուառութիւն, այլ գովելի ազգս այս ամենայն եղելութիւն ընդ դէմ բնութեան յանձն առնլով 'ի վերայ իւր պահելով կատարելապէս հաւատն իւր առ Տէր Աստուած: Դաւանելով ամենայն խորհուրդ սուրբ Եկեղեցւոյ, որում աւանդեցաւ 'ի Փրկչէն մերմէ Քրիստոսէ, որպէս Շառաւիղէ 'ի վերայ մեր սուրբ Եկեղեցին Հայաստանեաց 'ի Արարատ մինչեւ ցայսօր, որում յուսամ 'ի Տեր, զի պահեսցէ զմեզ նոյն կատարեալ սիրով եւ հաւատով մինչեւ յաւիտեան:

Այլ ըստ սովորութեան ամենայն կարգաւ ազգի եւ ըստ վկայութեան սուրբ գրոց, որում հաւատացեալ եմք զի հաստատի երկու եւ երիս վկայիւք ամենայն բան, ահա' առաջի պատուելի ընթերցողաց կացուցանեմ 'ի վեր յիշեցեալ հինգ զօրեղազոյն եւ հաւաստի վկայքն՝ որում հաստատել կարէ 'ի միտս ձեր յատկապէս Շնորհ, սէր եւ ողորմութիւնն ամենազօր Արարչին մերոյ 'ի վերայ երկրին Արարատու, որում ո'չ ոք 'ի մի' վկայիցս այսոքիկ ո'չ երբէք եղեւ 'ի վերայ բոլոր աշխարհի եւ 'ի ներքոյ արեգական. այսու վկայութեամբ կարէ ամենայն ոք հաւատալ. զի երկիրն Արարատեան եւ բնակողք 'ի նմա սեպհական ժառանգորդիւք Պաշտօղք ամենասուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեան ունին յատկապէս պահպանիչ, փրկիչ՝ փարատիչ իւրեանց, եւ ըստ ասացելոյ բանին Տեառն, որում տուն ինքն շինէ մի' լիցի նանիր վաստակ Շինօղաց:

Նա'եւս դառնամ պատմել ձեզ յատկապէս պատուականութիւնն եւ բարեհոգութիւնն ազգին Հայոց, նախ ըստ բնական բնութեան մարդոյ սիրելի է ամենեցուն ազգն Յաբեթեան, զի մանուկ էր եւ ցանկալի՝ այսինքն կրտսեր 'ի մէջ նախահարցն Սեթայ եւ Քամայ: Եթէ երէց եւս իցէ պատուելի է' վասն ժառանգորդութեան ինքն Յաբեթ սերնդաւ իւրով Թորգոմաւ, Հայկաւ, Տիգրանաւ եւ Արմէնաւ եւ այլն: Գովաբանելով ասեմ բարեբարոյ ազգս այս զի ունին 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր սովորութիւն հիւրընկալութեան այնքան զօրեղազոյն, որում հաւանեցուցանէ զիս հաւատալ, զի այս Շնորհս եւս յատկապէս աւանդեցաւ 'ի Տեառնէ արարչէն մերմէ 'ի մէջ բնութեան միմիայն Հայոց, զի ծանիցէ աշխարհ յատկապէս որդէգրութիւնն սոցայ ըստ ասացելոյն բանին Տեառն այսինքն՝ եկեալն առ իս ո'չ հանից գնա արտաքս:

Այս պատուական Պատանին Յաբեթ որդւոյ Նոյի Նախնին մեր սերնդօք իւրովք թագաւորեաց 'ի վերայ տան եւ 'ի վերայ սեպհական ժառանգութեանն իւրոյ Արարատեան եւ 'ի վերայ ժողովրդեան Հայոց աւելի քանթէ երկու հազար ամս, մինչեւ 'ի ժամանակս թագաւորութեան Վահէսի որդւոյ Վահանայ, այլ որպէս սովորութենէ բնութեանս մարդոյ ազատապէս ընթանալ առ 'ի միտս իւր ըստ կամաց եւ ըստ հաճոյից իւրոց, այժմոյս պակասիլն սորայ 'ի թագաւորութենէ, որում պակասութիւնն որ հաճեսցի 'ի միտս ձեր մտածելոյ 'ի վերայ սորայ կամք ձեր լիցի, կատարումն բանին այս եղեւ զի Վահէս այս ընդիմանալով Աղէքսանդր Մակեդոնացւոյ՝ մեռանի 'ի նմանէ. յայնմ ժամանակի դադարի

թագաւորութիւն 'ի ցեղէն Յաբեթեան եւ Հայկա' Արամեա' որ եղեւ ժամանակն իբր երկու հազար ամս, եւ մտանէ առ մեզ Վաղարշակ եղբայր Արշակայ Պահլաւունին խոստանալով հովուել մեզ հայրական գթովք, միեւնոյն որպէս 'ի վեր ասացի բնութիւնն եւ բարութիւնն Հայոց հարկեցան ըստ բնութեան հիւրընկալութեան իւրեանց սիրով ընդունեցին Վաղարշակայ, որ թագաւորեաց սերնդովք իւրովք 'ի վերայ տանն Հայոց՝ աւելի կամ պակաս հինգ հարիւր ամս, մինչեւ ժամանակս թագաւորութեան երրորդ Արտաշէսի. այնու յետ դադարի թագաւորութիւնն Հայոց 'ի ցեղէն Արշակունեաց, եւ ապա' եմուտ ընդ մեզ Աշոտ որդին Սմբատայ Բակրատօնին միեւնոյն հիւրընկալութեամբ սիրով ընդունեցին Հայք Աշոտայ Բակրատոնին, որ թագաւորեաց սերնդոք իւրովք 'ի վերայ Հայոց աւելի կամ պակաս ամս երեք հարիւր եւ յիսուն, մինչեւ 'ի ժամանակի թագաւորութեանն Գագիկ երկրորդի. այնու յետ դադարի թագաւորութիւնն Հայոց 'ի ցեղէն Բակրատոնեաց, 'ի տանէն Արարատեան, այլ ո'չ այնպես անծանօթ լինի 'ի մէնջ այժմոյս, որպէս ցեղէն եւ կամ սերնդէն Յաբեթեան կամ Վաղարշակեան, քանզի 'ի ցեղէն Բակրատոնեաց Շառաւիղէ մինչեւ ցայժմ թագաւորութեամբ 'ի վերայ տանն վրաց, որում Տեր հաստատուն պահեսցէ, յետ այնորիկ զօրանայ քաջ իշխանն Հայոց Ռուբէն 'ի նոյն ցեղէն Բակրատոնեանց որում տիրէ յաշխարհս մեր եւ սերնդոք իւրովք թագաւորէ 'ի վերայ տանն Հայոց աւելի կամ պակաս ամս երկու հարիւր եւ քսան՝ մինչեւ 'ի ժամանակն թագաւորութեան Լէւօն վեցերորդի 'ի վերայ աշխարհին Կիլիկեացւոց, որ այնու յետ այսինքն թիւն փրկչին 1381. դադարի թագաւորութիւնն 'ի տանէն Հայոց մինչեւ ցայսօր:

Նա'եւս գիտելի ձեզ լինիցի որ 'ի սերնդոց Յաբեթէն՝ նախահօրն մերոյ առաջին թագաւոր տանն Արարատեան 'ի վերայ Հայոց, Հայկա' որդւոյ Թորգոմայ, որդւոյ Թերասայ, որդւոյ Գամէրայ, որդւոյ Յաբեթայ, որդւոյ Նոյի Նախիջանօղն 'ի Տապանէն 'ի յերեսս յերկրի Արարատու մինչեւ վերջին թագաւոր Լէվոն վեցերորդի հանդերձ մարզպանօք համարեցան իբրեւ մի հարիւր քսան եւ չորս անձինք, թէ 'ի ցեղէն Հայկա', թէ 'ի Վաղարշակայ, թէ 'ի Բակրատեայ, թէ 'ի Ռօբէնեանց եւ այլ զանազան ազգից մարզպանաց, նա'եւս այս միջոցաւս երեւեցաւ 'ի մէջ աշխարհին մերոյ հաւատարիմք յաղթօղք իշխանք Հայոց նշանաւորք անձինք բազումք, որպէս Գինունիք, Արծրունիք, Մամկոնացիք, Յօրբէլեանք եւ այլք բազումք, որում յատկութիւնն պատմէ ձեզ Մովսէս Խորենացի անկեղծ պատմիչն, այլ ամենեքեան սոքայ ջանալով ընթացան 'ի գործս իշխանութեան 'ի վերայ տանն Հայոց, այնքան որում գիտութիւն եւ կարողութիւնն իւրեանց կարէր խոստանալ նոցայ, որ այժմոյս կարօղ եմք խոստովանիլ, զի բազումք 'ի նոցանէ ունին երախտիք եւ արդիւնք 'ի վերայ տանն Հայոց, 'ի պատճառս բարեգործութեանց իւրեանց, եւ բազումք 'ի պատճառն խելագարութեան իւրեանց թուլացան եւ անկան եւ եղեն պատճառ բազում վնասու 'ի վերայ տանն Հայոց:

Այլ արդ՝ ելցուք մեք եւ մտցուք 'ի հարկս սիրոյ եւ խաղաղութեան՝ ո'չ 'ի կամաց մարմնոյ եւ ո'չ 'ի կամացն առն իշխանաց կողմնակալութենէ, այլ 'ի կամս այնմ, որում բնական բնութիւնս մարդոյ խոստովանի արդարութիւն, եւ ըստ սովորութեան բոլոր աշխարհի եւ ամենայն խոհեմ, արանց, որում կամին խաղաղութիւն խօսիլ 'ի մէջ հակառակորդաց, նոյն զունակ թողուլ պարտիմք մեք բարեգործութիւն եւ չարարարութիւն թագաւորաց եւ իշխանաց նախնեաց մերոց, զի մի' ոք գովաբանեսցի երախտիս եւ վաստակս նախնեաց 'ի վերայ աշխարհին եւ ժողովրդեան Հայոց, եւ մի' ոք անգոսնեսցի յոռի եւ ծուլութիւն վնասակար նախնեաց մերոց իշխանաց, քանզի ամենեքեան ըստ անձին իւրեանց զոր ինչ կարասցին գործել ո'չ խնայեցին գործելոյ, այլ զոր ինչ եղեւ անցաւ, եւ այն էր բաժին մեր 'ի ներքոյ արեգական: Եւ արդ՝ իրաւունք եւ արդարութիւն խոստանան, զի միշտ մեք պատուելով պահիցեմք 'ի վերայ մեր անունն պատուականն Հայկա', որ եղեւ սկիզբ եւ հռչակող անուն իւր 'ի վերայ մեր, զի աշխարհ սովաւ ծանեաւ ազգն Հայոց եւ անուանեցաք Հայք, եւ սերնդովք սորայ անուանեցաք 'ի այլ ազգէ Արմէնիանք. նաեւս պատուելի ընդ մեջ մեր են Վաղարշակ Արշակունին, Աշօտ Բակրատօնին եւ Ռօբէնեանք միաբան սերնդովք իւրեանց, զի պահպանեցին ազգին Հայոց պահելով պատիւս Հայկա' Նախնոյն մերոյ՝ թագաւորելով 'ի վերայ տանն Արարատայ աւելի կամ պակաս իբրեւ երեք հազար ամս. այլ որովհետեւ որ այժմոյս եղեւ չորս հարիւր ամս, որում ոչ ոք 'ի սերնդոց 'ի վերն ասացելոց իշխանաց ո'չ ելան 'ի խնդիր ազգին Հայոց եւ 'ի տանն Արարատեան, որ ամայի մնալով ընդ իշխանութեամբ այլ ազգաց՝ կայ եւ մնայ մինչեւ ցայսօր. ուրեմն բարիոք լինի ազգին Հայոց զի այժմոյս երկայնամտութեամբ տարածեսցէ միտս իւր 'ի վերայ յանցանաց անցելոյ ժամանակին, եւ միտս

առնուցու անհուն վնասն որ եկն ’ի վերայ աշխարհին, եւ ազգին Հայոց՝ պատճառն ինքնակալ թագաւորութեամբ եւ ինքնակալ իշխանութեամբ, եւ ինքնակամ արարմանց որ երբեմն եթէ հանդիպեցաւ վիճակս թագաւորութեան արանց բարեաց: Օգուտն մեր ո'չ եղեւ յաւելի քան թէ կալ եւ մնալ մեզ ծառայ նմայ. նա'եւս ժամանակ ընդ ժամանակս, ըստ համեմատութեան փոփոխական բնութեանս մարդոյ՝ նեղեցաք ’ի նմանէ յոյժ, եւ անդրադարձն՝ եթէ վիճակ թագաւորութեան հանդիպեցաւ արանց չարեաց եւ անմտաց, իջուցին մեզ ’ի պատուոյ եւ երջանկութենէ ազատութեան մինչեւ ’ի խոնարհ, եւ վասն միայնոյ այս մեղաց ո'չ միայն խոնարհ մեզ արարին յոյժ, այլ գերի այլ ազգաց նախատինք մարդկանց եւ արհամարհանք տեսողաց մերոց, եւ որպէս ո'չ գոյ այսօր ոչ ոք յիշիսող թագաւորութեամբ յազգէն մերմէ ’ի վերայ մեր. ուրեմն մի' լիցի կամք եւ ընդունելութիւն մեզ, զի այսու յետ կրկին մտանել ’ի մեջ ազգին Հայոց թագաւոր եւ կամ իշխան եւ կամ զօրագլուխ ’ի ո'չ ոք իշխանութեամբ ինքնակալ ոմն, վասն զի ո'չ ծնաւ մարդ աշխարհ որ ո'չ մեղիցէ բայց փրկիչն մեր Քրիստոս. ուրեմն յոյժ բարի վասն մեր եւ վասն աշխարհին մերոյ լիցի զի ազգն Հայոց ամենեքեան ազատապէս բնական բնութեամբ իւրեանց թագաւորեսցեն ’ի վերայ տանն իւրեանց, բառնալով խէթ եւ նախանձ եւ ժլատութիւնք, զի ո'չ գտցի ոմն մեծ եւ ոմն փոքրիկ, ամենեքեան հաւասարապէս ստանայցեն Շուք թագաւորութեան ’ի ժամու ծնանդեան իւրեանց, եւ թագաւոր կացցեն ամենայն աւուրս կենաց իւրեանց ’ի վերայ սեպհական աշխարհին իւրեանց մինչեւ յաւիտեան. բարիոք գիտեմ ես, զի ընթերցօղ սմայ զարհուրի ’ի վերայ բանին իմոյ ասացելոյ, զի ազգ մի բոլոր զիշ արդ կարէ թագաւոր լինիլ ’ի վերայ աշխարհին միոյ. վասն այդպիսի մտածողաց հարցանեմ ես, ուրեմն զի արդ՝ կարէ միմիայն այր մի թագաւորել ’ի վերայ բոլոր ազգի եւ ’ի վերայ ժողովրդեան ազատի. զի' ո'չ ունի ինքն ընդ իւր ոչինչ յավելի քան թէ զօրութիւն միոյ հասարակ առն. եթէ մեզ կամք է' զի կացցուք եւ մնասցուք ազատ որպէս Արարիչն Աստուած ’ի սկզբանէ արար մեզ, ուրեմն մի ոք իցէ զի ըստ կամաց եւ ըստ հաճոյից իւրոյ իշխեսցի ’ի վերայ մեր, եթէ ո'չ ըստ Օրինօք գործոյ ձեռաց մերոց հատուցցէ մեզ ըստ արժանւոյն գործոյ մերոյ, զի ամենայն ոք առանց ձանձրանալոյ արժանի զտցի պատուոյ եւ պատժոյ ըստ արժանաւորութեան գործոյն իւրոյ, զի այս թագաւորութի'ւնս Շնորհեցաւ մեզ ’ի Տեառնէ Արարչէ մերմէ ’ի սկզբանէ արարածոց ’ի ժամանակի նախահօրն մերոյ Ադամայ, որում Արարիչն մեր ամենակարող զօրութեամբն իւրով ամենայն ստեղծուածք ’ի վերայ երկրի եւ ’ի ներքոյ արեգական հնազանդ մեզ բանական բնութեան մարդոյ արար, եւ ’ի վերայ բնութեան մերոյ ինքն միայն թագաւորեաց ըստ Օրինօք, այսինքն՝ զի ամենայն ծառոց պտղոց կերիցէ, բայց ’ի պտղոյն չարէ. այս օրէնս միայն եղեւ թագաւոր ’ի վերայ մեր, վասն որոյ ո'չ ոք այլ պատճառիւ իջաւ բնութիւնս մեր այնքան ծայրագոյն իշխանութենէ ազատութեան առ ’ի ծառայութիւն մահու, եթէ ո'չ գործոյ ձեռաց մերոց անօրէնութեան, որում անցաք ըստ Օրինաց Տեառն եւ սովաւ ցան եւ ցրիւ լինելով՝ անկայք ’ի ներքոյ լծոյ ծառայութեան ’ի յերեսս երկրի, եւ յանձն առաք ընդունիլ մահ եւ իջանել ’ի հողոյ որմէ ելաք եւ հատուցումն գործոյ ձեռաց մերոց հատուցանել ’ի հանդերձելումն յաւիտեան եւ մինչեւ յաւիտեան:

Այլ արդ՝ ցուցանեմ ձեզ մասունքն հասարակօրէն թագաւորութեան, եթէ կամիք ազատ լինիլ եւ թագաւորիլ հաւասարապես ’ի վերայ աշխարհին ձերոյ եւ ազատապէս տէր ’ի վերայ ստացուածոց ձերոց, ստանալ պատիւ վասն առաքինութեան ձերոյ, սրբել աղտս անօրէնութեան, եւ մաքրել խղճմտանս ձեր՝ հարկաւոր է շինել ձեզ տունս իմաստութեան ըստ բանին Սողոմոնի կանգնեցուցանել ձեզ սիւնս խորհրդականօք եւ ընտրել ձեզ օրէնս բարիս՝ ըստ կամաց եւ ըստ հաճոյից համահաւասար ժողովրդոց ’ի զօրութենէ բանական հոգւոյ ձերոյ՝ կալ եւ մնալ ձեզ կախեալ ըստ օրինաց ձերոց, զի ո'չ ոք իցէ' որ իշխեսցէ ’ի վերայ ձեր, բայց օրէնս ձեր, որում դուք կազմէք նա' թագաւորեսցէ եւ իշխեսցէ ’ի վերայ գործոց ձերոց, զի մի ոք գտցի ճանապարհ անօրինելոյ, եւ անօրենն վասն պատժոյ իւրոյ զանկատելոյ, քանզի վճիռն գործոյն իւրոյ ինքն ըստ կամաց եւ ըստ հաճոյից իւրոց է' հատ եւ ինքն ըստ անձին ազատապէս թագաւոր գոլով՝ կարգադրեաց օրէնս եւ հրամայեաց թագաւորել ’ի վերայ իւրոյ, եւ ինքն իւրն հնազանդ օրինաց իւրոյ արար պարտաւոր եւ մնայ ընդունիլ հատուցումն գործոց իւրոց թէ պատիւ եթէ պատիժ ըստ օրինաց իւրոց:

Որպէս սովորութիւնն է՝ ամենայն նորոգոյթ բան ո'վ ոք որում զոր կամի ցուցանել՝ յատկապէս հասարակ ժողովրդոց պարտէ ունենալ երկու տեսակս, մինն որ վասն միամտաց հարկաւոր է աչօք ցուցանել, եւ միւսն որ վասն երկայնամտաց հարկաւոր է իրաւամբ եւ արդարութեամբ քարոզ կարդալ.

նոյն գունակ ես սկսեցի ձեզ աչօք տեսողութեամբ եւ բանիւ իրաւամբ Գրքաւս այս ցուցանել, ո'չ թէ 'ի գիտութենէ մտաց իմոց, եւ ո'չ յինէն գոյացեալ ցանկութեամբ, եւ ո'չ նոր իմն զարմանալեաւ իրօք՝ եթէ ո'չ այն որ տեսի աչօք իմովք 'ի ժամանակս կենաց իմոց 'ի մեջ զանազան ազգի բարեպէս վարիւք կառավարութեանց հեշտութիւնն ամենայն դժուարութեան, հնարն մնալոյ ազատութեան եւ որոգայթն անփրծանելի վասն ամենայն վատթար արանց, զի հարկաւ մտցեն ընդ լծաւ բարեգործութեան, ընծայեմ առաթուր բարեպաշտ ազգին իմոյ, թէպէտ տխուր է իմ ձեզ ասելն որ ես ո'չ գտայ շնորհ կրթութեան 'ի հրահանգս դպրութեան, եւ ո'չ ժամանակ ընթեռնլոյ բուն Պատմութիւնն Հայոց, այլ այնքան որ 'ի մեջ պատմութեանց այլ ազգաց լուայ, եւ այնքան որ բարեգոյն Մովսէս Խորենացին եթողյիշատակ իւր վասն մեր՝ տոչորէ սիրտ իմ եւ սիրտ ամենայն արանց ազգասիրաց յոյժ, եւ իմ նայելով ճոխութիւնն ազգին իմոյ եւ բուրաստան եւ առատութիւն աշխարհին Հայոց ամենայն բարութեամբ եւ հարկաւոր իրօք լցեալ, եւ առողջ անդամք որդածնութեամբ եւ հաստատուն 'ի վերայ հաւատոյ արամբ եւ սիրով կապակցեալ ընդ սեպհական աշխարհն իւրեանց՝ բարի թուեցաւ ինձ շարադրել գրքուկս այս իբրեւ նշաւակ այն 'ի ժամանակի կենաց իմոց աչօք իմովք տեսի, եւ վարք իշխանութեան ազատաց, որում ուղղէ կառավարութիւնս իւրեանց երջանկութեամբ 'ի ներքոյ արեգական, ո'չ համարձակութեամբ իբր թէ կամք իմ է, զի աշխարհ բանից իմոց ընդունեսցեն, քաւ մի լիցի այլ միմիայն գիրքս այս նշոյլ տեսողաց եւ զգուշացուցանօղ երկայնամտաց լիցի, եւ միմիայն նշաւակ մի փոքրիկ, զի միտս իւր բերցէ ազգն իմ դուռն ազատութեան եւ ճարն անճարի, հնարն անհնարի եւ այլն՝ նայելով 'ի սմայ բերեպէս գտանի ճանապարհ հեշտալի վասն ազատութեան, որում ո'չ երկբայիմ եթէ մի' գտցի 'ի մեջ յազգին իմոյ ճարտարապետ, իմաստուն եթէ ձկտիցէ միտս իւր 'ի ռահն ազատութեան, զի կարօղ մի' լինիցի հազարապատիկ քան զայս գերագոյն շարադրել եւ այլն:

Միմիայն խնդիր իմ է ընթերցօղէ սմայ, զի գտանելն գրքոյս այս՝ նախ ընթերցի երիս անգամ սկզբէն մինչեւ ցվերջ, երկրորդ՝ եթէ պատահեսցի որ ընթերցօղն իցէ ծնեալ եւ սնեալ ընդ այնմ կողմ աշխարհի, որում պահպանեցեալ լինի 'ի ազգէ բարբարոսաց, աղաչեմ նմայ, զի որոնեսցէ եւ գտցէ ոմն բնակող եւ աշխարհատես 'ի մէջ կառավարութեան Քրիստոնէից եւ ազատաց, բանիւ բերանով հարց եւ փորձ արասցէ իւրաքանչիւր տարակուսութիւն բանի, որ 'ի այսմ երեւի եւ նովաւ գտցի յատկապէս բացատրութիւն բարութեան իւրաքանչիւր հատոր գրեցելոյն իմոյ:

Եւ ես յուսամ 'ի Տէր, զի նշաւակս այս պատճառ լինիցի յարուցանելոյ իմաստնոց 'ի մոռացմանէ եւ յորդորեսցէ նոցայ, զի բանիւ իմաստութեամբ իւրեանց գերազանցապէս կազմեսցեն կառս, որ ընթանայ գնացս արդար Օրինօք՝ համեմատ բնութեան մերոյ բանականի, եւ ծառայ գիտուն, որ գիտիցէ կամս Տեառն իւրոյ՝ այսինքն Օրենս իւր, կացուցանեն կառավարիչ 'ի վերայ նորայ, զի ընթանասցէ ընդ ճանապարհս իւր դիւրեաւ մինչեւ յաւիտեան, զի սովաւ կացցեն եւ մնասցեն ամենայն մարդ 'ի յազգս իմ ազատ եւ թագաւոր եւ իշխան եւ Տէր 'ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց, զի ամենեքեանս միաբան ազատապէս բարեբանելով Արարիչն Աստուած մեր այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

Անօթն ընտրութեան Սուրբ Առաքեալն Պօղոս ցուցանէ մեզ բնական իրաւունս եւ արդարութիւնս ասելով՝ ամենայն ոք զոր ինչ խօսեսցի ունիցի վկայութիւն 'ի սուրբ գրոց. նա'եւս ըստ ասացելոյ Տեառն փրկչին մերոյ՝ թէ երկու եւ երիս վկայիւք հաստատեսցի ամենայն բան:

Նախ ձեզ ընթերցօղացդ եւ ամենայն հաւատացելոց 'ի Տէր հին եւ նոր կտակարանաւ հաւատալի է արարչագործութիւնն ամենակարօղին Աստուծոյ մերոյ, որում գրէ ծայրագոյն մարգարէն Մովսէս, զի արարիչն ամենայն արարածոց անսկիզբ եւ անվախճան միմիայն Աստուած մեր թէպէտ 'ի հողոյ ստեղծեաց բնական բնութիւն մարդոյ, այլ Աստուածային Շնչաւն փչեաց զմեզ՝ շնորհելով Հոգի բանական, որում կենդանացաք, եւ ետ ծայրագոյն իշխանութիւն նախահօրն մերոյ Ադամայ, զի թագաւորեսցէ 'ի վերայ ամենայն բնական անասուն կենդանեաց որք 'ի վերայ երկրի եւ ետ զօրութիւն Հոգւոյ նորա բանականութիւն, զի կարօղ լինիցի իմաստութեամբ կառավարել հնազանդեցելոց իւրոյ, եւ նշան մի ծայրագոյն եթող 'ի մէնջ մեր սահմանելով Օրէնս բարիս՝ այսինքն Պատուէրն 'ի վերայ Ադամայ, զի պահեսցէ հրամանս Տեառն, զի սովաւ ծանիցէ ամենայն արարած որ ո'չ ոք այլ արարածք կարօղ լինիցի հրամայել 'ի վերայ բնութեան մարդոյ, բայց միայն անսկիզբ եւ արարիչն Աստուած. եւ ոչինչ այլ հարկ 'ի վերայ բնութեան մարդոյ եղեւ, բայց հնազանդելոյ եւ պահելոյ Պատուէր Տեառն արարչին իւրոյ.

եւ պատուէրն այն ինքն ցուցանէ զինքն իբր շնորհ արարչի եւ Տեառն Ամենակարօղի, զի ո՛չ խիստ եւ ո՛չ խոշոր եւ ո՛չ դժուարին բանիւ, բայց միայն չուտել ’ի պտղոյ ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի, որ տկարացուցանէ զկեանս մեր մինչեւ ’ի մահ, որպէս ինքն արարիչն մեր ասաց՝ եթէ ուտիցես մահու մեռանիցես, որպէս նա~ միայն արարիչ Աստուածն մեր, ուրեմն նա՛ միայն կարող է հրամայել ’ի վերայ զօրութեան հոգւոյ եւ մարմնոյ մերոյ, բայց ’ի նմանէ այլ ո՛չ ոք եւ մեք ո՛չ ումեք պարտիմք խոնարհիլ, բայց նմայ եւ ո՛չ միայն մեք, նաեւս երկնային եւ երկրային զօրութիւնք պարտին հնազանդիլ միայնոյ նմայ, եւ ’ի վերայ այսմ օրինիս շնորհեցաւ Օրհնութիւն ’ի վերայ Ադամայ նախահօրն մերոյ եւ ամենայն արարածոց ’ի վերայ երկրի՝ այսինքն աճիլ եւ բազմանալ եւ լցել երկիր: Մի՛ լինիցի ինձ հարկաւոր ասել ձեզ բան ’ի Աստուածաշունչ գրոյ, քանզի ո՛չ է իմ կամք Քարոզ կարդալ վասն ձեր, եւ ո՛չ դուք ունիք հարկաւորութիւն յինէն լսելոյ վարդապետութիւն:

Այլ որպէս հաւատացեալ եմք՝ որ եթէ բնութիւն մարդոյ ո՛չ մեղանչէր եւ ո՛չ անցանէր պատուիրանաւն Տեառն, ո՛չ իջանէր նախնին մեր Ադամ ’ի ծայրագոյն պատուոյն եւ ո՛չ արտաքսէր ’ի դրախտէն փափկութեան, եւ ո՛չ ելանէր հրաման Տեառն ’ի վերայ երկրի վասն բանալոյ սահանքս ջրոյ եւ ջնջելոյ մարդս ’ի վերայ երկրի, եւ ո՛չ ոք մարդ մահու մեռանիցէր. ահա՛ առաջին վճիռ ’ի բերանոյ Տեառնէ ’ի վերայ բնութեան մերոյ, որ ասաց՝ եթէ անցանես միով Պատուիրանաւ ուտելով պտղոյն գիտութեան բարւոյ եւ չարի՝ մահու մեռանիցիս. այս եղեւ միայնակ պատճառ եւ արդարութիւն դատողութեան, որ իջուց բնութիւնս մեր ’ի բարձրութենէ առ ’ի խոնարհութիւն, ’ի տէրութենէ առ ’ի հնազանդութիւն, ’ի անմահութենէ առ ’ի վախճան կենաց՝ սպասելով հատուցումն գործոյն յանդգնութեան մերոյ ընդունիլ դատաստան ’ի հանդերձելումն եւ վճիռ յաւիտենական. այսքան բաւական լիցի բարեպէս ընթերցողաց, զի ’ի միտս իւրեանց հաստատուն պահեսցեն, զի պահել զպատուիրանս արժան է, զի տայ տեղի ընդունելոյ երջանկութիւն երեւելոյ ’ի վերայ երկրի, որպէս արար Տէր մարդն բանական եւ փառաւոր եւ հնազանդ միայն Տեառն Աստուծոյ ամենակարօղին եւ արարչին իւրոյ:

Եւ մի՛ լիցի՝ զի սղալանօք յիշեցուցանեմք մեք ’ի մէջ մտաց մերոց թէ բարկութիւն Աստուծոյ եղեւ ’ի վերայ բնութեան մարդոյ, զի ո՛չ պահելով զպատուիրանն Տեառն, արտաքսեաց զմեզ ’ի դրախտէն, կամ խէթ ընդ մեզ պահելով՝ թոյլ ետ ծօվու զի իշխեսցէ ’ի վերայ երկրի ՝ ջնջեսցէ բնութիւնս մեր ’ի վերայ երկրի, քաւ լիցի, այլ անդրադարձ սորայ որպէս գրէ սուրբ մարգարէն Դաւիթ, որ ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր եւ ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ, այլ զոր ինչ եկն ’ի վերայ մեր արդար դատաստանաւ արար մեզ, քանզի եթէ Տեր եւ Արարիչն մեր այնքան միայն սիրէր մեզ որպէս մեք սիրեմք որդիս եւ դստերս մեր, առաւելագոյն դատաստան ընդունելոց էինք մեք, վասն որ ո՛չ ոք հայր զի տացէ որդւոյ իւրոց իբր հարիւր քանքարս երծաթոյ առ ’ի ժառանգութիւն, եւ ’ի նմանէ միմիայն լոման մի արգելեսցէ որդւոյն իւրոյ, զի մի՛ մերձեսցի առ ’ի լոմանն, եւ որդին այն եթէ այնքան անառակեսցի որ ո՛չ թէ միայն ո՛չ բաւեսցի հարիւր քանքարաւ, նա՛եւս համարձակեսցի եւ ձկտեսցի միտս իւր առ ’ի յանդգնութիւն հրամանի հօր եւ ձեռնամուխ լինիցի ստանալոյ միայնակ լոմանն եւ յատկապէս ստանայցէ, եւ թունաւոր լոմանաւն կոխիցէ Պատուիրան հօր իւրոյ եւ ապականեսցի բոլոր բնութիւնն իւր յանդգնութեամբ իւրով. երկայնամիտ լեր ընթերցող ’ի վերայ բարկութեան հօր սորայ, որ յանդգնութիւն որդոյն յարուցանէ ’ի վերայ իւր. թէպէտ եւ որքան հայր սորայ գթածաբար ներել եւս թէ կամեսցի, այլ ո՛չ միտ հօր եւ ո՛չ արդարութիւն իրաւանց եւ ո՛չ բոլոր բնութիւն մարդոյ ’ի ներքոյ արեգական լռել կարէ ասելոյ, զի որդին այն բնութեամբ չար է, ’ի ժամանակս բոլոր կենաց սորայ ո՛չ ոք ընդունի պաշտօն սորայ եւ ո՛չ ոք հաւատայ սմայ ոչինչ. կամիմ ասել՝ ո՛վ ոք որ անցանէ պատուիրանաւ, որում ինքն ըստ կամաւ յանձն էառ պահելոյ՝ բարութիւն ’ի նմա ո՛չ գոյ եւ նայ ինքն չար է, վասն այս մտածութեան ասէ մարգարէն Դաւիթ՝ մարդ ’ի պատուոյ էր ՝ ո՛չ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից եւ նմանեցաւ նոցա, արդար այսպէս է՝ որ՝ ո՛վ ոք որ անկարգութեամբ եւ արտաքոյ պատուիրանի վարէ զկեանս իւր, ինքն զինքն դատապարտէ եւ ըստ ինքեան թողու պատիւն իւր բանականութեան եւ մուծանէ անձն իւր ընդ անբանից եւ նմանեսցի նոցա:

Նա՛ եւս արարիչն մեր ամենագէտ Աստուածն պետական՝ ներելով մեղս յանդգնութեան անձանց մերոց, ո՛չ իբր աչառութեան, այլ իրաւամբ եւ արդարութեամբ շնորհեաց մեզ ժամանակ զղջանալոյ, զի գիտաց նա՛ եւ որպէս ինքն արար մեզ ’ի հողէ զի մեք հող եմք եւ բարեպէս գիտաց, զի ո՛չ ջանացաւ բնութիւնս մեր դիմամարտիլ եւ հակառակիլ ընդդէմ հրամանի տեառն արարչին մերոյ, եթէ ո՛չ սղալանօք

խաբեցաւ, զի գուցէ գտցէ առաւել երջանկութիւն, որում յարաժամ ձկտի բնութիւնս մարդոյ 'ի նոյն, այլ անդրադարձն գտաւ գործն իւր իբրեւ չափազանց եւ պատճառ կորուսանելոյ փառս, որում առաջնում պատրաստեալ էր վասն իւր. եւ այս չափազանց ցանկութիւնն երեւի միշտ 'ի մէջ բնութեանս մերոյ, որ ամենայն ժամ եւ ժամանակի ձկտէ միտս մարդոյ Օրաւուր առաւելանալն ընդ ամենայն գործս, եւ որպէս ալիք բարձրանայ եւ իջանէ՝ նմանապէս բնութիւնս մեր 'ի մանկութենէ ելանէ մինչեւ երիտասարդութիւն եւ երիտասարդութենէ իջանէ մինչեւ 'ի ծերութիւն, կայ եւ մնայ բնութիւնս մեր 'ի ներքոյ արեգական եւ 'ի վերայ երկրի, որպէս յերէկ եւ այսօր միեւնոյն, մինչեւ սահմանեալ ժամանակն Արարչին Տեառն Աստուծոյ:

Ո'չ ոք մարդ ծնաւ 'ի վերայ երկրի, որում եկաց եւ մնաց 'ի վերայ հիման եւ հաստատութեան 'ի վերայ միոյ բանի եւ գործոյ եւ մտածութեան, բարիոք կարէ ընթերցօղդ 'ի միտս առնուլ միմիայն ժամանակս կենաց իւրոյ 'ի վերայ երկրի՝ եթէ 'ի մանկութենէ իւրմէ առ 'ի տղայութիւնն եւ 'ի տղայութենէ առ 'ի երիտասարդութիւնն եւ 'ի երիտասարդութենէ առ 'ի ալեւորութիւն մինչեւ 'ի ծերութիւն, որքան զանազան փոխարկութիւն գտեալ 'ի մէջ բնութեան իւրոյ, զի ո'չ ոք կարէ ուրանալ զի ա'յն որ այսօր լաւ է' եւ ախորժ եւ շահաւէտ եւ խրախճանալի վասն մեր, վաղիւն գտանիցի վատ եւ անախորժ եւ վնասակար եւ է տարակուսելի. այս ո'չ լինի բարութիւն եւ չարութիւն իրին, որում ձկտէ միտս մեր, եթէ ո'չ 'ի բերմանէ տարերաց բնութեան մերոյ, եւ 'ի Օրաւուր զանազան պատճառէ ծնանելոյ 'ի մէջ խառնուածոց բնութեան մերոյ՝ երբեմն 'ի կերակրոյ, երբեմն 'ի փարթամութենէ, երբեմն սնոտի պատահմանց, եւ երբեմն 'ի տարբերութենէ աջողութեանց եւ ձախորդութեանց, որպէս ոմանք ասեն 'ի բախտէ. այս ամենայն հաստատեալ կայ 'ի մէջ բնութեան մերոյ, այլ 'ի մէնջ այս անչափելի եւ փոփոխական բնութեանս ունիմք անշփոթապէս միաւորեցեալ հոգի բանական, որում 'ի Տեառնէ արարչէն փչմամբ ընկալաք, որպիսի եւ ուստի սկսեաց եւ որում կերպարանի եւ որպէս բնակի ընդ մեզ եւ կատարումն զինչ լինելոց է՝ թողից զի ընթերցուք 'ի սուրբ գրեանց շառաւիղել 'ի սրբոց մերոց:

Այլ որովհետեւ ժամանակն ամաց կենաց մերոց 'ի ներքոյ արեգական եւ 'ի վերայ աշխարհի՝ ըստ ասացելոյն մարգարէին, եօթանասուն ամ եւ 'ի տեսողութեան մերոյ այժմոյս միեւնոյն բնութիւնս մեր այնքան փոփոխական է որ ոչ ոք կարէ հաստատիլ 'ի միտս իւր, թէ զի արդ՝ կացցէ եւ մնասցէ, զի գտցի բարեպէս վարել զկեանս իւր վասն Օգտութիւն հոգւոյ եւ մարմնոյ իւրոյ, թէպէտ բերան Տեառն խօսեցաւ վասն բնութեան մարդոյ 'ի վերայ երկրի՝ այսինքն գանձեցէք զգանձս ձեզ յերկինս ուր ո'չ գող մերձենայ եւ ո'չ ցեց ապականէ, այլ նա'եւս ասաց 'ի մէջ առակին քանքարոյ պահին՝ թէ որ 'ի փոքուն հաւատարիմ է՝ բազմիցս եւս հաւատարիմ գոլ կարէ, նա' եւս թէ՝ որդիք աշխարհիս իմաստնագոյն են քան թէ որդիս լուսոյ, որ բանս այս եղեւ 'ի վերայ առն հնարագիտի տնտեսին, նա'եւս Էկլէզիաստիկն գրէ ասելով՝ թէ ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ընդունայն է. այլ արդ՝ եթէ ընդունայն եւ եթէ արժանի եւ եթէ հարկաւոր, որում կամք ընթերցօղիդ ընթանասցէ ընդունիլ, այլ բարիոք եւ բարեգունեղ լինի 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ, եւ յոյժ հարկաւոր է ջանալ եւ պահել պատիւն զօրութեան հոգւոյ մերոյ, որում աւանդեցաւ մեզ 'ի փչմանէ Տեառնէ եւ Արարչէ մերմէ, զի վարեսցուք զկեանս մեր իբր մարդոյ բանականի եւ արժանի պատուոյ, ո'չ 'ի բնութենէ եռացեալ տղայութենէ իբր գաղտնաբարոյ, եւ ո'չ 'ի բնութենէ սասանեալ ծերութենէ իբրեւ ծուլացեալ, այլ միջահասակ եւ կատարեալ բնութեամբ բանական զօրութեամբ հոգւոյ իբրեւ մարդ կատարեալ՝ պարտ է ընտրել մեզ վարք, եւ կարգ, եւ Օրէնք վասն վարուց կենաց մերոց եւ լծորդել փոփոխական բնութիւնս մեր ընդ անշարժ Օրինօք, զի եթէ ժամանակ ընդ ժամանակս կենաց մերոց ըստ խառնուածոց բնութեան մերոյ միտս մեր ձկտիցէ առ 'ի գործս անասնոց եւ անբանից: Շղթայք կապանաց Օրինաց մերոց պնտելով՝ սաստեցուսցէ բնութեանս մերոյ եւ Օրինօք դատապարտեսցի, զի կացցուք եւ մնասցուք ամենեքեանս բարեպէս ընդ կարգ եւ սահմանս մերոյ Օրինաց, որ ընտրեցեալ 'ի լրումն ժամանակէ բնութեանց մերմէ, զի սովաւ արդարասցի դատաւորն եւ սովաւ ընդունեսցի մեղաւորն պատիժս իւր վասն մեղաց գործոյ ձեռաց իւրոյ, եւ սովաւ յայտնեսցի բարին եւ չարն, սովաւ ծանիցէ ամենայն բնութիւն մարդոյ հարկս իւր եւ համախոհ հնազանդելով Օրինաց իւրեանց՝ ընթանասցէ ուղղակի կառն իրաւանց եւ արդարութեանց, եւ կառաւարիչն կալով մնասցէ առանց տեղի բամբասանաց եւ այլն:

Երկայնամիտ լերուք բարեկամք, զի այսօր ազգն Հայոց իբր բոլորովին անկեալ կայ 'ի լծորդութիւն ծառայութեան այլ ազգաց, որ ո'չ ոք 'ի մէնջ ունի ո'չ զօրութիւն եւ ո'չ իրաւունս զի ջանասցէ պարծիլ 'ի

վերայ եղբօր եւ կամ դրացու եւ կամ ’ի վերայ բոլոր ժողովրդոց, եւ ո՛չ ոք ’ի մէնջ այսօր գտանի ինքնակալ Տէր որ ’ի պատճառէ եւ իջանելոյ նմայ ինքնակալութենէ իւրմէ եւ մտանելն ընդ լծաւ օրինաց խռովեսցի անձն իւր, եւ ’ի պատճառէ խռովութենէ միաբանեսցի ընդ Յունս եւ Պարս եւ ածցէ հարուած ’ի վերայ աշխարհին մերոյ, որպէս բազմիցս եղեւ առաջնում. ո՛չ ոք ’ի մէնջ մնաց ազնիւ ’ի արենէ, եթէ գուցէ գտցի նա՛ եւս անծանօթ ’ի մէնջ, եւ ո՛չ իշխան ’ի սեպհականութենէ եւ կամ զաւառատէր ’ի ստացուածոց իւրոց ժառանգութենէ, այլ ամենեքեան միաբան եւ միախոհ եղաք մշակ այլ ազգաց վաստակելով յերեսս յերկրին մերոյ, իբրեւ անասուն եւ անբան. վասն որոյ որում կարգ եւ սահման որ այժմոյս հաստատի վասն հասարակաց բարութեանց ո՛չ ումեք նեղի եւ ո՛չ ումեք իրաց պակասութիւն բերի, եւ ո՛չ ոք գտցի ’ի հատորս կարգի Օրինաց հակառակ կենաց եւ պատուոյ իւրոյ եթէ ո՛չ շահաւէտութեան, եւ ազատապէս Աստուածապաշտութեան՝ ըստ հրամանի բանին Տեառն որ ասաց՝ մինչ դեռ ժամանակս ’ի ձեռս ձեր է, գործեցէք զբարիս. թէպէտ եղուկ երեւի մեզ վասն անցանելոյ ժամանակին երջանկութեան մերոյ Հայկաւ, Տիգրանաւ եւ Արմենեաւ եւ այլ բարերարօքն մերովք ինքնակամ վարիւք անցանելեօք, որ ո՛չ զգոյշացաք փակել զդրունս փոփոխական բնութեան մերոյ, այլ գոհութիւն եւ փառս պարտ է մատուցանելով առ Տէր ասեմք վասն անցելոյ ժամանակին ինքնակալ եւ ինքնակամ եւ կամաւ հրամայող տերանց մերոց, որ միայն այսքան վնասիւք մեք փրծաք եւ նոքայ մեռան եւ թաղեցան ’ի գերեզման, այլ նոքայ որ ամբարշտանալով անհիրաւացան եւ գոռոզութեամբ եւ ինքնահաճոյութեամբ վարելով իշխանութիւնն իւրեանց ’ի վերայ աշխարհին Հայոց՝ զրկելով, կողոպտելով, լլկելով եւ ամենայն անասնական բնութեամբ շարժմամբ անցանելով ժամանակս կենաց իւրեանց, մինչ կորեան ինքեանք եւ կորուսին պատիւն մեր, եւ մատնեցին սերունդն ազգին Հայոց ’ի գերութիւն եւ աշխարհին ժառանգութիւն այլ ազգաց. մի՛թէ արիւնն Գնելի բարեպաշտի, եւ կամ Մուշեղայ երախտագիտի եւ այլոց բազմաց անհիրաւաբար յեղելոյ սպանմանէ, լռել կարէ յերկիր՝ այնքանելի անհիրաւութիւնք անցանելով ’ի մէնջ, մինչեւ շաղախեցաւ երկիր ’ի արենէ արդարոց անպարտից, եւ դրունք երկնից զզուեցան ’ի բախմանէ աղաչանաց սրբոց արեանց տնանկաց եւ զրկեցելոց, մինչեւ յարեաւ բարկութիւն Տեառն ’ի վերայ մեր եւ բառցաւ խնամս իւր ’ի յերկրէ մերմէ. մտանեցաւ երկիր եւ անկաւ ինքնակալ իշխանութիւնն եւ կորեալ եւ ցրուեցան իշխանքն՝ մնալով գառինքն անմեղս ’ի բերանս գիշատօղ գայլեաց մինչեւ ցայսօր, այլ յուսամ ’ի Տէր, զի մնացորդ գառինքս ըստ սահմանի Օրինաց լցուցանեն տեղի անկելոց նախնեաց մերոց բարեպաշտ սերնդօք, արդ՝ հարցանեմ զքեզ ընթերցօղ ասայ ինձ բարեկամ՝ եթէ կամիս կրկին ընդունիլ այդպիսի սարսափելի տէրութիւնն, որում շահաւէտութիւնն բարձրացաւ միմիայն ցգարշապարն, այլ վնասն է՛հաս մինչեւ ’ի գլուխ. ուրեմն բաւ մի՛ լիցի եւ մի՛ լիցուք մեք կրկին փորձող բանին հաւաստի տեսելոյ, եւ փորձեցեալ իրացն իբրեւ յիմար, այլ ջանասցուք փրկել ’ի մէջ իշխանացս մեր ’ի խղճմտանաց եւ տալոյ նոցա պատասխան վասն ամբարշտութեան ինքնակամ արարմանց իւրեանց առաջի ատենի ահեղ դատաւորին ’ի հանդերձելումն, եւ ազատեսցուք բոլոր ժողովուրդն ’ի ծառայութենէ եւ ’ի ձեռանէ յառնէ անհիրաւէ եւ ’ի կամաց միոյ ինքնակամ եւ ինքնակալ բարբարոսէ, որում ճանանչեմք հաւաստին բնութիւնս մեր երբեմն ուրախ, երբեմն տխուր, երբեմն զայրացեալ եւ երբեմն գթած, երբեմն ցանկացող, եւ երբեմն հրաժարող եւ այլն. մի՛ տացուք դանդանաւ անդս մեր ’ի ձեռին միոյ այսպիսի բնութեան ինքնակալ զի ճմլեսցէ զկզակս մեր ըստ կամաց եւ ըստ հաճոյից իւրոց, այլ արիացէք եւ գօտին խոհեմութեան ընդ մէջս ձեր ածցուք եւ հաստատելով կատարելապէս միտս ձեր՝ կացէք եւ մնացէք ’ի վերայ վիմի հաստատութեան եւ ’ի ներքոյ հարկի Օրինաց, որ ո՛չ ոք ’ի մէնջ երեւեսցի ինքնակալ իշխան ’ի վերայ մեր եւ տէր ’ի վերայ աշխարհին մերոյ, այլ անդրադարձն սորայ եղերուք ամենեքեանդ հասարակ ազգաւ համահաւասար, իշխան եւ տէր եւ ժառանգ աշխարհին ձերոյ հնազանդ, միմիայն ձերոց Օրինաց՝ այն որ դուք ընտրեցիք եւ հաճոյ ձեզ թուեցաւ, եւ համեմատ բնութեան ձերոյ գտաւ, որում սկիզբ եւ մէջ եւ վերջ նորին ցուցանէ բոլորովին բարութիւն հասարակաց:

Եթէ ես առաջանամ խոսիլ բան ինչ վասն անցելոյ ժամանակին, եւ ’ի պատճառէ ինքնակալ իշխանութենէ վնասուն, որ եղեւ ’ի վերայ մեր՝ հարկեսցի զիս որոնել ’ի մէջ բազում գրեանց պատմութեան, եւ ասացածս իմ եղիցի ’ի ականջս ձեր իբր լուր մի ’ի անցեալ ժամանակէ եւ ասողն իբր պառաւացեալ կնոջ բնականախօսի, այլ ո՛չ է իմ կամք պատմել ձեզ գործ անցեալք եւ ո՛չ յարուցանել սիրտս ձեր առ ’ի գոյթ եւ կամ ’ի նախանձ ’ի վերայ նախնեաց մերոց բարեաց եւ չարեաց, որպէս բազումք

տկարք զանգատեն զցաւս իւրեանց, եւ փոքր բժիշկ որ գտանի դարմանող եւ ’ի պատճառէ դեղօրէից փարատօղ, եւ ես ո'չ սպասիմ, զի զանկատն իմ վասն տկարութեան մնասցէ թափուր ’ի դարմանէ բժշկողացէ, նա'եւս մի ձկտիցէ զմիտս ընթերցօղիդ թէ կամիմ ասել ես փոքրիկս միայն գտայ ’ի մէջ բոլոր տկարացեալ ազգին իմոյ ցուցանօղ հնարս բժշկութեան, քաւ լիցի. ո'չ թէ միայն խոստովանիմ՝ նա'եւս երդնում առաջի ձեր, որ ’ի միտս իմ տպաւորեալ ունիմ, զի ո'չ պակասի ’ի միջի ազգի մերմէ բժիշկ իմաստուն, անձամբ բարեպաշտ եւ կատարեալ սիրով կապակցեալ ընդ ազգս իւր եւ ընդ աշխարհս Հայոց, եւ կարող ճանաչել դեղն տկարութեան մերոյ, այլ վասն բազում պատճառաց ո'չ ոք տեսի բանալ զբերանս իւր եւ յայտնի ազգին մերոյ առնել դեղ ախտին տկարութեան մերոյ՝ թէ ո'չ տխուր դիմօք հոգւոց հանելով ճշտելով զպատուական սիրտս իւր կան եւ մնան մինչեւ ցայսօր. նա'եւս ես եղէ' ժամանակ ընդ ժամանակս այսպէս երկմտելով ’ի զանազան պատճառէ վասն բանալոյ զբերանս իմ, երբեմն ամօթ ’ի ծերոց է եւ երկիւղ ’ի բռնաւորաց է եւ ’ի նախանձոյ հասարակ ժողովրդենէ՝ լռելեան մնասցի մինչեւ ցայսօր, այլ որովհետեւ որ տեսանեմ ժամանակս կենաց մերոց ո~չ յաւելու քանց եօթանասուն ամս, եւ զանազան փորձառութիւն նման այս բանիս ’ի ժամանակի կենաց իմոց հանդիպեցաւ յիս, որում աչօք իմօք տեսի բազմաց եւ ’ի մէջ այսպիսի իրաց խորհրդի երբեմն երեւեցայ եւ յոյժ երկմտութեամբ ’ի միտս առի եւ հաստատեցի սիրտ իմ փորձառութեամբ. նա'եւս ժամանակն ծառայ գոլոյ տղայութեան իմոյ արբունս հասակի հասուցի, եւ այժմոյս որ գտայ զիս ազատ եւ փորձառեալ այսպիսի խորհրդոյս՝ ո'չ կամեցայ թոյլ տալոյ զի թաղեսցեն ընդ իս ’ի ամուր դամբարանի իմոյ այն որ հաւատացեալ եմ, զի օգուտ յազգին եւ աշխարհին իմոյ գոլ կարէ, վասն այսորիկ խոնարհաբար ներումն ’ի նախահարց իմոց խնդրելով յառաջացայ այն որ ’ի մէջ մտաց իմոց թուելով բարի վասն ազգին եւ աշխարհին իմոյ եղի առ այսմ, զի ժամանակ ընդ ժամանակս երեւեսցի առաջի աչաց ընթերցօղաց ազգին իմոյ, զի իմաստնագոյնքն լցուցանելով պակասութիւնն գրեցելոյն իմոյ, եթէ հաճեսցի կամաց եւ հաճոյից իւրեանց՝ ջանասցեն ’ի գործ ածել:

Հաստատելով ասացուածքն իմ, եղիցի վկայութիւն ’ի սուրբ գրոց ըստ ուսուցանելոյ մեզ սրբոյ առաքելոյն Պօղոսի, զի պարտ է ամենայն խօսից լինիլ վկայութիւն սուրբ գրոց՝ նախ բերան Տեառն խօսեցաւ վասն իմաստութեան ասելով, այր ոմն շինէ զտուն հարկաւոր է դնել հիմն ’ի վերայ վիմի, որում յեղեղ ջրոց ո'չ խախտեսցեն նմայ. նա'եւս իմաստնացեալն Սողոմոն գրէ՝ թէ իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց ’ի նմայ սիւնս եօթն, այս երկու վկայութիւնս բաւական լիցի հաստատել միտս ընթերցօղաց, զի տունն այսինքն ամենայն կարգադրութիւն վասն կառավարութեան յազգաց հարկաւոր է դնել հիմն ’ի վերայ վիմի հաստատութեան, այսինքն անխախտելի յօրինաց անշարժի, աներկմտի, անաւելանալոյ, եւ անպակասի եւ կանգնել ’ի նմայ սիւնս կարգաւ խորհրդականօք, որպէս տուն եւ բնակութիւն եւ ապարանք զարդարի եւ փայլի ընդ գեղեցիկ սեամբք, նմանապէս տունս տէրութեան եւ կառավարութեան հաստատուն կացցէ եւ մնասցէ գեղեցկափայլ օրինօք եւ կարգադրութեան եւ Օրինագէտ խորհրհրդակցօք:

Ցուցանեմ ես ձեզ ճանապարհն մոլորեալ եւ հնարն անկարելոյ, եթէ որպէս կարէ հնարաւորիլ դժուարինն մեր. նախ նայեցարուք ’ի հակառակորդէ կազմեալ ’ի չորս անմիաբանելի տարերաց է սահմանեալ բնութիւնս մեր, թէ որպիսի համահաւասար կան եւ մնան եւ շարժին կենդանի պահելով ընդ մէջ իւրեանց այս հակառակ տարերքս խաղաղութեամբ ’ի պատճառս անխախտելի սահմանի իւրոյ, նոյնպէս եղիցին բոլորովին ազգն Հայոց համահաւասար ’ի մեծէ մինչեւ ցփոքունս, իբրեւ մի հօտ հաստատուն ’ի պատճառէ անխախտելի Օրինաց իւրեանց, զի երեւեսցին ամենեքեան իբր մի կամք, մի խորհուրդ, մի ներգործութիւն, մի պատիւ եւ մի պատիժ, եւ ամենեքեան գոհ ’ի միմեանց, զանկատ ո'չ մի ումեքէ, զի ոչ ոք իցէ որ պարծելով պարծեսցի իբր ինքն մեծ եւ ո'չ ոք իցէ զի թարշամելով նուազեսցի իբր թէ ինքն կրտսեր մեծասցի եւ առաւելասցի. ամենայն բարեգործութեան գործող եւ փառաւոր առնէ գործօղին շահեցուցանելով հասարակապէս ազգս իւր եւ բառցցի եւ կորնչեսցի ամենայն չարագործ ըստ արժանի գործոյն ձեռաց իւրոց ըստ Օրինօք՝ առ ’ի պատիւ հասարակ ազգի, բարեպէս եւ յոյժ հեշտութեամբ կարէք կառուցանել բոլոր ազգն Հայոց բնութիւնս ձեր հաւասարապէս իբր տուն ձեր. նա'եւս հիմն հաստատութեան անխախտելի յօրէնս ձեր սիւնք կարգադրութեան արդարագոյնեղ խորհրդակիցս ձեր եւ յանձն առնլով առաստաղն տան ձերոց ’ի վերայ գլխոյ ձերոյ կատարելապէս հնազանդութիւն ձեր ’ի Օրինաց ձերոց, զի գտցուք դուք ամենեքեան ըստ անձին ձերոյ տուն, եւ հիմն,

եւ սիւնք, եւ առաստաղ ձեր, եւ տանուտէր ձեր դատախազ սպասաւոր եւ դատաւոր ձեր, եւ հաւաքող պտղոյ 'ի տանէ ձերմէ, եւ ծախող 'ի վերայ տան եւ որդւոց եւ 'ի վերայ հարկաւորութեան տան ձերոյ, միաբան փառաւորելով ազատապէս արարիչն Աստուած եւ տուողն ամենայն բարութեանց Տէր, մեր որ արժանի մեզ արար ժառանգել այսքան բարելի աշխարհ այսինքն Արարատեան, եւ ընդունիլ այնքան բարութիւն 'ի Տեառնէ, որում ոչ ոք ազգ 'ի բնութենէ մարդոյ 'ի տիեզերս աշխարհի ո'չ գտաւ, եթէ յատկապէս սիրոյ եւ շնորհաց, եւ Օրհնութեան եւ այլն որպէս ասացաք առաջնում:

Այլ նա'եւս փոքրիկ ասացութեամբ 'ի միտս ձեր ձգելով յարուցանեմ նախանձս վասն լրբութեան բնութեան մերոյ առ 'ի իրաւունս արդարութեան՝ երկայնմտութեամբ լուարուք ինձ ընթերցողք եւ բարեկամք իմ, զի ամենայն բնութիւն մարդոյ եթէ հաւատացելոց եւ եթէ անօրինի, խոստովանի որ բնութիւնս մեր գտաւ արարած, եւ ունի սկիզբ եւ ժամանակ որ կազմեցաւ անսկիզբ եւ անժամանակ եւ անվախճան միայնոյ արարչէ եւ յԱստուծոյ մերմէ եթէ ժամանակ, եթէ զօրութիւն, եւ եթէ արժանաւորութիւն բոլորովին չափով եւ կարգաւ, այս բնութիւնս մարդոյ մի' ձկտիցէ միտս իւր եւ մի' հաւանեցուսցէ զինքն սղալանօք զի առաւելագոյն իրս գտցի ընդ մէջ իւր քան թէ այն, որում արարչէն իւրմէ ստացաւ 'ի սկզբանէ եւ 'ի ժամ արարչագործութեան Տեառն իւրոյ, քանզի ո'չ ետ մեզ Տէր արարիչն մեր (բայց 'ի զօրութենէ բանական հոգւոյ) աւելի զօրութիւն քան թէ մօրն ամենայն կենդանեաց չորից տարերաց եւ կամ զօրաւոր շրջականաց լուսայտուից 'ի վերայ երկրի, զի որ մին կրտսերագոյնն 'ի նոցանէ զօրագոյն է բնութեամբ քան թէ բնական բնութիւնս մեր, որովհետեւ ստեղծեալք 'ի Տեառնէ զօրեղագոյնք քան թէ բնութիւնս մարդոյ պահելով պատուիրանս Տեառն իւրեանց ընթանան, 'ի գործ շարժին ըստ սահմանի, որում հրամայեաց նոցայ Տէր՝ ուրեմն պարտ է մեզ փոքրականս 'ի մէջ արարածոց կալ եւ մնալ ըստ Պատուիրանի Տեառն արարչին մերոյ, որպէս հրամայեաց եւս մեզ Տէր, Ես ո'չ ուրանամ զի հրաման Տեառն եղեւ 'ի վերայ ամենայն բնական կենդանեաց 'ի վերայ երկրի, զի հնազանդեսցեն նախահօրն մերոյ Ադամայ. նա'եւս միեւնոյն նախնին մեր Ադամ ըստ բանական բնութեամբ գտաւ իշխանութիւն 'ի Տեառնէ եւ 'ի արարչէն մերմէ զի յիշխեսցէ 'ի վերայ միմիայն բնական բնութեամբ կենդանեաց որ 'ի վերայ երկրի, այլ ո'չ 'ի վերայ բանական բնութեան մարդոյ, կամիմ ասել թէ՝ որպէս ո'չ գտաւ Ադամ հրաման յիշխելոյ 'ի վերայ բանական բնութեան մարդոյ, նմանապէս ո'չ կարաց իշխել 'ի վերայ բնութեան իւրոյ, զի եթէ սա' ստացեալ լինէր 'ի Տեառնէ իշխանութիւն յիշխելոյ 'ի վերայ բանական բնութեան, որպէս գտաւ 'ի վերայ բնական բնութեանց, բարեպէս կարէր ամուր պահելով բնութիւնս իւր, զի ո'չ անցանէր պատուիրանաւ Տեառն, այսու հաստատել կարէ միտս ընթերցօղաց զի սկզբանէ արարածոց ո'չ ոք ստեղծեալ գտաւ իշխանութիւն, զի իշխեսցէ 'ի վերայ բանական հոգւոյ եւ բանական բնութեան մերոյ, եթէ ո'չ անսկիզբն եւ անեղն միայն արարիչն մեր Աստուած, զի ծանիցէ աշխարհ եւ ամենայն արարածք երկնի եւ երկրի զի նա' միայն ինքն է արարիչ եւ Տէր եւ Աստուած ամենայն արարածոց, ուրեմն որպէս 'ի վեր ասացաք բաւական լիցի սղալանօք ձկտել զմիտս մեր աւելի քան թէ կարն մեր եւ աւելի քան թէ այն, որ 'ի վերուստ մեզ տուել է, վասն որոյ մի' ոք ձկտեսցէ միտս իւր զի թագաւորեսցէ 'ի վերայ բանական բնութեան մարդոյ որ մեղկ մեծ է, քանզի թագաւորել 'ի վերայ բանական բնութեան մարդոյ միմիայն գործ յԱստուածոյ է', որպիսի եւ կամ յերբ եւ կամ որքան ժամանակաւ՝ միմիայն Աստուծոյ միայնոյ գիտելի. մի' ոք մարդ լրբանալով ձկտեսցէ զկամ իւր Աստուածանալոյ, այսինքն թագաւորելոյ 'ի վերայ բանական բնութեան մերոյ, որում խոստովանիմ Ես եւ խոստովանի ամենայն բնութիւն մարդոյ, որ ո'չ կարէ նա' հասանիլ սղալացեալ ցանկութեան սրտի իւրոյ, եթէ ո'չ անդրադարձն սորայ աւերէ հոգի եւ մարմին իւր անկարգութեամբ շարժմամբ իւրով անցանելով պատուիրանաւն Տեառն իւրոյ եւ պատճառ լինելով գոգոէ բոլոր բնութիւնս մարդոյ 'ի յերեսս երկրի՝ ստանալով վարձ յաւելորդութեամբ գործոց իւրոց երբեմն սով, երբեմն սրածութիւն երբեմն ջրհեղեղ եւ Շարժ եւ մահ տարաժամ եւ այլն, որպէս պատմէ մեզ Աստուածաշունչ գիրք պատիժն մեղաց մերոց ստացելոց 'ի անցելոյ ժամանակի, եւ թէպէտ ընդ տեսակս աչաց եւ լուր ականջաց մերոց տեսանի եւ լսի բազում ոք թագաւորեցեալ 'ի վերայ ժողովրդոց բազմաց 'ի յերեսս երկրի. այլ 'ի սմայ գտանի զանազան կերպիւ թագաւորութիւնք եւ իշխանութիւնք, բայց ես ասացի վասն թագաւորին յայնմիկ, զինայ եւ թագաւորութիւնն իւր որ 'ի արտաքոյ բնութենէ եւ յաւելուածու եռացումն ամբարիշտ մտաց իւրոց բարբառոսութեամբ, վասն զի փքացեալ թագաւորն այն, որում ինքնակալ մտօք հաւատայ զինքն թագաւոր 'ի վերայ բանական բնութեան մերդոյ, ուրեմն հարկաւոր լինիցի նմայ, զի ունիցի յինքն

անմահութիւն եւ կարող լինիցի տալոյ կեանս եւ վախճան յաւիտենական ’ի բանական բնութեամբ ժողովրդեան իւրոյ, այլ որպէս սկզբանէ արարածոց մինչեւ ցայսօր ո՛չ ոք այսպիսի զօրութեամբ մարդ երեւեցաւ ’ի ներքոյ արեգական եւ ո՛չ ոք զոյ կարէ, բայց արարիչն Աստուած թագաւոր երկնի եւ երկրի, որ ունի զանմահութիւն բնակեալ ’ի լոյս անմատոյց, որպէս վասն այս մտածութեան բերան Տեառն խօսեցաւ ընդ պատուէրս իւր առ մեզ ասելով՝ մազ մի գլխոյ նորայ սպիտակ եւ թուխ ո՛չ կարես առնել, ուրեմն եթէ վասն մազի միոյ սպիտակ եւ թուխ առնելոյ ո՛չ կարէ, ուրեմն զիշ արդ կարող լինիցի Տէր եւ թագաւոր եւ իշխան ’ի վերայ նոցա լինիլ, որում ամենայն իրօք նմանի անթերի, եւ անպակաս իբրեւ զինքն եւ ամենայն ժողովուրդք ինքնակալ թագաւորի բարբարոսի ոչ մնայ ազատ ընդ բանական բնութիւնս իւր, եթէ ո՛չ ամենեքեան անօրինեցեալ եւ անցանելով ըստ պատուիրանի Տեառն (միեւնոյն զունակ որպէս նախնին մեր Ադամ անկանելով ’ի փառաց ազատութենէ իւրեանց լծորդի ’ի վաստակս ծառայութեան՝ հաւասարելով անասնոց անբանից եւ նմանելով նոցայ). նա՛ եւս ամենայն թագաւոր ինքնակալ եւ ինքնակամ բարբառոսաբար արարմամբ թագաւորութեամբ, նախ ինքն զինքն ետ ’ի ներքոյ լծի ծառայութեան, որ հաւանեցաւ ընդ միտս իւր յաւելորդապէս զօրութիւնս քան թէ այն, որ ստացաւ նա ’ի Տեառնէ արարչէ իւրմէ, քան զի նա՛ ո՛չ գտաւ զինքն յաւելի զօրութիւն յիշխանութեան քան թէ ’ի պաշտօնս հովուի միոյ պարզամտի որում իշխէ ’ի վերայ խաշանս իւրոց իբր բնական կենդանեաց, այլ ոչ ինքն ցանեաւ գործ պաշտօնին իւրոյ եւ ոչ ժողովուրդ պատիւս ազատութեան իւրեանց, որպէս տեսանեմք աչօք որ թագաւորս այս Շարժի բնական բնութեամբ այսինքն սիրելով, ատելով, բարկանալով, քաղցանալով, յագենալով, տկարանալով եւ մահուամբ մեռանալով, որպէս ամենայն բնութիւն մարդոյ եւ որպէս բոլոր հնազանդեցեալք ժողովուրդքն իւր, նա՛ եւս հնազանդեցեալք ժողովուրդքն միեւնոյն որպէս թագաւորս իւրեանց, զի ամենեքեան համահաւասար խաբեցան. ուրեմն սա՛ ո՛չ է՛ թագաւոր ’ի վերայ բանական բնութեան մարդոյ եթէ ո՛չ իբր հովիւ ’ի վերայ անբանից կենդանեաց, այլ նոքայ որ թագաւորեն ’ի վերայ ժողովրդեան իւրեանց ըստ Օրինօք եւ կարգաւ յօրինաց ստացան պատիւ ’ի ժողովրդենէ անուանեալ իւրեանց թագաւոր, այլ սոքայ բարեպաշտք թագաւորքս պահելոյ Շարն կառավարութեան, թոյլ ետուն ժողովրդոց այս անուանակոչութիւն թագաւորի, այլ յինքեանք բարեպէս ծանեան, զի ո՛չ կարեն մազ մի ’ի գլխոց ժողովրդոց իւրեանց թուխ առնել եւ կամ սպիտակ, եւ ծանեան զինքեանց իշխան ’ի վերայ յաշխարհին իւրեանց, զի իշխեսցեն ըստ Օրինօք ’ի վերայ ամենայն գործոց ձեռաց ժողովրդոց իւրոց, զի ամենայն գործ ձեռաց ամենայն արանց ’ի ձեռանէ այս յիշխանէ եւ թագաւորէ գտցի վարձս իւր ըստ Օրինօք, վասն այս եւ այլ բազում նման սորա պատճառի՝ մի՛ թոյլ տայք զի լիցի ոք ինքնակալ ոմն բարբառոսաբար թագաւոր ’ի վերայ ժողովրդեան Հայոց, եւ ’ի երկրին մերոյ Հայաստանեայց, եւ աղաւնայկենցաղ գառնայվարք յազգիս Հայոց, եւ ո՛չ ’ի վերայ բանական բնութեան մերոյ բայց ’ի Տեառնէ արարչեն մերմէ, զի ինքն արարիչ Աստուածն մեր միմիայն պաշտեսցի ’ի մէնջ փառօք թագաւորութեամբ, քան զի ինքն միայն է թագաւոր ’ի վերայ երկնի եւ երկրի եւ ’ի վերայ ամենայն արարածոց բանական եւ բնական կենդանեաց հոգւոց եւ մարմնոց եւ թագաւորութեան նորայ վախճան մի՛ լիցի. նա՛ եւս վկայութիւն ասացելոյս հաստատէ ձեզ անցք եւ արարք թագաւորաց ինքնակալից մերոց եւ այլոց ’ի անցելում ժամանակի, եւ ’ի կատարածի իշխանութեան նոցայ, որում այժմ աներեւոյթ լինելոյ ’ի մէնջ, ուրեմն ուշր է թագաւորութիւն Նաբուգոդոնոսորայ արքայի եւ Փարաւօնի, եւ Դրիոսի եւ այլոց թագաւորաց բազմաց, որում դամբարանք եւ տեղի հանգստեան նոցայ այժմոյս ո՛չ երեւի. ուրեմն հաւատալի ձեզ ընթերցողաց պիտի լինիլ որ ո՛չ երկաթն փոխարկի ընդ բնութեանս երծաթոյ, եւ ո՛չ ոսկին ընդ բնութիւնս յանդամանթի, եթէ ո՛չ ամենայն բնութիւնն անփոփոխապէս կալ եւ մնալ արժան է՛, որպէս աւանդեցաւ ’ի արարչէ իւրմէ, եւ ո՛չ ոք առաւելանալ եւ ո՛չ պակասիլ կարէ աւելի քան թէ կարն իւր, որում ’ի արարչէն իւրմէ սկզբանէ արարածոց տուաւ նայ, թէպէտ ժամանակ ընդ ժամանակս որպէս ամբարիշտն բարձրանայ եւ մեծանայ, որպէս մայրս լիբանանու, այլ շտապի անկանի եւ կորնչի, ըստ բանին մարգարէի որ ասաց թէ անցի եւ ո՛չ տեսի, հարցուցի եւ ո՛չ գտայ տեղի նորայ. եւ այսպիսի իշխանաբար ինքնակալ անձամբ թագաւորութիւնք անցին ’ի վերայ աշխարհին եւ ’ի վերայ ազգին մերոյ բազումք, այլ կատարածն թողին մեզ որբ եւ այրի պարտաւոր վասն ինքնակամ գործոց անօրէնութեանց իւրեանց եւ հատուցանող փոխանակ միոյ տնօրէնութեան պարտուց նոցայ հարիւրապատիկ ծառայութեամբ մեզ. ուրեմն մի՛ խաբեցաք կրկին եւ մի՛ տայք տեղի տնօրէնութեան հովուաց մերոց, եւ մի՛ կրկին ցանեսցուք որոմն

անօրէնութեան ընդ աշխարհս մեր, զի աւերեսցէ արտն ցորենոյ ազատութեան մերոյ եւ կատարածն մատնեսցի սերունդս մեր 'ի ներքոյ լծի ծառայութան, որպէս այժմ մատնեալ կամք, այլ հարկաւոր է եւ յոյժ հարկաւոր, զի արիասցուք ազատապէս, եւ գօտի Օրինաց եւ արդարութեան ընդ մէջ ածցուք, ընտրեսցուք մեզ բարիս քաղցրահամ եւ դիւրաճաշակ յօրէնս անխախտելիս, այն որ հրամայեցաւ 'ի Տեառնէ արարչէն մերմէ՝ պահել 'ի ամենայն տեսակէ պտղոյ որում տկարացուցանէ հոգի եւ մարմին ճաշակողին, եւ միաբան ընդունեսցէք կալ եւ մնալ հաստատուն 'ի վերայ պահելոյ Օրինաց մերոց, որում ազդեցութեամբ սուրբ հոգոյն շառաւեղելով 'ի վերայ բանական հոգւոյ մերոյ՝ ընտրեսցուք եւ հաւանեսցի ընդ մէջ բանական բնութեան մերոյ ըստ կամաց եւ ըստ հաճոյից ամենայն արանց Հայոց՝ եթէ Էկլէզիաստիկաց հովուապետաց եւ հասարակ ժողովրդոց հրաժարել 'ի ամենայն անօրէնութենէ պտղոյն ծառի չարէ. որում հրամայեսցի յօրէնս մեր չուտել, եւ զոր ինչ կանօն Օրինաց որում ընդունելի լինիցի եւ հաստատեսցի մէջ Հայոց՝ նոյն կանոն լիցի թագաւոր հայոց 'ի վերայ յաշխարհին Հայաստանեաց, սովաւ ամենեքեան հասարակապէս լիցին թագաւոր եւ Տէր 'ի վերայ աշխարհին եւ 'ի վերայ ժողովրդոց իւրոց, վասն զի կանօնս այս իւրաքանչիւր ոք արարին եւ հաստատեցին ընդունեցին հատուցանելով ամենեցուն վարձս գործոց ձեռաց իւրեանց ըստ օրինօք զի ամենեքեան ստայցեն իւրաքանչիւր հարկս սաքսս պատիւս հնազանդութեան եւ պատիժս ըստ Օրինօք եւ պաշտօնատարք Օրինաց մերոց եղիցին սպասաւոր աշխարհին եւ հասարակ ժողովրդոց Հայոց ըստ բանին Տեառն որ ասաց, եւ որ 'ի ձէնջ եղիցի մեծ նա' եղիցի սպասաւոր. Օրինեալ է ամենայն բան բերանոյ Տեառն եւ փառաւորեսցուք բան Տեառն եւ առ բնութիւնս մեր եւ մեծարեսցուք պաշտօնեայս մեր նոցայ, որում հաւատարմաբար սպասաւորեսցեն մեզ ըստ Օրինօք մերովք եւ ակն կալցուք 'ի Տեառնէ արարչէ մերմէ, որ ինքն վերձահատոյց լիցի նմայ յաւիտենական կենօք 'ի հանդերձելումն եւ այլն:

Նա' եւս ցուցանեմ ձեզ քանի նշաւակ որում հաստատել կարէ 'ի միտս ձեր ասացուածքն իմ 'ի վերայ բանին ազատութեան մերոյ, եւ հարկաւորութիւնն ունենալոյ մեր անխախտելի Օրէնս, եւ հաստատապէս տպաւորեսցի 'ի միտս ընթերցօղացդ զի ո'չ երբէք կարի ընթանալ ո'չ ոք գործ ուղղակի 'ի ճանապարհս իւր մինչ ո'չ իցէ ըստ Օրինօք, ահա նայերուք աչօք ձերօք եւ երկայնամիտ լերուք մտօք՝ այր ոմն որում կամի կառուցանել տուն, սովորութիւն է սկսանիլ հիմն եւ դնել հիմն 'ի վերայ հաստատութեան երկրի, ով որ կամի ցանել յունդս եւ արտս ցորենոյ, գարոյ եւ այլն, սովորութիւն է նախ վարել արտս մանրել երկիր խոշորն հետ ցանելոյն ըստ սահմանին ջրել եւ այլն, այր ոմն որում 'ի մերկութենէ կամի զգեստաւորիլ սովորութիւն է նախ զգենուլ պատմուճան եւ 'ի վերայ նորա այլ զգեստ, այր որում կամի ուսանիլ դարբնութիւն նախ սովորիլ փչել փքսով յետոյ հարկանել չաքուչ եւ այլն, պատանի ոմն որ կամի մուծանել զինքն 'ի հրահանգ սովորութիւն է սկսանիլ ճանաչել նախապէս տառքն այբբենաց մինչեւ այլքն, այր որում ցանկայ ընդունիլ պաշտօն քահանայութեան սովորութիւն է հնազանդիլ վարպետի՝ աշակերտիլ հրահանգչին իւրոյ եւ առնուլ աստիճանաւ կարգ իւր, այր ոմն որ կամի մուծանել զինքն զինուորութեան, սովորութիւն է ուսանիլ Շարժելն զինաց եւ ծանօթ լինիլ Օրինաց եւ կարգաց զինուորութեան խորհրդոյն պաշտօնէի, վերջապէս եթէ ասացից նման սոցայ ունեմ բազում նշաւակ տալոյ ձեզ, որպէս հաւատացեալ եմ որ ո'չ սկսանի գործ 'ի Շարժմանէ բնութենէ մերմէ մինչ նախ ո'չ տպաւորեսցի 'ի մէջ մտաց մերոց թէ զինչ կամք մեր է գործելոյ, եւ ո'չ ոք գործ ձեռաց մերոց ո'չ 'ի կատար հասանել կարէ՝ եթէ չիցէ գործեցեալ ըստ կարգի եւ ըստ սովորութեան սահմանի, ուրեմն ո'չ գոյ իր զինչ եւ իցէ 'ի ներքոյ արեգական 'ի յերեսս երկրի եւ 'ի մէջ ծովու որ Շարժի մինչ ոչ ունիցի սահմանս Օրինաց. երկայնամի'տ լեր ընթերցօղ եւ նայեա' աչօք եւ 'ի միտ առ բանականութեամբ եւ 'ի զօրութենէ հոգւոյ սահմանն յօրինեալ 'ի Տեառնէ արարչէն մերմէ եւ միայնոյ ճարտարապետէ, թէպէտ ո'չ ոք գիտաց զկամս նորայ եւ ոչ ոք խորհրդակից նմայ, այլ ինքն միմիայն կատարեալ եւ անսղալելի ամենափառ եւ ամենակարող Աստուածն համայնից բարեպէս գիտաց զի սահման 'ի մէջ ստեղծագործութեան իւրոյ հարկաւոր է, որում ետ սահման ընթանալոյ ստեղծուածոց իւրոց 'ի գործ եւ ո'չ անցանէ, այսպէս հարկաւոր է նայիլ քեզ եւ ճանաչել զանազ անութիւն մի ընդ միւսոյն, եւ հակառակութեան միոյ ընդ դէմ միւսոյն չորս տարերաց, թէ որպիսի ըստ սահմանի համայ յամեատին այս անհաշտելի հակառակորդքս եւ ընթանան 'ի գործ որում 'ի գործոց նոցայ ծնանի սահման բազում, այսինքն գարուն բուրմամբ անուշից, ամառ պտղաւէտ, աշուն ճարպաբեր, ձմեռ պարարտացուցիչ. սորայ ամենեքեան կալով հակառակ ընդ միմեանց՝ հնազանդ Օրինաց արարչին իւրեան ցուցանեն մեզ

աշխարհ լրիւ ողորմութեամբ արարչին մերոյ եւ կալով եւ մնալով սոցայ հնազանդ Օրինաց Տեառն իւրեանց՝ պահեն ամենայն ծնունդ 'ի ներքոյ արեգական 'ի վերայ երկրի եւ ծովու հնազանդ Օրինաց նոցայ այսինքն՝ ծնանիլ, մանկանալ, տղայանալ ծերանալ, նուազիլ եւ անկանիլ եւ սովաւ փառաւորին ամենայն ծննդոցէ թէ բանական եւ թէ անասուն բնութենէ, եւ ընծայեն այս ամենայն փառս հանդերձ պաշտմամբ եւ փառաբանութեամբ արարչին իւրեանց. այսպիսեաւ եւ բազում այլ նման սոցայ պատուէր եւ սահման Տեառն արարչին մերոյ ընթանայ 'ի վերայ ստեղծուածոց իւրոց որպէս էրէկ եւ այսօր նոյն մինչեւ կէտ ժամանակին, որում ինքն արարիչն միայն գիտէ որ 'ի բնութենէ մերմէ անքննելի եւ անասելի է, բայց 'ի աւանդութենէ սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեաց որում հաւատացեալ եմք, ուրեմն բարեկամք իմ նայերուք 'ի խառնի խուռ ընթացից եւ անսահման վարուց մերոց, որում յառաջնում անցին մէջ մեր եւ երեսս սեպհական աշխարհին մերոյ որ Վաղարշակ կալաւ տեղի Հայկայ, Բակրատ տեղին Վաղարշակայ, Ռուբէնն տեղի Բակրատայ մինչեւ 'ի պատճառէ անկարգութեան բնականապէս մնաց այսօր տեղի ամենեցուն դատարկ. անկարգութիւնս այս 'ի սկսանիլն մինչեւ կատարածն աւերման տեւեաց ժամանակս աւելի կամ պակաս իբրեւ երկու հազար ամս, այլ լուարուք ինձ բարեկամք եթէ Տէր ո'չ կամեսցի եւ քաւ մի' լինիցի պատուոյն չորից տարերաց եթէ գուցէ մտցէ յանդգնութիւն 'ի մէջ այս չորս տարերաց, որպէս եմուտ ընդ բնութիւնս մեր եթէ յառաջանայցէ մտանել արեգական 'ի տեղի հօդոյն եւ ծովն 'ի տեղի հողոյն եւ այլն. իսկոյն դղրդի տիեզերս, աւերի աշխարհ, կորնչի ամենայն բնութիւն ամենայն կենդանեաց, միջոցաւ միմիայն միոյ րոպէիւ, ուրեմն կալ եւ մնալն 'ի վերայ հաստատութիւն երկնային եւ երկրային արարածոց ըստ իւրաքանչիւրոյ սահմանին կախեալ կան, եթէ ճառագայթն հրոյ 'ի անճառելի ջերմութեամբն իւրով եւ անհասանելի մտաց մերոց եւ ծովն ովկիանոս, որում ժամանակաւ խաղար 'ի յերեսս երկրի եւ յեզաբարոյ մայրն մեր հող որում ծնաւ բնական կենդանիս 'ի զանազան ազգէ եւ քաջն անկացանալի հողմն, որում բուրէ եւ բուսուցանէ ամենայն բնութեանց 'ի սկզբանէ արարածոց իւրեանց մինչեւ ցայսօր կացին եւ մնացին հնազանդ պատուիրանի Տեառն արարչին իւրեանց եւ զտին Շնորհս 'ի Տեառնէ՝ այսինքն մնալով 'ի տեղիս իւրեանց հաստատուն մինչեւ ցայսօր եւ մինչեւ որում ժամանակի որ սկզբանէ աւանդեցաւ նոցայ մնալ, այլ միմիայն փոփոխական բնութիւնս մեր որ անօրինեցաւ եւ անցաւ ընդ Օրինօք՝ արտաքսեցաւ 'ի տեղէ եւ 'ի բնակութենէ եւ փառաց իւրմէ, եւ զրկեցաւ 'ի ազատութենէ կենաց զրաւեցաւ 'ի ծառայութիւնս մահու եւ այլն: Կամիմ ասել թէ սրքան առաւելագոյն է լրբութիւն մեր եւ որքան հպարտութեամբ միտս մեր որ ո'չ կամեցաք չափիլ զօրութիւնս մեր ընդ զօրութեան երկնային զօրաց եւ պատուանդանին երկնի՝ այսինքն հաստատութիւն երկրի, եւ ոչ 'ի միտ առաք եթէ անօրէնութեամբ առաւելանալ բնութիւն եւ կամ պատիւս մեր կարէ լինել զի արդ բարձրագոյնք եւ զօրեղագոյնք, կարեւորագոյնք քան զմեզ ո'չ կամեցան անօրինել, թէպէտ ես ո'չ գիտեմ եւ ես ո'չ ասեմ, թէ զի արդ բնութիւնս մեր անօրինեցաւ եւ շարն իմ ո'չ է 'ի վերայ այսմ մտածութեան եթէ ո'չ յատկապէս յայտնի եւ հաւատալի ձեզ առնելոյ, զի որպէս հաւաստի է աներկմտելի որ ո'չ եղեւ եւ ո'չ լինիլ կարէ ոչինչ 'ի ներքոյ արեգական եթէ ո'չ ունիցի Օրէնս 'ի ընթացս իւր 'ի որ ոք ճանապարհ եւ գործս իւր, եւ ամենայն գործ ընդ դէմ Օրինաց եւ սահմանի է միայնակ պատճառ աւերման գործոյն, որպէս 'ի վեր ասացելոյս, այլ այսպէս թուեցաւ յիս, զի բազում անգամ անկարգութենէ պատճառէ վնաս եւ աւերում յազգին Հայոց 'ի վերայ աշխարհին եւ բնակողաց արանց այնքան բազում եղեւ զի յատկութիւն վնասոյ ոչ ոք կարասցէ 'ի շարս գրչաւ արկանել, թէպէտ Ես ունեմ բազում վկայութիւն 'ի պատմութենէ Հայոց եւ այլ ազգաց առ այս, այլ ո'չ կամիմ զզուեցուցանել ունկն ընթերցողիդ վասն զի ընթերցողդ եթէ կամիս կենալ եւ մնալ 'ի ներքոյ հաւատոյ քոյ, որում հաւատացեալ ես, երկու եւ երիս վկայութիւնս միայն բաւական քեզ լինիցի հաստատել 'ի միտս քոյ 'ի վերայ բանիս իմոյ, այլ ո'չ ես եւ ո'չ ընթերցողդ եւ ո'չ ոք 'ի ազգէն Հայոց ո'չ կարէ յիշեցուցանել 'ի միտս իւր նախատինք եւ ամօթանք որում կրեցաք նախնում եւ 'ի ժամանակիս այսմիկ, եւ եթէ այն որ կրելոց եմք 'ի ժամանակ ապագայ, եթէ գուցէ կալով մնացէ վարք մեր եւ ընթանայցէ անկարգութեամբ եւ անօրէնութեամբ՝ գործս մեր որպէս յառաջնում. վեսն զի 'ի մէջ բազում յանցանաց անցելոց, ճանաչի ապագան յատկապէս այժմոյս պարզապէս երեւի որ 'ի պատճառէ անկարգութենէ մերմէ 'ի չորից կողմանց դրացեաց աշխարհէ մերմէ հրամայեցին 'ի վերայ մեր զոր ինչ կամեցան եւ մեք ո'չ գիտելով եւ ո'չ ճանաչելով պատիւն ազատութեան մերոյ, եղաք իբր ձի 'ի տան չափառի պատրաստի ով որ կամեցաւ հեծաւ 'ի վերայ մեր եւ վարեաց մեզ ուր որ ինքն կամեցաւ, եւ երբեմն դրացիք մեր արարին մեզ իբրեւ շունս յորսորդի 'ի պատճառէ անկարգութենէ մերմէ՝

հաւատալով մեր 'ի յորդորմունս նոցայ իբր արդարութիւն ելանելով մեք առ հարաւ եւ առ արեւմուտս Յունք խածատել թշնամեաց եւ դրացեաց մերոց եւ 'ի ժամանակի վրէժխնդրութեան խածատելոց մերոց, 'ի վերայ մեր ելին՝ խածատեալքն ցան եւ ցիր մեզ արարին, յայնժամ յորդորողք մեր մեզ բարձի թողի արարին ո'չ ինչ կողմանէ Օգնական ո'չ եղեն, բայց 'ի ժամանակի Շահելոյ մեր զկամս նոցայ 'ի վերայ մեր յաղօթս առնել խոստացան եւ 'ի կաղանալոյ մերոյ Շահելոյն կամաց նոցայ հրաժարեցան մեզանէ եւ մեզ նզովելով նախատեցին բանիւ ստութեամբ այսինքն, մեր վատ Քրիստոնեայք եւ անհնազանդ անտանելի հրամանաց նոցայ, որպէս 'ի միջի գրեանց նոցայ լցեալ տեսանեմք եւ զամենայն զոր ինչ նոցայ մեղադիր վասն մեր բոլորովին սուտ, եւ 'ի տանէ եւ 'ի ազգէ եւ 'ի Եկեղեցւոյ Հայաստանեաց անծանօթ՝ որ ո'չ ոք մեղադրութիւնք 'ի նոցանէ վասն մեր 'ի միջի մերոյ ո'չ երբէք զտաւ արդար, եթէ ոչ 'ի պատճառն մեղմութենէ մերմէ ասացին զոր ինչ կամեցան, այլ այժմ երկայնամիտ լերուք բարեկամք այսքան անկարգութեամբ վարելով զկեանս մեր՝ տալով տեղի այնքան ամօթանաց գալոյ 'ի վերայ մեր, զի արդ եւ վասն որոյ պատճարի եւ զինչ պտուղ արժանի կարիս սպասիլ ստանալոյ 'ի բերմանէ այսպիսի անկարգութեան վարուց եւ զինչ երկիւղ կարի մերժել սիրտս մեր եւ ընդունելի մեզ առնել զի կացցուք 'ի մէջ այսքան նախատանաց եւ ամօթխածութեան 'ի ժամանակս կենաց մերոց մինչ բարեպէս գիտացաք զի ո'չ ոք բնութիւն մերդոյ ծնաւ 'ի յերես երկրի զի կարող լինելով տացէ մեզ զկեանս անմահ եւ կամ վախճան յաւիտենական կենաց մերոց զամենայն զոր ինչ 'ի գազանէ 'ի բարբառոսէ 'ի արիւնայարբէ յերկիւղ որ գոլ կարէ ո'չ կարէ յաւելուլ չարութիւնս իւր 'ի վերայ մեր յաւելի ինչ քան թէ մահ մի բնական 'ի վերայ բնութեան մերոյ, այս մահ ո'չ ոք ետ կենաց բնական բնութեան մերոյ եթէ ո'չ գործ անօրէնութեան բանական հոգւոյ մերոյ. մեք նախ գիտացաք եւ ծանեաք այս մահ եւ ապա կամաւ յանձն առաք 'ի վերայ մեր, գործօք անօրէնութեամբ ճաշակեցաք պտուղն յանդգնութեանն յօրինաց եւ ստացաք մահ վարձս գործոց մերոց, եւ արդ ո'չ ոք 'ի մէնջ փրծանի 'ի այս մահուանէ, եւ դու որ 'ի պատճառէ երկիւղէ այս մահուս թուլանաս 'ի ազատութենէ եւ հնազանդիս անօրինաց ահա' կարիճ մի մանրագոյն, եւ Օձ մի պիղծ, եւ դեղկ մի փոքրիկ, եւ անմարս կերակուր մի սառն կարէ տալ այս մահ բնական կենաց քոց, ուրեմն ամենայն թիւնաւոր կենդանի կարի լինիլ թագաւոր քոյ, ո'չ այսպէս այլ հարկաւոր է մեզ մեռանիլ ազատ եւ պատրաստիլ վասն մեր կեանս յաւիտենականս քան թէ կալով մնալ կենդանի մարմնով 'ի կեանս անկարգութեամբ եւ ծառայութեամբ եւ պատրաստիլ 'ի հանդերձելումն վախճան յաւիտենական. քանզի անասունք եւս ո'չ ընդունին 'ի մէջ վարուց իւրեանց ոմն ինքնակալ եւ ինքնակամ իշխանութեամբ հրամայել 'ի վերայ իւրեանց, ուրեմն որքան ամօթանք 'ի վերայ բանական բնութեան մերոյ լինիցի զի հնազանդիցուք մեք 'ի առն ումեք ըստ նմանութեան եւ բնութեան մերոյ, զի ինքնակամ բանիւ հրամայեսցէ 'ի վերայ մեր, այլ եթէ գուցէ ընդունիս ինքնակամ հրամանի 'ի վերայ քոյ 'ի կնոջէ պոռնկէ կարի պատճառն գարշելի ցանկութեան, բոջախոհութեան բնութեան քոյ լինիցի, եւ եթէ ընդունիս կամս ինքնակալի 'ի զինածախէ պատճառն մոլեգնեալ կամաց արբեցութեան քոյ լինիցի, այլ համանգամայն 'ի զօրութենէ բանական հոգւոյ ծանեալ մոլութիւնն քոյ պարտիս զոջանալ զի գործ քոյ չար է եւ աւերիչ պատուական ազատութեան քոյ, հարկաւոր է քեզ ըստ բնութեան բանական մարդոյ հետ կատարելով ցանկութիւն սրտի եւ արբեցութեան քոյ լրջանալով զոջասցես եւ արասցես քեզ սահման անշարժ ուղղելոյ վատթար յանցանաց քոց, զի որդի քոյ եւ որդիս որդոց քոց եթէ գուցէ՝ շարժելով 'ի միտս իւր 'ի նոյն գործ որպէս դու յառաջնում մի' լինիցի նմայ արձակ ընթանալ 'ի գործս անօրէնութեան եթէ ո'չ շխթայիւ Օրինօք կապեցեալ ցանկութիւն սրտի եւ արբեցութեան նորայ զի նայ կացցէ եւ մնասցէ արժանի 'ի պատուոյ իւրոյ որպէս արար նմայ Տէր եւ արարիչն ամենայն արարածոց զի կարգադրելով վարք կենաց մերոյ եւ սահմանաւ վարելով զարգացուցանելով որդոց Հայոց գտցի 'ի մէջ հայաստանեաց արք իմաստունք ունենալով անխախտելի սահմանս 'ի միջի իւրեանց. յայնժամ կարի ծնանիլ 'ի մէնջ Օր ըստ օրէ արք Շնորհալիք եւ ազատք զի գիտասցեն բարին եւ կամ չար զգոյշանալոյ վասն ազգին եւ աշխարհին իւրեանց (եթէ ո'չ առաւելագոյն քան դրացիս իւրեանց նա' եւս ո'չ պակասաւոր.) եւ ճանաչելով այլ ազգիք ազատութիւն եւ կարգադրութիւն մեր, խցեն բերանս իւրեանց 'ի ծաղրաբանութենէ վասն մեր եւ մի գտանիցեն ճանապարհս ուղիղս մուծանել նենգաւոր եւ վրդովիչք անձինք իւրեանց ըստ նմանութեան գայլոյ արաբացւոյ 'ի մէջ անմեղ խաշանց եւ գառանց Հայոց, որպէս 'ի ժամանակս անցեալ, եւ այժմոյս որ կարի ասել իմ թէ առաւելագոյն եղեւ վասն հայաստանեաց, 'ի բերմանէ ուրացողաց յազգեն Հայոց 'ի աւանդութենէ Հայաստանեաց եւ մտանողաց 'ի աւանդութիւնս

այլոց քան թէ յատկապէս թշնամեաց եւ բարբառոսութեամբ բռնաւորաց մերոց, որպէս ո՛չ է շարն իմ ’ի վերայ զանկատի եւ պատմութեանց նոյն գունակ արանց, ուրեմն ո՛չ հարկաւորեսցի ասել իմ յատկապէս գործ ուրացողաց ’ի մէջ Հայոց թէ Էկլիզիաստիկաց առ ’ի պատիւս Հռոմու եւ թէ հասարակ ժողովրդոց առ ’ի պատիւն Պարսոց եւ Օսմանցւոց՝ որ երբեմն ’ի պատճառէ անկարգութենէ մերմէ ետուք տեղի աղմկի խռովութեանց եւ ծախ անթիւ երծաթոյ մերոյ, եւ կորուսանելով ժամանակս կենաց մերոց փոխարկելով սեր եւ ընտանեակցութիւնս մեր ընդ հակառակութիւն եւ երեւանցութիւն ընդ միմեանց որ սոքայ ամենեքեան եւ անթիւք նման սոցայ վնասակարութիւնք կարի հնարիւք կարգաւ եւ կանոնիւ զսպել եւ ամրափակել ճանապարհս վնասին մերոյ ըստ Օրինօք մերովք եւ մնալ երջանիկ եւ պատուաւոր որպէս սկզբանէ արար մեզ Տէր, եւ հաստատութիւն բանիս ասացելոյս այսինքն բարութիւն Օրինաց եւ սահմանաց հարկաւոր է ցուցանեմ ձեզ այսինքն, յորպէս ո՛չ ոք զօրագոյն կարեւորագոյն զոյ ’ի յերկինս եւ ’ի վերայ երկրի բայց ’ի Տեառնէ Արարչէն մերմէ միայնոյ յԱստուծոյ, որ նա՛ միայնակ արար մեզ եւ ետ զօրութիւն հոգւոյ մերոյ զի ծանիցեմք նմայ միայն Աստուած եւ նմայ միայնակ պաշտել մեզ պարտ է, այլ եթէ նմայ հաճոյ թուեցաւ առնել ստեղծագործութիւնն բնութեան մերոյ եւ այլ անխախտելի սահմանաւ եօթն աւուր ժամանակաւ զի կացցէ եւ մնասցէ եւ ընթանալով ’ի գործ ըստ Օրինօք եւ սահմանաւ մինչեւ ’ի կէտ սահմանի իւրոյ, ուրեմն որքան հարկաւոր մեզ եւ պարտ ’ի վերայ մեր կայ որ համահաւասար բնութիւնք մեր ճանաչելով փոփոխութիւն բնութեան մերոյ, եւ տարբերութիւն ժամանակին ’ի յերեսս երկրի ունիլ անխախտելի յօրէնս, հարկաւոր եւ յոյժ հարկաւոր է մեզ նախ ընտրել ժամանակն ’ի մէջ բնութեան մերոյ յերբ որ ունիցիմք սիրտ սուրբ եւ հոգի խոնարհ գթած ’ի վերայ միմեանց ողորմած ’ի վերայ ժամանակին զուր անցանց ’ի վերայ մեր եւ ’ի վերայ աշխարհին մերոյ ո՛չ ’ի կամաց մարմնոյ եւ ո՛չ վասն շահաւէտութեան յատկապէս անձանց եւ ո՛չ կողմնակալութեամբ սիրոյ եւ նախանձու, ո՛չ բարեկամի եւ ո՛չ թշնամու մի եւ կամ միւսին կողմն, այլ ամուր աչօք որ ո՛չ տեսցուք ո՛չ ոք՝ ո՛չ հայր ո՛չ որդի, ո՛չ մայր, եւ ո՛չ քեռ, ո՛չ հարուստ եւ ո՛չ տնանկ, ո՛չ տէր եւ ո՛չ ծառայ, ո՛չ բարեկամ եւ ո՛չ թշնամի, թէ ո՛չ միտս մեր ’ի վեր ընծայելով առաթուր սրբութեան Տեառն արարչին մերոյ անխտրանօք խոստովանութեամբ, զի գործ ’ի ձեռաց նորայ եմք ’ի մայրութենէ հողէ եւ իջուցանելով փքացումն բնական բնութեան մերոյ անասնականի եւ արիութեամբ ընդունիլ հեզութիւն խոնարհութիւնն զօրութեան հոգւոյ մերոյ բանականի որում ’ի փչմանէ արարչէն մերմէ ստացայք եւ սիրով միաբանութեամբ համահաւասար ամենեքեանս իջցուք եւ մատերուք առ ’ի ընտրողութիւն բարեգոյն Օրինաց եւ անխախտելի սահմանաց եւ զամենայն զոր ինչ ’ի մէնջ ընտրեալ եւ սահմանեալ նոյն ժամայն դիցուք ’ի միտս մեր զի ամենեքեան ըստ իւրաքանչիւրոք ինքն ազատապէս թագաւոր գոլով դնէ մատաւնս իւր ’ի վերայ բանին գործոյն ստացուածոց եւ կենաց իւրոց եւ սահմանին իւրոյ հատանելով վճիռ անքակտելի ’ի վերայ իւր հաստատութեամբ յորինացս անխախտելեօք, եւ սա՛ յօրէնս մեր թագաւորեսցի ’ի վերայ ազգին Հայոց եւ երեսս աշխարհին Հայաստանեաց:

Այս անխախտելի Օրէնս մերոյ ցի աշխարհ մեր արամբք եւ արասցէ մեզ երջանիկ եւ փրկեսցէ իշխանս մեր ’ի խղճմտանաց դատողութենէ պարփակեսցի բերանս ճշգոյողաց եւ առնէ մեզ ազատ ’ի ծառայութենէ եւ զսպէ վարս մեր ’ի հպարտութենէ եւ անձնահաճոյութենէ, եւ յորդորէ մեզ առ ’ի գործս բարիս, որում նովաւ պարտաւոր առնէ մեզ հեռանալ ’ի գործոց չարութենէ որում ծանեաք պատիժս եւ նախատինս ըստ Օրինօք մերովք սովաւ ծանիցեն ամենեքեան պտուղ գործոց ձեռաց իւրոց, եւ կամաւորապէս հատուցանեմք պարտս մեր ընդ միմեանց հարկս մաքսս, պատիւս, հնազանդութիւնս եւ այլն, մի՛ լիցի հարկաւոր զի բացատրեցից մի ըստ միոջէ պատճառն այսքան երջանկութեան վասն առնելոյ մեզ Օրէնս անխախտելիս, բայց այսքան որ ամենայն զոր ինչ որ ’ի վերայ մեր եւ ’ի երեսս աշխարհին մերոյ գործոց ձեռաց մերոց ելանելն եւ ծնանիլ կարէ վարձ նորայ գրեալ գտանի ’ի Օրենս մեր ’ի ազգէն մերմէ, ուրեմն ամենայն ոք ազատապէս զոր ինչ կամի կարող է գործել եթէ բարի եթէ չար, եւ ընդունիլ պարտ է վարձն գործոյն ձեռաց իւրոյ ըստ Օրինաց պատիւ եւ պատիժ, սովաւ զսպի բնութիւնս մեր եւ ընթանայ առ ’ի գործ բարիս գիտելով մեր վճիռն ինքենէ հատեալ ’ի վերայ իւր ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման, վասն այսորիկ ո՛չ երբէք մխէ՛ ձեռն իւր լրբաբար ընդ ակն եւ ընդ ատամն, քանզի բարեպէս գիտէ պտուղ լրբութեան վարուց եւ վարձ լրբաբար շարժմանց իւրոց զինչ է:

Բնականապէս գիտեմ, որ ընթերցօղն սորայ հասանիլն ’ի այս հատորիս կարի ձկտէ ’ի միտս իւր այսինքն մի՛թէ ազգ մի բոլոր ’ի երեսս աշխարհի միոյ լայնատարածի կարի հաւաքիլ ’ի մի խումբ լսել

իրաւունս եւ կազմել Օրէնս եւ կամ ընդունիլ կամ հակառակիլ կարգադրութեանց, եւ կամ յետ ընդունելութեան ո'վ իցէ, որ ընթանայցէ այս ամենայն առ 'ի գործ, վասն այդ մտածութեան լուծանեմ տարակուսութիւն մտաց քոց, Եղբայր, եթէ երկայնամտութեամբ ընթեռնուս ամենայն հատոր Օրէնս 'ի այսմ գրեցելոց նա' ցուցանէ քեզ ամենայն ճանապարհ դիւրին եւ հեշտութեամբ ընթացքս իւր, եւ որպէս 'ի միոյ կալէ որում գտանի բիւրս բիւրոց քլայ ցորեանս 'ի նմանէ առնլով կից մի եւ 'ի յերեսս նորայ նայելով ցուցանէ քեզ կացութիւն եւ արժանաւորութիւն ցորենոյ բոլոր կալին յայնմիկ, նոյն գունակ ամենայն բիւր տանէ բնակողաց 'ի երեսս երկրի մերոյ հրաւիրելով կոչումն միմիայն երկուս այրս որ 'ի նոցանէ ընտրեալ եւ ընդունելութեամբ բիւրոյ տանէ եկեալ այս երկու անձինքս կալով եւ մնալով տեղակալ եւ փոխանորդ բիւր մի տանց կատարեսցեն գործս բիւր անձանց նոցա որ առաքեցին զինքեանց, այսմ կերպիւ բոլոր աշխարհն Հայոց ո'չ հարկաւորեսցի հաւաքել յաւելի կամ պակաս հինգ հարիւր այրս փոխանակ ամենեցուն սոքօք կարի ընտրել զօրէնս ընդունելութեամբ բոլոր աշխարհի եւ ձեռնադրել:

Եւ վասն այն, որ խորհեցար թէ ով ոք որ գործածել կարէ օրէնս 'ի վերայ մեր, նա' որ յօրէնս մեր հրամայէ' եւ տայ նմայ նամակ պաշտօնատարութեան ըստ Օրինօք որ կացցէ եւ մնասցէ սպասաւոր բոլոր ազգին մերոյ եւ ջատագով Օրինաց մերոց, այս այրս ըստ բանին Տեառն պարտ է լինիլ սպասաւոր Հայոց այսինքն, ով ոք 'ի ձէնջ եղիցի մեծ նա է' սպասաւոր կրտսեր պաշտօնատար ծառայելոյ ամենեցուն, սա' լիցի բերան ազգին Հայոց եւ առաջանասցէ 'ի գործ պաշտօնի որում աւանդ է նմայ տունն Հայոց 'ի ծերակուտէ իւրմէ ըստ Օրինօք, եւ սա' եւս ընդունեսցի պտուղ գործոյն ձեռաց իւրոց ըստ Օրինաց, որպէս ես եւ դու ընթերցողդ, եւ սա' ո'չ կարէ ո'չ ոք իրօք առաւելանալ քան թէ մի 'ի փոքրկանց Հայոց, առաւելութիւնն սորայ ո'չ ոք իրօք բայց 'ի հավատարմաբար ծառայութեամբ պաշտօնիւ վասն ազգին իւրոյ, սա' լինիցի սիրելի պատուելի մեզ վասն հաւատարմաբար ծառայութեան իւրոյ, եւ սա' կացցէ եւ մնասցէ աներկիւղ բոլոր ժամանակ պաշտօնատարութեան իւրոյ եւ առանց ապաստանութեան յումեքէ քանզի ո'չ ունի կարողութիւն մազ մի 'ի գլխոյ ո'չ ոք յումեքէ յինքն ըստ կամաւ իւրով բառնալ թէ ո'չ ըստ Օրինօք վարձս գործոց ձերաց գործողաց սա' տացէ եթէ պատիւ եթէ պատիժ ըստ համեմատութեան վճռոյ դատաստանի մերոյ ըստ Օրինօք:

Նա'եւ ցուցից ձեզ նշաւակ մի որում կարէք տեսանել աչօք ձերովք որ Օրէնք եւ սահման անխախտելի 'ի մէջ ամենայն գործոյ առաւել արժէ քանց ակունս պատուականս եւ քան զօրութիւն բազկաց քաջամարտից եւ քան զգանձս բազումս, եւ զօրութիւն բազում 'ի սմանէ ելանէ, մինչեւ մեռեալս եւս յարուցանէ եւ կենդանի առնէ, թէպէտ ո'չ որպէս զօրութեամբ արարչին Տեառն Աստուծոյ, այլ իբրեւ Օրինօք եւ սահմանաւ արարեալ 'ի ձեռանէ բանական հոգւոյ մերմէ, նայերուք արհեստն ժամացուցի որում 'ի հրահայելեաց է յօրինելով զանազան կերպարանօք անդամս նորայ եւ ըստ Օրինօք կազմելով տայ նմայ կենդանութիւն շարժման եւ ցուցանելոյ մեզ հաւաստի ժամ 'ի տիւ եւ 'ի գիշեր, նաեւս Օրինօք համարելով ջրաղացս տալով նմայ չափաւոր կերակուր ջրոյ նայ կենդանանայ շարժմամբ եւ ծառայէ մեզ աշխատութեամբ որում մխիթարիմք 'ի ծառայութենէ նորայ եւ լնանիցիմք հացիւ, նա' եւ հասմանաւ որսամք ձկունս 'ի սրնթագնացութենէ իւրեանց 'ի խօր ծովէ դուրս հանելով նոցայ որում 'ի նախնում եւ 'ի առաջնում 'ի միջի մեր իբր անհնարին էր, եւ սահմանաւ իջուցանեմք թռչունս 'ի բարձրութենէ յօդոյ եւ կալանաւոր առնեմք նոցայ յորոգայթիւ որ այժմոյս մեզ եղեւ դիւրին որ առաջնում անհնարին, եւ սահմանաւ մուծանեմք առիւծն մէջ յորոգայթի որում յօրինող յորոգայթին ո'չ կարէ կալ առաջի կալանաւոր առիւծոյն իւրոյ որպէ մի, բայց սահմանաւ տիրեսցէ հպարտութեան նորայ, եւ արդ՝ հաստատեմ 'ի միտս ընթերցողիդ բնական իրաւամբ այլ իմն բան կասկածանաց որ՝ եթէ անասուն նբութիւնք 'ի ներքոյ արեգական թէ 'ի յերեսս երկրի եւ թէ 'ի խոր ծովու ունէին զօրութիւն հոգւոյ բանականի որ ծանիցէին անօրենութիւն գործոյ մերոյ եւ բառցումն ազատութեան 'ի բնութենէ մերմէ եւ անկանիլ բնութիւնս մեր լծորդի 'ի ծառայութեան եւ հաւասարիլ ընդ ինքեանց եւ նմանեալ նոցայ, նա' ես եթէ իմանային, որ մեք ո'չ պահեմք պատիւն ազատութեան մերոյ եւ ոչ պատիւն զօրութեան բանական հոգւոյ մերոյ արիութեամբ, Ես ո'չ երկբայիմ, զի իսկոյն նոքայ հանէին երկիւղ 'ի սրտէ իւրեանց եւ յանդգնէին 'ի հնազանդութենէ մերմէ, եւ նոքայ իշխէին 'ի վերայ մեր որպէս յիշխեցին ինքնակամ իշխանք 'ի անցելում ժամանակի, վկայութիւն բանիս որում տեսանեմք այժմոյս ոմանք 'ի գազանաց իշխեն 'ի վերայ մեր եւ գիշատեն ոմանց 'ի մէջ մեր նոցայ որ ո'չ պահելով պատիւս

ազատութեան իւրոյ ոչ կրթելով զինքն 'ի զէնս եւ զասպարս՝ ընթանան վարիւք անասնոց եւ անբանից եւ գիշատին 'ի նոցանէ, ուրեմն եթէ չիցէ առաւել արժանի վասն պատուոյ մարդոյս Օրէնս եւ սահմանս, թերեւս հարկաւոր է մեզ ունիլ Օրենս ու սահմանս վասն ջատագովելոյ անձին մերոյ 'ի դժնդակ գազանաց եւ գիշատօղ գայլից, զի մի' լինիցի զի զուր պատառեսցուք 'ի գազանէ ինքնակամէ, այլ որպէս բազմիցս ասացի եւ 'ի վերայ նոյն մտաց հաստատուն կամ եւ հաստատեմ 'ի միտս ձեր, որ լաւ է մեզ մեռանիլ եւ 'ի ջանել 'ի խորս գերեզմանի քան թէ կալ եւ մնալ անօրէնութեամբ կենօք 'ի նախատանս, զի անօրէնութեամբ եւ արտաքոյ կանօնի կեանք ում որ իցէ տուժելի է քան թէ պատիժն խորին դժոխոց, վասն զի ո'չ զինքն եւ ո'չ ընտանիս եւ ո'չ բարեկամս եւ ո'չ դրացիս եւ այլն ո'չ կարէ խաղաղութեամբ մնալ եւ ամենայն ցայլ եւ ցերեկ եւ 'ի միջի ամենայն գործոց բարեաց եւ չարեաց կայ 'ի ներքոյ վտարանդի ո'չ թէ միայն փոքրն եւ կրտսերն եւ աղքատն եւ նուազն, այլ նա'եւս շատն մեծն հարուստն եւ կարեւորն համախոհ վտարանդի կենօք կորուսանեն ժամանակս կենաց իւրեանց մեռանելով իբրեւ անասուն եւ անբան, եւ որպէս անօրէնութեամբ վարիւք 'ի այսմ աշխարհիս կորնչին, նոյն ինքն վտարանդի շարժմամբ կացցէ 'ի հանդերձելումն 'ի տանջանս, զի ո'չ ումեքէ լինիցի լսել 'ի բողոքմունս նոցայ 'ի հանդերձելումն, թէպէտ բնական իրաւամբ գտցին տեղի բողոքելոյ ասելով՝ այսինքն իշխանք աշխարհին մերոյ որում ես կացի 'ի մարմնի ո'չ ետուն սահման վարելոյ զկեանս մեր եւ մեք ո'չ ծանեաք թէ որպիսեաւ զսպել մեզ հարկաւոր էր կեանս մեր, վասն որոյ ո'չ գոյ մեղք մեզ 'ի անօրէնութենէ կենաց մերոց եւ այլն, այլ մեք ճանաչելով արդարութիւն Տեառն արարչին մերոյ եւ անաչառ դատողութիւնն նորայ ո'չ երկրայիմք զի առանց մխիթարութեան իւիք եւ առնելոյ դատաստանի թողցէ թափուր խղճուկ ժողովրդոց, եթէ ո'չ կարի մխիթարելով նոցա արձակել միայն 'ի կորուստ, այլ իշխանք նոցայ 'ի խորին դժոխս առ 'ի վրէժխնդիր, գիտելոյ զկամս Տեառն իւրեանց եւ ո'չ առնելոյ, այլ ո'չ է կամք իմ զի մուծանելով 'ի սիրտս ձեր երկիւղ դժոխային զի նովաւ հաւանեցուցանեմ ձեզ ընդունիլ Օրէնս կանօնաց եթէ ո'չ ցուցանելով ձեզ յատկապէս բարութիւնն կանօնի սահմանի եւ վնասն անօրէնութեան վարուց որ արասցէ մեզ իբր մարդ 'ի պատուոյ եւ արժանի որդէգրութեան հօր, զի որոշեսցի բանականութիւնս մեր 'ի բնութենէ անասնոյ եւ գտցի զինքն ըստ բանին Տեառն այսինքն, որդիք աշխարհիս յայսմիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ, նայերուք բարեկամք զի փրկիչն մեր բարեգոյնն Քրիստոս որ գիտաց զկամս եւ զգործս եւ զբնութիւնս մեր նա' ո'չ իմաստնագոյն ասաց ամենայն մարդոյ թէ ո'չ որդիք աշխարհիս յայսմիկ, ուրեմն այս է զանազանութիւն որդոյ եւ մարդոյ, որ պահելով պատիւ ազատութեան իւրոյ եւ հնարն կարգադրելոյ փոփոխական բնութեան իւրոյ՝ գտանին շնորհս որդէգրութեան որպէս կրկին ասաց՝ ետ նոցայ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ, տես դու եթէ 'ի միջի ձեր եւ ըստ սովորութեան մերոյ ոմն հայր ռամիկ եթէ գտցի վատթարութիւն 'ի գործս որդոյ իւրոյ հանէ նմայ հայր 'ի որդէգրութենէ իւրմէ, ուրեմն որքան առաւել բարութիւն մեզ հարկաւոր է, զի զսպեսցուք կեանս մեր ըստ Օրինօք եւ ազատութեամբ զի արժանի գտցուք պաշտօնի Տեառն եւ ընկալցուք 'ի նմանէ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ. այլ մի' սպասիր բարեկամ գտանել քեզ տեղի պաշտօնի այնքան անարատ առաջի ատենի Տեառն, եթէ ո'չ գիտես յօրէնս Տեառն եւ յօրէնս վարուց կենաց քոց եւ ո'չ ճանաչես բարի եւ չարն եւ ո'չ վարձ գործոց ձեռաց քոյ ըստ ասացելոյն սրբազան Պօղոսի՝ պատիւ ըստ արժանեաց, ուրեմն հարկաւոր է մեզ ջանալ եւ ընտրել բարեգոյն Օրէնս եւ սահմանս վասն կենաց մերոց, այսքան կարճ ժամանակաւ 'ի երեսս երկրի, որ եթէ ըստ ասացելոյն մարգարէին ութսուն ամ, եւ կամ 'ի բերմանէ ժամանակին քանիցս ամ որ իցէ կալով մնայցեմք 'ի մարմնի արժանի գտցուք մեզ որպէս մարդ 'ի պատուոյ եւ արժանի որդէգրութեան արարչին մերոյ պահելով պատիւն զօրութեան հոգւոյ մերոյ որում աւանդէ առ մեզ զերափայլ եւ ամենապայծառ պատուականութենէ Տեառնէ եւ արարչէ մերմէ, զի նայ արժանի պատուոյ մեզ արար եւ այնքան զմեզ սիրեաց, որ ո'չ միայն բանիւ հրամանաւ միայն ստեղծեաց մեզ որպէս միւս արարածք, այլ 'ի լուսափայլ եւ մաքրազարդ անճառելի շնչովն իւրմէ փչեաց զօրութիւն եւ բանականութիւն հոգւոյ մերոյ, որ 'ի յայնմ ժամանակէ կայ եւ մնայ բանական եւ իմաստութեամբ զօրութիւն 'ի մէջ հոգւոյ եւ մարմնոյ մերոյ մինչեւ 'ի կէտ սահմանին իւրոյ, ուրեմն ո'չ թէ միայն հարկ այլ յատկապէս պարտ 'ի վերայ մեր կայ պահել այս շնորհալի զօրութիւնն հոգւոյ մերոյ ազատ անարատ տէր եւ թագաւոր 'ի մէջ մարմնոյ աշխարհին մերոյ զի մի' գուցէ ծուլութեամբ եւ անզգոյշութեամբ կաղանալով թոյլ տացուք զօրութիւն ազատութեան մերոյ մտցէ 'ի ծառայութիւն, եւ շնորհն ազատութեան բանականութեան մերոյ ո'չ հարկաւորի ո'չ գանձոց ո'չ ոսկոյ, ո'չ երծաթոյ եւ կամ

ականց պատուականաց, վասն զի սոքայ ամենեքեան պատճառեն անօրինաց անիրաւանալոյ, վատթարից հաջոյանալոյ, ստախօսից կաշառօք արդարանալոյ, անարժանից պաշտօն գտանելոյ, ծերոց ընդ կուսի ամուսնանալոյ, այլ ազատութիւն բանական բնութեան մերոյ միշտ փայլի 'ի մէջ ամենայն ժողովրդոց մեծաց եւ փոքունց, որ երբեմն հովիւ մի քաջ որում ընդիմանալ զայլոց եւ անձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց, բարեգոյն ազատ եւ պատուելի մարդ կարէ լինիլ քան թէ իշխան մի երկչոտ յոռի եւ ծուլ զի տացէ տեղի ցրուելոյ ժողովուրդս իւր:

Նա'եւս ամենայն Օրէնք եւ սահմանք 'ի բանական բնութեան համեմատ 'ի բանական զօրութենէ հոգւոյ սահմանեալ 'ի ճաշակս բնութեան մերդոյ քաղցր է, եւ 'ի ընթեռնելոյ ձերոյ 'ի շարս օրինաց յայսմանէ ես ո'չ երկբայիմ զի հաջեսցի կամաց ձերոց զի ո'չ միայն ընդունելի ձեզ ընթերցօղաց լինիլ կարէ, այլ նա'եւս հաւատամ ես զի գրկել եւ 'ի մէջ կրծոց սրտից ձերոց պահել կարէք Օրէնս զայս, եւ որպէս ամենայն անօրէնութիւն ելանելն 'ի բնութենէ մերմէ ծնանի 'ի տարբերութենէ ժամանակին եւ 'ի խելագարութեամբ գործոյ մերոյ, եւ յետ ծնանելոյ անօրէնութեան մէջ մերՆա' տայ տեղի մեղաց եւ ընդունելութիւն մեզ զի մտցէ անօրէնութիւն 'ի մէջ մեր եւ սովորութիւն լինիցի մեզ ընդունիլ անօրէնութիւնք իբրեւ Օրէնս, այսինքն թէպէտ ամենայն բնութիւն մարդոյ բնականապէս խոստովանի ակն ընդ ական եւ ատամն ընդ ատաման արդարութիւն, այլ 'ի տարբերութենէ ժամանակի որում 'ի գոռոզութենէ իմմէ եւ կամ 'ի ջերմութենէ արենէ բնութեան իմոյ, եթէ գուցէ զի ես խորտակելով ատամս դրացւոյ իմոյ, այնմ ժամանակին դժուարին լինի ընդունիլ իմ տալ վճիռ 'ի վերայ գործոց ձեռաց իմոց զի հատուցանելով ատամն իմ փոխան ատամոյ խորտակեցելոյ դրացւոյն իմոյ, եթէ 'ի մէջ աշխարհին մի' գտցի Օրէն անխախտելի եւ եթէ գուցէ զի ես զերծից 'ի հատուցմանէ պարտուց մեղաց իմոց ատամնայարութենէ եւ միմիայն միով անձամբ զերծանելոյ իմոյ 'ի յօրինացն համանգամայն մտցէ անօրէնութիւն 'ի մէնջ, զի վաղիւն դու փորես աչք եղբօր քոյ, միւսն յափշտակէ զինչ դրացւոյն, միւսն բռնադատէ կուսի պատուոյ եւ այլն, ըստ բանին մարգարէին պատճառելով ըստ պատճառ մեղաց ընդ մարդ որ գործէ զանօրէնութիւն, այնպիսի աւերի Օրէնս սահմանս որպէս այժմոյս աւերեալ կայ եւ հոտի երկիր 'ի գարշութենէ անօրէնութեան, թարշամի բնակօղք, խոնարհի ազատութիւն եւ անպատիւ այլազգիքն իշխեսցեն 'ի վերայ մեր, եւ 'ի պատճառէ անկարգութենէ ո'չ թէ միայն թշուառանամք, ազգաւ նա'եւս ամօթալից լինիցիմք 'ի յերեսս երկրի պարտաւոր Տեառն Արարչին մերոյ եւ կատարումն 'ի գեհեն պատժոյ նմամք:

Երկայնամիտ լերուք 'ի վերայ յանցանաց անցելում ժամանակի եւ 'ի վերայ այսմ ժամանակիս որ 'ի միջի կամք 'ի վերայ գործոցն ինքնակալ իշխանաց եւ ինքնակամ հրամայեցելոց, որ թէպէտ նո'քայ ո'չ պակասեցան պատրաստիլ անձինս իւրեանց ամրանալով 'ի միջի ամուր պարսպեալ բերթօրէից եւ 'ի միջի փակեալ դրօք պալատից եւ ներքոյ պահպանութեան հաւատարիմ ծառայի'ց պահակի եւ ամենայն զգոյշութիւն պահպանութեամբ որքան կարն իւրեանց հասու եղեւ եւ 'ի միտս իւրեանց ձկտեցաւ զինքեանց ապահով առնել, այլ ընթեռնուլ կարեմք 'ի պատմութիւնն անցելոյն ժամանակի եւ բազմից ընթերցօղացդ հանդիպեալ իցէ աչօք տեսութեամբ եւ ականջօք լսեցեալ, եւ ես փոքրիկն 'ի ձէնջ ընթերցայ լուայ եւ տեսի յոյժ, զի իշխան ինքնակալ եւ դատաւոր ինքնակամ 'ի վերայ հնազանդեցելոց իւրոց միշտ ահարկու եւ սարսափելի եղեւ, եւ ժողովուրդք նոցայ կատարելոյ կամս եւ հրամանս նորայ 'ի պատճառն երկիւղի իւրեանց. այսպիսի իշխանք բազում եթէ նախնում եւ եթէ այժմոյս մէջ Քրիստոնէից եւ եթէ մէջ հեթանոսաց ճաշակեցին մահ դառնութեան, ոմանք դեղակուր, ոմանք յեղձուցեալ մէջ քնոյ, ոմանք սրով խորովեալ 'ի դաշտի յորսի, ոմանք իսկոյն ձեռնամուխ լեալ 'ի անարժան յառնէ, այս ամենայն եղեւ եւ լինիլ կարէ պատճառն կատարելոյ կամն միմիայն միայնոյ ինքնակալի ընդ դէմ կամաց հասարակ ժողովրդոց, եւ իշխանութիւնն յիշխանիս 'ի վերայ ժողովրդեանց յորում լռեն եւ հնազանդեն նմայ, եւ ընդունի արարս նորա ո'չ ըստ կամօք իւրեանց եւ ո'չ ըստ սահմանի Օրինօք բայց 'ի յերկիւղէ, եւ որպէս սահմանէ աշխարհիս եւ բնութիւն մարդոյ զի զոր ինչ երկիւղ քաջութիւն սէր եւ հակառակութիւն եւ ամենայն զոր ինչ որ գտանի 'ի ներքոյ արեգական եւ 'ի յերեսս երկրի՝ մի' մնասցէ յաւիտեան եթէ ո'չ միշտ թուլասցի եւ անկանիցի, նա' եւս կրկին ծնանի ըստ սովորութեան տարբերութեան աշխարհիս եւ բնութեանս մերոյ, նոյն գունակ հնազանդողք ինքնակալ տերանց, եթէ կալով մնասցեն 'ի հնազանդութիւն վասն երկիւղի եւ ապա օրաւուր թոյլանալոց է սարսափելութիւնն երկիւղին իշխանին իւրեանց 'ի ծանօթութիւնս հնազանդողին եւ օրաւուր

պնտանալոց է սիրտ հնազանդելոց, մինչեւ ծայր յուսահատութեան կատարումն լինի, որպէս 'ի վեր ասացաք առնուլ վրէժ նենգաւորութեամբ որ է մեղք մեծ ոմն քաջութեամբ ձեռնամուխ, որն հեղգեալ դաւաճանութեամբ դեղակուր, ոմն երկչոտ փախստամբութեամբ ապստամբ եւ այլն, եւ 'ի պատճառէ այսպիսի գործոց գրգռի հանդարտութիւն բնութեան մերոյ յարիցեն տգէտք առ 'ի վրէժխնդիր անկանի զահ, խորտակի աթոռ իշխանութեան այլանդակ եւ գազանաբարուք գտցեն ժամանակ կատարել զչար ցանկութիւն սրտից իւրեանց իբրեւ անասուն փառաւորին 'ի վերայ անօրէնութեան շարժմանց իւրեանց ո'չ նայելով եւ ո'չ 'ի միտ առնուլով թէ՝ որ ոք անօրէնութիւն եւ չարութիւն որ ինքնակամ գործովք գործեցեալ, մի' աւելցի վարձ անօրէնութեան գործոց իւրոց առաւել քան թէ կատարելոյ միմայն ցանկութիւն հնգից զգայեարանաց բնութեան իւրոյ որում բազմից առաւել եւ դիւրին եւ հեշտութեամբ կատարել կարէ նոյն ըստ Օրինօք եւ գտանել զինքն մարդ 'ի պատուոյ 'ի յերեսս երկրի, եւ արժանի 'ի կեանս յաւիտենականս 'ի հանդերձելումն քան թէ անօրէնութեամբ նմանեցուցանելով զինքն անասնոյ անբանի եւ յարուցանելով նախատինս 'ի վերայ պատուոյն բանական բնութեան իւրոյ եւ դատապարտելով զինքն եւ հատանելով վճիռ իւր վարձ գործոյ անօրէնութեան իւրոյ 'ի գեհեն հրոյ, ուրեմն որքան հարկաւոր է մեզ եւ որքան բարութիւն 'ի վերայ մեր բերէ ընդունիլ Օրէնս այն որ մեզ բոլորեցունց հաջեսցի, եւ նոյն Օրինօք եւ սահմանաւն ելցէ հրաման 'ի մէնջ ձեռամբ հաւատարիմ ծառային ազգին մերմէ եւ Տեառնէ մերոյ, զի նա' ինքն մնալով իբրեւ գառ անմեղ սուր 'ի ձեռին պահպանութեամբ եւ հուր առաջի նորայ զի կիզելով մաքրեսցէ անօրէնս եւ սրով կոտորեսցէ թշնամին ընդ դէմ արդարութեան ըստ Օրինօք մերովք, եւ ամենայն բնակիչք աշխարհին մերոյ կամաւ ընդունելութեամբ յանձն առնուն վարձ գործոց ձեռաց իւրոց թէ կեանս պատուականս եւ թէ մահ նախատանօք փոխանակ գործոյ անօրէնութեան իւրեանց ոչ 'ի յառնէ 'ի հրամանաւ ինքնակամ յիշխանէ եւ ո'չ 'ի սպանօղէ՝ եթէ ո'չ միայնակ 'ի ձեռանէ իւրմէ հատեալ վճռէ Օրինաց իւրոց, զի սովաւ փրծանի ամենայն իշխանք եւ դաւաճանութեանէ եւ նոքայ ամրափակեալ մնան 'ի ներս խորին կրծից սրտից բոլոր ժողովրդեան պահպանեալ կատարեալ սիրով եւ հնազանդութեամբ:

Եթէ գուցէ ընթերցօղ սմայ ո'վ ոք ոմն որ իցէ' որ ո'չ կամի որոնել 'ի միտս իւր լաւն եւ վատն, բարին եւ չարն, եւ 'ի միտս իւր առնէ թէ այսքան բարութիւն Օրինաց զի արդ 'ի միտս ոչ առին յամայն իշխանք եւրոփու եւ կամ այլ ոք ինքնակալ թագաւորութեամբ յիշխողք 'ի վերայ ազգաց, վասն բանիտ այդորիկ ասեմ որ նոքայ ունին 'ի միտս եւ ամենեքեան յարաժամ գովաբանեն յօրէնս Հռոմայեցւոյց, եւ պատմութիւն աշխարհագրաց նոցայ ցուցանեն երջանգութիւնն ժամանակին նոցայ մինչ վարէին իշխանութիւնս իւրեանց ըստ Օրինօք անխախտելեօք յաւելի քան թէ վեց հարիւր ամս, եւ նովաւ պատմեն նախագուշակքն ազգին նոցայ այսինքն, Հռոմուլուս եւ Ռէմուս երկուս եղբայրս որում քառասուն հաւատարիմ բարեկամօք ելին 'ի գործ քաջութեան ըստ Օրինօք եւ այնքան երջանկացան մինչեւ գտան Օրէնս իւրեանց տէր եւ թագաւոր 'ի վերայ երիս բաժին 'ի չորս բաժնաց աշխարհիս, այլ յետ այնորիկ եմուտ 'ի մէջ նոցայ ժառանգաւոր կայսերութիւն որում առաջնում Օրէնս նոցայ ոչ խոստանայր տալ իշխանութիւն ժառանգաւոր ումեք, բայց նորայ որում ընտրողութեամբ արժանի գտանիցիւր, եւ յանել զիշխանութիւն 'ի նմանէ 'ի պատճառէ գործոց ձեռաց անօրէնութեան նորայ, եւ յետ մտանելոյ մէջ նոցայ սովորութիւն ժառանգաւոր իշխանութեան Օր աւուր թուլանալով նուազեցան մինչեւ անկան, այլ գրէ թէ դեռ եւս 'ի ժամանակի յայսմիկ մէջ իշխանութեան Եւրոփացւոց գտանի բազում մասունս անխախտելի Օրինօք վարմունք որում թագաւորք նոցայ ո'չ իշխեն փոխարկել, եւ միշտ ընդունին կարծիս ծերակուտին իւրեանց, որ ելեալ 'ի խորհրդարանէ եւ 'ի միջէ ծերակուտից նոցայ առաւելագոյն քան զամենեսեան, ազգն մեծ բրիթանիացւոց որում պատիւ թագաւորին իւրեանց յորջորջեն ազատութիւն եւ Տեառն իւրաքանչիւր ընչից իւրաքանչիւրոք անձանց. որովհետեւ շարն խօսից իմոց է'հաս մինչեւ ցառտ որում յիշումն եղեւ ազգն հռոմայեցւոց՝ հարկաւոր համարեցի փոքրիկ խօսիւք յիշեցուցանելով 'ի միտս ընթերցողիդ դնել մասն ծայրագոյն գործին հռոմայեցւոց ընդ յայսմ որում ընդ հանիւր աշխարհ գովաբանեցին արարս նոցայ, եւ արարք նոցայ 'ի ժամանակի երջանկութեան նոցայ այնքան բարեգոյն, եւ բազումք են որ ո'չ յինէն եւ ո'չ ոք գրճագրոց պատմել կարէ, բայց ընթեռնուլ պատմութիւնս նոցայ, եւ յոյժ հարկաւոր է մեզ ջանալ եթէ կարելի լինի պատմութիւնն հռոմայեցւոց սկզբէն մինչեւ նուազիլ նոցայ 'ի հայոց բառբառ թարգմանել, որպէս ունին ըստ իւրաքանչ ամենայն ազգ եւրոփացւոց ընդ իւրեանց եւ ով ոք որ այս պատճառ թարգմանութեան եւ բարի

նշաւակիս լուսածելոյ մէջ հայոց լիցի՝ յիշատակ նորայ մնասցէ պատուելի ’ի մէնջ մեր, եւ այս ազգ որում յիշատակի հռոմայեցիք նախնին սոցայ գտաւ երկու երիտասարդէ եղբօրէ որում Աւագն անուան իւր Հռոմ, եւ կրտսեր Իւլոս, այս հռոմ եւ Իւլոսս գտան ըստ բնութեամբ անձամբ զուարդ եւ սրտիւք քաջ յատկապէս երկայնամիտ ընդ ամենայն գործս իւրեանց, սոքայ հաւաքեցին ընդ իւրեանց արք քառասուն ըստ նմանութեան անձանց եւ մտաց եւ կամաց իւրեանց ետուն զանձինս իւրեանց ընդ միմեանց հաւատարիմ սիրով անխախտելի բարեկամութիւն, եւ ընդունեցին սահման ’ի մէջ նոցայ անխախտելի Օրինօք, որ ո'չ ոք ’ի մէնջ գտցի մեծ եւ ոչ ոք փոքր եթէ ո'չ համահաւասար եղբարք աշխատող վասն ազատութեան եւ պատուոյն իւրեանց, եւ գործս այս համարեցին արդարութիւն ’ի յերեսս երկրի եւ այլն, այս քառասուն անձինքս ելան ’ի դաշտն սկսեցան ’ի գործ աւազակութեան, ո'չ կողոպտելով զինչս այլոց վասն ազահութեան եւ հարստութեան իւրեանց եթէ ո'չ վասն հարկաւորութեան եւ ծախոյ վասն կարեաց կենաց իւրեանց, եւ աւարն զոր ինչ գտան իւր հաւասարապէս ծախելով ’ի վերայ հասարակապէս կարեաց իւրեանց, եւ մնացորդքն բարեպէս պահպանէին եւ հասուցանէին ’ի տեղի սեպհական տերանց եւ յետս դարձուցանէին նոցայ, այսպիսի բարեպէս աւազակութիւնս սոցայ հոջակելով ’ի երեսս երկրի բազումք վաճառականք եւ տէր ընչից եւ գաւառաց, տեսանելով հաստատութիւն պայմանին եւ դաշնաց սոցայ, եւ պահելով զուխտս խոստմունս իւրեանց, զի ոչ ոք ’ի նոցանէ անցանել կարէր ’ի խոստմանց եւ սահմանէ դաշանց իւրեանց, կամաւորապէս ելին եւ մտին ընդ ժողովս այս հռոմայեցւոց խոստանալով տալ նոցա ոմանք հարկս, ոմանք մաքսս, ոմանք հասս եւ ստանային դաշին ’ի նոցանէ պահպանութեան, եւ դաշին սոցայ այնքան հաստատեցաւ, եւ պայման սոցայ այնքան աներկբայեցաւ եւ պահպանութիւնն սոցայ այնքան աներկիւղալի գտաւ զի բազմիցս անգամ խեղդեցաւ զօրաւար հռոմայեցի, պատճառն կողոպտելոյ միոյ հաւի եւ երբեմն պատճառն մի քալամի որում կողոպտեալ գտաւ ընդէմ դաշնադրութեան սահմանին իւրեանց, վասն որոյ Օրաւուր բարձրանալով համբաւ բարութեան օրինաց եւ սահմանաց սոցայ, ժողովեցան ’ի վերայ սոցայ ’ի չորից կողմ աշխարհէ բազմութիւն երիտասարդաց, եւ սոքայ առնուլով ճաշակն քաղցրութեան սահմանի ’ի Շրթունս իւրեանց՝ Օրաւուր պնտեցին Օրէնս եւ սահմանս իւրեանց համեմատ բնական բնութեան մարդոյ, մինչ զի հաճեցան զողանալ կանայս այնքան որում հարկաւոր գտանիւր վասն բնութեան իւրեանց ամուսնանալոյ, նա'եւս երկայնամտութեամբ արարին սահման ընդ մէջ իւրեանց տալ լիալիր ազատութիւն կանանց ամուսնացելոց ընդ ինքեանց, եւ պատիւ կանանց յաւելացուցին քան զամենայն իշխանաց, որում փառաւորութեամբ անցուցանէին կանայս սոցայ զկեանս իւրեանց ’ի մէջ բանակին սոցայ, սովաւ գտան առատութիւն կանանց ընդ մէջ իւրեանց, քան զի բնութիւն կանանց միշտ սիրէ փառս, եւ ամուսնացան եւ յարուցին որդիս եւ դստերս եւ արարին սահման իմաստութեամբ վասն զարգացուցանելոյ որդիս եւ դստերս իւրեանց, որում մի ’ի բարեգոյն սահմանին զարգացուցանելոյ մանկանցն էր, այսպէս զի մանուկ ոմն ’ի ժամանակն ամաց հնգից ’ի ծագել արեւու ելանելն նորայ ’ի մահճէն քնոյ առնուլ պարտ էր նմայ զէն եւ զասպարս իւր եւ ելանել ’ի տանէ գօտի ընդ մէջ ածեալ զինուորեալ ամենայն կերպարանօք պատրաստի իբրեւ զինուոր մտանէր ’ի տեղի որում ամենայն որդիս հռոմայեցւոց ժողովին անդ իբր դպրատուն, եւ վարպետ սոցայ մրզէր եւ կրթէր սոցայ երկու ժամ ժամանակաւ առ ’ի գործ զինուորութեան. այնույետ արձակէր նոցայ ’ի տունս իւրեանց, առ ’ի հրամէնք, նա' եւս ունին սահման մէջ իւրեանց, որ ո'վ ոք մանուկ զի գործ զինու իւրոյ որում դաս առեալ ’ի վարպետէ իւրմէ ո'չ սերտիցէր եւ ո'չ հաստատիցէր ’ի միտս որում աւանդեցաւ ’ի վարպետէն իւրմէ եւ ո'չ կարացէր հարկանել նետաւ իւրով ’ի նշանին կրթութեան, վճիռն անխախտելի հատեալ ունին ըստ Օրինաց իւրեանց ’ի վերայ այնպիսի մանկտաց զի ամենայն մանկունք կատարելով գործս իւրեանց, դառնային եւ մտանէին ’ի տունս իւրեանց ուրախութեամբ եւ ընդունէին հրամէնք առաւօտեան, այլ նայ որ ո'չ կարաց դասն իւր կատարել եւ հարկանել նշանին կալով մնայր ’ի դպրատանն ’ի դաշտի յոյժ տխրութեամբ եւ ամօթխածութեամբ եւ ջանալ պարտ էր աշխատանօք մինչեւ փոխանակ մի հարկանելոյ հարկանիցէր երկուս նշանին իւրոյ, ապա' թոյլ տային նմայ դառնալ ’ի տուն իւր եւ առնուլ հրամէնք, եւ եթէ նայ ոչ հարկանէր նշանին պարտ էր նմայ կալ ’ի դաշտին մինչեւ վեց ժամ ժամանակաւ անսվաղ, եթէ որդի ռամկի եւ եթէ նշանաւորի, եւ այլ բազում իմաստութեամբ սահմանաւ եւ անխախտելի Օրինօք վարելով սոքայ ժամանակս իւրեանց մինչեւ աշխարհ ամենայն ցանկացան մտանել ’ի պահպանութիւն նոցայ. եւ լինիլ ժողովուրդ նոցայ. սովաւ բազմացան սոքայ եւ եղեն յազգ

անուանեցին հռոմայեցիք եւ եղեն տէր աշխարհաց եւ գաւառաց, հաստատեցան 'ի գործս եւ արարին տուն ծերակուտի անուանեցին անուն տանն Կամպիթօլ, որում ամենայն հրաման անտի ելանէր այսինքն 'ի տանէ ծերակուտից ըստ Օրինօք եւ գործ ածէր ձեռամբ պաշտօնատարի, որում պաշտօնն տային ծերակուտքն, եւ պաշտօնատարս թէպէտ իշխէր 'ի վերայ ամենայն զօրաց եւ գնտից զինուորաց, եւ տայր պատերազմ եւ առնէր աւար վասն հռոմայեցւոց, այլ որում ժամանակի որ գտանէր մեղք եւ սղալանք մի 'ի գործոց ձեռաց եւ կամ արարս ինչ ընդդէմ Օրինաց յորում որպէի որ հրաման ելանէր 'ի ծերակուտէն առ պաշտօնատարն, զի յանձն արասցէ զօրութիւն իւր զինուորօք եւ զինուք առ այլ, որում հրամայեցեալ լինէր խորհրդարանէ ծերակուտից եւ դառնալ առ 'ի կոչումն ծերակուտից համանգամայն կատարումն առնէր հրաման ծերակուտին ըստ Օրինացն որպէս փայլակն սրնթագնացի, նա' եւս ունին Օրէնս զի տային պաշտօնս պաշտօնատարաց ժամանակաւ եւ երբեմն հողագործի միոյ եթէ արժանի գտանիւր եւ ստանէր նայ պաշտօն նախարարութեան եւ ընթանայր 'ի գործ եւ գործէր գործս իւր յոյժ իմաստութեամբ, որ երջանիկ առնէր զինքն եւ բոլոր յազգն իւր այնքան անկեղծ եւ առանց ցանկութեան ընչից եւ կատարեալ հավատարմութեամբ եւ սիրով, որ երբեմն 'ի ժամանակս երիս ամօք վարելով գործ նախարարութեան սպարապետութեան իւրոյ, եւ յետ լրումն ժամանակին պաշտօնին իւրոյ՝ յետս դարձուցանէր հրովարտաքն պաշտօնէին նախարարութեան իւրոյ 'ի խորհրդարանի ատենի ծերակուտին եւ գտանէր Շնորհ ընկալութիւն բոլոր տանէն հռոմու վասն բարեպէս կատարելոյ գործ պաշտօնէին իւրոյ, եւ ինքն ելանէր դատարկ 'ի հարստութենէ կալով մնայր մի եւ նոյն հողագործ որպէս առաջնում, եւ անխտրանօք կրկին մտանէր առ 'ի գործ իւր հողագործութեան առանց տեղի բամբասելոյ եւ ծաղրելոյ, եւ արդ հաւատարմաբար գործ պաշտօնին սորայ նայերուք ընթերցողք, որ սա' երբեմն հրամայեաց 'ի վերայ երկու հարիւր քառասուն հազար զօրաց եւ հատոյց նոցայ ռոճիկ եւ ծախկարեաց եւ հարկաւորութեանց նոցայ, եւ բոլոր բանակին եւ ո'չ ձգեաց 'ի միտս իւր առնուլ լոմանս հինգ յաւելի քան զայն որում 'ի ծերակուտէ խոստացեալ էր ռոճիկ վասն իւր, եւ զամենայն զոր ինչ որ ստացաւ 'ի ժամանակի իշխանութեան իւրոյ առատաձեռնութեամբ ըստ նմանութեան առատասիրտ զինուորի ծախեաց ըստ վայելուչ պաշտօնին իւրոյ սպարապետի, եւ մինչդեռ սպարապետ էր եկաց եւ նմանեցաւ ամենայն զօրութենէ քաջ եւ հեզ եւ բարեգոյն, որպէս վայել էր պատուոյն պաշտօնին իւրոյ, յետ կատարելոյ ընթացս պաշտօնին ազատութեան ո'չ տխրեցաւ եւ ո'չ անարգեցաւ մտանելն 'ի գործ պաշտօնի ծառայութեան հողագործութեան. գրէ թէ վասն բազում սպարապետաց, որ 'ի տեսչութենէ բազմաց վկայեցին վասն նորայ եթէ կառավարութիւնս երկայնամտութեամբ, եւ յաղտութիւն քաջութեամբ եւ 'ի պատճառէ գործոյն բարութեան 'ի ժամ յաղթանակութեան նայ քայլէր շրջապատեալ ծերակուտիւք հռոմայեցօք 'ի մէջ յաղթանակի, եւ միեւնոյն այրն տեսին որ յետ կատարելոյ ընթացս իւր սպարապետութեան՝ գութանն 'ի ձեռին հրամայէր 'ի վերայ եզանց իւրոց եւ զմբռէր գութանն 'ի սիրտս երկրի արիաբար բրելով այնքան զուարդ սրտիւ որպէս սուրն 'ի ձեռին 'ի ժամանակի պատերազմի սպարապետութեան. այս եւ այլ անչափելի բազում գործ բարութեան բոլորովին սկսեաց եւ եմուտ 'ի գործ եւ կատարումն հասոյց միմիայն Օրէնս իւրեանց բարի եւ պահելով նոցայ Օրինաց իւրեանց անխախտելի, մեծացան, բազմացան, պատուեցան 'ի բազում զայից եւ յազգաց մեծամեծաց մինչ աշխարհ ցանկացան սոցայ լինիլ ժողովուրդ, վասն միմիայն պատճառոյն Օրինաց սոցայ, որ գտաւ ըստ համեմատութեան բնական բնութեան մարդոյ, որ ո'չ ոք այր 'ի հռոմ ո'չ ունէր ասելոյ առնելոյ, եւ հարկադրելոյ ո'չ 'ի կամաց եւ 'ի յարենէ եւ 'ի բնութենէ եւ կամ 'ի զօրութենէ իշխանութենէ իւրմէ եթէ ո'չ ըստ Օրինաց, եւ Օրէնն այն եղեւ 'ի սրտէ 'ի բերանոյ եւ 'ի ձեռանէ բոլոր հռոմայեցւոց, որպէս ամենայն զինքեանք արարին եւ զինքեանք հաստատեցին, եւ իւրաքանչիւրոք ամենեքեան հաւանեցան եւ հնազանդեցան, եւ կատարում բանիս թէ պատիւ, թէ պատիժ, թէ վարձ, թէ տուգանք եւ այլն ամենեքեան գտին նոյն, որ ինքեանք ըստ Օրինօք հատին վճիռ 'ի վերայ իւրեանց, ո'չ Շնորհ իշխանէ, ո'չ Օգնութիւն 'ի կարեւորացէ, ո'չ ողորմութիւն 'ի առատասրտէ եւ այլն, հարկաւորացան եթէ ո'չ բոլորովին հարկ եւ ընդունելութիւն ընտրեալ 'ի միջէ նոցայ 'ի ժամանակի հանդարտ բնութենէ եւ խոնարհ եւ սուրբ սրտէ գոհացեալ յօրինաց այսու բաւականացան, եւ բարձաւ նախանձ, սնափառութիւնք, պարծանք, հպարտութիւնք, նեղութիւն եւ այլն 'ի միջէ նոցայ, քանզի զամենայն զոր ինչ որ եկն եւ գալոց էր 'ի վերայ իւրեանց զիւրեանք ընտրեցին եւ յանձն առին զի կատարեսցի 'ի վերայ գործոց ձեռաց իւրեանց, այսպէս կալով մնացին ժամանակ ընդ ժամանակս երջանիկս թողուլով բազում բարի նշաւակս 'ի վերայ

աշխարհի, որպէս այժմոյս մեզ որում ցանկամք եւ ամենայն զօրութենէ փափագիմք զի իջցէ զօրութիւն հոգւոյ հռոմէացւոց ’ի վերայ հոգոյ Հայոց (բայց հեթանոսութեան հաւատոյ.) եւ եթէ մեք գտցուք մասն մի ’ի երկայնամտութենէ խորհրդեան եւ գործոյ հռոմայեցւոց հաստատելոյ վասն մեր Օրինաց, որպէս հաստատեցին հռոմէացիք վասն իւրեանց, Ես ո՛չ երկբայիմ որ երջանկութիւն մեր գտցի նոյն որպէս գտան հռոմայեցիք: Այս անցք մեծ եւ վկայ հաստատուն եւ նշաւակ յայտնի գործս հռոմէացւոց որ մինչ սիրով եւ հաւատարմութեամբ արիացեալ գօտի ընդ մէջս ածեալ կացին անխախտ եւ հաստատուն ’ի վերայ Օրինաց իւրեանց ’ի փոքրութենէ աճեցան բազմացան, եւ ’ի պատճառէ յօրինաց իւրեանց երջանկացան, գովաբանեցան ’ի բոլոր աշխարհէ, եւ երկիւղ քաջութեան սոցա եմուտ ’ի սիրտս ինքնակալ իշխանաց եւ ինքնակամ արարողաց մինչ խոնարհեցան, հնազանդեցան եւ հարկատու եղեն սոցայ, եւ որպէս սկիզբն սոցայ եղեւ զողութեամբ եւ աւազակութեամբ այլ յետ ’ի յոտս կանգնելոյն եւ հաստատելոյ սահմանս բարիս ’ի միջի իւրեանց՝ եղեն լուս աշխարհի, որ բազումք ’ի արդարութենէ սոցայ ուսան գործս բարիս արհեստ շահաւէտս, որում բազումք ելին ’ի միջէ սոցայ յատկապէս առաքինիք, թէպէտ ’ի Աստուածպաշտութիւնս հեթանոսի բնական արդարութեամբ զարդարեցան յոյժ մինչեւ ըստ սովորութեան յաշխարհի եւ բնութեան մարդոյ յագեցան, պարարտացան, հարստացան թողին միտ եւ խորհուրդ զօրութեան բանական հոգոյ իւրեանց եւ հետս կացին անցաւոր փառասիրութեանց սնոտի յաշխարհիս, թոյլ տալով մուծին մէջ իւրեանց կայսերութիւն ժառանգաւորութեան ’ի պատճառէ բարեգոյն եւ բարեպաշտ աշխատասէր կայսերաց, եւ ծերակուտք խորհրդարանի հռոմու իբր երախտագէտ լինելոյ յաղագաւ զի ծանիցեն երախտիս երախտաւորաց իւրեանց ո՛չ զրկելով որդիս բարեգոյն կայսերաց ’ի փառաց ժառանգութենէ կայսերութեան, թոյլ ետուն պաշտօնն կայսերութեան մտանիլ ’ի շարն ժառանգութեան, սովաւ եմուտ մէջ լուսոյն սոցայ խաւար մի մեծ, եւ մէջ բարութեանց սոցայ չար, եւ մէջ միաբանութեանց սոցայ բեկումն, եւ մէջ համահաւասարութեանց սոցայ քարընկէց դար եւ փոս այսինքն մեծ եւ փոքր, յայնժամ սկսեաց մինն փառաւորիւր ’ի կարգէն կայսերութենէ, միւսն ’ի աստիճանէ ծերակուտութենէ եւ այլն, մինչ գոգոեցին համահաւասար միաբանութիւնս իւրեանց, բացին փականս Օրինաց որում փակեալ կայր ’ի հիմանէ՛, եւ արգելէր բնական ցանկութիւնս իւրաքանչիւր սրտից յատկապէս անձանց, եւ թոյլ ետուն զի բնութիւն կայսեր ջանասցէ ’ի կամս իւր մինչ սովաւ եմուտ ամբարշտութիւն ’ի մէջ իւրեանց այնքան որ մինչեւ մի ’ի կայսերաց նոցայ որում անուանէր Ներօն, ինքնակամ հրամանաւ իւրով եբաց յորովայնն մօրն եւ ծնօղին իւրոյ, զի տեսցէ տեղի բնակութեան իւրոյ ’ի ժամանակի երեխայութեան իւրոյ, զի նովաւ եղեւ վախճան կենաց մօրն Ներօնի կայսերն հռոմէացւոց. ուրեմն տես զանազանութիւն ժամանակին եւ բանին եւ գործոյն որ մինչ դեռ այս հռոմէացիք ըստ Օրինօք կախեալ կային՝ ո՛չ ոք իշխէր ’ի խոշորդիմօք նայիլ ’ի յերեսս կնոջ թող զհակառակիլ, յանդիմանալ նեղել եւ այլն նմայ, եւ եթէ գուցէ գտանիւր ոմն ոք խստասրտութեամբ դիմեալ առ կին ոմն, տային պատիժ նմայ ըստ Օրինաց, այլ այժմ ինքնակալ իշխանութեամբ կաղանալով ’ի բարեգոյն յորինացէ, այսքան զանազանութիւն եղեւ ընդ դէմ արդարութեան Օրինաց եւ ազատութեան անդորրութեանց մինչ յորովայն մօրն կայսեր պատառեցաւ ’ի հռոմ եւ ո՛չ ոք գտաւ դատախազ, ուրեմն այս անցքս միմիայն պատճառ լինի ձեզ հաւանեցուցանելոյ որ ո՛չ մեզ եւ ո՛չ ’ի վերայ աշխարհին մերոյ մի՛ լիցի եւ մի՛ երեւեսցի ո՛չ ոք, ով ոք ո՛ր իցէ այր ինքնակալ եւ ինքնակամ ’ի արարս իւր որ ո՛չ պատժեսցի ըստ Օրինօք, եւ Օրէնք մեր եղիցին տէր եւ թագաւոր մեր, բայց ’ի Օրինաց մերոց այլ ո՛չ ոք մի՛ ծանիցուք գեր գերիվեր բայց Արարիչն Աստուածն միայն, եւ ո՛չ տացուք փոխ եւ ընկալցուք հատուցում ո՛չ յաւելի եւ ո՛չ պակաս քան զայն որ Օրէնս մեր հրամայէ՛ ’ի վերայ մեր այն որ մեք ընտրեցինք, այնու որ մեք ’ի վերայ գործոց ձեռաց մերոց մեք վճռեցաք՝ մի ոք ծիծաղեսցի ’ի վերայ պատւոյ եւ պատժոյ մերոյ թէ ինքն հասոյց ’ի վերայ մեր չար եւ կամ բարի, քաւ մի՛ լիցի ազատ մնասցուք ’ի շնորհաց եւ նախատանաց ամենեցուն եւ զոր ինչ արժան ’ի գործոց ձեռաց մերոց այն գտանիցուք վարձ ըստ Օրինօք, որ մեք վասն մեր արժանի արարաք, եւ մեք կատարեսցուք ’ի վերայ մեր ’ի ձեռանէ սպասաւորէ մերմէ հրամանաւ մերով Օրինաց, եւ մեք յանձն առնումք մխիթարութեամբ եւ այլն, որովհետեւ խօսք մեր է՛ հաս մինչեւ չարն Ներօնի կայսերն հռոմայ՝ հարկաւոր համարեցայ ասել մի ’ի պատմութիւն ’ի նոցանէ այսինքն, ոմն պառաւ կին եմուտ առ հայր վարպետ մի փիլիսոփայի, զանգատելով նմայ չարագործութիւն Ներօնէ եւ պատմէր նմայ պատառումն որովայնի դշխոհուոյն եւ մօրն կայսեր Ներօնի, վասն տեսանելոյ տեղի բնակութեան իւրոյ, եւ յոյժ տրտմելով

պատմէր գործն չարութեան Ներօնի, յետ համբերութեամբ լսելոյն վարպետիս ամենայն պատմութիւնն պառաւին, հանդարտաբար պատասխանեաց պառաւին ըստ համեմատութեան բնական բնութեան ասելով, այսպէս թուեցաւ ինձ թէ բարեգոյն գտաք մեք Ներօն 'ի գործս իւր գործեցեալ 'ի վերայ մօր իւրոյ պատառելով յորովայն նորայ քան թէ գործ անօրէնութեան մօրն Ներօնի, ծնանելով Ներօն 'ի յաշխարհ եւ կայսր հռոմու, քանզի եթէ Ներօն պատառեաց յորովայն մօր իւրոյ կատարումն գործոյն միայն եղեւ վախճան 'ի կենաց մօրն իւրոյ 'ի վերայ աշխարհիս, այլ չարագոյն մայր նորայ ծնանելով նմայ մարդ յաշխարհ աւերեաց կեանս եւ պատիւս Ներօնի որդոյ իւրոյ՝ ծնանելով այնպիսի չարագոյն որդի որում ապականելով անձն, կեանք, հոգի եւ մարմինն նորայ 'ի յաշխարհի, եւ պատրաստելով վասն հոգւոյ նորայ անշէջ հուր 'ի գեհենի մշտնջենաւոր եւ նախատինք հռոմէացւոց 'ի յաշխարհ, որովհետեւ 'ի բնական բնութենէ մերմէ եւ 'ի սովորութենէ տարբերութեան ժամանակէ տեսանեմք մեք այսքան ծայրագոյն զանազանութիւն որ մի եւ նոյն հռոմէացիք ընդ կայսերօք եւ ծերակուտօք իւրօք 'ի ժամանակի ընդ օրինօք անխախտելեօք վարի'ւք հատոր մի 'ի Օրինաց իւրեանց գրեցին՝ տալյդի կանաց ամենայն ցանկութիւն սրտի նոցայ, զի մի գուցէ 'ի պատճառն փափագի սրտի նոցայ վիժեսցի երեխայն, եւ անդրադարձն նորայ մի եւ նոյն կայսր հռոմու Ներօն 'ի ժամանակի ինքնակալ տէրութեան իւրոյ ո'չ թէ միայն արտաքոյ Օրինաց նա' եւս գազանաբարոյ ցանկութեամբ, նա' եւս արտաքոյ արարմանց ընդ դէմ բնութեան ամենայն կենդանեաց պատառեաց յորովայն մօր, կատարելով գարշ ցանկութեան սրտի եւ ինքնակամ կամաց իւրոց, որովհետեւ բնութիւնս մեր երբեմն ձգտի առ 'ի գործ բարի եւ երբեմն առ 'ի գործս չար, ուրեմն հարկաւոր եւ յոյժ հարկաւոր է մեզ զի մի' տացուք տեղի բնութեանս մերոյ, եւ մի' զօրութիւն 'ի ձեռին ո'չ ումեք զի ինքնակամ մտօք եւ ինքնակամ արարմամբ իշխեսցէ 'ի վերայ մեր, եթէ ո'չ Օրինօք մերովք բարեօք, որ ամենայն ոք ամենայն բարիս կարող լինիցի գործել եւ 'ի չարեաց ոչ մի, զի սովաւ փրկեսցուք մեք որովայն ծնօղաց մերոյ պատառելոյ եւ արիւն անթիւ անօրէնութեամբ յեղելոց կրկին յեղմանէ որում շաղախեցաւ երկիր, եւ ազատեսցուք արք եւ կանայք մեր 'ի նախատանաց եւ դստերք մեր 'ի լլկմանէ, արգարակք մեր 'ի կողոպտմանէ, ստացուածք մեր 'ի աւարայարմանէ, ազատութիւն մեր 'ի ծառայութենէ, հոգի եւ մարմին մեր 'ի խղճմտանաց եւ 'ի պատժոյ 'ի հանդերձելումն եւ այլն, նա'եւս ներել զիս հայցեմ 'ի ընթերցողէդ զի ասացից նշաւակ մի եւս վասն հաստատելոյ բանն իմ գերազանց բարութեան Օրինաց, թէպէտ վկայութիւն բազում ունիմ վասն այս այլ ո'չ կամիմ յերկարացուցանել խօսն իմ, եւ որպէս սովորութիւն է մեզ Քրիստոնէից երկու եւ երիս վկայիւք հաստատիլ ամենայն բան, նոյն գունակ սովաւ երկայնամիտ լեր ընթերցող զանազանութիւն գործոյն փոփոխական բնութեան մերոյ: Ապգար թագաւոր Հայոց ըստ բարեպէս մտաց իւրոյ ընտրեաց վասն մխիթարութեան եւ փրկութեան հոգւոյ եւ մարմնոյ իւրոյ փրկութիւն 'ի վերայ աշխարհի եւ 'ի հանդերձելումն զկեանս յաւիտենականս 'ի անտեսութեամբ աչաց հաւատաց բարեգոյն Յիսուս Նազօրացի փրկիչն մեր Քրիստոս եւ 'ի աշակերտէ նորայ մկրտեցաւ ընտանեօք իշխանօք եւ անթիւ ժողովրդով 'ի յօրէնս Քրիստոսի, եւ գտաւ շնորհս հոգով եւ մարմնով այլ քեռ որդին նորայ Սանատրուկ թագաւոր Հայոց սպան Սուրբ առաքեալն Քրիստոսի Թադէոս այրն Աստուծոյ միեւնոյն որ մկրտեաց եւ բժշկեաց քեռին նորայ, ո'չ միայն լուսաւոր առնելով հոգին քեռոյն իւրոյ 'ի յաւիտենական կեանս նա~եւս փրկօղ 'ի բորոտութենէ աղտից, եւ արդ՝ երկայնամիտ լեր 'ի վերայ հատուցման երախտուց նորայ եւ տես ներգործութիւն բնութեան մերոյ այսքան զանազանութիւն 'ի միջոցէ' ո'չ դարոյ եւ ո'չ հեռի ժամանակէ միոյ եթէ ո'չ իբրեւ 'ի հօրէ մինչեւ ցժամանակն որդոյ. հայրն հաւատաց դաւանեաց եւ գտաւ շնորհս բժշկութեան, քեռ որդին զայրացմամբ սպան բժշկօղ քեռոյ եւ փրկութիւն տուող աշխարհին իւրոյ, պարտաւոր արար զինքն եւ մատնեաց ժողովուրդ իւր 'ի ծառայութիւն մեղաց, որովհետեւ բնութիւնս մեր այսքան փոփոխական է եւ այնքան անհաստատ 'ի վերայ մտաց իւրոց, որպէս տեսաք կամք Ապգարոս հօր եւ կամք քեռ որդոյ Սանատրկոյ այնքան զանազան եւ հակառակ միմեանց որպէս լոյս ընդ խաւարի, ուրեմն հարկաւոր է մեզ ո'չ ուտել եւ ո'չ ըմպել եւ ո'չ քնել եթէ ո'չ նախ եւ յառաջ ընտրել Օրէնս բարի 'ի մէջ մեր եւ բնութիւնս մեր հնազանդ առնել Օրինաց մերոց շղթայիւ կապանօք անխախտելեօք որ ո'չ երբէք ո'չ ոք մարդ գտցի ազատութիւն գործելոյ գործս չար եւ ինքնակամ արարս, եւ եթէ գուցէ նշոյլ չարութեան գործոյ ումեքէ' որով ոք եւ իցէ ելցէ՝ իսկոյն պատժեսցի ըստ Օրինօք մերովք, զի նովաւ կացցուք եւ մնասցուք երջանիկ խաղաղութեամբ 'ի երկիր եւ 'ի յերկինս, Ես ո'չ երկբայիմ զի զերծեալ ո'չ ոք գտանի 'ի յերեսս երկրի որ 'ի ժամանակս կենաց իւրոյ ո'չ իցէ հանդիպեալ

ընդ իւր զանազան փոխարկմունս մէջ բնութեան իւրոյ ’ի մանկութենէ մինչեւ ’ի ծերութեան որ ո'չ իցէ ատեցեալ սիրելին իւր, զարշեցեալ ’ի ցանկութենէ իւրմէ, զոջացեալ ’ի արարմանց իւրոց, փոշմանեալ ’ի սղալմանէ իւրմէ եւ այլն, որպէս ես ’ի միտս քոյ ձգօղս, եւ դու ’ի միտս քոյ առնօղդ ընթերցօղդ, ուրեմն զինչ արարից այսպիսի զազանաբարոյ բնութեան մերոյ որ գրկեալ ունի ընդ մէջ իւր պատուականագունեղ բանական զօրութիւն հոգւոյ մերոյ, եւ ամենայն զգայարանք մարմնոյ մերոյ ’ի գլխոց մինչեւ ’ի յոտս ցանկայ բնական բնութեան սովորութեան սնոտի աշխարհիս, եւ պատճառք շարժման այս անդամոց մարմնոյ մերոյ, որ եռացուցանէ եւ ձգտի ’ի միտս մեր գործել չորից խառնուածօք այսինքն մաղցիւ բլղամաւ, արիւնաւ եւ քամիաւ, սոքայ ամենեքեան հնչեն զօրութիւնս իւրեանց ’ի ծայրագոյն չորից տարերացէ, եւ որպէս նոքա երբեմն յարուին եւ արձակին ’ի վերայ միմեանց, հողմաւ մրրկաւ, կայծակիւ եւ փայլակաւ, անչափապէս անձրեւաւ, եւ կարկտիւ որ երբեմն տացեն ’ի պատճառէ անդամոց իւրոց կազմեցեալ իրաց այսինքն յաշխարհի, շարժ երկրի, գլորումն լերանց, տապալումն բնակութեանս, այսպիսի եւս մասնաւոր աշխարհն մեր այսինքն բնութիւնս մարդոյ երբեմն ’ի ջերմութենէ արեան եւ կամ ’ի թեժութենէ մաղցին եւ կամ ’ի սառնութենէ բլղամին եւ' այլն, ժամանակ ընդ ժամանակս կենաց մերոց ’ի յերեսս երկրի փոխարկի բնութիւնս մեր տղայութենէ երիտասարդութիւն, եւ ’ի երիտասարդութենէ կատարելապէս հասակ եւ ’ի նմանէ ծերութիւն եւ այլն, նա'եւս յաւելի քան զայս ’ի բերմանէ ժամանակին ’ի պատճառէ կերակրոց եւ ցանկութենէ սրտից եւ թշուառութեանց աղքատութենէ եւ կամ հպարտութենէ հարստութեան եւ այլն, շարժի բնութիւնս մեր եւ փոփոխի Օրաւուր եւ պահէ մեզ ’ի միջի անվախճան աշխատանաց՝ ես շինելով տուն որդին իմ քակելով եւ ’ի տեղի տնկելով այգի, թոռն իմ քակելով եւ շինելով շտեմարան, մինն սիրելով հաւաքէ բարեկամք, միւսն նախատելով ցրուէ, մինն գթանալով ողորմի եւ դարմանէ, միւսն բարկանալով խոցէ եւ վիրաւորէ, մինն աշխատէ եւ բարեկամն իւր բարեխօս ձգէ ստանալ երիվար, միւսն նոյն երիվար ձրի բաշխէ այլոց, մինն մուծանէ զինքն ’ի պարկեշտութիւն լինի կրօնաւոր, միւսն դեղ առնու որ տացէ զօրութիւն ստամօքին յաճախ ուտելոյ, եւ այլ բազում նման սոցայ գոյ շարժմուն մէջ բնութեան մերոյ, եւ է' այնքան բնական որ ամենեքեան ընթերցօղք սմայ բարեպէս ունիք ծանօթութիւն վկայութիւն ’ի վերայ բանիս մէջ անձանց եւ բնութեան ձերոյ իւրաքանչիւրոք ունիք, ուրեմի զիշնչ արարից այսպիսի անառակ բնութեան եւ զի արդ կարի կառավարել սմայ որպէս ամենեքեանս ’ի նոյն բնութենէ որ ինք ըստ ինքեան ունի միեւնոյն բնութիւնս փոփոխական, զոր ինչ որ այսօր երեւի զեղեցիկ՝ վաղիւն տգեղ, զոր ինչ ժամանակի քաղցու քաղցր, յետ ազենալուն անհամ, զոր ոք ’ի բնութենէ մերմէ համարիս կալոյ հաստատուն ’ի վերայ մտաց բարեաց եւ տացես նմայ կարողութիւն զի դատեսցի մեղաւորս զի նոյն ինքն մեղելոց է իբրեւ զիս եւ իբրեւ քեզ եւ իբրեւ մեղաւորն, ուրեմն զի արդ կարիցէ նայ դատել ոք իրաւամբ եւ արդարութեամբ, եթէ ո'չ նոյն դատաւոր ’ի պատճառէ ինքնակալութեան եւ կամ մեղաց իւրոց թոյլ տացէ մեղաւորաց իւրոց, զի այսու դատաւոր եւ դատախազ միաբան գլորին ըստ ասացելոյն բանին Տեառն կուր՝ կուրի առաջնորդէ երկոքին անկանին ’ի խորխորատ, ուրեմն երկայնամիտ լերուք ընթերցօղք եւ լուարուք բանից իմոց, զի ո'չ միայն ասեմ, նա'եւս հաստատեմ ’ի միտս ձեր, զի յոյժ ամօթ է մեզ ունենալով ծայրագոյն զօրութիւն բանական հոգոյ ընդ մարմինս մեր եւ ազատապէս կեանք ’ի վերայ երկրի որ ո'չ ոք ’ի ներքոյ արեգական կարէ բառնալ ’ի մէնջ զօրութիւն հոգոյ մեր եւ ո'չ հիշիել կենօք եւ վախճանիւք ’ի վերայ բանականութեան մերոյ բայց Տեառն եւ արարիչն մեր, եւ մեք ունենալով զօրութիւն հոգւոյ մերոյ պահելոյ զպատիւ բնութեան մերոյ գործօք ձեռաց մերոց թագաւորել ’ի վերայ անասուն կենդանեաց, եւ թագաւոր մեզ առնել ’ի վերայ բնական բնութեան մերոյ, ո'չ թէ յիշիելով ’ի վերայ միմեանց, այլ սիրելով զընկերս մեր եւ հնազանդելով բարեգոյն Օրինաց մերոց որում ընտրեմք մեք վասն մեր բոլորովին բարին եւ ընդունիմք վարել զկեանս մեր ըստ սահմանի Օրինաց մերոց. այս Օրէնս իցէ' միայնակ մեզ թագաւոր, որ արգելէ' ընթացս մեր ’ի գործոց չարութենէ ’ի ձեռանէ պատժոյ յօրինաց մերոց, եւ լայն արձակ թողցէ բնութիւնս մեր գործել զբարիս որ քան կարն անդամոց եւ զօրութիւն հոգոյ մերոյ խոստանայցէ, այսու սասանի չարիք եւ գործ փոփոխական բնութեանց մերոյ, եւ Օրինօք վարեմք զկեանս մեր ’ի յերեսս երկրի պատուօք եւ ազատութեամբ եւ ամենայնիւ դիւրութեամբ՝ զանձելով զանձս մեր ’ի հանդերձելումն յաւիտենական կեանս զի սովաւ գտցուք որդեգրութիւն ’ի Հօրէ Արարչէ մերմէ, զի գործ ձեռաց նորայ եմք, զի հարկ ’ի վերայ մեր կայ զի գործ ձեռաց մերոց գտցէ արժանի պատուոյն արարչին մերոյ, այլ զայս ամենայն ձգտելով ’ի միտս մեր եւ ծանօթանալով

զօրութեամբ հոգով մերով եւ տեսանելով նշաւակ բազում ’ի յերեսս երկրի մէջ այլ ազգաց ազատաց, զի դիւրին է հնարել եւ զսպել այսպիսի փոփոխական բնութիւնս մեր, զի կարի երջանիկ մեզ եւ պատուելի ազգն մեր առնել, զի լինիցուք արժանի որդէ գրութեան Հօր արարչին մերոյ եւ յոչ արարաք. եւ արդ եթէ դեռ եւս ո՛չ կամիմք առնել, ուրեմն զի արդ՝ կարի փախիցուք մեք ’ի ամօթանաց յայսմանէ մինչ զիտեմք հնար եւ ճար երջանկութեան մերոյ եւ ոչ առնեմք, եւ կամ զի արդ կարեմք փրծանիլ ըմբելոյ բաժակն զանից բազմաց որում հաւատացեալ եմք եւ բնականապէս ամենայն արդարութիւն զայս հրամայէ, զի ծառայ գիտելով կամս Տեառն իւր եւ ո՛չ առնէ արբցէ զան բազում, թէպէտ ինձ այսպէս թուի որ ’ի անցելում ժամանակի միջոցաւ բազում ժամանակաւ, որում կացաք եւ մնացաք, ’ի միջի անկարգութեամբ վարուց եւ ծառայութեամբ հնազանդելով ինքնակամ հրամայօղաց արբեցաք, ո՛չ միայն զան բազում նա՛եւս զերեցաք, կողոպտեցաք, լլկեցաք, թշուառացաք մինչ ցրուեցաք ցան եւ ցիր եղաք ’ի երեսս երկրի, թողուլով զորովագոյթ մայրն ամենայն աշխարհի եւ ծնօղն մեր Նախիջեւան յաշխարհ եւ հազիւ գտաք տեղի բնակութեան ’ի տարր աշխարհի, այլ այն որ գտաք ո՛չ արժան է տեղի որում արճունք աշխարհի մերոյ ցանկան բնակիլ վասն բազում պատճառանաց եթէ ախտատուկ հողին եւ ջերմութիւն տապին արեւուն եւ նուազութեան կերակրոց, եւ տկարութիւնն անդամոց եւ այլն, նա՛եւս որ բազմաց ’ի միջի մերոց պանդխտելոց պատահեցաւ որ ո՛չ գտաւ տեղի դամբարանի հանգուցանել զի ննջեցելոյն իւրոյ ’ի տարր աշխարհի, այսքան զան մեք արբեցաք ’ի պատճառէ գիտելով հնարն պահելոյ ազատութեան մեր եւ ո՛չ պահեցաք, եւ ամենայն անկարգութեամբ գործ եւ արարք մեր մեզ սովորութիւն արարք, եւ ’ի բերանէ մերմէ մեք մեզ դատապարտելով ասացաք թէ այս ամենայն որ եկն ’ի վերայ մեր վասն մեղաց մերոց, իրաւի ամենայն պակասութիւն մեր եւ նեղութիւն, անտէրութիւն, թշուառութիւն, պանդխտութիւն, գերութիւն, աղքատութիւն եւ այլն բոլորն գայ ’ի պատճառէ մեղաց մերոց, այլ պարտ է մեզ ճանաչել թէ որ մեղք ոչ ըստ կարծեաց այժմոյս մերոյ որում համարիմք ծայրագոյն մեղք՝ այսինքն քաղցեալն կերաւ եւ յագեցաւ, մերկն զգեցաւ, գեղեցիկն սիրեցաւ եւ այլն, որ ամենայն բնութիւն մարդոյ ո՛չ ոք կարէ զսպել անձինս իւր ’ի այսպիսի բնական մեղաց ո՛չ ուտող եւ ո՛չ զգենօղն եւ ամուսնացեալն կարի զրկիլ ’ի բարութենէ Տեառն, եւ կորուսանել պատիւս ազատութեան իւրոյ, թէ ոչ ծայրագոյն գերիվեր քան զամենայն մեղք մեր է ծուլութիւն որ սովաւ գոյանայ ամենայն մահկանացու մեղք որ ո՛չ ջանացաք եւ ո՛չ ընտրեցաք, եւ ո՛չ հաստատեցաք քան բարի դեղ ցաւոյն փոփոխական բնութեան մերոյ ’ի ժամանակս առողջութեան անդամոց մերոց՝ այսինքն աննախանձաբար անկողմնակալութեան առանց յատուկ անձանց Շահաւէտութեան մտաց, թէ ո՛չ բոլորով անաչառ սրտիւ եւ ’ի զօրութենէ բանական հոգոյ ընտրողութեամբ վասն հասարակաց բարութեան կարգս եւ յօրէնս ո՛չ դժուար եւ ո՛չ նեղութեամբ ո՛չ պակասութիւն ինչ ’ի կենաց մերոյ ’ի աշխարհիս եւ ո՛չ վնաս հոգոյ մերոյ ’ի հանդերձելումն, թէ ո՛չ դիւրին քաղցրահամ հաճելի մեզ ամենեցունս առ ’ի համեմատութիւն աշխարհին եւ ազգին մերոյ Հայոց գեղեցկութիւն տեսողաց, սրբութիւն հասարակաց, հօվանաւորութիւն Շուք իշխանական եւ մեղմ եւ հանգստաբար կեանս, որպէս մանուկ բնակեալ ’ի յորովայնի մօր իւրոյ, զի սովաւ բառցի ամօթանք մեր, թէպէտ տխուր է իմ յիշեցուցանել գարշելի նախատինք ազգին մերոյ որում յուսեալ ’ի վերայ յուսոց մերոց կրեմք յարաժամ ’ի անօրինացէ, եւ ես ո՛չ յիշեցուցանեմ զամենայն զոր ես գիտեմ, եթէ ո՛չ միայնակ ձքեմ ’ի միտս ընթերցողիդ եթէ գուցէ գտցես դու այր բնակող ընդ հովանաւորութեան անօրինաց՝ երկայնամիտ լեր թէ զինչ բառիւ ձայնին յազգին Հայոց, փոխանակ անուան անյաղթելի թորգոմացւոց, եւ մեք Հայք որդիք քաջին Հայկայ՝ ծնունդք Օրհնեալք աշխարհին Նախիջեւանայ պատճառ փրկութեան ընհանիւր բնութեան մարդոյ ’ի յեղձուցմանէ ջրհեղեղին ընդհանիւր աշխարհի ’ի պատճառէ անկարգութեան մերոյ, փոխանակ յատկապէս պատւոյ, յատկապէս նախատինք մարդկան եւ արհամարանք ժողովրդոց եղաք ’ի պատճառէ անկարգութեան մերոյ, ուրեմն ոչ է արժան զի կացցուք եւ մնացցուք այսպէս մինչեւ յաւիտեան, վասն զի մեք միեւնոյն բնութիւն մարդոյ ունեմք որպէս ամենայն ազգ երջանիկ որ ’ի այժմոյս ’ի ներքոյ արեգական նա՛եւս յատուկ շնորհ եւ ողորմութիւն ’ի Տեառնէ եւս ունեմք ’ի վերայ մեր, զի տալով մեզ աշխարհն Արարատեան պարարտ ’ի ամենայն գոյացութենէ թէ ’ի ծննդենէ մարդոյ եւ թէ անասնոյ եւ թէ պտղոյ, ցորենոյ, գինոյ, ձիթոյ եւ ամենայն սողնոց թռչնոց գերագոյն քան զամենայն կողմ աշխարհի, մեզ ո՛չ գոյ այլ իմն պատճառ եւ պակասութիւն որ բերէ ’ի վերայ մեր նախատինք եւ ամօթանք եթէ ո՛չ միմիայն միայնակ պատճառն անկարգութեան մերոյ զի գոյանայ ’ի ծուլութենէ մերմէ, թէպէտ ես ոչ երդնում զի մեղկէ այլ հաստատուն

կամ 'ի միտս իմ զի մինչ ո'չ հաստատի Օրէնք կարգի եւ կարգ կանոնի՝ մի' բառցցի ծուլութիւն 'ի մէնջ եւ մի' տացէ տեղի փայլման յազգին մերոյ, եւ զամենայն զոր ինչ պատուական որ զոյանայ 'ի մէջ մեր մի' երեւեսցի գեղեցկութիւն նորայ մինչ ո'չ գտցի սահման յօրինաց, երկայնամիտ լեր ընթերցող, ոսկին քոյ ո'չ ունիս սահման յօրինելոյ աշտանակս գեղեցիկս կերպարանօք եւ փայլածու կացցէ նա' եւ մնասցէ վասն քոյ ըստ նմանութեան իբր խոփի երկաթի, որում վարես դու յերկիր, եւ ամենայն պատուական բան 'ի միջի քոյ գուցէ այսպէս զինչ թուի 'ի միտս քոյ, մի' թէ Արարիչ Աստուածն մեր Օրաւուր առնէ ստեղծագործութիւն եւ կամ մինն ստեղծեաց իմաստուն եւ միւսն տգէտ, քաւ լիցի, բնութիւն մարդոյ 'ի յերեսս երկրի բնականապէս հաւասար ծնանի, այլ ով ոք որ հանդիպեսցի սնընդեան ուսանի արհեստս ընդ վարպետէ իմաստնոյ տայ նմա' ուսումն եւ յօրինէ բնութիւն նորայ իմաստուն եւ ծանօթացուցանելով ճանաչել նմայ բարին, չարն, արժանն եւ անարժանն, եւ 'ի վերայ երկրի կազմէ նմայ իբր աշտանակ պանծալի մի եւ նոյն բնութիւնն որ ես պահեցի անկարգութեամբ եւ անօրէնութեամբ որպէս ոսկի խոր թաղեալ մեջ ըստ տեսակս երկաթի, այլ անդրադարձն պատճառն ամենայն բարութեան կարգադրութիւն բարի՝ այն որ տեսանելոց ես դու ընդ փոքրիկ շարս կանօնիս 'ի գրքուկս շարեալ երկայնամտութեամբ ամենայն հատոր նորայ ընթեռնուլով, եւ 'ի պատճառն փորձառութեան սորայ նախ դիր այս ամենայն հատոր յօրէնս 'ի վերայ յուսոյ քոյ եւ համարեա' թէ այս ամենայն 'ի վերայ քոյ կատարի եւ զամենայն զոր 'ի սմայ գրեցեալ վարձ գործոց ձեռաց քոց՝ քեզ հատուցանելոց է, յայնժամ յայտնի քեզ լինիցի զի զամենայն զոր ինչ 'ի յայսմ կանօնիս գտանես բոլորովին բարի զոլ կարէ, եւ հանոյ կամաց քոց լինիցի, ըստ բանին Տեառն որ ասաց, որ 'ի քեզ չար թուի ընկերին ձերոյ մի' առնիցուք, եւ եթէ դու բնութեամբ բարի եւ յօրէնս քեզ թուեսցի բարի, եւ դու կարես հաւատալ զի ամենայն արանց բարեաց թուելոց է բարի, նա' եւս հարկաւոր է իմ ասել զայս որ նոյն կանօնք, որ 'ի սմայ գրեցեալ երբեմն բոլորովին չար թուի 'ի առն չարագործի, նոցայ որ անառակութեամբ եւ 'ի գոռոզութենէ հպարտութեամբ բազմիցս յեղին արիւն արդար եւ զինքեանք խոյս տալով փրծան 'ի սատակմանէ, այսպիսի չար եւ վատթար արանց յոյժ ծանտր թուի հատուցանել ակն ընդ ական եւ ատամն ընդ ատաման, այլ եթէ ոչ հատուցից վարձ գործոց ձեռաց մերոց բարեաց եւ չարեաց շաղախի երկիր անօրէնութեամբ եւ քայլ քայլի տապալի բնակութիւնք, եւ կատարումն այս լինի որում այժմոյս 'ի միջի կամք, ուրեմն ով ոք բարեգոյնք եւ արք բարեմիտք մինչ ո'չ յուսան ստանալ պտուղ գործոց ձեռաց իւրոց, զի արդ՝ կարէ մարդ ընթանալ 'ի գործ եւ աշխատիլ եւ գործիլ բարի, նոյն գունակ ով ոք չարագործ եթէ ո'չ ունիցի յերկիւղ Օրինաց իւրոց ընդունիլ պատիժ չարութեան իւրոյ, զի արդ՝ կարէ զսպել զգայեարանս իւր եւ հրաժարիլ 'ի մեղաց, որպէս 'ի վեր ասացաք, որ բնութիւնս մեր միշտ անընմբռնելի եւ փոփոխական է, ուրեմն հարկաւոր եւ միշտ հարկաւոր է մեզ ունենալ կանօնս եւ մտանել մեզ ըստ Օրինօք եւ վարել կեանս մեր 'ի մէջ այս սնոտի աշխարհիս շարժմամբն այս փոփոխական բնութեամբս ըստ կերպին կանօնին մերոյ որում ընտրեսցուք մեք վասն բարութեան հոգոյ եւ մարմնոյ մերոյ:

Բնականապէս սովորութիւն է 'ի բնութիւնս մարդոյ ջանալ, աշխատիլ, վաստակիլ զի գտանիցէ այն որ յինքն թափօր 'ի նմանէ, եւ մոռանալ եւ յետս կենալ եւ անտես առնել այն որում 'ի ձեռին իւրում ունիցի յարաժամ եւ կամ յայնմանէ որ վասն իւր պատրաստի կալ, եւ յաւելորդապէս ծախն ժամանակին կենաց մերոց 'ի մեծաց մինչեւ 'ի փոքր, 'ի հարստաց մինչեւ տնանկք ամենեքեան ծախելով ժամանակս կենաց իւրեանց, զի կարի ապահով զանձինս եւ ստացուածս իւրեանց արասցեն, սրպէս իշխանք ամրացաւ եւ հասարակ ժողովուրդք 'ի տունս պարսպեալք եւ 'ի տեղի բարեպէս պահպանութեամբ, ահա' ես ո'չ համարձակիմ տալ ձեզ եթէ ո'չ մատամբ իմով ցուցանիմ ձեզ տեղն բանալիքի դռան ապահովութեան անձանց եւ ստացուածոց հարստութեանց եւ զամենայն պատուական իրաց ձերոց որ այժմոյս դուք ո'չ ունիք եւ 'ի վաղնջոց 'ի մէնջ իբր կորուսեալ, ահա' բանալիքն դռան երկրորդապէս դրախտին ձերոյ Արարատեան յօրէնս եւ կարգս, եւ կանօնս ձեր զի ծանուցէ ձեզ զոր ինչ գործ բարի եւ չար եւ զոր ինչ հարկաւոր գործելոյ եւ հրաժարելոյ, առաջանալոյ առ 'ի գործ, եւ սովաւ հաստատեսցի սիրտ ձեր 'ի հաւատս որում ունիք պինդ պահելոյ Օրէնս ձեր, եւ այս Օրինօք Շահեսցիք դուք ոչ միայն ապահովութիւն անձանց եւ ստացուածոց ձերոց, նա' եւս մնասցէ ժամանակս կենաց ձերոց 'ի ձեռին ձեր ազատ, որում կարի ծախելով նոյն ժամանակին ուսանիք արհեստ իմաստութիւն եւ հանճար, որ տացէ երջանկութիւն ազգին ձերոյ եւ Օգնութիւն իշխանաց ձերոց առատասցի պտուղն հասից, մաքսից, հարկից այլն, զի մի' գուցէ հանդիպեսցի ձեզ հարկապահանջութիւն որպէս այժմոյս, եւ սովաւ կացցիք

եւ մնացիք ազատ ամենեքեան ’ի գործս ձեր եւ բառցցի երկիւղ ’ի սրտէ ձերմէ ’ի վնասուց արանց չարեաց, եւ ամենայն ոք ազատապէս կարող լինիցի խորհիլ, խօսիլ եւ հաւատալ զի զամենայն զոր ինչ իւր ստացուածք հաւաստի իւր է', եւ ո'չ ոք կարիցէ մերձենալ նմայ եւ մազ մի գլխոց ձերմէ մի' պակասեսցի, եւ ո'չ ոք կարող լինիցի ձգել ձեռս իւր ընդ մին հաւկիթն ձեր, եւ ամենեքեան մնասցուք տէր ստացուածոց ձերոց, եւ հաստատուն ’ի միտս, թէ ունիմ զոր ինչ որ ունիցիմ իմմէ' եւ սովաւ կարող լինիցիք բաժանել ժամանակս կենաց ձերոց՝ երբեմն ’ի գործ, երբեմն աշխատանս, երբեմն յաղօթս, երբեմն խրախճանութիւնս, երբեմն ուսումնս եւ այլն սովաւ արժանաւորասցի մարդն մեր մէջ աշխարհի մերոյ, ոմն հեզ եւ խոնարհ վասն քահանայութեան, ոմն քաջ եւ աներկիւղ վեսն զինուորութեան, ոմն ջանացող եւ աշխատող վասն հողագործութեան, ոմն արհեստակաւոր ’ի զանազան արհեստս վասն իմաստութեան, զի սովաւ մեք ’ի մէնջ մեր գտանել կարենամք ամենայն հարկաւորութիւն կարեաց մերոց, եւ գտցուք մեք մեզ իբրեւ մարդ ’ի պատուոյ, զի ըստ Օրինօք մերովք հովուելով մեզ արասցէ մեզ արժանի որդեգրութեան Արարչին մերոյ զի ամենայն արարած ’ի Տեառնէ ’ի յերեսս երկրի մերոյ հնազանդեսցի յիշխանութեան պատուոյն զօրութեան հոգւոյ մերոյ. որ յատկապէս Շնորհեցաւ մեզ ’ի Տեառնէ Արարչէն մերմէ եւ մեք լիցուք արժանի փառաց թագաւորելոյ ’ի վերայ նոցայ հնազանդելով մեք Օրինօք մերօք միայնոյ թագաւորին եւ Արարչին մերոյ յԱստուծոյ, որ ունի իշխանութիւն ’ի վերայ հոգւոյ եւ մարմնոյ եւ կենաց մերոց, զի նա' միայն փառաւորեսցի թագաւորութեամբ իշխանութեամբ ’ի վերայ բնութեան եւ բանական հոգւոյ մերոյ, քան զի նայ Արար զմեզ եւ ոչ մեք է'աք, մեք միմիայն նմայ հնազանդ եւ խաշն արօտի նորայ, եւ այս հնազանդութիւն զօրութեան հոգւոյ մերոյ առ Տեառն ոչ ըստ կամաց մերոց եւ ո'չ ’ի նոր ցանկութեան սրտից մերոց եւ ո'չ ’ի փոփոխական բնութենէ մերմէ, եւ ո'չ ’ի տարբերութենէ ժամանակէ, եթէ ոչ նոյն որում սկզբանէ արարածոց Արարիչն մեր փչեաց ’ի մէջ բնութեան մերոյ, թէպէտ մեք ո'չ իմացաք եւ ոչ պահեցաք պատուէրն Արարչին մերոյ անկարգացաք, անօրինեցաք եւ անցանելով կանոնաւն Տեառն արարչին մերոյ անկաք եւ նմանեցաք անբանից, այլ որպէս հաւատացեալ եմք խոստմանն ծայրագոյն բարւոյն Տեառն մերոյ Յիսուսի որ ասաց՝ եկեալն առ իս ո'չ հանից զնայ արտաքս, թէպէտ ’ի վաղնջոց անկեալ կամք ’ի փառաց զօրութեան հոգւոյ մերոյ բանականի, այլ դեռ եւս ’ի մահ ո'չ եմք մատնեալ, վկայութիւն նորայ հաստատուն է ’ի սիրտս մեր, որ ’ի անկարգութեան մեղաց մերոց խրատեցաք մեք ’ի Տեառնէ, այլ բնականապէս գիտեմք որ ո'չ ոք խրատող ունի կամք բարձի թողի առնելոյ զխրատեալս իւր ըստ բանին Տեառն որ ասէ՝ ով ոք որ տէր խրատէ սիրէ զնայ, եւ զհաստատելոյ բանն իմ ասեմ զի այսքան եւս վաղնջոց ժամանակաւ անկարգութեամբ վարիւք եւ յանդգնելով պատուիրանին Տեառն, թէպէտ մեք ըստ գործոց մերոց բարձաք պատիւ ազատութեան եւ անմահութեան մերոյ, այլ Տէր եւ արարիչն մեր ո'չ է' հան ’ի բնութենէ մերմէ զօրութիւն բանական հոգւոյ մերոյ, որ ինքն յատկապէս շնորհեաց մեզ, ուրեմն ունիմք ժամանակ եւ ուխտ ’ի բերանոյ սրբութենէ նորայ ո'չ հանելոյ զմեզ արտաքս եւ որպէս ամենագէտ արարիչն մեր դեռ եւս պահէ զօրութիւն բանական հոգւոյ մերոյ ’ի բնութիւնս մեր եւ խոստանայ ընդունիլ մեզ, եւ նա' ինքն ծածկագէտ գոլով բարիօք գիտէր որ կարի արթնանալոց եմք մեք ’ի քնոյ յեղձուցելոյ ծուլութենէ, եւ յիշելոց եմք զօրութեամբ հոգւոյ մերոյ, զի տուն եմք բանական հոգւոյ ’ի փչմանէ Տեառն արարչեն մերոյ, թէպէտ մեք հող եմք այլ գտանի մէջ հողոյս պատուականագոյն զօրութիւն բանական հոգւոյ մերոյ, որ առաւել արժէ քան զամենայն ակունս ’ի սիրտ բնական հողոյ երկրի, եւ դառնալոց եմք ’ի միտս որ ’ի ձեռանէ արարչին մերոյ ստեղծեցաք եւ ’ի նմանէ ընկալաք զօրութիւն հոգւոյ՝ իշխել ’ի վերայ ամենայն կենդանեաց ’ի յերեսս երկրի, եւ նա' մեզ արար ազատ ըստ Օրինօք, զի եթէ կամեցաք մեք արբցուք բաժակ ’ի գործոց ձեռաց մերոց, եւ ձեռք մեր մխեցին ընդ անօրէնութիւն եւ կամք մեր ընդունեցին ճաշակել մահ թշուառութեամբ որում նեղիմք այժմոյս, այլ բարեպէս ծանեաք առաջագոյն զի նեղելոց էաք, այլ որպէս մեղաք թէ սղալանօք, թէ ագահութեամբ, թէ խաբէութեամբ, այլ ո'չ կորուսաք զօրութիւն բանականութենէ հոգւոյ մերոյ վասն մտաւ ածելոյ սղալանս մեր եւ արդարութիւն արարչին մերոյ, ուրեմն հարկաւոր է մեզ իբր սեւացեալ երեսօք ամօթախած դիմօք դառնալ առ դրունս Արարչին մերոյ, որում համբերեաց մեզ այսքան վաղնջոց ժամանակաւ, զի ելցուք մեք ’ի գլորմանէ ’ի յոտս կացուք ուրանալով ամենայն յոյս ումեքէ եւ ուխտեսցուք զի այսուհետ ո'չ երբեք յուսասցուք ումեք, ո'չ ոք ’ի պարգութենէ արենակցէ ոչ ոք ’ի պետութենէ գնտոց զօրութենէ, եւ ո'չ արարած ոք ’ի յերկրէ, բայց միմիայն յուսանալով Տէր եւ արարիչն մեր աննման մի Աստուածն համայնից եւ դարձարուք եւ ընթասցուք առ նմայ միայնոյ եւ

համարձակաձայն գոչելով ասասցուք ըստ անառակի որդոյ, հայր մեղաք մինչեւ անօրինեցաք եւ անկեալ թշուառացաք, լուր մեզ Տէր եւ նայեա՛ բնակութիւնս պատուական զօրութեան հոգւոյ մերոյ զի հող է՛, եւ դու բարի ոք գիտես քան զի դու ստեղծեր, այլ մեք ծանեաք եւ խոստովանիմք առաջի քոյ արդարն, զի մեղաք եւ փոշմանիմք մեք ’ի գործոց անօրէնութեանց մերոց, ընկալ մեզ Տէր ըստ առակին սիրելի որդոյ քոյ եւ մուծ մեզ ’ի գաւիթս տան քոյ հացալից զի մի՛ իսպառ կորնչիմք ’ի սովու անկարգութենէ մերմէ, եւ խոստանամք այժմ քեզ Տէր զի պահեսցուք պատուիրանն քոյ՝ այսինքն հրաժարելով ամենայն գործոց չարեաց եւ մի՛ ներեսցուք ումեք ո՛չ ոք արանց գործեցեալ գործս չարութեանց ’ի մէնջ եւ բառցցուք չարն ’ի միջէ մերմէ ճանաչելով նմայ իբր թշնամի քոյ, եւ պատուեսցուք արանց բարեաց ո՛չ ըստ արժանոյ բնութեան իւրոյ թէ ո՛չ ըստ արժանոյ գործոց բարեաց ’ի ձեռաց նորայ իբր սիրելեաց քոյ, եւ դու Տէր պահեա՛ զօրութիւն բանական հոգւոյ մերոյ ընդ այս անօթս հողեղէնս, զի լիցուք համեմատ ասացելոյ բանին որդոյ քոյ սիրելոյ այսինքն, որդիք աշխարհիս յայսմիկ իմաստնագոյն քան թէ որդիս լուսոյ, եւ կրկին ո՛չ հաւատամք այլոց բանսարկուից բանից բայց քեզ Տէր, եւ ո՛չ տամք տեղի փոփոխական բնութեանս մերոյ շարժիլ ըստ բնական սովորութեան իւրոյ որպէս յառաջնում, բայց ըստ կամաց եւ պատուիրանաց քոց ահա՛ յուսալով ’ի քեզ միայնոյդ Արարչիդ մերոյ թողուլով միտ եւ կամս եւ ցանկութիւնն սրտի մերոյ տղայական, երիտասարդական եւ ծերութեան, եւ հաւատալով զի ցանկութիւն հողեղէն բնութեան մերոյ ունայն է, արիութեամբ զօտի ընդ մէջ ածելով զօրութեամբ բանական հոգոյ մերոյ՝ օգնականութեամբն քոյ ելանեմք ’ի գործ յօրինել մեզ, եւ վասն փոփոխական բնութեան մերոյ որոգայթ պինդ Շխթայիւք կապել օրինօք օրէնս կարգադրութեան բարի եւ ’ի զօրութենէ բանական հոգոյ մե՛րոյ մուծանել այս փոփոխական հողաբոյնն մեր ընդ մէջ բարեգոյն որոգայթին մերոյ, որ ’ի զօրութենէ Շնորհաց քոց կազմեալ զի կացցէ եւ մնասցէ նա՛ անշարժ ’ի վերայ գործոց բարեաց, եւ զօրութիւն հոգոյ մերոյ զերծցի ’ի թշուառութենէ այս աղմկալի բնութենէ եւ պահելով պատիւ ազատութեան մերոյ՝ բառցցի նախատինս ’ի մարդկանէ ’ի յերեսս երկրի մերոյ եւ փրկեսցի խղճմտանս մեր մէջ ամենայն գործոց, զի գտցուք արդարացեալք հոգի եւ մարմին մեր ’ի հանդերձելումն առաջի ատենի քոյ Տէր:

Թէպէտ ’ի վեր բազմիցս յիշեցաք անկարութիւն անձին իմոյ ’ի դպրութենէ եւ արհեստիւ Շարադրութենէ, նոյն այժմ եւս յիշելով ասեմ, Ես փոքրիկս ’ի մէջ ազգին Հայոց թէպէտ պատիւ ինձ յոյժ համարիմ տեսանելով զիս մի ’ի փոքրկանց հայոց եւ ’ի որդոց յաբեթեան, այլ տխուր է ինձ տեսանել անկարութիւնն իմ որ ոչ գիտեմ կատարելապէս ո՛չ բառ եւ ո՛չ բայ հայերէն լեզուի, եւ ո՛չ Շնորհ արհեստին գրելոյ եւ խօսելոյ բայց նախանձ մի մեծ ’ի սիրտ իմ ’ի վերայ սեպհական աշխարհին եւ ազգին իմոյ, որ սայ միայն կարի լցուցանել պակասութիւնն արհեստին իմոյ, վասն այս բանիս Շնորհ ’ի ընթերցողէ խնդրելով՝ ակն ունիմ ներել իմոյս ռամկօրէն շարադրութեան, զի թէպէտ ես ո՛չ կարացի նշոյլ բանիս քաղցրաբանութեամբ ճառել ’ի ականջս ձեր լսողաց եւ եղի զիս ’ի տեղի բամբասանաց, որ ամենայն դպիր աշակերտեալ կարի ծաղր Շարադրութեան իմոյ առնել, այլ միեւնոյն ժամանակի ’ի վերայ իմ յանձն առի թէ ծաղր եւ թէ ամենայն նախատանաց բան ’ի արհեստաւորացէ մերմէ ելցէ, բաւական լինիցի յիս, զի սերմանեսցի սերմս բարի նախանձուս ’ի սիրտս նոցայ, որովհետեւ յինէն անհնարին եղեւ ’ի ո՛չ ոք իրօք լծորդել վարպետաց եւ դպրաց մերոց առ ’ի նախանձ այսպիսի գործոց, գուցէ զի սովաւ յարիցէ նախանձ սրտից նոցայ, զի լինիցին պատճառ լցուցանելոյ պակասութիւն առաջանալոյ բանի իմոյ, եւ փառաւոր առնելով ազգն եւ պատիւն Հայոց, եւ երանելի առն յայնմիկ, որ կամ նախանձահուզ լինելով եւ կամ յատկապէս սիրով ելցէ եւ շարադրեսցէ զամենայն զոր ինչ աստ եւ զոր ինչ նման սորայ բարութիւն որ յինէն անծանօթ, եւ երանի այնոցիկ որում գտանիցին ’ի ժամանակն զոսկէօծն յայնմիկ, զի տեսցեն նախանձ բարի առ այս մտածութիւնս յարուցեալ, եւ երանի ժամանակին յայնմիկ որում գծագիրք եւ շարադրօղք զիս մեղադիր առնելով՝ յիշեցուցանեն պակասութիւնն գրեցելոյն իմոյ դնելով պատճառ մեղաց իմոց, այսինքն առն վաճառական զի արդ կարէ կատար հասուցանել այնպիսի ծայրագոյն գործ, որ ’ի ժամանակս կենաց իւրոց եկաց միշտ վտարանգի իբր գործոյ սարդի, եւ փառաւորեսցի ոսկէ բերան դպիրն իմ քաղցրաբան զի ճոխիւ եւ բնական իրաւամբ հաստատել Օրէնս մէջ ազգին Հայոց, զի ազգն իմ ’ի ծառայութենէ եւ ինքնակամ հրամայօղացէ զերծցի եւ մտցէ սեպհական աշխարհն իւր Հայոց, այսինքն Հայեաստան, զի ժառանգեսցէ կեանս իւր ըստ Օրինօք, այս միայն լիցի

մխիթարութիւն իմ եւ վարձ աշխատանաց իմոց, եւ միաբան փառաւորելով Տեառն Արարիչն մեր Հայր եւ որդի եւ սուրբ Հոգի միայն Աստուածն մեր այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

Որպէս սովորութիւն է՝ ամենայն գործի նախ ճանաչել անունք եւ չափաւորութիւնք եւ կշիռ, այսպէս հարկաւորէ մեզ անուանիլ բացատրութիւն անուանց, որ յինէն ռամկօրէն անուանեցեալ, այսինքն մինչ ո՛չ տացի ձայն ոսկերաց անդամոց մերոց ո՛չ ոք կարէ ճառել անձնաւորութիւն բնութեան մերոյ այսինքն, խորտակեցաւ բազուկ Մանասէի, մինչ ո՛չ ունենամք ծանօթութիւն անուանց ոչ կարեմք իմանալ որում անդամիցէ բազուկն, եւ կամ շնորհեցաւ ’ի կայսերէն երիս տաղանդս ’ի Բարսեղ Մարաշեցոյ մինչ ո՛չ ծանիցուք որքանութիւն տաղանդին ո՛չ կարի յիմանալ որքանութիւն շնորհաբաշխութեան, նա՛եւս եթէ Վարդան Ստրայտելատն զօրօք իւրովք ընթացաւ ’ի միում աւուր վեց ասպարէզ եթէ ո՛չ ծանեաք որքանութիւն ասպարէզին ո՛չ կարեմք իմանալն ընթացն Ստրատելատին եւ այլն ամենայն նման սոցա այսինքն, ուրեմն թուխտ զանազան զօրութեամբ ձեռնադրեալք եթէ նամակ օրհնութեան, եթէ պահպանութեան, եթէ հրովարտաք հրամանի եւ կամ շնորհաց եւ պաշտօնատարութեան եւ կամ հասարակ օրէն մէջ ժողովրդոց թուխտ պարտից՝ երաշխաւորութեան դաշանց եւ ստացմանց եւ այլն նա՛եւս անուանք պալատից եւ խորհրդարանի եւ դատաստանի եւ բանտի եւ անունք իշխանաց եւ զաւառապետաց եւ նախարարաց, սպարապետաց, զօրագլխաց եւ կուսակալաց, նա՛եւս անուանք զինուց եւ գործիք զինուորաց սոքայ եւ այլ բազում նման սոցա որ կայ ըստ իւրաքանչիւր անուն ’ի վաղուց եւ հնոց ’ի Հայոց բառիւ, որ այժմոյս ’ի անկարութենէ իմմէ յինէն անգիտելի է իբր բոլորն անծանօթ, եւ թէպէտ գործն որում ես առաջանամ ցուցանել ձեզ անուանեալ անունս իրաց, այլ զի արդ կարէ ցուցանել եւ ճառել մինչ ո՛չ ձայնեցի անուն գործոյն եւ չափն իրին եւ կշիռ բանին, եւ ես անծանօթ ’ի այսպիսի իրաց անուանց, այլ որպէս ’ի վերն ասացի զի նախանձն իմ յիշխելով ’ի վերայ պակասութեան եւ անկարութեան իմոյ թոյլ ո՛չ տայ զիս զի ’ի պատճառէ ’ի վեր յիշեցեալ անկարութեան իմոյ թողից բանս իմ կիսակատար, եթէ ո՛չ ’ի պատճառէ յատկապէս սիրոյ իմոյ ես առաջադրեցի ’ի միտս իմ զի լաւ է ինձ անուանակոչել անունս նոր, եւ չափս նոր, եւ կշիռս նոր ո՛չ թէ ’ի մտածութեամբ որ բարցցի անուանք ’ի սեպհական բառէ եւ սովորութենէ Հայոց քաւ մի՛ լիցի, եթէ ո՛չ այս նոր անուամբս տացէ տեղի յիշեցուցանելոյ ինձ հարկաւոր տեղին խօսքն իմ եւ լուս լսողաց եւ ճառեսցի գործ բանիս օրինաց մինչ Տէր այց արասցէ ելցէ բուն վարպետ եւ դպիր աշակերտեալ եւ տեղեակ արտաքնոյ գրոց եւ պատմութեանց եւ գիտուն եւ հմուտ բառից եւ բայից Հայոց եւ անուանց ամենայն իրաց, որում այժմոյս յինէն իբր կորուսեալ, նա՛ դիցէ հաւաստի անունք ’ի տեղի ըստ իւրաքանչիւր իրին զի գտցի ամենայն իրաց չափոց եւ կշռոց եւ անձանց անունք ’ի մի հողուն եւ ’ի մէջ Հայոց համահաւասար զի միաբան ծանիցեն չափու որքանութիւն կշռոյն, եւ անունք պաշտօնատարաց եւ այլն, զի մի՛ լիցի իբրեւ այսօր ’ի միջի մերոյ որ ’ի ամենայն գաւառի տան զանազան անուն ’ի իրի ըստ սովորութեան իւրեանց որ անուն իրաց ’ի մի գաւառաց խօսից զանազանի ընդ միմիայնց յոյժ, եւ դժուարանայ ’ի միտս ամենեցուն այսինքն, անուանք իշխանաց մերոց որ այժմ ոմն մէլիք, ոմանք ցրվոր ոմն ռէիս, ոմն քեօֆխա՛, ոմն քալանթար, եւ անուանք չափաբանից մերոց ոմն քիլայ, ոմանք գիրի, ոմանք թաղար, ոմանք թիլանի, եւ անուանք կշռոց ոմանք իստիլ, ոմանք լիտր, ոմանք խարվար, եւ անունք երկրաչափութեան ոմանք ֆարսաղ, ոմանք մանզիլ, ոմանք ասպարէզ, ոմանք աղաջ եւ այլն, այս եւ այլ նման սոցայ հաւաստին կայ ’ի բառն հայոց անթերի, եւ ոչ միայն յինէն անծանօթ նա՛եւս ոչ գտի ոք ’ի մէնջ մեր ’ի ժամանակի կենաց իմոց որում ունիցէր շնորհս այս զի տացէր դաս իմոյս անկարութեան, այլ ես ո՛չ երկբայիմ որ ’ի միջի մեր գոն բազումք աշխատասէրք եւ ընթերցողք եւ հմուտ Հայոց բառբառոց ո՛վ ոք որ իցէ որ ելցէ եւ շարադրեսցի ամենայն անուանք չափ եւ կշիռ մերոյս բառիւ եւ լուս ածցէ վասն հեշտութեան ազգին իւրոյ յիշատակ նորայ գրուեսցի պատուելի ընդ մէջ մեր, այլ այսքան իմ յիշատակելս վասն բանիս միայնակ պատճառն իմոյ անկարութիւնն եղեւ, եւ ցանկութիւն սրտի իմոյ զօրեղագոյն քան թէ անկարութիւնն իմ առաջեցայ ես այսպիսի հնարիւք առաջեցուցանել գործն իմ, եւ ո՛վ ոք ելցէ եւ մաքրեսցէ խառնիխուռ եւ բրդեալ անուանքն իմ դրեցեալ առ յայսմ առ ’ի հաւաստի բառբառ Հայոց պարտաւոր զիս առնէ, եւ ամենեքեան երեխտիս նորայ մի՝ մոռանացեն մինչեւ յաւիտեան:

Նա՛ եւս հարկաւորէ իմ ասել բարեկամք ընթերցողաց իմոց՝ հաստատել ’ի միտս ձեր, զի հաստատութիւն զամենայն զոր ինչ բանի ’ի յերեսս երկրի որում կարէ կալ յաւիտեան, որ նոյն ինքն լինիցի իբր տեսարան ’ի ակն ամենայն տեսողաց, եւ զի ո՛չ մնաց եւ ո՛չ մնալ կարէ ’ի վերայ

հաստատութեան զամենայն զոր ինչ 'ի յերեսս երկրի ընդ հովանեաւ բնութեան մարդոյ ո'չ կարգ, ոչ կանօն, ո'չ հրաման, ո'չ հնազանդութիւն, ո'չ սէր, ո'չ թշնամութիւն ո'չ պատիւ, ո'չ նախատինք, ո'չ կեանք եւ ո'չ վախճան եթէ չիցէ ընթացեալ 'ի ճանապարհաւ եւ կերպիւ եւ համեմատութեամբ բնական բնութեան մարդոյ 'ի զօրութենէ բանական հոգոյ ընտրողութենէ, եթէ ընթերցօղ սորայ զուցէ այնքան պատանի որ 'ի միտս իւր կարի առնուլ թէ զի արդ հրաման կայսեր եւ թագաւորաց որ երբեմն ընդ դէմ բնութեան մերոյ իբրեւ փայլակ ելանէ եւ ո'չ նայի համեմատութիւն ինչ բնութեան մերոյ, եւ կատար հասանի 'ի վերայ նորայ, փոքր խօսիւք ցուցից նշաւակ ինչ վասն հաստատելոյ խօսկն իմ որ 'ի վեր այսինքն կայսրն հրամայէ զիս առնուլ թեւս եւ թռչիլ 'ի հօդս, եւ կամ զգենուլ փող եւ մուծանիլ զիս 'ի խորս ովկիանոս ծով, եւ բանալ աչք իմ ընդ դէմ ճառագայթի արեգական քննել զամենայն զոր ինչ 'ի միջի նորա, եւ ոչ ուտիլ քառասուն ամ, եւ ո'չ յեղուլ արտաքս 'ի յորովայնէ եւ այլ նման սորայ ընդ դէմ բնական բնութեան հրամանի, երկայնամիտ լեր ընթերցօղ եթէ 'ի վեր փոքրիկ վկայիւք յիշեցուցեալս վասն սիրոյ եւ կամ յերկիւղի եւ հնազանդութեան կայսեր կարես դու անձամբ անձի կատար հասուցանել, այլ որպէս ես գիտեմ զի ո'չ դու եւ նոյն գունակ ոչ ամենայն մարդ որ 'ի բնութենէ մարդոյ ո'չ ոք կարէ առնել զայն որ իցէ' ընդ դէմ բնական բնութեան մերոյ, ոչ թէ 'ի պատճառէ յանդգնութեան եւ կամ ապստամբութեան հրամանի կայսեր, այլ միմիայն 'ի պատճառն ընդ դէմ բնութեան մերոյ լինիլն, որ զամենայն հրաման եւ պատուէր եւ օրէնք եւ այլ զոր ինչ որ ընդ դէմ բնութեան մերոյ ո'չ երբէք կարէ մնալ 'ի մէնջ մեր եւ ոչ կարէ հաստատիլ 'ի տեղի իւր եթէ ո'չ սայ միայնակ, ընդ դէմ բնութեան հրամանս պատճառ լինիցի քակելոյ աւերելոյ շինութիւնս մեր եւ աղտեղեցուցանելոյ մաքրութիւնս մեր, լծորդելոյ ազատութիւնս մեր, նախատելոյ պատիւս մեր եւ այլն, ուրեմն որպէս ես հաստատեալ 'ի միտս ունենալով զի զամենայն զոր ինչ ես կամիմ վասն կալոյ եւ մնալոյ վերայ հաստատութեան որ կարէ լինիլ պատճառ ամենայն բարութեան վասն կենաց մերոց 'ի յայսմ աշխարհիս եւ վասն յաւիտեանական հանգստութեան 'ի հանդերձելումն, վասն բնութեան իմոյ, նոյն գունակ հաստատելով 'ի միտս ընթերցողաց ցուցանելով բնական վկայիւք եւ ապա' ցանկամ զի դուք եւս 'ի վերայ այս մտածութեան հաստատուն լերուք, յետ այսորիկ 'ի միտս ձեր խորհեցարուք վասն շտապաշարժ եւ փոփոխալի եւ անհաստատուն այս բնութի, որ ո'չ տանի եւ ո'չ ընդունի եւ ո'չ 'ի վերայ իւր յանձն առնուլ կարէ, զամենայն զոր ինչ որ իցէ ընդ դէմ իւրոյ եւ յինքն ո'չ կարէ մնալ 'ի մի ժամ եւ կամ ո'չ 'ի մի աւուր միով բնութեամբ անփոփոխ, ուրեմն ո'չ գտանի այլ իմն ճար եւ հնար փրկել սմայ 'ի փոփոխմանէ եւ 'ի զանազան փորձութենէ եւ երջանիկ եւ արժանի պատուոյ սմայ առնել, բայց 'ի զօրութենէ բանական հոգոյ մերոյ ընտրողութենէ անխախտելի սահմանօք բարեգոյն յօրենս ըստ համեմատութեան բնական բնութեան, եւ զօրութեան բանական հոգոյ մերոյ որպէս 'ի վեր բազմիցս ասացաք զի նա' կամաւ ընդունեսցէ եւ ընդունելութեամբն նա' կալով մնասցէ հաստատուն, եւ սովաւ բառցցէ վնասն փոփոխականութեան բնութեան մերոյ, եւ արասցէ մեզ արժանի մարդ 'ի պատուոյ, եւ հոջակեսցի ադարութիւն 'ի մէնջ, եւ որպէս բնութիւնս մարդոյ միշտ ազատապէս ներգործէ զամենայն զոր ինչ որ 'ի սրտէ իւրմէ գոյանայ եւ ըստ սովորութեան փոփոխական կամաց իւրոյ երբեմն ցանկանալով երբեմն ընթանալով, եւ երբեմն կատար հասուցանելով, եւ մասն մի 'ի նոյն փոփոխական կամաց այս է, որ ո'չ ոք ծնունդ 'ի բնութենէ մարդոյ ո'չ զերծանի, հաւատալոյ իբրեւ զինքն այր առաջին, եւ կարեւոր, իմաստուն, հարուստ, զօրեղ, գիտուն եւ ամենայն արհեստիւք լիքն եւ ոչինչ պակասութիւն ընդ իւր խորհի, այս մասն բնութիւնս ծնանի 'ի մէնջ 'ի ժամ ծննդեան 'ի յորովայնէ մօր մերոյ, թէպէտ յառաջ քանզ ծնանիլն անծանօթ 'ի մէնջ, այլ 'ի շարժմանէ նորայ ընդ յորովայնի մօր ցուցանի ինքնակալութիւն նորայ որ շարժէ որպէս եւ յերբ որ յինքն կամի, եւ յետ ծննդեան վկայէ մանկութիւն նորայ վասն հաստատելոյ ինքնակալութիւն զի խաղայ եւ շարժի, տխրի եւ ուրախ լինի ըստ կամաց եւ յաջոյից իւրոյ զամենայն զոր յինքն կամի, թէպէտ անծանօթութիւն նորայ 'ի վերայ ամենայն իրաց 'ի յերեսս երկրի դեռ եւս խաբի 'ի ծնօղէ եւ դայեակէ իւրմէ այլ ո'չ ամենայն ժամ, այլ ՏՄ ժամանակս մանկութեան կենաց իւրոց հաստատուն կայ 'ի վերայ մտաց իւրոց զի զամենայն զոր ինչ որ ինքն առնէ ո'չ այլոք կարէ առնել, նոյն գունակ զամենայն զոր ինչ 'ի օտարաց արարեալ որ յառաջագոյն իւրմէ անծանօթ, թէպէտ արարն իցէ ախորժ նմայ այլ միշտ յարուցանէ նախանձ իւր թէ զի արդ ինքն ո'չ արար լաւագոյն քան զայն, եւ բազմիցս անգամ նախանձս այս եղեւ պատճառ բազում գործի եթէ բարոյ եւ եթէ չարի, որպէս երկաթագործք ամենայն իրաց օրաւուր գործեցին լաւագոյն քան թէ յառաջին, վկայութիւն բանիս իցէ միայնակ ընթեռնուլն ընթերցօղիդ որ կարես համեմատիլ ասացուա'ծն իմ ընդ միտս եւ կամս

եւ բնութիւնս քոյ զի ո՛չ երբէք երկբայիմ ես զի գտցիս համեմատ ընդ բնութեան քոյ զամենայն զոր ինչ ’ի վեր յիշեցեալ, ուրեմն մի՛ լինիցի զարմանք եւ ո՛չ ընդ դէմ կամաց ընթերցողիդ զի ես աղաչելով ’ի յայսմ առ ամենայն ընթերցողք սմայ եւ լսողք զի մի՛ նախանձեսցի ’ի վերայ գրեցելոյ իմոյ եւ մի՛ արասցէ զիս անարժան ’ի բարի գործութենէ յայսմանէ ’ի պատճառն թէ զի արդ յինքն ընթերցօղն յառաջագոյն ո՛չ գրեաց, այլ ես մի ’ի փոքրականց ձեր մարդ զոլով թէպէտ ճանաչելով բնական բնութիւն իմ որպէս ’ի վեր պատմեցի, այլ ես ո՛չ կարեմ փախչիլ ’ի բնութենէ մարդոյ եւ ո՛չ ուրանալ ներգործութիւն բնութեան իմոյ, եւ հասարակապէս բնականի, եթէ ո՛չ խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ ձեր արդարն զի ներգործութիւն իմոյս փոփոխական բնութեան ’ի վերայ այս մտածութեան ո՛չ շաղախեցաւ ’ի ցանկութիւն ինչ զի խօրհիցեմ զիս իբր իմաստուն եւ կամ առաջակայ եւ գիտուն եւ կամ արարից բանն իմ այն որ այլ ոք ո՛չ կարէն առնել քաւ մի՛ լիցի, եթէ ո՛չ այն քան համարձակեցայ մինչեւ ’ի միտս իմ հաւանեցայ զի եղբարք իմ որդիք Հայոց մոռացեալ են ’ի միտս իւրեանց առնելոյ հնարքն փրկելոյ զանձինս իւրեանց ’ի ծառայութենէ այլ ազգաց, ’ի պատճառէ վաղնջոց կալով ներ լծոյ ծառայութեան գուցէ ուսեալ իցեն նոքայ ծառայական կենաց, եւ ամենայն երկայն ժամանակաւ ուսմունք լինիլ կարէ իբր բնութիւն մարդոյ, եւ թուի ինձ զի ունիմ իրաւունս ես զի մտից ’ի այսպիսի համարձակութիւն ’ի պատճառէ զի յաւելի քան թէ չորս հարիւր ամաւ ժամանակաւ վարելով մեք յազգս Հայոց կեանս ծառայութեան, եւ ’ի պատճառէ անտերունչութենէ խափանեցան տունք հրահանգաց եւ ուսումն արանս մերոց եւ շաղախեցաւ լեզու մեր ընդ բառբառս այլ ազգաց եւ արգելեաց իմացումն ընթերցման պատմութեանց մերոց եւ ’ի այս պատճառէ մանկունք Հայոց յազիւ գտանի այժմ ընթերցողք եւ ունօղ սէր ’ի ընթերցմունս եւ եթէ յազիւ ընթերցողք, ուրեմն յոյժ սակաւ արհեստիւ կարդացօղ որ ո՛չ կարէ հասկանալ ընթերցեալն իւր եւ ’ի այսպիսի պատճառէ այլ ազգիք ’ի վերայ մեր յիշխելով շփոթեցաւ բառբառս ազգին Հայոց առ ’ի զանազան բառբառս ոմն օսմանցւոց ոմն պարսոց բառիւ, եւ նոքա որում խօսին հայերէն խառնել եւ շփոթեալ ունին ընդ ամենայն բառբառս այլ ազգաց, եւ կատարածն նմանի որպէս սովորութիւն է բնութեան մերոյ որում գեղեցկագոյն ծաղիկ որ ցանկանալով խլիմք ’ի բուսոյ հիրմէ մերձեցուցանելով ’ի քինթս մեր եթէ ո՛չ գտցուք հոտ անոշից յամանգամայն ’ի բաց արկանեմք, նոյնգունակ ’ի այնպիսի կացութեամբ կենօք գտանելով մեր գրեանք պատմութեանց թագաւորաց եւ քաջ զօրավարաց մերոց ընթեռնուլով եւ ո՛չ հասկանալով ’ի բաց ձգեմք գրքուկն, վասն այսպիսի պատճառոյ փթեցաւ գրեանք, կօրեաւ պատմութիւնք եղեւ անծանօթ ’ի յազգէ Հայոց երջանկութիւն ազատութեան ազգին հիրեանց եւ այլն որպէս լուաք ’ի բերանոյ բազմաց թէ ’ի մէջ հարիւր արանց հայոց յազիվ մի այր գտանի զի լուեալ իցէ ’ի բերանէ յումեքէ եթէ ազգն Հայոց ժամանակ ընդ ժամանակս էին տէր եւ թագաւոր ’ի վերայ երկրին Հայեաստանեաց, այսպիսի տարաբախտութեամբ յեռանալով ամենայն բարութենէ որ ’ի մէնջ եւ այսօր մնալով մեր ’ի վերայ այս ոտից որում տեսանես ազգ մի բոլոր սասանեալ զի տոժէ յիս եւ ամենեցուն ’ի միտս առնողաց յոյժ, ես որ ո՛չ գտայ զիս ’ի տեղի ո՛չ ոք պաշտօնի ոչ էկլէգիաստիկի եւ ո՛չ զինուորութեան եւ ո՛չ ’ի յերեսս երկրին Հայոց բնակութիւն, որպէս բազմիցս ’ի մէնջ առաջ քան զիս եւ առաջ քան զնախնիս իմ պանդխտացեալ ’ի Հայեաստանեաց հոգոց յանելով մեռան ’ի տարր յաշխարհ եւ թաղեցին որդիքս եւ ժառանգս հայոց սիրտ օտար հողի եւ ’ի յազարակս այլ ազգաց, որ սա՛ եւս մի է՛ ’ի անօրէնութեան մերոյ որում տեսանեմք այժմ զիս նոյն ճանապարհի, վասն որոյ ոչ կարաց լռել բերանն եւ ո՛չ անփոփեաց գրիճն իմ այսքան որ ’ի մտաց իմոց հասու գդայ եւ այսքան որ ’ի ժամանակէ գործոյն իմոյ ’ի վերայ բանիս ծախել կարացի համարձակեցայ եւ շարեցի ’ի յայսմ, այլ լոյս աչաց իմոց եւ սիրելի սրտի իմոյ գոլ կաթէ նախանձօղն բանիս այրն այն որ ’ի պատճառէ նախանձմանէ սրտէ հիրմէ յարիցէ առ սէր եւ գոյթ եւ շարադրեսցի իմաստութեամբ զամենայն զոր ինչ հնար որ կարելի լինիցի փրկել ազգն Հայոց ’ի ծառայութենէ եւ արասցէ մեզ երջանիկ եւ վայելուչ որդէգրութեան նախահարց մերոց Հայկայ, Արամայ, Տիգրանայ եւ այլն:

Նա եւս հարկաւորէ յիշեցուցանել ընդ միտս ձեր որ ո՛չ ոք գործք բարիք եւ բարութիւնք վասն հասարակաց մի՛ ոք ընդունեսցի միայնակ ’ի կամս իւր, եւ միմիայն յինքն խորհիլ գործել եւ կատար հասուցանել որպէս ասէ մարգարէն ձայն բազմաց գտցի իբրեւ ձայն յԱստուծոյ, նոյնգունակ ըստ բանին Տեառն Պօղոսի երկու եւ իրեք վկայիւք հաստատել կարէ ամենայն բան, սովաւ եւ բանական զօրութեամբ հոգոյ ճանաչիմք զի զամենայն զոր ինչ բարութիւնք եթէ ’ի միայնակ միոյ յառնէ կարելի առնել ուրեմն ’ի երկուս եւ կամ ’ի բազմութեան արանց օգնականութեամբ գերագոյն եւ լաւագոյն քան

զայն կարէ լինիլ, նա' եւս 'ի օգնականութենէ բազմաց մի' մնասցի ծանտրութիւն աշխատանաց 'ի թիկունս գործողին միայնոյ, այլ որպէս բեռինս միոյ ծանտրութեան բաժանելով ընդ բուռս բազմաց գտցի թեթեւագոյն իբր եւ կից մի, նոյն գունակ զամենայն զոր ինչ գործ բարի եւ հնար ըստանալոյ վասն բարութեան հարկաւորէ ամենայն բարեգործք իբր սիրահարեցեալք յառաջանասցեն ըստ իւրաքանչիւր գործ եւ օգնական իւրաքանչիւր յնկերի իւրեանց եթէ խորհրդով, եթէ բանիւ եւ կամ գործով, զի հնչել կարասցէն ձայնս իւրեանց իբրեւ ձայն յԱստուծոյ զի կարի գտանել շնորհս 'ի Տեառնէ ըստ աներկբայելի խոստման իւրոյ, որ ասաց ուրուք գտցի միաբանեալք 'ի յանուն իմ անդ եւ ես եղիցիմ 'ի միջի նոցայ, վասն այսօրիկ 'ի վերայ բանիս օգնականութիւնք իւրաքանչիւր աստիճանի հարկաւորէ եւ բազումք օգնականք այժմոյս ունին իշխանութիւն 'ի ձեռին իւրեանց հրամայելոյ եւ հպատակք նոցայ կան 'ի հավաստի հնազանդութեան նոցա որ սիրով ընդունելոց են զամենայն զոր ինչ հրաման 'ի նոցանէ որ ելցէ', այլ ես կրկնելով ասացից որ 'ի մէնջ եթէ հրամայօղաց եւ յորդորողաց եւ աշխատօղաց եւ լսօղաց եւ հնազանողաց ես ո'չ ցանկամ զի ելցէ խօսկ մի արտաքոյ բնութեանց մարդոյ եւ ընդ դէմ կանօնի միոյ մասի Աստուած պաշտութեան եւ յատկապէս վնաս ընչից եւ ստացուածոց ժողովրդոց, եթէ ո'չ բոլորովին վասն հասարակաց բարութեանց եւ հոգոց եւ մարմնոց հասարակ ժողովրդեան, եւ եթէ գուցէ ընթերցօղ բանիս հարցանել կամիս թէ զինչ օգնութիւն յումեքէ խնդրեմ եւ կամ յումեքէ զինչ գոլ կարէ մինչ յերկիր սասանեցաւ եւ ազգկք ցրուեցան եւ այլ ազգիք կողոպտելով զամենայն ինչս մեր մինչ յետին թշուառութիւն հատուցին, որ խղջուկ ժողովուրդք Հայոց այժմոյս հազիւ լցուցանեն քաղցս յորովայնի իւրեանց եւ քօղաւորեն մերկս անձանց եւ այլն, այլ առ այսպիս խորհողաց ասեմ որ այս բան եւ այս կացութիւն միայն է' պատճառ շտապի երանելոյ առ 'ի գործ եւ հնարելոյ ճար թշուառութեանց, զի զամենայն զոր ինչ դարման 'ի դեղատու է հարկաւորէ' ընդունիլ տկարաց, պարտէ մեզ ստանալ առաջ քանզ մեռանիլ, քան զի յետ մահուան մերոյ ոչինչ դարման ո'չ օգնել կարէ տկարութեան մերոյ, 'ի այս պատճառէ ոչ է' արժան յապաղել ժամանակ մինչ կամք կենդանի, ես ո'չ ուրանամ թշուառութիւն ազգին իմոյ զի այսօր եղկելի է' յոյժ, այլ զոհանամ 'ի Տեառնէ զի դեռ եւս ո'չ այն քան թշուառ իբր հոգէվարք կամ մերձ 'ի մահ, դեռ եւս ունիմք յոյս առողջանալոյ եւ ստանալոյ կեանս երջանիկս, թէպէտ տեսանեմք մեք աղտն տկարութեան ազգին մերոյ զի մահեցուցիչ է', այլ ո'չ պակասագոյն գտաւ պնդութիւն տարերաց յազգին Հայոց այսինքն յոյս եւ հաւատ հաստատուն որ կալով մնաց ձիք ժամանակ տկարացեալ եւ այժմոյս որ ծանեաք մեք դեղ բժշկութեան աղտին մերոյ հարկաւորէ զի շտապի արբցուք բաժակ բժշկութեան եւ ընդունեսցուք ձէթն բալասանի 'ի վերայ վիրաց մերոց զի փարատեսցուք 'ի լծորդեալ ծառայութենէ, եւ արդ 'ի միտս հասարակ ընթերցօղաց ձքելով ազդ արարութիւն նախահարց ասեմ զի մե'ք մարդ 'ի պատուի գոլով գիտացաք ճանապարհն որ տանել կարէր մեզ զկեանս, եւ լուաք 'ի բազմաց եւ տեսաք աչօք մերօք հնարն որ աշխարհ հնարագործ է եւ փրկէ ժողովուրդս աշխարհին իւրոյ 'ի բերանոյ սրոյ եւ նեղչաց, եւ յատկապէս ես մի 'ի փոքրկանց ձերոց այժմ ասացի ձեզ եւ դուք լուաք, ուրեմն լուիցէ դետապետն որում ստացաւ պատուէր 'ի Տեառնէ գէտ կալոյ առաջի ժողովրդեան, լուիցեն ծերքն որ ընկալան շնորհապատուոյ 'ի երրորդ հատորն պատուիրանի Տեառն զի ամենայն ծնեալք իւրեանց պատուիցեն զհայր, եւ լուիցեն կանայք որ խնամակալ եղեն 'ի Տեառնէ զի սիրեսցեն այրք զկանայս, եւ լուիցեն ամենայն ծնունդք 'ի բնութենէ մարդոյ 'ի յազգս Հայոց վասն յատկապէս շնորհացն Տեառն արարչին մերոյ որ ըստացան երկրորդ դրախտ տուն իւրեանց 'ի յոտս Մասիս լերան որ երկրորդապէս սեռեցան 'ի տապանէ ջրհեղեղուն սերունդք ամենայն բնութեանց եթէ մարդոյ եւ եթէ անասնոյ եւ գդան արժանի ընդունիլ պատարագս իւրեանց հաջոյ Տեառն արարչին մերոյ եւ զշնորհս քաւութեան եւ թողութեան մեղաց իւրեանց 'ի յերեսս օրհնեալ յաշխարհին Նախիջեւանու, վասն այսքան շնորհաց եւ բարերարութեան Տեառն, եթէ դուք ոչ լսէք բանից իմոց եւ ո'չ խորհիք պարտն ձեր որում 'ի Տեառնէ արարչէն ձերմէ պարտաւորեցաք փոխանակ 'ի վեր յիշեցեալ շնորհաց, ուրեմն ըստ յայտ արարութեան Տեառն ո'չ երբէք երկմտիմք 'ի բանէ բերանոյ նորայ այսինքն արիւն անմեղ մանկանց ազգին Հայոց 'ի ձեռանէ ձեր խնդրել ընթերցաք, բարի ոք գիտեմ ես զի ամենայն դէտապետք ժողովրդոց եւ հայրք ծնօղ որդոց եւ տիկինք ամուսնացեալ արանց առաւելագոյն քանզ իմ 'ի միտս ձեր յիշեցուցանելն գիսեն հարկն որ 'ի վերայ իւրեանց ձեր եւ մեր կայ այլ այլէ' գիտելն եւ այլէ' ջանալն եւ 'ի գործ մտանիլն, ուրեմն մի' տայք տեղի ընդունելոյ զան բազմի 'ի պատճառէ գիտելոյ ձեր զկամս Տեառն ձերոյ եւ ո'չ առնելոյ, եւ արարն ձեր որում հարկաւորէ առնել մի' ծուլանայք զի ոչ է' ծանտր եւ ո'չ անհնարին ո'չ ընդ դէմ հաւատոյ

Աստուած պաշտութեան եւ ո՛չ տտիպ վասն վայելչութեան անձանց եւ ո՛չ աւերումն տանց եւ շինութեանց, եւ ո՛չ ծախ ոսկոյ եւ երծաթոյ եւ զամենայն ընչից ձերոց, եթէ ո՛չ բոլորովին մեղմ եւ դիւրին եւ հատուցումն պարտուց ձերոց որում յանձն առաք, այսինքն:

Դէտապետէն	Դէտապետք հրամայեցէք ամենայն ծննդոց բնութեան մարդոյ ’ի յերեսս երկրին Հայեաստանեաց թէ արու եւ թէ էգ ուսանիցեն արհեստին ընթեռնուլ տառս եւ բառս եւ խօսիլ բառբառս Հայոց:
Հայրք	Հայրք՝ որդոց Հայոց մուծէք որդիս ձեր անխափան ’ի ընթերցմունս հայերէն եւ ապա՛ կրթեսցուք ’ի զէնս արհեստ զինուորութեան եւ ուսուցէք նոցայ հնազանդիլ Օրինաց:
Տիկինք	Տիկինք՝ հավանեցուցէք սիրտս ձեր եւ սիրտ դստերաց ձերոց ամուսնացուցանել դստերս ձեր ընդ արանց քաջաց եւ հաղթող զինուորաց, եւ ամօթալից արարէք արանց ձերոց եթէ մտցեն նոքայ ’ի գործս ծառայութիւն այլ ազգաց:

Այս քան օգնութիւն ’ի ձէնջ եղելով բաւական լիցի պատճառ լինելոյ փայլումն ազգին Հայոց երջանկութեամբ ’ի յերեսս Հայեաստանեաց յաշխարհի, յայնժամ լինիցի խրախճանութիւն մէջ Հայոց տեսանելով ճարտասանք ոսկէ բերանք եւ քաջազանգուրք ախոյեանք եւ տիրուհիք գերապատուեցեալք ’ի պատճառէ արդարութենէ որդոց իւրեանց, ոմն անաչառ դատաւորութենէ, ոմն անհաղթելի զօրաւորութենէ, ոմն ’ի յուշիմութենէ հնարագիտութենէ եւ հաւադարիմ երբարց եւ արանց իւրեանց, յայնժամ ծագեսցի փայլակն առաքինական եւ մաքրութեան, եւ անշէջ հրով այրեսցի ամենայն աղտ մոլութեան եւ չարութեան ’ի մէնջ ազգին եւ ’ի յերեսս երկրին Հայոց, եւ փայլեսցի յերկիր բնակչօք իւրօք ’ի գործօք առաքինութեան, եւ օրհնեալ լինի ժամանակն այն:

Ցանկալի է՝ ինձ յոյժ զի զոր ինչ խորհուրդ եւ հնար որ ’ի միտս իմ անցեալ եթէ կարի բանիւ բերանով իմով եղից ’ի յունկս բոլոր ազգին իմոյ, եւ զամենայն պատճառ ասացելոց իմոյ յատկապէս ճառեցից լեզուաւ իմով ’ի ունկս ձեր եւ տալով իրաւունս ’ի վերայ ամենայն հատոր իմոյս շարեալ կարգադրութեանց առ ’ի յառաջեցուցանել ’ի սիրտս ամենեցուն այլ որպէս ո՛չ յինէն եւ ո՛չ ոք ’ի բնութենէ մարդոյ հնար կարելի զի բերան միոյ առն կարի կարօղ լինիլ խօսել ընդ ունկս ազգ մի բոլոր, ուրեմն ես նախ խնդրելով ազատութիւն եւ արձակութիւն ’ի ձենջ եւ ապա՛ առաջացայ շարել բանն մտաց իմոց ’ի յայսմ, հնարն թեթեւացուցանելոյ ծանտրութիւն բեռանց ազգին իմոյ եւ հիմն հաստատութեան վասն կազմելոյ տուն եւ բնակութիւնս մեր, որ ’ի վաղնջոց յոյժ աւերեալ, որ ’ի պատճառ է հեղեղումն անկարք վարիւք յեղելոյ ’ի նախնեաց ինքնակալ իշխանաց արարմանց մերոց խախտեալ եւ քայքայեալ, եւ արդ՝ կազմելով, սա՛ իբր կացի մի ծանտր վասն խորտակելոյ լուծն ծառայութեան, եւ բնականապէս ազատ առնելոյ ամենայն բնութիւն մարդոյ եւ կազմել որոգայթ մի հնարագիտութեան, զի ընդ իւր քարշելով կալանաւորեսցէ ամենայն ծուլ եւ հոռի վատթար արանց, որում հաւատամ ես զի գտցի շարադրութիւնն իմ ’ի ունկս ընթերցողաց ձերոց ըստ համեմատութեան կամաց եւ հաջոյից ձերոց, եւ զամենայն զոր ինչ ես ունի ’ի միտս իմ վասն հնարելոյ ’ի վեր ասացեալ ծանտրութեանց, եւ ահա՛ շարեսցի ’ի յայսմ ամենայն հարկաւորութիւնք, այլ բացատրութիւն իւրաքանչիւր հատորի վասն պատճառին իւրոյ գտանելոց էք ’ի երկրորդ հատոր գրքուկս, որ կարի պարզապէս երեւիլ ’ի տեսակս ձեր, եւ հաստատիլ ’ի միտս ամենայն ուշիմ արանց բարութիւն բանիս եւ քաղցրութիւն պտղոյն սերմի ցանելոյս ’ի սիրտս ազգին իմոյ, զի ամենայն երկայնամիտք բարեպէս կարի ճանաչիցեն զինչ պտուղ, ’ի այս ցանելոյս կթել կարեն բոլոր

ազգն Հայոց, կրկնելով յիշեցուցից հարկաւորութիւն օգնականութեան դէտապետաց մերոց, զի յոյժ հարկաւորէ սաստիկ հրամանաւ պարտաւորեսցեն ժողովրդեան իւրեանց ուսանիլ ընթերցմունս տառ եւ բառբառս Հայոց, զի ամենեքեան կարօղ լինիցին արհեստին ընթեռնուլ սմայ եւ այլ ամենայն արժանաւոր գրեանց, եւ ընթեռնուլով մտցէ խորհուրդ իմ 'ի սիրտ նոցայ եւ հնարն իմ 'ի միտս, եւ յոյս նոցայ տայ տեղի յետեւիլ զերծանելոյ 'ի դժնդակ ծառայութենէ որ զարշ եւ աղտեղիէ' քան զամենայն զարշատեսութիւնք, եւ անմխիթար տոժ 'ի վերա բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրի, թեպէտ տխուր է յիս զի զամենայն զոր ինչ 'ի վերայ այս մտածութեան որ 'ի միտս իմ ես ունիմ ժամանակն իմ ո'չ խոստանայ զի ձքաբանութեամբ մանրամասնաբար պատճառաւ այժմոյս 'ի յայսմ բացատրեցից 'ի միտս յազգին իմոյ, այլ ըստ համեմատութեան աշխարհօրէն առակաց լաւ է' մի քան թէ ոչինչ, նա'եւս յոյս իմ մեծէ զի Տեար արժանի զիս արասցէ եւ տացէ ժամանակ կենաց իմոց զի գրեցից բացատրութիւն ամենայն 'ի սմայ գրեցելոյս 'ի երկրորդ հատոր գրքուկն եւ մանրամասնաբար ճառիւք գրել, պատճառն ամենայն հատոր գրեցելոյ իմոյ 'ի յայսմ օրինաց եւ բացատրել եւ այլ զամենայն զոր ինչ որ հարկաւոր վասն բարութեանց հասարակաց, նա'եւս պատճառն իմոյ յատուկ պակասութեանց կարճառօտ գրեցելոյ, վասն զի կացութիւն իմ ո'չ խոստանայր կալով եւ մնալով երկայն ժամանակաւ եւ ծախել ժամանակս իմ 'ի վերայ միայնակ այս գործոյս, վասն զի գդայ ես զիս շնորհօքն Տեառն հայր որդոյ եւ դստերաց բնակեալ 'ի պանդուխտ աշխարհ ո'չ ունելով պաշտօն եւ ո'չ ռոճիկ տարեկան 'ի յումեքէ, եւ թէ ո'չ հարկաւոր գդայ զիս ժողովել պտուղ գործոց վաստակի ձեռաց իմոց զի նովաւ լցուցից կարիքս իմ եւ ընտանեաց իմոց, եւ գոհանամ 'ի Տեառնէ որ ո'չ պակասեցաւ բարութիւն յԱստուծոյ երբէք յինէն, եւ նովաւ սպասիմ զի լցուցանէ ամենայն կարօտութիւն սրտի եւ հարկաւորութեան մերոյ մինչեւ յաւիտեան կենաց մերոց, այլ այնքան որ յինէն կարելի գդայ ծախել ժամանակն իմ առ յայսմ ո'չ խնայեցի, եւ կարն իմ եւ ժամանակն իմ 'ի յայսմ ժամանակի ո'չ խոստացաւ յաւելի քան զայս, վասն այս պակասութեան իմոյ յուսամ 'ի ձէնջ ներօղ զիս լինիցիք:

Եւ յետ աւարտ հասուցանելոյ խորհրդատուութիւն իմ առ հասարակ հայոց դարձայց եւ ասացից առ յատկապէս հարց եւ եղբարց իմոց զի զամենայն զոր ինչ 'ի վեր վասն հասարակաց ասացելոյս, հարկաւորէ ամենեքեան ըստ իւրաքանչ անձի իւրում եւ 'ի վերայ կարգադրութեամբ կառաւարելոյ տունն իւրոյ պահել յօրէնս եւ կարգս կառաւարութեան, առ 'ի բարեվարիւք կեցութիւնս ընտանեաց իւրոց զի քաղցրէ, քանզի ամենայն փոքրիկ տուն ընտանեօք եւ սպասաւորօք եթէ կարգադրութեամբ կառաւարեալ գտանի տունն այն խաղաղութեամբ եւ հաստատուն բնակչօք սիրելի միմեանց եւ միսիթար սրտիւ մնան, եւ պատիւն սոցայ երջանիկ եւ խղճմտանն սոցայ մաքուր, եւ կառաւարութիւն այս մասնաւոր ընտանեաց 'ի մի փոքրիկ տան բնակութեամբ 'ի վերայ անձին իմոյ փորձեալ ունիմ, եւ ո'չ միայն ասացութեամբ, այլ երդմամբ հաստատեմ 'ի միտս ձեր որ կարգաւ եւ Օրինօք կառաւարել տուն եւ զարգացուցանել մանկունս եւ պահպանել սպասաւոր եւ աղախինս 'ի ժամանակի ամենայն աւուրս կենաց իմոյ կալով մնացի միսիթար եւ առանց կասկածանաց եւ սիրելի 'ի կիրծ սրտի ամենեցուն բնակօղաց 'ի տան իմոյ, ոչ որպէս բազմիցս աչօք իմօք տեսեալ եւ ականջօք լուեալ զի որդիք ցանկացին վախճան կենաց հօր զի զտցեն ժամանակ ազատութեան ժառանգութեանց, ո'չ խէթ 'ի միջի ընտանեաց վասն ամենայն զոր ինչ իրաց թէ այս իմ է' եւ այն քոյ, եւ կամ քոնն շատ է իմն փոքր, թէ ինչից եւ թէ պատուից եւ թէ նախատանաց զի ամենեքեան ըստ կարգի ծանեան զամենայն զոր ինչ իւր եթէ հարկ եթէ պատիւ եւ եթէ պատիժ, եւ կամ պարգեւ, որով հետեւ միով ռամիկ անձամբ տուն եւ ընտանիք մի համայն ըստ կանոնիւ եւ կարգադրութեամբ կարի վարել կեանս վայելուչս, ապա ուրեմն որ քան առաւելագոյն կարէ առնել զայն ազգ մի բոլոր ընդ հանիւր ուշիմ արամբ եւ օգնականութեամբ ընդ միմեանց, վերջապէս այն որ տեսի ես ընդ այլ յազգս եւ այն որ ճաշակեցի քաղցրութիւն 'ի տանէ եւ 'ի ընտանեացէ իմմէ ազդ ձեզ արարի, եւ 'ի վերայ ամենայն ասացածոց իմոց ամենայն բարեբարոյ բնութեանց տէր անձինք կարեն ճառել պատճառս բազմապատիկս բարութեանց, որ 'ի պատճառ կարճութենէ ժամանակի ես ոչ կարացի մանրամասնաբարն գրել թէ որ քան բարութիւնք գոն 'ի կառաւարութիւնս օրինօք եւ կարգադրութեան, եւ այժմոյս աւարտ ասացելոց իմոց արարի եւ առաջացայ 'ի շարն յօրինաց, եւ յուսամ 'ի Տէր զի տացէ զօրութիւն հոգոյ իմոյ զի շարեցից զայն եւս համայ յամեմատ բնութեան մարդոյ ըստ հաջոյից բան[ա]կան հոգոյ մերոյ եւ Տէրն յինքն միայն օգնական բանիս եւ յառաջացանօղ միտս յազ[գ]ին իմոյ ընթանալ առ 'ի գործ առ Տեարն խնդալ:

Եւ 'ի երկու պատճառէ ոչ կամէի յիշեցուցանել անուն շարադրողիս նախ զի տգէտք մի' հայհոյեսցեն, երկրորդ զի իմաստունք մի' փառաբանեսցեն, այլ 'ի պատճառն որ ո'չ կարէ լինիլ ոչինչ շարադրութիւնք մինչ չիցէ ոմն շարադրող, վասն այս մտածութեան շարադրողն սորայ յարկիւ բացադրեցի յորպես ըսկզբանագրութիւն մի 'ի փոքրկանց որդոյ Հայոց 'ի յազգէն Թորգոմայ եւ 'ի տանէն Նախիջեւանայ 'ի 42: Երրորդ աստիճան յուսիսային կողմ յաշխարհէ 'ի յոտս ծայրագոյն լեառն Մասիս, եւ այժմոյս եղեւ 'ի ափն ովկիանոս Կօրմանդէլ 'ի դրանն մայրաքաղաքի Մադրասու յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Նա' եւս հարկաւորէ փոքր ինչ եւս յիշեցուցանելի միտս ձեր վասն զվարթացուցանելոյ սիրտ եւ հաստատելոյ հաւատ եւ յորդորելոյ սէր ամենեցուն, զի արիանասցեն 'ի սասանմանէ որում վաղնջոց ժամանակաւ իբրեւ ուսեալ ծառայութիւն, եւ ո'չ հեռացուցանիմ վկայութիւնք բանին իմոյ ժամանակս իբր եւ դարս անցելոց եթէ ո'չ ցուցանիմ ձեզ անցք անցելոյ 'ի ժամանակի կենաց մերոց նախ ասեմ վասն քաջ ազգին Վրաց որ 'ի սկզբանէ մինչեւ ցըխոնարհիլն թագաւորութիւնն Հայոց Վիրք երբեմն թագաւորութեամբ երբեմն հպատակ իշխանութեամբ փոքրիկ յաշխարհն Վրաց որ ո'չ համեմատի, յավելի քան թէ, երկու 'ի հնգետասան յաշխարհին Հայոց պահեցին շուք ազատութեան 'ի մէջ յազգին իւրեանց թէպէտ ժամանակ, ընդ ժամանակս նեղեցան, 'ի անօրէն բռնաւորացէ եւ յատկապէս բարբառոսացէ կողոպտեցան գերեցան մինչ զի երբեմն մասն փոքրիկ յաշխարհին իւրեանց, ամայի գտան այլ երբէք ո'չ սասանեցան եւ ո'չ թուլացուցին զօրութիւն բանական հոգոյ իւրեանց արիացան եւ եդին զանձինս իւրեանց իբրեւ զոհ վասն պահելոյ ազատութիւնս իւրեանց եւ պահեցին մինչեւ ցայսօր մէջ շուրջապատեալ թշնամեաց իւրեանց առանց օգնականութեան յումեքէ:

Միրվէիս իշխանն Ղանդահարու յազգէն Աղվանից 'ի ժամանակի երջանկութեան յազգին պարսից եւ 'ի ժառանգաւոր թագաւորութեամբն 'ի սերնդէ Սէֆիէ ելան Ղանդհարու երկոտասան հազարախքատ զօրօք որ բազմիցս 'ի նոցանէ բոր ոտիւք եւ ձին առանց թամք եկին եւ յաւաքեցին 80000 հազար երկաթպատ զօրքն պարսից 'ի քաղաքն Իսպահան փակեցին դրունս քաղաքին մուտն կերակրոց մինչ բիւրս բիւրոց սովա' մահ եղեն, կատարածն մատնեցաւ թագաւորութիւն քաղաք եւ իբրեւ բոլոր աշխարհն պարսից 'ի ձեռն Աղվանից Նադրողուլի արտախուրայ գործն, ապստամբեցաւ 'ի հօրէ սպան զհօր եղբայրն, եմուծ զինքն 'ի պաշտօն Շահ Թամազի, վարեաց Աղվանք 'ի յաշխարհէն պարսից թափեաց մասն յաշխարհին որ ըմբռնեալ ունին Օսմանցիք ել 'ի Պէրսու եւ եմուտ 'ի Հնդիկս յաղթա' հարեաց ընդ ինքն յանդիմանօղաց յաւաքեաց հարստութիւն բազում հանդերձ համբաւ արիութեան մինչեւ անուանեցաւ կայսր այսինքն Շահուն Շահ միջոց միմիայն քան ամենայն ժամանակաւ:

Քարիմխան յազգէն Բաքտրիացուց որ ըսկզբանէ ո'չ յավելի զօրութեամբ քան թէ Մէլիք Յօվսէփին Աղվանից տիրապետեաց բոլոր պարս արաղ Ատրպատ[ա]կան յաշխարհ եւ Մխիթար կենօք վարեաց զկեանս իւր, իբրեւ թագաւոր բնական մահուամբ վաղճանեցաւ 'ի կենաց Յէհդրալի անուամբ ոմն զինուոր ըստ բնութիւնս քաջ ջանացաւ աշխատեցաւ մինչ եղեւ տէր, միոյ լայնատարած յաշխարհի անուանեալն Մանսուր, զօրացաւ զինուորօք, հարստացաւ ընչիւք, փառաւորեցաւ 'ի փառս իշխանի՝ լինելով տէր յաշխարհի եւ ժողովրդոց:

Եւ այժմոյս լսեմք բորբոքում նոր այս ոմն իմաստուն Վաշինկթան անուամբ 'ի յազգէն բրիթանիացուց ծնեալ 'ի Ամերիկ որում, պահպանիւր, 'ի մեծի բրիթանիացուց սա' յակառակեալ տերանց եւ ժողովեալ հասարակութենէ ժողովրդոց Ամէրիկու զօրք բազում ջանայ եւ աշխատի, գտանիլ ազատութիւն եւ լինիլ, անհնազանդ ումեքէ, թէպէտ կատարածն բանին դեռ եւս ո'չ երեւեցաւ թէ զինչ լինելոց այլ ցանկութիւն սրտի ամերիկացուց բնականէ 'ի բնութեանս մարդոյ քան զի ո'չ գոյ 'ի յերեսս երկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն 'ի թոշակս մարդոյ քան թէ ազատութիւն:

'Ի վեր յիշեցեալ թէ ազատութիւնք, թէ տիրապետութիւնք, թէ թագաւորութիւն բոլորն 'ի փոքրականց եւ 'ի աղքատութենէ ըսկսեալ, բայց 'ի վրաց որ 'ի ժառանգութենէ եկեալ եւ արիութեամբ պահեցեալ ուրեմն ո'չ է անհնարին եւ ո'չ յոյժ դժուարին վասն բոլոր յազգին միոյ օրինօք եւ կարգադրութեամբ զարդարիլ պատիւս ազատութեան իւրեանց ջանալ վասն ստանալոյ ազատութիւն 'ի բռնաւորացէ, եւ թափիլ յաշխարհս իւրեանց 'ի լծորդութենէ բռնաւորաց, խորհուրդն իմ մի, լինիցի, հակառակ եւ անիրաւ 'ի միտս բռնաւորաց մերոց քանզի, կարգադրութեան առաջին հատորն մեր

յիշեցեալ զի լինիցուք մեք տէր միմիայն յաշխարհին մերոյ եւ թոյլ մի տացուք զի քայլ մի 'ի յերկրէ այլոց աւելանալոյ վասն մեր, եւ 'ի մէնջ պակասիլ վասն այլոց ուրեմն ջանալ եւ աշխատ առնել ստանալ այն որ սեպհական ժառանգութենէ Հայոց ոչ է' անիրաւութիւն եթէ ո'չ արդարութիւն:

Յաւել քան զայս աւարտ արարից խօսկն իմ, թողլով ամենայն մասունք գրեցելոց իմոց առի աշխատասիրութիւնս, հանճարեղաց եւ իմաստնոց զի նոքայ լցուցանեն պակասութիւն ասացելոց իմոց եւ դառնամ առի, սահմանս կարգադրութեան, որ է հիմն հաստատութեան վասն փրկութեան, յազգէն մերոյ եւ կերպն բարեպէս կառաւարութեան յազգ եւ յաշխարհն Հայոց:

Ն Ծ Ա Ի Ա Կ
Կարգադրութիւն Հայոց վասն կառաւարութեան Հայաստանեաց յԱշխարհի:

Հատոր Երկրորդ

Գլուխ Առաջին:

Ծանեաք եւ 'ի վերայ ծանօթութեան մերոյ հաստատեցաք որ 'ի ծագել արեւու յաշխարհէն մերոյ Աղուանից եւ 'ի դռանէ Ալանաց առ հարաւ կոյս մինչեւ 'ի յաշխարհն մեր Կորճկա' Հայք, 'ի ոտն Տորոս լերան, եւ անտի առ արեւմուտ մինչեւ Անտիոքն մեծ 'ի ափն Միջերկրեաց ծովու, եւ անտի հուսիս մինչեւ Մամաստիա', եւ անտի առ արեւմուտ մինչեւ Կիլիկիա' յաշխարհն մեր Երրորդ Հայք, Կիլիկիունց առ հուսիս մինչեւ Լօնօպօնտոս ափն Սեաւ ծովի, եւ անտի առ արեւել հուսիս մինչեւ Տայք յաշխարհն մեր, եւ 'ի Տայքու առ արեւել մինչեւ յաշխարհն մեր Աղվանք եւ 'ի դրունս Ալանաց: Եւ 'ի արեւմուտ կողմանէ 'ի ափէն Միջերկրեաց ծովէ մեծ Անտիոքէ առ արեւել կոյս մինչեւ վերջն Տորոս լեռան 'ի ափն Կասպից ծովի 'ի դրունն Գիլան: Եւ 'ի հարաֆ կողմանէ 'ի ոտնէ Տորոս լեռնէ առ յուսիս, այն որ 'ի արեւել կողմ Սուլթանիու մինչեւ 'ի դրունս Ալանաց, եւ այն որ 'ի հարաֆ կոյս փոքր, յԱղբակայ մինչեւ Տայք յաշխարհն մեր եւ այն որ արեւմուտ կոյս մեծ Անտիոքէ առ արեւմուտ հուսիս մինչեւ Լէնօ Պօնտոս, եւ 'ի Լէնօ Պօնտոսէ առ արեւել յուսիս մինչեւ Տայք յաշխարհն մեր, եւ Տայքու առ արեւել մինչեւ 'ի դրունս Ալանաց 'ի ափն Կասպից ծովի, այս միջոց բոլոր յաշխարհն լերամբ բլրօք անտառիւք, ծովաւ, լճակաւ, գետաւ, աղբիւրօք, քաղաքաւ, գաւառաւ, դաշտիւք, գեղօրէիւք, տանիւք, բնակութենօք եւ զամենայն զոր ինչ 'ի յերեսս յերկրիս եւ 'ի խորս ծովու եւ 'ի յեղումն գետորէից աղբերաց, թէ բնութիւն մարդոյ եթէ անասուն կենդանեօք գազանօք, սողնօք, թռչնօք, եւ բոլոր երկիր ամենայն կենդանեօք տրուք եւ բերիւք անտառիւք կացցէ եւ մնասցէ երկիրն անուամբ Հայեաստան եւ 'ի միջի նորայ բնակօղք 'ի բնութենէ մարդոյ Հայք, եւ ամենայն անասուն կենդանի 'ի յերեսս երկրի եւ 'ի խորս ծովու Հայոց, միաբան եղիցի ժառանգութիւն ազգին Հայոց ո'չ աւելանալ եւ ո'չ պակասիլ քայլ մի 'ի յերկրէս, եւ սմայ պահպանեսցի Տունն Հայոց ըստ Օրինօքն Հայեաստանեայց մինչեւ յաւիտեան:

Գլուխ 2:

Ամենայն բնութիւն մարդոյ ծնեալ 'ի յերեսս երկրին Հայեաստանեաց ունի պատիւ անուանիլ զինքն Հայ, յորմէ յազգէ եւ որում դաւանութեամբ որ իցէ հարկաւորէ նմայ խօսիլ եւ կարդալ Հայոց բառիւ եւ տառիւ:

Գլուխ 3:

Ամենայն բնութիւն մարդոյ թէ Հայոց եւ թէ այլ ազգէ ծնեալ 'ի աշխարհն Հայոց, եւ կամ 'ի տարր աշխարհէ պանդխտացեալ 'ի Հայս թէ արու թէ էգ համահաւասարապէս կացցեն եւ մնասցեն ազատ ընդ ամենայն գործս իւրեանց, ոչ ոք իցէ որ իշխեսցի 'ի վերայ ոչ ումեք, բայց գործս ձեռաց իւրեանց վարձատրեսցի ըստ իւրաքանչիւր գործոց ըստ օրինօքն Հայոց:

Գլուխ 4:

Պատուելի մեզ է՝ սովորութիւնն Աստուած պաշտութեան Հայեաստանեաց սուրբ Եկեղեցւոյն, որում աւանդեցաւ մեզ 'ի սրբոց մերոց առաքելոց Թադէոս եւ Բարդուղիմէոսէ շառաւիղեալ գաւազանն մինչեւ ցայսօր, որում աւանդէ մեզ ծայրագոյն աթոռն Հայրապետութեան Հայոց լուսակառուց Սուրբ Եկեղեցին Էջմիածին 'ի բերանոյ մաքրազարդ Հայրապետին Հոյոց 'ի Վաղարշապատ:

Գլուխ 5:

Ամենայն բնութիւն մարդոյ բնակեալ 'ի յերեսս երկրին Հայոց որում կերպի սովորութեան, որ ունի այժմոյս պաշտել զԱստուածն իւր, նոյն գունակ կացցե եւ մնասցէ 'ի վերա՝յ հաւատոյն Աստուածպաշտութեան իւրոյ, մի՝ ոք ունիցի իշխանութիւն արգելման նոցայ ով ոք իցէ:

Գլուխ 6:

Ով ոք հայ որ ուրասցի հաւատս Քրիստոնէութեան իւրոյ որում մկրտեցեալ եւ դրոշմեալ լինիցի 'ի յեկեղեցիս Հայեաստանեաց եւ կոչեցեալ Քրիստոնեայ մահու մեռանիցի եւ ստացուածք նորա անպակաս եւ անթերի մնասցէ ժառանգութիւն Քրիստոնեայ մնացորդաց նորայ ըստ օրինօք:

Գլուխ 7:

Աշխարհն Հայեաստան չափեսցի չափով եւ ոչ ոք ըստ իւրաքանչիւր անձի կարօղ լինիցի ընտանալ քայլ մի մինչ ոչ լինիցի տուեալ նմայ 'ի Տանէն Հայոց թուխտաւ զնեցելօք երկրի ըստ չափաւորութեան եւ երկայնութեան եւ այլն:

Գլուխ 8:

Ամենայն բնութիւն մարդոյ 'ի ազգէ եւ 'ի ժողովրդենէ Հայոց մկրտելոց եւ հաւատացելոց 'ի Քրիստոս, կարօղ է զնել երկիր վասն ժառանգութեան իւրոյ եւ վաճառել երկիր իւր ումեք առն 'ի նոյն ազգէ եւ դաւանութեամբ, այսմ մտածութեամբ զի ամենայն զոր ինչ 'ի բերմանէ երկրին գոյանայ հատուցանել հարկ, մաքս եւ հաս բաժին եւ այլն, առ 'ի Տունն Հայոց օրինօք Հայոց:

Գլուխ 9:

Ամենայն բնութիւն մարդոյ ծնեալ 'ի յերեսս երկրին Հայոց անօրէն, եւ եթէ ծնեալ 'ի տարր աշխարհ պանդխտացեալ 'ի Հայս, կարօղ է վարձու ստանալ երկիր եւ տուն եւ բնակութիւն ժամանակաւոր, ո՝չ խոստանասցի նմայ զնել եւ ո՝չ ժառանգութիւն եւ ո՝չ արժանի վաճառելն նորայ, բայց ունենալով նմայ երկիր եւ տուն վարձու հատուցանելով վարձն բնակութեան տան իւրոյ առ տեառն տան, եւ հարկ եւ մաքս եւ հաս եւ այլն առ տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 10.

Ամենայն բնութիւն մարդոյ 'ի յերեսս երկրին Հայոց եթէ 'ի հաւատացեալ 'ի Քրիստոս եւ եթէ անօրէն կացցէ եւ մնասցէ ազատապէս տէր եւ թագաւոր 'ի վերայ ընչից իւրոց, միայնակ հնազանդելով օրինացն Հայոց եւ հատուցանելով հարկ, մաքս, հաս եւ այլն ըստ օրինօք առ Տունն Հայոց:

ԳԼՈՒԽ 11.

Առատապէս տացցի երկիր վիճակի Սուրբ Աթոռին Հայրապետին Հայոց, նա՝ եւս ըստ իւրաքանչ վանօրէից եւ ապաշխարողաց զի վայելեսցեն ազատապէս, արտաքոյ մաքսից, հարկից եւ հասից, զի մի պակասեսցի կերակուր եւ զգեստ կրօնաւորաց մերոց, որ նոքայ ո՝չ երբէք հարկեսցեն իրաց եւ ծախիցեն ժամանակս իւրեանց վասն հարկաւորութեան անձանց իւրեանց, եթէ ո՝չ կալով մնասցեն ըստ պատուոյ իւրեանց յարաժամ բարեխօս վասն մեր առ Տէր արարիչն մեր զի ներեսցէ սղալանս յանցանաց մերոց:

ԳԼՈՒԽ 12.

’Ի Ծայրագոյն Հայրապետէ Ամենայն Հայոց հանդերձ բոլոր եպիսկոպոսիւք ընտրեսցեն ’ի միջէ իւրեանց արք եպիսկոպոս մի եւ տացեն նմայ նամակ փոխանորդութեան իւրեանց ժամանակաւ երիս ամաւ պաշտօն տանուտէրութեան ’ի տանն Հայոց եւ սա ունիցի ձայնս երկուս:

Օրինակ փոխանորդութեան Հայրապետին Հայոց:

ԳԼՈՒԽ 13.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Մարտիրոս Քահանայապետ եւ ծայրագոյն Հայրապետ ամենայն Հայոց ընդհանրական եւ առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեաց ընդհանիւր Եպիսկոպոսեօք միաբան ընտրեցաք եղբայրակիցս մեր Տեառն Սեղբեստրոս արքեպիսկոպոս աղձնու, եւ ետուք իշխանութիւն նմայ փոխանորդութեան մերոյ երիս ամաւ ժամանակաւ, զի բազմեսցի փառօք եւ պատուօք ընդ փառաւոր տանուտէրս ’ի գահն մեծ եւ բարեվարք տանն հայոց, ազատապէս, եւ տացէ պաշտօն ընդունեսցի յօրէնս կարգադրութեան, եւ արասցէ հրաման ըստ Օրինօք հայոց ’ի վերայ ամենայն բնութեան մարդոյ յերեսս երկրի հայաստանեաց, եւ զամենայն զոր ինչ հրաման ’ի գահէն մեծ եւ բարեվարք տանէն հայոց հանդերձ փոխանորդաւ մերով Տեառն Սեղբեստրոս արք եպիսկոպոսիւ ձեռնադրեալ ելցէ ընդունելի մեզ լիցի, եւ համարեսցի իբրեւ կամք եւ հրաման մեր անթերի եւ առանց երկբայելի, գրուեցաւ ’ի դրանն սրբակառուց Սուրբ Էջմիածնի յայսմ աւուր յամսեանն դեկտեմբերի 10 յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք որ ձեռնադրեցին
եւ կնքեցին եւ յանձնեցին:
Մարտիրոս Հայրապետ
ամենայն Հայոց:
Սիմէօն Արք Եպիսկոպոս
Վասպուրականի գծագիր
Սրբոյ Աթոռոյ Էջմիածնի:
Սիմէօն արք Եպիսկոպոս
Փայտակարանոյ:
Բաղամ արք Եպիսկոպոս
Արարատեան:
Մարտիրոս արք Եպիսկոպոս
Ուտից:
Վարդան արք Եպիսկոպոս
Տուրուբերնայ:
Մանուէլ արք Եպիսկոպոս
երկրորդ Հայոց:
Շմաւօն արք Եպիսկոպոս
Գուգարայ:

ԳԼՈՒԽ 14.

Ամենայն գաւառաց աշխարհէն Հայոց որում ունիցի մինչեւ երկոտասան հազար տունս ընտրեսցէ ’ի մէջ արանց իւրեանց ըստ կամաց եւ ըստ հաճոյից բոլորեցունց ’ի իւրաքանչ ամենայն գեօղէ այր մի ազգէն հայոց հաւատացելոց ’ի Քրիստոս աւանդութեամբն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ եւ ծնունդ հայաստանեաց հեզ եւ խոնարհ, ’ի այս ընտրողութենէ քանիցս այր որ ընտրեցեալ գտանի ’ի վերայ նոցայ, հանեսցեն վիճակս որ ելցէ միմիայն երկու այրս, որում երկու արանց որ ելցէ վիճակ բոլոր

քեօֆխայք ամենայն գեղօրէից միաբան ձեռնադրելով թուղթ փոխանորդութեան տացեն ընդ առնն այնմ երկու անձանց 'ի ժամանակաւ երիս ամաւ, զի այս ընտրեալ երկուս այրս նստցեն 'ի յաթոռ տանն հայոց իշխանութեամբ եւ տանուտէրութեամբ, եւ կացցեն եւ մնասցեն փոխանորդ բոլոր երկոտասան հազար տանց, եւ սոցայ տեսանելով հրաման 'ի տանէն հայոց ձեռնադրեալ ընդ փոխանորդօք իւրեանց հնազանդելով կատարումն հասուցանեն ամենայն հրամանք տանէն հայոց եւ փոխանորդքս ստայցեն իւրաքանչ տանէ տարեկանաւ կէս դահեկան երծաթի, յամահաւասարութիւնն ըստ կարեաց տանց, զի այս վեց հազար դահեկանս հատուցումն լինիցի ծախ կարեաց երկու փոխանորդաց իւրեանց, զի նոքայ մնասցեն անհոգս 'ի ծախից, պահելով ժամանակս փոխանորդութեան իւրեանց ազատ առ 'ի խորհուրդ եւ գործ վասն բարութեան ժողովուրդեան իւրեանց, եւ յետ լրումն ժամանակին երիս ամաց կամք ժողովուրդեան իցէ եթէ կամին հաստատիլ նոյն արանց, զի կալով մնասցեն կրկին փոխանորդ երիս ամաց կամ հանել պաշտօն 'ի նոցանէ եւ տալ այլ ոմանց ըստ համեմատութեան վերն սահմանեալ կերպին, եւ այս ընտրողութիւնս սկսանի յամսեանն դեկտեմբերի եւ ընտրեալսն հաստատեսցի որ ընծայեսցեն նոցայ 'ի տունն հայոց առաջին աւուրն յունվարի, զի մտցեն 'ի պաշտօն սկիզբ տարուն այսինքն յունվարի 6. յայսմ Օրինօք հաւաքելով փոխանորդացս քանի ոք որ գտցի 'ի միջի յազգին հայոց մի 'ի երկուց փոխանորդաց համահաւասար ընտրեցեալ լինիցի տանուտէր տանն հայոց, եւ միւսն պաշտօնատար 'ի տանէն Հայոց:

Օրինակ փոխանորդութեանց երկոտասան հազար տանց:

ԳԼՈՒԽ 15.

Յայտնի լինի ամենեցուն, որ մեք ներքոյ ձեռնագրօղք բոլոր քեօֆխայք գեղօրէից եւ ծերակուտօք եւ գաւառապետօք իշխանօք աշխարհիս Վասպուրականի ըստ Օրինօք Հայոց ընտրեցաք 'ի միջէ մերմէ արս երկուս, այսինքն Տեառն Մանասէ գեղջէն Հեղվարդու, եւ Տեառն Բրաբիօն 'ի գեղջէն Կարփու, կամաւ եւ յօժարութեամբ մերով տուաք կարէղութիւն փոխանորդութեան մերոյ երիս ամաւ ժամանակաւ առ Տեառն Մանասէի, եւ Բրաբիօ'նի, զի մինն իսմանէ բազմեսցի փառօք եւ պատուօք ընդ փառաւոր տանուտէրս 'ի գահն մեծ եւ բարեվարք տանն Հայոց, ազատապէս տացէ պաշտօն, ընդունեսցի Օրէնս կարգադրութեան եւ ընդ տանուտերօք հանդերձ արասցէ հրաման ընդ Օրինօք հայոց 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, եւ զամենայն զոր ինչ հրաման 'ի գահէն մեծ եւ բարեվարք տանէն հայոց հանդերձ փոխանորդիւ մերով ձեռնադրեալ ելցէ ընդունելի մեզ լիցի եւ համարեսցի իբրեւ կամք եւ հրամանս մեր, եւ մեք բոլոր ժողովրդիւ կատարումն հասուցանեմք հրամայեցեալն անթերի եւ առանց պատճառի, գրուեցաւ 'ի աշխարհն Վասպուրականի մէնջ մեր ձեռնադրեցաւ առաջի ատենի երից վկայից այսմ աւուր դեկտեմբերի ամսոյ 10. յամի տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին
եւ կնքեցին եւ յանձնեցին:
Բաղրամ Մարաշեցի,
Միքայէլ Մեղրու,
Սարգիս Հեղվարդու,
Դանիէլ իշխան
Խօշաբ քաղաքի.
Մանասէ գաւառապետ
Բծնոնեաց.
Գրիգոր Քեօֆխայ
Ուտից.

ԳԼՈՒԽ 16.

’Ի տանուտերաց Հայոց եւ Եպիսկոպոս փոխանորդէ Հայրապետութեան Հայոց ընտրեցեալ եւ ընդունեցեալ եւ հաստատեալ լինի Օրէնս կարգադրութեան հայոց զոր ինչ ’ի վեր եւ որ ’ի վայր ասելոց եմ, որ սովաւ լինի ընդունեցեալ ըստ կամաց եւ ըստ հաճոյից բոլոր ազգէն հայոց, սովաւ գտցի բոլոր հայք մի հօտ եւ մի կամս եւ Օրէնս սոցայ ’ի վերայ իւրեանց հովիւ:

ԳԼՈՒԽ 17.

Զոր ինչ հատոր Օրինաց որում ժամանակի ընտրողութեան եթէ գտցի հակառակ ոք ընդդէմ կամաց ընկերի իւրոյ վիճել ճառել իրաւացուցանել, արդարացուցանել, այլ հարկ լիցի ’ի վերայ հակառակողին մինչեւ երիս անգամ ժողովման Օրն ազատապէս ընդդիմանալ եւ խօսել պատճառն մտաց իւրոց եւ ’ի չորրորդ անգամ ժողովումն հանիցեն թիւ տանուտերաց կողմն այո' եւ կողմն ո'չ, որում կողմ որ բազմասցի թիւ կամաց մինչեւ միայնակ միով բերանաւ յաւելի քան թէ միւսն, հաստատեսցեն կամս յաւելորդ արանց, եւ պակասագոյնքն անխտրանօք եւ աննախանձաբար հաճեսցեն, եւ միաբան ընդունեսցեն արդարութիւն եւ հաստատեսցեն նոյն ’ի յօրէնս միմիայն Հայրապետն հայոց եւ կամ Եպիսկոպոս փոխանորդն նորայ եւ նախարարն հայոց, համարեսցի երկուս ձայնս իբր կամք երկու անձանց եւ ունեսցեն պատիւ զօրութեան երկու արանց, զի կամք նոցայ համարեսցի երկուս, այսինքն թէ հայրապետ, թէ նախարար ’ի թուաբանութիւն կամաց համարեսցի երկու կամք Հայրապետին եւ երկու նախարարին, մնացորդք տանուտէրաց ըստ իւրաքանչիւրոյ մի:

ԳԼՈՒԽ 18.

Ամենայն պաշտօն եթէ նախարարութեան, եթէ դատաւորութեան, եթէ խորհրդակցութեան իշխանութեան, ամենայն կարգ զինուորութեան, դպրութեան, գծագրութեան եւ ամենայն կառավարութեան ’ի տանէն հայոց եւ ’ի տանուտերացէ ելցէ, եւ ’ի վերայ նոյն պաշտօնատարութեան տալոյ իշխանութիւն ’ի տանէն եւ տանուտերացէ հայոց թուղթ պաշտօնի ըստ Օրինաց:

ԳԼՈՒԽ 19.

Բոլոր յաշխարհէն հայոց որքան փոխանորդք որ գտցի կէսն ’ի նոցանէ, այսինքն մի ’ի երկուց արանց մտցի ’ի կարգ տանուտէրութեան եւ միւս մինն ’ի պաշտօն իշխանութեան:

ԳԼՈՒԽ 20.

’Ի միջէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեսցի այր մի տէր պատուոյ եւ գաւառի սեպհական յազգեն հայոց դաւանութեամբ հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ վասն նախարարութեան եւ ’ի տանէն հայոց տացի նմայ նամակ պաշտօնի նախարարութեան ժամանակաւ երիս ամաւ նմանութեամբ Օրինակին:

ԳԼՈՒԽ 21.

’Ի միջէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն Հայոց ընտրեսցին արք երկոտասան սեպհական յազգէն Հայոց աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ Տեառն պատուոյ եւ գաւառի վասն խորհրդակցութեան նախարարին հայոց, եւ ’ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնի խորհրդակցութեան ժամանակաւ զամենայն աւուրս կենաց իւրեանց աստիճանաւ երկրորդ երրորդիւ մինչեւ ցերեքտասաներորդ աստիճան, եւ նամակ պաշտօնատարութեան սոցայ լիցի ըստ Օրինօք որպէս Օրինակն:

ԳԼՈՒԽ 22.

’Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս քսան եւ հինգ սեպհական յազգեն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ արք հեզ եւ բարեպաշտ վասն

ծայրագոյն դատաւորութեան, եւ 'ի տանէն հայոց տացի նոցայ նամակ պաշտօնատարութեան առն միոյ մայր դատաւոր եւ արանց քսան եւ չորս 'ի դատաւորութեան ժամանակաւ երիս ամաւ նամակն ըստ նմանութեան Օրինակին:

ԳԼՈՒԽ 23.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս երեսուն եւ վեց սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ կրթեալ դպրութեան եւ ատենաբանութեան եւ հմուտ Օրինաց, եւ 'ի տանէն հայոց տացէ սոցայ նամակ պաշտօնատարութեան ժամանակաւ երիս ամաւ:

18. Պաշտօն տանն Հայոց

12. Պաշտօն 'ի յապարանն ծայրագոյն դատաստանի:

6. Պաշտօն 'ի ծածուկ խորհրդարանն նախարարին:

Նամակ պաշտօնի սոցայ սրպէս Օրինակն:

ԳԼՈՒԽ 24.

'Ի միջի բոլոր փոխանորդաց 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի Այրս ինն սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ վասն սպարապետութեան, որ երիս 'ի սոցանէ համարեսցի մի սպարապետ, այսինքն առաջին. Երկրորդ եւ երրորդ անուանելով կարմիր սպարապետ, կապուտ սպարապետ եւ դեղին սպարապետ, որ ըստ իւրաքանչիւր երիս անձինք գտցի մի պաշտօն, եւ 'ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան երիս ամաւ ժամանակաւ ըստ նմանութեան Օրինակի:

ԳԼՈՒԽ 25.

'Ի միջոց բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս ինն սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ վասն ասպետութեան մի եւ նոյն որպէս հատոր 24. որպէս Օրինակն:

ԳԼՈՒԽ 26.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս ինն սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ վասն հրաց զօրագլխութեան եղիցի որպէս հատոր 24. նամակն որպէս Օրինակն:

ԳԼՈՒԽ 27.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս քսան եւ եօթն սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ, վասն պաշտօնի որպէս 'ի վայր, եւ ըստ իւրաքանչիւրոք տացի նամակ պաշտօնատարութեան 'ի տանէն հայոց երիս ամաւ ժամանակաւ որպէս Օրինակն.

Այրս 3. 'ի պաշտօնն լրտես պետութեան առաջին, երկրորդ եւ երրորդ:

3. զինապետութեան . որպէս 'ի վեր:

3. վառհօդ պետութեան. որպէս 'ի վեր:

3. կառապետութեան. որպէս 'ի վեր:

3. վրանապետութեան.. որպէս 'ի վեր:

3. կերակրոյ պետութեան որպէս 'ի վեր:

3. զանձապետութեան.. որպէս 'ի վեր:

3. երկրաչափութեան.. որպէս 'ի վեր:

3. պետ տկարաց եւ աղքատաց որպէս ’ի վեր:

ԳԼՈՒԽ 28.

’Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս վաթսուն, սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ վասն ծայրագոյն իշխանութեան մէջ քաղաքաց կառավարելոյ եւ ’ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան երիս ամաց ժամանակաւ ըստ նմանութեան Օրինակին:

ԳԼՈՒԽ 29.

’Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս վաթսուն սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ վասն մայր դատաւորութեան, եւ ’ի տանէն հայոց տացի նոցա նամակ պաշտօնատարութեան մայր դատաւորի, ժամանակաւ երիս ամաւ նստել աթոռ իւրաքանչիւրում քաղաքի դատել ժողովուրդս ըստ Օրինօքն հայաստանեաց, նամակ սոցայ ըստ նմանութեան Օրինակին:

ԳԼՈՒԽ 30.

’Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս իննսուն սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ վասն հազարապետութեան, ’ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան հազարապետութեան ժամանակաւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ըստ նմանութեան Օրինակին:

ԳԼՈՒԽ 31.

’Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս երիս սեպհական յազգէն հայոց եւ աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ, վասն դիւրութեան եւ թեթեւութեան եւ հեշտութեան ջատագովելոյ առաջի ատենի տանուտերաց մէջ տանն հայոց վասն հարկաց մաքսից, հասից, բաժնից, տոկոսաց եւ այլն, վասն բարութեան հասարակ ժողովրդոց, եւ ’ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան ժամանակաւ երիս ամաւ ըստ նմանութեան Օրինակին:

ԳԼՈՒԽ 32.

’Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ ’ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս երիս վասն զգոյշանալոյ ’ի վերայ ռոճկի հատուցման պաշտօնատարաց, ’ի տանէն հայոց տացի սոցա նամակ պաշտօնատարութեան ռոճկապետութեան ըստ նմանութեան Օրինակի:

ԳԼՈՒԽ 33.

Ամենայն ծայրագոյն պաշտօն յատկապէս տանուտէր, նախարար, դատաւոր, իշխան, սպարապետ, ասպետ հանդերձ խորհրդակցօք, դպրօք, ատենաբանիւք եւ ամենայն զօրագլխօք մի' ոք ստանայցէ, բայց ’ի սեպհական ազգէն հայոց, սեպհական ծնունդ հայաստանեաց մկրտեցեալ ’ի Քրիստոս աւանդութեամբ Սուրբ Եկեղեցւոյ հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 34.

Ամենայն պաշտօնեայ յառաջ քան զստանալ նամակ պաշտօնի իւրոյ պարտ է երդնուլ ’ի վերայ Սուրբ կտակարանի խոստովան լինիլ զինքն սեպհական ազգէն հայոց դաւանութեամբ հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ Քրիստոնեայ գոլն, եւ խոստանալով զինքն կալոյ եւ մնալոյ հաւատարիմ տանն հայոց եւ ջատագով ’ի վերայ օրինաց կարգադրութեան Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 35.

’Ի միջի ամենայն փոխանորդաց թէ էկլէզիաստիկ, թէ աշխարհականաց քանի անձինք որ լինիցեն ’ի վերայ նոցայ հանիցեն վիճակ անուամբ հայր հայաստանեաց միայնակ մի, եւ որում ելցէ վիճակս՝ բոլոր փոխանորդք տացեն առն այնմիկ թուղթ իշխանութեան եւ պատուոյ անուանակոչութեամբ Հայր հայաստանեաց, ժամանակաւ երիս աւուրս, զի սա' կարի ունիցի իշխանութիւն երդմնեցուցանելոյ երից անձանց, եւ տալոյ նոցայ իշխանութիւն տանուտէրութեան, որ ’ի ձեռին իւրեանց գտցի թուխթ փոխանորդութեան ազգէն եւ աշխարհէն Հայոց:

Օրինակ հրամանի բոլոր տեղակալացէ եւ փոխանորդացէ Հայոց առ Հայրն Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 36.

Շնորհօքն Աստուծոյ Ամենակարողի եւ փոխանորդութեամբն բոլոր ազգին հայոց մեք ներքոյ ձեռնադրօղքս իբրեւ բոլոր հայք ’ի զօրութենէ բանական հոգւոյ եւ ազատութենէ մերմէ վիճակ արկանելով եւ շնորհօքն հոգոյն սրբոյ ելանելով վիճակ ’ի յանունս Մաղաքիայ ծնօղ իշխանութեան տանն հայոց, եւ միաբան ընդունեցաք եւ տուաք իշխանութիւն Տեառն Մաղաքիայ հօրդ հայաստանեաց երիս աւուր ժամանակաւ կալոյ եւ մնալոյ հայրախնամ եւ ծնօղ իշխանութեան, եւ տուօղ պաշտօն իշխանութեան միմիայն երիս անձանց, եւ ունիս իշխանութիւն երդմնեցուցանելոյ նոյն պաշտօնատարաց ’ի վերայ սրբոյ կտակարանի, երդմնօղն առաջի քոյ համարեսցի իբր երդմնեցեալ առաջի մեր, նամակ պաշտօնի քոյ համարեսցի իբր նամակ զահէն մեծէ եւ բարեվարք տանէն հայոց եւ մեզ միաբան տեղակալաց եւ փոխանորդաց ընդունելի, գրուեցաւ ’ի մէջ միաբան տեղակալաց հայոց ’ի յերեսս երկրին Հայաստանեաց յամսեանն դեկտեմբերի 25. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք զի ձեռնադրեցին

եւ կնքեցին եւ յանձնեցին:

Մ...Դ.

Ա...Դ.

Կ...Վ.

Սամուէլ փոխանորդ

Նախիջեւանայ.

Զաքարայ փոխանորդ

Տայքու.

Եղիազար փոխանորդ

Աղուանից.

ԳԼՈՒԽ 37.

Երդմնողն հարկաւոր է երդմնիլ առաջի ատենի իշխանի եւ միոյ գծագրի դնելով աջու ձեռն իւր ’ի վերայ Սուրբ կտակարանի, եւ ձախոյ ձեռն ’ի վերայ կրծոց իւրոց, եւ պարզ բառիւ բերանով իւրով խոստովանիլ զոր ինչ երդմնելոց է, եւ խոստանալ զոր ինչ կատարելոց է, յետոյ խոնարհիլ համբուրել կտակարանն եւ ձեռնադրել թուղթն, որում բանք ’ի բերանոյ երդման իւրոյ գտցի Շարադրեալ, այսպէս կատարումն լինի երդման:

Օրինակ երդման Հայրապետին եւ կամ փոխանորդին իւրոյ:

ԳԼՈՒԽ 38.

Ես Սեղբեստրոս շնորհօքն զԱստուծոյ արք Եպիսկոպոս Աղձնու, խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ առաջի ձեր եղբարք, եւ երդնում ’ի վերայ Սուրբ կտակարանիս, որ եմ ծնունդ սեպհական ազգէն հայոց հաւատացեալ ’ի Քրիստոս աւանդութեամբն Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ արք Եպիսկոպոս Աղձնու եւ փոխանորդ ծայրագոյն Հայրապետին եւ եղբայրակից իմոց

Եպիսկոպոսաց ամենայն հայոց խոստանամ առաջի Աստուծոյ եւ ձեր, զի կալով մնասցեմ հաստատուն ’ի վերայ այսմ հաւատոյս եւ սիրոյ ’ի վերայ ազգին իմոյ, եւ հնազանդ Օրինացն կարգադրութեանն տանն հայոց զամենայն աւուրս կենաց իմոց:

Վկայեմք, որ երդմնեաց

եւ ձեռնադրեաց.

Շմաւօն իշխան.

Մաղաքիայ Գծագիր.

Սեղբեստրոս արք

Եպիսկոպոս.

Օրինակ երդման Տանուտերաց:

ԳԼՈՒԽ 39.

Ես Միքայէլ ’ի գեղջէն Մեղրու խոստովանիմ առաջի յԱստուծոյ եւ առաջի ձեր եղբարք, եւ երդնում ’ի վերայ Սուրբ կտակարանիս, որ եմ ծնունդ սեպհական ազգէն հայոց, հաւատացեալ ’ի Քրիստոս աւանդութեամբն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ, եւ փոխանորդ հայոց ’ի աշխարհին Նախիջեւանայ, խոստանամ առաջի յԱստուծոյ եւ ձեր եղբարք, զի կալով մնասցեմ հաստատուն ’ի վերայ այսմ հաւատոյս եւ սիրոյ ’ի վերայ ազգին իմոյ եւ հնազանդ Օրինացն կարգադրութեան տանն Հայոց զամենայն աւուրս կենաց իմոց:

Վկայեմք, որ երդմնեաց

եւ ձեռնադրեաց.

Շմաւօն Գծագիր.

Միքայէլ Մեղրու:

Օրինակ առաջին նամակին պաշտօնատարութեան ’ի տանէն Հայոց, որ պարտ է ելանել ’ի Հայրախնամ Հօրէ Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 40.

Տեսանելով մեր նամակ Օրինութեան եւ պաշտօնի տեղակալութեան Սրբազան Տեառն Մարտիրոս Հայրապետի ամենայն Հայոց հանդերձ Սրբակրօն Եպիսկոպոսիւք ընդունելութիւն փոխանորդութեան քոյ, տալով նոքայ իշխանութիւն քեզ տեղի տեղակալութեան իւրեանց եւ քեզ երդմնելով առաջի ատենի մերոյ ’ի վերայ Սուրբ կտակարանի հաստատեցաք ’ի միտս մեր հաւատարիմ քո լինելն, եւ առ այդ արժանաւորութեան տուաք իշխանութիւն քեզ Սրբակրօն Տեառն Սեղբեստրոս արք Եպիսկոպոսիդ Աղձնու պաշտօն առաջին տանուտէրութեան տանն հայոց, ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Սեղբեստրոս արք Եպիսկոպոս Աղձնուց նստցիս երկրորդ Աթոռ առաջի աստիճանի գահն մեծն եւ բարեվարք տանն հայոց եւ ունիս իշխանութիւն, զի տանուտերամբ հանդերձ տացես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք ամենայն պաշտօնատարաց, զի ելանեսցեն իւրաքանչ ’ի գործ ըստ Օրինօքն Հայաստանեաց, եւ ունիս իշխանութիւն տանուտերամբ հանդերձ ըստ Օրինօք հրամայել ’ի վերայ ամենայն բնութեան մարդոյ ընդ երեսս երկրին Հայաստանեաց, եւ ունիս պատիւ ունելոյ քոյ երկուս ձայնս. գրուեցաւ ’ի դրանն գահն մեծ եւ բարեվարք տանն Հայոց, յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեաց,

կնքեաց եւ յանձնեաց.

Միքայէլ իշխան,

Մանուէլ Գծագիր.

Իշխանութեամբն ամենայն

Հայոց ձեռնադրեց նամակս

առաջին պաշտօնի հայրախնամ,

Մաղաքիայ:

Օրինակ նամակի պաշտօն երկրորդ Տանուտերութեան:

ԳԼՈՒԽ 41.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան յաշխարհէն Աղվանից եւ թուղթ փոխանորդութեան իւրեանց ընդ ձեզ Վրթանէսիդ 'ի գեօղջէն Կաղնու եւ Արիստակէսիդ 'ի գեօղջէն Արգնկանայ, ըստ Օրինաց կարգադրութեան հայոց 'ի միջէ ձերմէ մեք ընկալաք Վրթանէսդ Կաղնոյ եղբայրակից մեր հաւատարիմ տանն հայոց եւ 'ի վերայ երդման եւ արժանաւորութեան քոյ, տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօն 'ի տանուտէրութեան ժամանակաւ երիս ամաւ 'ի մէջ տանն հայոց, զի դու Տեառն Վրթանէսդ Կաղնու նստցիս 'ի երրորդ աթոռ տանուտէրութեան 'ի բարձրագահ եւ բարեվարք տանն հայոց, եւ ունիս իշխանութիւն զի տանուտէրամբ հանդերձ տացես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք ամենայն պաշտօնատարաց, զի ելանեն իւրաքանչիւր գործ, եւ ունիս իշխանութիւն ըստ տանուտէրամբ հանդերձ ըստ Օրինօք Հայաստանեաց հրամայել 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք տանն հայոց յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ հանձնեցին.

Միքայէլ իշխան,

Մանուէլ Գծագիր.

Իշխանութեամբն ամենայն

Հայոց Հայրախնամ Մաղաքիայ.

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս,

Երկրորդ տանուտէր Հայոց:

Օրինակ նամակի Պաշտօն երրորդ տանուտէրութեան:

ԳԼՈՒԽ 42.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն Տուրուբերնոյ, եւ թուղթ փոխանորդութեան իւրեանց ընդ ձեզ Գալստանիդ գեղջէն Կաղզվանու, եւ Մարտիրոսիդ գեղջէն Մալաշակերտու, ըստ Օրինացն կարգադրութեանն հայոց 'ի միջոցէ ձերմէ մեք ընկալաք Գալստանդ Կաղզվանու եղբայրակից մեր հաւատարիմ Տանն Հայոց, եւ 'ի վերայ երդման եւ արժանաւորութեան քոյ տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօն 'ի տանուտէրութեան ժամանակաւ երիս ամաւ մէնջ Տանն Հայոց, զի դու Տեառն Գալստանդ Կաղզվանու նստցիս 'ի չորրորդ աթոռ տանուտէրութեան 'ի բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց, եւ ունիս իշխանութիւն զի տանուտէրամբ հանդերձ տացցես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք, ամենայն պաշտօնատարաց զի ելանեն իւրաքանչիւր 'ի գործ, եւ ունիս իշխանութիւն ընդ տանուտէրամբ հանդերձ ըստ Օրինօքն Հայաստանեաց, հրամայել 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք տանն հայոց յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան,

Մանուէլ Գծագիր.

Իշխանութեամբն ամենայն

հայոց Հայրախնամ, Մաղաքիայ

Սեղբեստրոս արք եպիսկոպոս,

Երկրորդ տանուտէր Հայոց,
Վրթանէս Կաղնոյ երրորդ
տանուտէր Հայոց:
Բացատրութիւն միաբանութեան Հայոց:

ԳԼՈՒԽ 43.

Ըստ հատոր չորեքտասաներորդ Օրինաց մտանելով բոլոր ազգն հայոց իւրաքանչիւր երկոտասան հազար տանց երկու փոխանորդիւք, եւ ըստ հատոր տասնիններորդ Օրինաց իւրաքանչիւր երկու փոխանորդաց մի իշխան տանուտէրութեան, եւ 'ի հատոր երեսուն եւ հինգերորդ Օրինաց վիճակաւ հանել 'ի միջէ ամենայն տանուտէրանց այր մի Հայրախնամ ամենայն հայոց եւ ծնօղ իշխանութեան վասն Տանն Հայաստանեաց, եւ 'ի հատոր 40, 41, 42-երորդ Օրինաց տալով նմայ իշխանութիւն երիս տանուտէրաց հաստատի 'ի սիրտ ամենայն հայոց, զի իշխանութիւն իշխանաց իւրեանց ելանէ ըստ իւրաքանչ ամենայն անձանց հայոց, իւրաքանչիւր անձն իշխան բանական բնութենէ իւրեանց, զինքեանք արարին իշխան 'ի վերայ իւրեանց, ո'չ վասն իշխելոյ նոցայ ըստ կամաց եւ հաճոյից իւրեանց 'ի վերայ ժողովրդեան՝ եթէ ոչ իշխան պաշտօնատարութեան վասն գործ ածելոյ յօրենս կարգադրութեան հայոց, սոքայ երեքեան նորաբողբոջ իշխանքս ընկալեալ 'ի սեպհական ազգէն հայոց կարգ բանական իշխանութեան եւ պատիւ տանուտէրութեան ունին իշխանութիւն յետս առնելոյ նամակն հայրախնամութեան Հայաստանեաց 'ի ձեռանէ Տեառն Մաղաքիայ Հայրախնամէ, եւ արձակել նմայ պատուով զի նա կալով մնասցէ 'ի պատօնն իւր փոխանորդութեան, եւ երիս նորայ բողբոջ տանուտէրքս ունեն իշխանութիւն տալոյ նամակ պաշտօնի ընդ ամենայն փոխանորդաց Հայոց, մի 'ի երկուս անձանց պաշտօն տանուտէրութեան, որպէս տասնիններորդ յօրէնս, նա' եւս այս երիս տանուտէրքս ունին իշխանութիւն հանդերձ բոլոր տանուտէրօք Հայոց ընդունիլ յօրէնս եւ տալ իշխանութեան ամենայն պաշտօնի ըստ վեց տասան, եւ ութն տասաներորդ յօրէնս:

Օրինակ յետս դարձուցանելոյ նամակ պաշտօնի Հայրախնամին Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 44.

Երկիր պազանեմ միայնոյ յԱստուծոյ արարչին մերոյ եւ փառաւոր առնեմ բարձրագահ եւ բարեվարք Տունն Հայոց, եւ յայտնի ձեզ հարց եւ եղբարց իմոց, զի 'ի զօրութենէ պաշտօնի իմոյ որ 'ի տէրանց եւ իշխանաց իմոց եւ ընդհանուր պատուելի ազգէս Հայոց, ընկալեալ, ահա' կատարեցի հրամանն ձեր որ 'ի վերայ իմ, եւ ձեռամբ իմով ետու իշխանութիւն տանուտէրութեան 'ի մէջ ժամանակի սահմանին իշխանութեան իմոյ, առաջինն սրբակրօն Տեառն Սեղբեստրոս արք Եպիսկոպոսի Աղձնու տեղակալին սրբազան Հայրապետին Ամենայն Հայոց, երկրորդ Տեառն Վրթանէսի Կաղնոյ եւ փոխանորդ Աղուանից Հայոց, երրորդ Տեառն Գալստան Կաղզվանու եւ փոխանորդ Տուրուբերանոյ Հայոց, եւ այժմոյս յետս դարձուցանելով ընծայեմ նամակ պաշտօնին իմոյ առաջի ատենի պատուականութեան ձերոյ, եւ 'ի շնորհ 'ի ձէնջ ակն ունիմ, զի ինձ արձակեցարուք 'ի խաղաղութեան, եւ միաբան տանուտէրք 'ի բերանոյ Գծագրին իւրեանց տացեն նմա արձակում 'ի պաշտօնէ, ասելով երթ 'ի խաղաղութեամբ, եւ առեալ նամակն 'ի ձեռանէ Հայրախնամին 'ի վերայ նորայ շարադրեալ զամենայն զոր ինչ 'ի բերանէ Հայրախնամէ 'ի վեր, ձեռնադրեալ 'ի Հայրախնամէն պահեսցի Տանն Հայոց:

Օրինակ նամակի պաշտօնի հինգերորդ տանուտէրութեան մինչ որ քայն Երրորդ որ լինիցի:

ԳԼՈՒԽ 45.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեանն յաշխարհին Պարսկայ Հայքոյ եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ ձեզ Ստեփաննոսիդ Դաւրէժու, Պօղոսիդ Մարաղու, ըստ Օրինացն կարգադրութեան հայոց 'ի միջոցէ ձերմէ մեք ընկալաք Ստեփաննոսդ Դաւրէժու եղբայրակից մեր եւ հաւատարիմ Տանն Հայոց, եւ 'ի վերայ երդման եւ արժանաւորութեան քոյ տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօնի տանուտէրութեան ժամանակաւ երիս ամաւ մէնջ Տանն Հայոց, զի դու Տեառն Ստեփաննոսդ Դավրէժու նստցիս 'ի հինգերորդ աթոռ տանուտէրութեան 'ի բարձրագահ եւ 'ի

բարեվարք Տանն Հայոց, եւ ունիս իշխանութիւն տանուտէրամբ հանդերձ տացես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք ամենայն պաշտօնատարաց, զի ելանեն իւրաքանչիւր գործ, եւ ունիս իշխանութիւն տանուտէրօք հանդերձ ըստ Օրինօքն Հայաստանեաց հրամայել 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց. գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց այսմ աւուր յամսեան դեկտեմբերի 25. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին

եւ կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան.

Մանուէլ Գծագիր.

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս.

Երկրորդ տանուտէր.

Վրթանէս Կաղնոյ

Երրորդ տանուտէր.

Գալստան Կաղզվանոյ

Չրրորդ տանուտէր:

ԳԼՈՒԽ 46.

Պաշտօն իշխանութեան մինչեւ հարիւրապետութեան բայց 'ի նախարարութեան, 'ի տանէն հայոց կարէ տալ ձեռամբ երիս տանուտէրաւ, հանդերձ միոյ գծագրաւ ըստ սահմանի Օրինաց:

ԳԼՈՒԽ 47.

Պաշտօն Նախարարութեան ծայրագոյն դատաւորութեան, ասպետութեան, եւ սպարապետութեան պարտ է ելանել 'ի Տանէն Հայոց 'ի բերանէ բոլոր տանուտէրաց ձեռնադրեալ 'ի բոլոր տանուտէրացէ եւ միոյ գծագրէ եւ կնքեցեալ կնքաւն Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 48.

Կնիքն Տանն Հայոց լինիցի 'ի մէջ միոյ քսակի եւ բերանն նորայ կնքեցեալ կնքաւ եօթն նախարարի, որ մինն 'ի նոցանէ լինիցի կնիք Արք եպիսկոպոսի, կալ եւ մնալն 'ի մէջ միոյ ղութինի փակեալ, բանալիքն 'ի ձեռն Գծագրին, եւ ղութինն միշտ մնասցէ 'ի Տանն Հայոց, որում ժամու որ հարկաւոր լինիցի կնքել զոր ինչ նամակ, Գծագիրն հանիցէ ղութինէն, եւ եօթն տանուտեարքն նայեսցեն անարատութիւն իւրաքանչ կնքի իւրեանց, եթէ գտցի մաքուր փականօք, հրաման տայցեն Գծագրին զի բանասցէ եւ հանիցէ կնիքն Տանն Հայոց, եւ կնքեսցեն զոր ինչ հարկաւոր կնքելոյ, կրկին ամրափակեսցեն եւ եօթն տանուտեարքն կնքեսցեն յանձնեսցեն Գծագրին, որպէս ասացաք 'ի վեր, եւ ամենայն ժամ այսպէս գործածեսցի կնիքն Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 49.

Յետ կատարման նամակօք հաստատելոյ բոլոր տանուտէրաց յայնժամ միջէ տանուտէրաց եւ մնացորդ փոխանորդաց հայոց, որ կացին վասն պաշտօնի իշխանութեան, այսինքն 'ի մէջէ բոլոր փոխանորդաց հայոց ընտրեցեալ լինի երեքտասան այրք յատկապէս 'ի սեպհական ազգէ հայոց եւ 'ի ծնունդ Հայաստանեաց, հաւատացեալ 'ի Քրիստոս աւանդութեամբն սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեաց այրք հեզ, երկայնամիտք, տէր պատուոյ եւ սիրօղ ազգին եւ Աշխարհին Հայոց, եւ ինքեանք առաքինութեամբ զարդարեալք քաջախոհեան կերպ եւ այլն, եւ 'ի վերայ սոցայ վիճակս հանել թուաւ միով մինչեւ երեքտասաներորդ 'ի վերայ որում ելցէ վիճակն թիւ առաջին ն'ա լինիցի նախարար, եւ որում ելցէ վիճակ երկրորդ ն'ա երկրորդ խորհրդակից, մինչեւ 'ի վերջ երեքտասաներորդ վիճակն վերջին խորհրդակից, եւ տունն հայոց պատուեսցէ սոցայ նամակօք պաշտօնի նախարարութեան ժամանակաւ

երիս ամաւ, եւ խորհրդակցաց ժամանակաւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ըստ Օրինօք Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 50.

Վիճակ Նախարարութեան եթէ ելցէ 'ի վերայ տանուտէրի ոմն ն'ա որում աշխարհի փոխանորդաց որ իցէ, յետս դարձուցանիցէ նամակ տանուտէրութեան իւրոյ, փոխանակ տեղի իւր պաշտօն տանուտէրութեան տացի ընկերի իւրոյ որում սպասէր պաշտօն իշխանութեան, եւ նախարարս մնասցէ տեղի պաշտօնի իշխանութեան, որ 'ի ամենայն աշխարհէ մնալով լիքն տանուտէրօք:

Օրինակ նամակ Պաշտօնի նախարարութեան:

ԳԼՈՒԽ 51.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան աշխարհին Արարատեան եւ թուղթ փոխանորդութեան առ քեզ պատուելուդ Տեառն Սմբատայ Արտաշատ գաւառէ, եւ 'ի վերայ երդման եւ արժանաւորութեան քոյ հաստատեցաք հաւատարմութիւնն քոյ, եւ շնորհօքն ամենակարօղին յԱստուծոյ եւ ընդունելութեամբն ամենայն Հայոց ընտրողութեամբն մերոց տանուտէրաց, եւ 'ի յատկապէս կամաւն Սուրբ հոգոյն Աստուծոյ ելանելով վիճակ պաշտօնի նախարարութեան 'ի անուն քոյ հաստատեցաք մեք եւ մեզ արարաք, զի արժանի դու պաշտօնի նախարարութեան 'ի յերեսս Երկրին Հայոց, մեք տանուտէրք Հայաստանեաց եւ փոխանորդք բոլոր յազգին հայոց, եթէ եկեղեցականաց եւ եթէ հասարակ ժողովրդոց, թէպէտ անձամբ բազումք այլ միաբան 'ի մի կամս եւ մի խորհուրդս եւ մի գործս համահաւասար իբրեւ մի անձն ընդունելով տուաք քեզ պատուելի Սմբատայ Արտաշատու նամակ Շնորհաց եւ պաշտօնի նախարարութեան 'ի վերայ ամենայն հայոց եւ 'ի երեսս բոլոր երկրին Հայաստանեաց ժամանակաւ երիս ամաւ, զի տերամբ մերոյ ողորմութեամբ կացցես եւ մնասցես պատուելի Սմբատ մեր իշխան պաշտօնի նախարարութեան, եւ յիշեսցես 'ի վերայ աշխարհին Հայաստանեաց եւ 'ի վերայ բնութեան մարդոյ 'ի պատճառէ գործոց ձեռաց իւրաքանչիւր գործոց ըստ Օրինօքն Հայաստանեաց եւ հրամանաւն Տանէն Հայոց:

Տուաք իշխանութիւն քեզ զի լինիցիս դու Տէր ամենայն Հայոց ըստ նմանութեան բանին Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի, որ պահելով դու քեզ պատրաստ ծառայելոյ ամենայն հայոց եւ ջատագով ընդ դէմ թշնամեաց եւ հակառակորդաց Օրինաց եւ ազգին Հայոց, ունես իշխանութիւն գործելոյ զամենայն գործ բարիս, այլ ընդ դէմ Օրինացն հայոց գործ ո'չ մի, եւ թոյլտուութեամբ քոյ այլոց գործելոյ ո'չ մի եւ ներումն այլոց ընդդէմ Օրինաց գործողաց ո'չ մի, եդաք լուծ օրինացն հայոց 'ի պարանոցս քոյ զի քաղցր է, ՝ ընթանալն ըստ Օրինօք թեթեւ, այլ երկայնամիտ լեր եւ պահեայ 'ի խոր կրծից սրտի քոյ ամենայն հատոր Օրէնս հայոց, քանզի կեանս քոյ եւ պատիւ կենաց քոց 'ի յօրէնս հայոց կախեալ կայ, մի 'ի փոքեր հատոր Օրինաց հայոց, 'ի պատճառէ քումմէ խորտակմանէ փշրեսցի ոսկերս անդամոց քոց:

Տուաք իշխանութիւն քեզ Շահեցուցանել ամենայն ժողովրդոց հայոց եւ ո'չ վնասիլ ոչ ումեք, յիշխել 'ի վերայ գործոց ձեռաց ամենեցուն ըստ Օրինօքն հայոց, եւ Շղթայիւք կապեցաք մէջ բնական բնութեան քոյ ինքնակալ կամք եւ ինքնակամ արարմունքդ, զի ընդ դէմ Օրինաց ո'չ ունես իշխանութիւն ասել ումեք կաղ եւ կամ մօրուս:

Տուաք իշխանութիւն քեզ լինիլ բերան ամենայն հայոց, եւ ամրափակեցաք բերան քոյ զի մի' խօսիցես խօսք մի ընդ դէմ Օրինաց հայոց:

Տուաք իշխանութիւն քեզ բանալ պատերազմ ընդ դէմ թշնամեաց, եւ խօսել խաղաղութիւն ընդ բարեկամս հայոց հրամանաւն Տանն Հայոց:

Տուաք իշխանութիւն քեզ տալոյ կեանս մահապարտից 'ի մի տարոյն մինչեւ յօթն արանց, եթէ չիցէ յատկապէս ընդդէմ կամաց Տանն Հայոց, եւ ո'չ ունիլ իշխանութիւն քոյ 'ի վերայ հերոյ առն միոյ բառնալ 'ի գլխոյ յումեքէ ընդ դէմ Օրինաց հայոց:

Տուաք իշխանութիւն դէտապետութեան քեզ ազդ առնելոյ քոյ Տանն Հայոց, վասն մերձենալոյն թշնամեաց եւ վնասուց եւ նախատանաց ընդ յազգս եւ յԱշխարհս Հայոց, լեր պատրաստ մի' գուցէ թշնամին աւերեսցէ յաշխարհ եւ նեղիցէ ժողովուրդս հայոց, զի վնաս նոցայ 'ի ձեռանէ քումմէ խնդրեցից:

Տուաք իշխանութիւն քեզ հրամայել 'ի վերայ ամենայն զօրաց եւ զօրապետաց հայոց ըստ Օրինօք, նա' եւս ունիս իշխանութիւն բանիւ եւ երկաթիւ կապելոյ զօրաց եւ զօրապետաց ընդ դէմ հրամանի քոյ մեղուցելոց, յանձն առնուլով դու 'ի վերայ քոյ զամենայն վնաս գործոյ կալանաւորութեանց քոյ, եթէ գուցէ կալանաւորն ելցէ 'ի կապանաց իւրոց 'ի ատենի դատաստանի անպարտ:

Այսպէս եւ զամենայն զոր ինչ ըստ Օրէնս հայոց բոլորովին 'ի վերայ գործոց ձեռաց քոց պատրաստ մնալով վասն քոյ պատուեցաք մեք քեզ պատուելի Տեառն Սմբատդ Արտաշատու Տէր մեր եւ նախարար մեր, առաջին պաշտօնատարն մեր, եւ հաւատարիմ սպասաւոր մեր, որ եմք միաբան ընդ քեւ սպասաւորք հայոց, զի մնալով կացցես եւ իշխեսցես ըստ Օրինօքն հայոց 'ի վերայ գործոց ձեռաց քոց եւ մերոց եւ 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, բայց 'ի վերայ բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց զի ոչ ոք ծնունդ 'ի բնութենէ մարդոյ ունի իշխանութիւն յիշխել 'ի վերայ Տանն Հայոց:

Շնորհ Տեառն եւ պահպանութիւն Օրինացն հայոց եւ անկեղծ սէր տանէն բոլոր ժողովրդենէն հայոց ելցէ եւ բնակեսցի առ քեզ Ամեն.

Վկայեմք, որ ձեռնադրեցին
կնքեցին եւ յանձնեցին,
Միքայէլ իշխան.
Մանուէլ Գծագիր.
Սեղբեստրոս արք Եպիսկոպոս
երկրորդ Տանուտէր,
Վրթանէս Կաղնոյ
երրորդ Տանուտէր,
Գալստան Կաղզվանոյ
չորրորդ Տանուտէր:

ԳԼՈՒԽ 52.

Այլ եթէ գուցէ զի այժմ եւ կամ յապա ժամանակ ընդ ժամանակս ելցէ ոմն, եւ կամ ոմանք 'ի սերնդոց նախնոյ մերոյ Հայկայ, եւ կամ հաւատարմաց մերոց Վաղարշակայ եւ Բագրատայ ցանկանայցեն Նահապետութեան Հայաստանեաց անձամբ, եւ կամ որդէ որդի ժառանգութեամբ եւ երդմամբ խոստանայցէ պաշտել զԱստուած ըստ կերպին աւանդութեան Հայաստանեաց եկեղեցւոյ, հնազանդել Օրինաց, որ ելցէ 'ի Տանէն եւ 'ի տանուտէրացէ Հայոց եւ յանձն առնու 'ի վերայ իւր հատուցանել վնասն գործոց ձեռաց իւրոց ըստ Օրինօքն Հայաստանեաց կալով մնալ զամենայն աւուրս կենաց իւրոց մի եւ նոյն զօրութեամբ որպէս գլուխ 51. յօրէնս նախարարութեան յայնժամ պարտ է մեզ սիրով ընդունիլ պատուիլ նմայ փառօք եւ պատուօք. եւ տալ նմայ նամակ պաշտօնի նախարարութեան որպէս 51 հատոր յօրէնս, նա' եւս յաւելորդ որ նա ժառանգորդն կալով մնասցէ 'ի պաշտօնի նախարարութեան զամենայն աւուրս կենաց իւրոց եւ 'ի ժամանակի պակասելոյ նորայ թէ 'ի պատճառս մահուան եւ կամ թէ 'ի պատճառս որոք մեղաց անկման առաջի սերունդն նորայ մտցէ պաշտօն 'ի տեղի նախնոյն իւրոյ մինչեւ յաւիտեան:

ԳԼՈՒԽ 53.

Եթէ գուցէ զի նախարարութիւնն Հայաստանեաց լինիցի ժառանգութեան, պարտ է լինիլ որդոց որդիս, ըստ սահմանի ցեղաբանութեան մարդոյ, եթէ արու եւ եթէ էգ, բայց 'ի խելագարէ:

ԳԼՈՒԽ 54.

Եթէ գուցէ զի նախարարութիւնն Հայաստանեաց լինիցի ժառանգաւոր, յայնժամ բարձցի զօրութիւնն խորհրդակցաց 'ի ծածուկ խորհրդարանի ժամանակն, զամենայն աւուրս կենաց նոցայ, եւ տացցի զօրութիւն նոցայ միմիայն երիս ամ ժամանակօք, եւ 'ի լրմանէ ժամանակին, եւ կամ 'ի պատճառէ

մահուան եւ մեղաց պակասելոյն 'ի տեղի նորայ ընտրեսցի այլոք 'ի Տանէն Հայոց, եւ հաստատեսցի նամակօք երիս ամ ժամանակաւ:

ԳԼՈՒԽ 55.

'Ի որում աւուր որ պատուեսցի ոմն նախարարութեան նամակօք 'ի Տանէն Հայոց ժառանգաւոր 'ի միջոց երեսուն աւուր ժամանակի ընտրեսցի տեղակալ նորայ 'ի ցեղէ նոյնոյ առն, այլ եթէ ունիցի անդրանիկ, եւ կամ երէց որդի միոք այլոց, եթէ ոչ կարող է ընտրել 'ի յարենէ նորայ, այս մտածութեան եթէ ժամանակ ընդ ժամանակս յապա' ծնցի որդի, նայ լինիցի ժառանգ, զի տեղի նախարարի մերոյ մի' մնասցէ դատարկ:

ԳԼՈՒԽ 56.

Եթէ գուցէ զի նախարարութիւնն Հայաստանեաց լինիցի ժառանգաւոր որդիք նախարարին մերոյ կարէ մտանել 'ի պաշտօն իշխանութեան, այսպէս երէց որդին 'ի պաշտօնս տեղակալութեան հօր, այսինքն նախարարութեան երկրորդ, երրորդ եւ չորրորդ որդիքն կարէ ստանալ պաշտօն երկրորդ սպարապետութեան եւ երկրորդ ասպետութեան եւ երկրորդ հրաձանի պետութեան, հնազանդ իւրաքանչ առաջնորդի իւրոյ, զամենայն աւուրս կենաց իւրոց, սոքայ ժառանգորդքս երբէք մի' ստանայցեն պաշտօն առաջին, ո'չ սպարապետութեան եւ ո'չ հրաձայնպետութեան, եւ սոքա ժառանգորդքս պարտեն հատուցումն առնել վնաս գործոց ձեռաց իւրեանց ըստ համեմատութեան Օրինացն Հայոց:

ԳԼՈՒԽ 57.

Եթէ գուցէ զի նախարարութիւն Հայաստանեաց լինիցի ժառանգաւոր նախարարն հանդերձ երիս որդոքն ունին վարձս պաշտօնի իւրեանց որպէս գլուխ 278. հատոր յօրէնս, մնացորդ տեղակալ ժառանգորդին հանդերձ այլ որդոք, յաւելի քան թէ երիս պաշտօնեայ որդիքս հանդերձ դստերօք եւ տիրուհիւ նախարարին զտցեն տարեկեն ռոճիկն 'ի Տանէն Հայոց այսպէս:

Ժառանգորդ որդին ամենայն մի ամսէն դահեկանս....2000:

Մնացորդ որդիքն ամենայն մի ամսէն.....1000:

Տիրուհին նախարարին ամենայն մի ամսէն.....1000:

Դստերաց նախարարին մինչեւ ժամ ամու[ս]նանալոյ,

քանի դուստր որ իցէ մի ֆի մի դստերն մի ամսէն.....500:

Օրինակ պաշտօն նամակի խորհրդակցութեան ընդ ծածուկ խորհրդարանին նախարարին:

ԳԼՈՒԽ 58.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան Աշխարհին Գուգրաց Հայոց եւ թուղթ փոխանորդութեան նոցայ առ քեզ Տեառն Յարութիւն 'ի քաղաքէն Լոռէ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատելով հաւատն քոյ տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօն իշխանութեան. պաշտօնն երկրորդ խորհրդակցութեան 'ի ծածուկ խորհրդարանն պատուելի նախարարին հայոց, յիշեցուցանելով 'ի մէջ ամենայն խորհրդոյ անխախտելի յօրէնս հայոց. զի ամենայն գործ որ ելցէ 'ի ծածուկ խորհրդարանէ նախարարին հայոց անթերի համեմատեսցի ըստ Օրինօքն Հայաստանեաց, նա'եւս տուաք իշխանութիւն քեզ Յարութիւնիդ կալ եւ մնալ 'ի վերայ աթոռի իշխանութեան խորհրդի զամենայն աւուրս կենաց քոյ, եթէ մի' իջուսցէ քեզ գործ ձեռաց քոց եւ բնական մահն քոյ, եւ պահեա' հաստատութեամբ 'ի մէջ սրտի քոյ հնազանդութիւն քոյ Օրինաց եւ Տանն Հայոց, մի' լիցի խորհուրդ քոյ երբէք 'ի վերայ զոր ինչ բանի եւ գործոյ որ իցէ ընդ դեմ Օրինաց հայոց: Այսպէս առ երրորդ եւ չորրորդ մինչեւ երեքտասաներորդ խորհրդակիցս, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց այսմ աւուր յամսեանն յունվարի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.
Միքայէլ իշխան,
Մանուէլ Գծագիր.
Սեղբեստրոս արք Եպիսկոպոս,
Երկրորդ տանուտէր,
Վրթանէս Կաղնոյ
երրորդ տանուտէր,
Գալստան Կաղզվանու
չորրորդ տանուտէր:
Օրինակ նամակի պետ դատաւորութեան:

ԳԼՈՒԽ 59.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեանն Կիլիկիոյ հայոց 'ի վերայ արժանաւորութեան քոյ եւ թուղթ փոխանորդութեան նոցայ առ քեզ Մաղաքիայ Մալաշակերտու, եւ հաւատացաք հաւատարմութեամբ կալոյ քոյ 'ի վերայ երդման քոյ՝ տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօնի մայր դարաւորութեան ժամանակաւ երիս ամաւ, զի նստցիս 'ի աթոռ դատաստանի հանդերձ խորհրդակցօք մէջ յԱպարանի դատել զմեղաւորս ըստ Օրինօքն Հայաստանեայց, 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս Երկրին Հայոց, տուաք իշխանութիւն քեզ ունիլ ժամանակի վճռոյ կամս երկուս, եւ խորհրդակիցք քոյ կամս մի, եւ 'ի կարգադրութենէ Օրինաց մերոց փակեցաք ակն եւ ձեռն քոյ՝ զի մի տեսանելով զերեսս մարդոյ ողորմեսցիս եւ խստանացուցանես սիրտ քոյ առ զանգատող եւ դատախազս եւ մի' ընդունեսցես լոման մի կաշառ 'ի վերայ իրաւանց եւ արդարութեան եթէ ո'չ 'ի զօրութեն է բանական հոգոյ ունկնդիր լինիցիս բանից զանգատողաց եւ դատախազից ո'վ ոք որ իցէ, եւ արասցես իրաւունս եւ արդարութեամբ հատանեսցես վճիռ 'ի վերայ գործոց ձեռաց եւ բանից, ըստ իւրաքանչիւր գործոց ըստ Օրինօքն Հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց այսմ յամսեանն յունվարի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773:
Վկայեմք, որ ձեռնադրեցին,
կնքեցին եւ յանձնեցին.
Միքայէլ իշխան,
Մանուէլ Գծագիր.
Սեղբեստրոս արք Եպիսկոպոս,
Երկրորդ տանուտէր,
Վրթանէս Կաղնոյ
երրորդ տանուտէր,
Գալստան Կաղզվանու
չորրորդ տանուտէր:
Օրինակ նամակի դպրութեան Ատենաբանից:

ԳԼՈՒԽ 60.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յԱշխարհէն Կորճակայ, Հայքա' եւ թուղթ փոխանորդութեան նոցա առ քեզ Արիստակէսիդ 'ի գեղջէն Արզնկանու համարեցաք քեզ հաւատարիմ Տանն Հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօնի ատենաբանութեան ժամանակաւ երիս ամաւ, առաջի ատենի տանն եւ յապարանն դատաստանի 'ի ծածուկ խորհրդարանի հայոց, վասն որում տեղի որ վիճակեալ իցէ զի դու Արիստակէսդ կացցես եւ մնասցես 'ի վերայ հիման հաստատութեան, ազատապէս ջատագովելյօրէնս եւ կարգս կանոնին Հայաստանեաց, մի' լռեսցի լեզու եւ մի' երկիցէ սիրտ քոյ ազատապէս բանալ բերանն քոյ եւ ճառել առաջի ատենի իրաւունս եւ արդարութիւնս Օրինաց

Հայաստանեաց. գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք տանն Հայոց յունվար մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան,

Մանուէլ Գծագիր.

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս,

Երկրորդ տանուտէր,

Վրթանէս Կաղնոյ

երրորդ տանուտէր,

Գալստան Կաղզվանու

չորրորդ տանուտէր:

Օրինակ նամակ Դատաւորութեան 'ի մէջ մայրաքաղաքաց:

ԳԼՈՒԽ 61.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան 'ի գաւառէն Բզնունեաց եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ Տեառն Միքայէլ Գինունիդ, եւ երդմնելով քոյ առաջի ատենի տանուտէրաց հայոց, հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ Տանն Հայոց, տուաք պաշտօն դատաւորութեան քեզ 'ի վերայ քաղաքին յԵրեւանու 'ի Աշխարհն Արարատու Հայոց, ժամանակաւ երիս ամաւ, զի Օրինագէտ Միքայէլ Գինունիդ նստցես 'ի յաթոռ պետ դատաւորի եւ ընդ խորհրդակցօք դատաւորօք դատեսցես 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ բնակեալ 'ի վիճակս քաղաքին յԵրեւանու, ըստ Օրինօքն Հայաստանեաց տուաք հրաման քեզ զի ընդունեսցես խորհրդակից քեզ եւ եղբայրակից դատաւոր 'ի պաշտօն խորհրդակցութեան ութն արանց բարեաց Օրինագիտաց 'ի սեպհական ազգէն հայոց եւ 'ի միջէ բնակօղաց 'ի վիճակս քաղաքին Երեւանու, եւ 'ի ընտրօղութենէ եւ նամակ պաշտօնէիւք ձեռնադրեալ 'ի խոհեմազարդ զինուորական իշխանէն եւ խորհրդակցէ իւրմէ յԵրեւանու, դատել ժողովուրդս ժամանակաւ երիս ամաւ, տուաք իշխանութիւն քեզ զի տացես իշխանութիւն պաշտօնի առ դպիրս եւ գծագիրս կալ 'ի պաշտօնս դպրութեան եւ գծագրութեան առաջի ատենի դատաստանի յԵրեւանու, վեց դպրիս եւ երեք գծագիրս, ամենեքեան սեպհական ազգէն հաւատացեալ 'ի Քրիստոս ըստ Օրինօք Հայաստանեաց տուաք իշխանութիւն քեզ ունիլ կամս երկուս 'ի ժամանակի վճռոյ եւ 'ի կարգադրութենէ Օրինացն հայոց, փակեցաք ակն եւ ձեռն քոյ զի մի' հայեսցես երեսս եւ արժանաւորութիւնս գանգատօղի եւ դատախազի, եւ մի' ընդունեսցի ձեռն քոյ կաշառս 'ի վերայ իրաւանց, կալով մնասցես 'ի աթոռ դատաստանի դատել քաղցրութեամբ ժողովուրդն վիճակին յԵրեւանու ըստ Օրինօքն Հայաստանեաց հաւատարմաբար Տանն Հայոց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց այսմ աւուր յունվարի ամսի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան,

Մանուէլ Գծագիր.

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս,

Երկրորդ տանուտէր,

Վրթանէս Կաղնոյ

երրորդ տանուտէր,

Գալստան Կաղզվանու

չորրորդ տանուտէր:

Օրինակ նամակի Սպարապետութեան:

ԳԼՈՒԽ 62.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան 'ի Աշխարհէն Վասպուրականի, եւ թուղթ փոխանորդութեան իւրեանց առ քեզ Տեառն Սիմէօն 'ի գեղջէն Աղձնու, եւ երդմնիլն քոյ առաջի ատենի տանուտերաց հայոց՝ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ, տուաք իշխանութիւն քեզ պաշտօն սպարապետութեան 'ի վերայ զօրաց հայոց ժամանակաւ երիս ամաւ, զի դու քաջախոհեան Սիմէօնդ Աղձնու կացցես եւ մնասցես Սպարապետ եւ հրամայեսցես 'ի վերայ գնդոց զօրաց եւ զօրավարաց եւ ամենայն զօրութեան, զոր ինչ յանձնեսցի 'ի քեզ նախարարն հայոց, եւ ջանասցես 'ի գործ ըստ Օրինացն Հայաստանեաց առ որում հրամայէ քեզ պատուելի նախարարն Հայոց, բայց իշխելոյ 'ի վերայ Տանն Հայոց, տուաք իշխանութիւն քեզ բանիւ եւ երկաթիւ կապել զօրաց եւ զօրապետաց յանդգնօղաց հրամանի քոյ այսմ մտածութեամբ զի հատուցանես ըստ իւրաքանչիւրոյ վնասն կալանաւորութեան նոցայ, եթէ կալանաւորին ելցեն 'ի ատենէ դատաստանի անպարտ, տուաք իշխանութիւն քեզ պահելոյ հաստատուն ամենայն հատոր յօրէնս Հայաստանեաց 'ի վերայ ամենայն զինուորաց քեզ յանձնեցելոց ըստ արժանեաց գործոց ձեռաց ըստ իւրաքանչիւր գործոց դատաստանաւ վճռով ըստ Օրինօք, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց այսմ աւուր յունվարի ամսի մին. յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան,

Մանուէլ Գծագիր.

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս,

Երկրորդ տանուտէր,

Վրթանէս Կաղնոյ

երրորդ տանուտէր,

Գալստան Կաղզվանու

չորրորդ տանուտէր:

Օրինակ նամակի Ասպետութեան:

ԳԼՈՒԽ 63.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան յԱշխարհին Փայտակարանոյ եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ եւ 'ի վերայ երդման քոյ հաւատացաք հաւատարիմ դու Մանասէդ Տուրուբերանոյ, տուաք իշխանութիւն քեզ Տեառն Մանասէիդ նամակ Շնորհաց եւ պաշտօն Ասպետութեան 'ի վերայ ամենայն այր եւ ձիոյ զօրաց հայոց ժամանակաւ երիս ամաւ, զի դու քաջ Մանասէդ հրամայեսցես 'ի վերայ այր եւ ձիոյ զօրաց նոցայ որ 'ի քաջախոհէն սպարապետէն հայոց քեզ յանձնեցեալ, եւ տուաք իշխանութիւն քեզ ընթանալ 'ի գործ ըստ հրամանի սպարապետին հայոց ըստ Օրինացն Հայաստանեաց տուաք իշխանութիւն քեզ բանիւ եւ երկաթիւ կապել ամենայն այր ձիոյ զօրաւարաց քեզ յանձնելոց ընդ դէմ քեզ մեղուցելոց, այսմ մտածութեամբ որ հատուցանել պարտիս նոցայ, եթէ կալանաւորն ելցէ 'ի ատենի դատաստանի անպարտ, տուաք իշխանութիւն քեզ կարգաղրել թամք եւ ամենայն հարկաւոր զոր ինչ այր եւ ձիոյ զինուորաց, որում թեթեւացուցանէ վաստակն զինուորին եւ սրնթագնաց պահէ ձիոյ, տուաք իշխանութիւն արձակել 'ի վերայ թշնամու եւ աշխարհի որում հրամայէ քեզ քաջախոհեան սպարապետն, բաց 'ի վերայ Տանն Հայոց եւ հրամայեմք քեզ զի արթուն պահեսցես զինուորք կարդալով 'ի ականջս նոցայ ամենայն աւուրս Շաբաթու յօրէնս Հայաստանեաց զի ամենայն մասունս յօրինաց կալով մնասցէ 'ի միտս նոցայ, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց այսմ աւուր յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին:

Միքայէլ իշխան.

Մանուէլ Գծագիր

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի հրաձի Զօրագլխութեան:

ԳԼՈՒԽ 64.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յԱշխարհէն Գուգարացոց եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ մարտիրոսդ լինիլ Տանն Հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօն հրացի զինաց ժամանակաւ երիս ամաւ զի դու Տեառն Մարտիրոս Բամբկա' ձորու իշխեսցես 'ի վերայ ամենայն հրացի զինաց, որ վերայբերէ Տանն Հայոց, տուաք իշխանութիւն ձեզ որոնել եւ ջանալ թեթեւացուցանելոյ ծանրութիւնն զինաց եւ հետեւել ուղղակի ընթացուցանելոյ ամենայն զէն հրացու առ 'ի գործ, համեմատիլ ամենայն ծանրութեան թօփս ընդ կլօլն եւ ամբայն իւր, եւ զգոյշացուցանել կառապետ իշխանին 'ի յօրինելն կառոց զգոյշանասցէ զի գտցի թեթեւագնացս եւ հաստատուն, եւ տուաք իշխանութիւն քեզ զգոյշանալ եւ որոնել 'ի մէջ ամենայն քաղաքաց ամրոցաց եթէ գտցի պակասութիւն ինչ 'ի հրացի զինուց որպէս Օրէնէ հայոց որքայնութեամբ լինելոյ, յորդորեսցես զինապետին որ լցուցանէ պակասութիւնն եւ մեզ ազգ արասցես, տուաք իշխանութիւն քեզ զի ջանասցես գտանել արհեստաւորս հալելոյ երկաթի 'ի Աշխարհն Հայոց եւ յօրինել թօփ եւ կլօլ երկաթէ ծախիւք տանն հայոց, պատուիրեմք քեզ զի ջանասցես եւ պատուիրեսցես ամենայն թֆանգ, եւ փստօլ շինօղաց, որ 'ի յերեսս ամենայն երկրին մերոց ամենայն այսպիսի գործի արհեստաւորք 'ի յօրինելն թֆանգ եւ փստօլն համայն միակերպ երկայնութիւն. թէ կլօլի մեծութիւն, թէ սմբէն, թէ չախմախն եւ այլն, որ բեկանելով մի անգամ զինուց միւսոյն կարէ մուծանել տեղի նորա, տուաք հրաման քեզ կարգադրել կանօն 'ի մէջ ամենայն հրաց զինուորաց շրջեցուցանել զէնս հրաց համահաւասար կերպիւ եւ համեմատութեամբ միմեանց, եւ ամենայն աւուր ծագել առաւօտու վեց ժամու մինչ 'ի ութն ժամ առաւօտ մրգել, կրթել զինուորս հրացի զինաց միակերպ կարգադրութեամբ, բաց 'ի աւուրն կիրակէի լիցի հանգիստ ամենեցոյն 'ի կրթմանէ, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին:

Միքայէլ իշխան.

Մանուէլ Գծագիր

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի լրտես Պետութեան:

ԳԼՈՒԽ 65.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան Աշխարհին Բարձրայ Հայոց 'ի գաւառէն Արտաշատայ, եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց հայոց հաստատեցաք սիրտ մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ տանն հայոց, տուաք պաշտօն լրտես պետութեան քեզ, երկայնամիտ Պետրոսիդ 'ի մէջ քաղաքի Նախիջիվանու եւ շուրջ վիճակի նորայ 'ի յերեսս երկրի Աշխարհին Բարձրահայքայ հայոց ժամանակաւ երիս ամաւ, զի երկայնամիտ Պետրոսդ կացցես եւ մնացես պետ լրտեսութեան, եւ տուաք իշխանութիւն քեզ, որ ծախիւքն տանէն հայոց առնես սպասաւորս երկոտասան 'ի ժամանակս խաղաղութեան, եւ երեսուն եւ վեց 'ի ժամանակս պատերազմի այրս երկայնամիտ, շրջեցուցանելով նոցայ 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, եւ 'ի տարր յաշխարհ

երկիրն թշնամեաց եւ դրացեաց հայոց լռելեան, եւ ամենայն զգուշութեամբ հանելով ամենայն լուր զոր ինչ եւ իցէ ամենայն շաբաթու մանրամասնաբար շարելով 'ի վերայ երիս թղթու, մինն յանձնեսցես իշխան քաղաքի Նախիջեւանու, երկուքն ընծայեսցես մինն 'ի նմանէ 'ի դրունս տանն հայոց, եւ միւսն 'ի ծածուկ խորհրդարանն նախարարին հայոց, եւ 'ի կարգադրութենէ Տանէն Հայոց, փակեալ լիցի ձեռ եւ բերանն քոյ, որ ամենայն զոր ինչ լուր լռելեան եւ գաղտնի մի' խօսել եւ գրել յումեք բայց 'ի երիս դրունս որպէս հրամայեցաք քեզ 'ի վեր, եւ ջանալով հոգասցես հաւատարմաբար Տանն Հայոց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան.

Մանուէլ Գծագիր

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի Զինապետութեան:

ԳԼՈՒԽ 66.

Տեսանելով մեր ընդունելութիւնն յաշխարհին Ուտից թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր, հաւատարիմ Սեղբեստրոսդ լինիլ Տանն Հայոց տուաք պաշտօն զինապետութեան քեզ 'ի մէջ քաղաքին անու ժամանակաւ երիս ամաւ, զի ջանասէր Սեղբեստրոսդ կալով մնասցես պետ զինաց պահութեան, եւ զոր ինչ զէն երկաթոյ, որ 'ի քաղաքն անի ստանալոյ քոյ 'ի յառաջ քան զքեզ լեալ զինապահ ջանասէր Մկրտչէ հանդերձ քոյին ժամանակի ստացելօք պահել յստակ անարատ Օծեալ եղով հաստատելով խորտակեալս կապեալ հարկաւոր քարամբ փալասխայիւ բաղնէթաւ չախմախաւ, եւ տուաք իշխանութիւն քեզ ազդ առնել իշխան քաղաքին անու եթէ զէն թվանգի պակասիցէ թուաւ իբրեւ վաթսուն հազարաւ եւ ստանալ 'ի նմանէ պակասորդն զի լցուցէ պակասորդն լրիւ վաթսուն հազարաց, թֆանգ վաթսուն հազար, թափանջայ վաթսուն հազար, սուսեր պահելով պատրաստ վասն հարկաւոր ժամանակի, տուաք հրաման քեզ հնազանդիլ եւ յանձնել զէնս որքան եւ 'ի ձեռն ում որ հրամայէ քեզ իշխանն անու ստանալ 'ի նմանէ ըռսիտս, եւ եթէ յետս դարձուցանելով ընկալցես եւ ոչ երբէք լիցի տունն զինու պակասագոյն քան թէ քսան եւ չորս հազար թֆանգ եւ երկոտասան հազար թափանջայս, եւ վաթսուն հազար սուսերս, եւ եթէ զտցի պակաս՝ ազդ արասցես իշխանին քաղաքին Անու եւ ստիպեսցես զի լցուցէ պակասութիւնն, եւ տուաք հրաման քեզ ստանալ ծախ պահպանութեան զինուց 'ի ձեռանէ իշխանէն Անու, տալով նմայ ըռսիտ որքանութեան ծախուն, եւ ամենայն զօրութենէ պահպանել ամենայն զէնս հաւատարմաբար զի կալով մնասցէ մաքուր եւ պատրաստ վասն գործոյ, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին:

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի վառհօդպետութեան:

ԳԼՈՒԽ 67.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին Արցախու եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ Տանն Հայոց տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօն վառհօդպետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Պետրոս Բերթաձորոյ յիշխեսցես 'ի վերայ ամենայն վառհօդ յօրինող արհեստաւորաց եւ զգուշութեամբ արբունս հասուցանիցես լաւագոյն եւ յստակ վառհօդ եւ որոնես հնարս, որ կալով մնասցէ երկայն աւուրս, եւ մի' աւերեսցի շտապ, եւ 'ի յօրինելն վառհօդի մի' գտցի մի տեղի զուռին եւ միւս տեղին մեղմ եթէ ո'չ համահաւասար կարողութեամբ, եւ բոլոր աշխարհն Հայաստանեաց պարտ է յօրինել ամենայն վառհօդս երկուս տեսակս մի խոշոր վասն թօփի, մի մանր վասն աղզօթի եւ զօրութեամբ նոյն երկու տեսակաւ ո'չ յաւելի կամ պակաս, եւ տուաք իշխանութիւն քեզ որոնել եւ ստանալ արհեստաւորս եւ 'ի ծախիւ Տանն Հայոց, լուս ածել զամենայն զոր ինչ որ գտցի առ 'ի առաւել լաւութեան վառհօդի եւ հաստատութիւն մնալոյ անշիջանելի փիլթայն եթէ ժամանակի տապու եւ կամ 'ի ժամանակի թոռութեան ցօղի եւ անձրեւի եւ ամենայն զօրութենէ ջանալով ջանասցես արհեստս ապահով մնալոյ վառհօդն եթէ մէջ քաղաքաց եւ կամ 'ի դաշտի եւ կամ մէջ բանակի խմբից, գրուեցաւ եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակ կառապետութեան:

ԳԼՈՒԽ 68.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն Սունեաց եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ Տանն Հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօնի ամենայն կառապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Պօղոսդ Երնճակայ իշխեսցես 'ի վերայ ամենայն կառ յօրինող արհեստաւորաց, եւ զգուշութեամբ արբունս հասուցանիցես ամենայն կառ զոր ինչ յօրինեսցի 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, զի գտցի միաբան թէ կերպարանն թէ երկայնութիւն թէ բարձրութիւն թէ հաստութեամբ ըստ իւրաքանչիւր աստիճանի համեմատ, այսինքն կառն որ ընդունի 'ի վերայ իւր թօփն երկու լիպրանոց, ամենայն կառ այս աստիճանի մի եւ նոյն կերպարանի, նմանապէս 4 լիպրանոց եւ վեց լիպրանոց մինչեւ քառասուն եւ երկու լիպրանոց, ըստ իւրաքանչիւր երկայնութիւն, լայնութիւն, հաստութիւն, ընկալ Օրինակ 'ի Տեառնէ հրաց զինապետի, եւ հրամայէ արհեստագործաց պահել հաստատուն 'ի միտս իւրեանց յօրինել կարգիւ եւ համեմատութեան ըստ իւրաքանչիւր ծանդրութեան թօփի, նմանապէս կառս բեռնելոյ վառհօդս եւ 'ի վերայ իւր ամրափակիւ սնդկաւ, նմանապէս կառք որում բեռնեցեալք հարկաւորեսցի կլօլս եւ կերակուրս եւ ամենայն մասունք կառաց չափով չափեսցի, եւ համեմատ ըստ իւրաքանչիւր աստիճանի յօրինեսցի 'ի ամենայն տեղիս, որ եթէ 'ի մէջ ամրոցաց քաղաքի եւ կամ 'ի մէջ բանակի գուցէ' բեկանիցի մասն անդամի միոյ կառոյ 'ի այլոյ կառէ դնելով 'ի տեղի նորայ, մի' գտցի զանազանութիւն, եւ տուաք իշխանութիւն քեզ վրէժխնդիր լինելոյ 'ի արհեստաւոր արանց կառայգործից, տեսանելով քեզ 'ի միջի յօրինեցեալ կառաց հատ մի ցորենոյ մեծութեամբ զանազանութիւն, կամ պակաս, պատուիրեմ քեզ որոնեա 'ի մէջ անտառին դաշտի աշխարհին մերոյ, զոր ինչ փայտ պինդ եւ թեթեւ եւ արժանի վասն կառուց եւ սանդղաց առ 'ի երկայն ժամանակ գործածելոյ եւ այլն, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք տանն հայոց այսմ աւուր յամսեանն դեկտեմբերի քսան յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի վրանապետութեան:

ԳԼՈՒԽ 69.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին Փայտականու եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ Տանն Հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօնի ամենայն վրանապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Թադէոս Վարթանակերտու իշխեսցես 'ի վերայ ամենայն վրանակար դերձկաց եւ ամենայն վրանի արհեստաւորաց, եւ զգուշութեամբ արբունս հասուցանես ամենայն վրանս որում յօրինի 'ի յերեսս Աշխարհին Հայոց վասն բնակութեան, եթէ մի արանց, եթէ վեց արանց եւ եթէ երկոտասան արանց եւ եթէ քսան եւ չորս արանց, ամենայն վրանք յօրինեսցի այս չորս տեսակս, բարձրութիւն, լայնութիւն եւ երկայնութիւն համեմատ ըստ իւրաքանչիւր աստիճանի վրանի, նմանապէս սիւնք, գտակ սեանց, եւ հաստութիւն չուանի համահաւասար, ներս վրանին սպիտակ զոր ինչ կտաւիւք, որ գտցի շահաւէտ եւ 'ի դուրսկոյս կարմիր, եւ տուաք իշխանութիւն քեզ վրէժխնդիր լինիլ 'ի արհեստաւոր վրանակարացէ եթէ գուցէ զոր ոք յօրինեալ աւել կամ պակաս ձեւակերպութեան քան թէ չորս աստիճան վրանիս (բայց 'ի ծայրագոյն իշխանաց եթէ գուցէ ընդ բեհեզս եւ լայնատարած), պատուիրեմք քեզ զի զգոյշանասցես զոր ինչ կտաւ բարեգոյն վասն վրանի եւ կամ չուանի, որ ընդ երկայն աւուր մնասցէ, եւ թեթեւագոյն լինի շրջեցուցանելոյ եւ անփոյթ, 'ի տապու արեւուն, կամ 'ի թացութեան անձրեւի, եթէ կտաւ որ կիտվահատէ եւ եթէ բամբակ եւ այլ զոր ինչ որ բուսանի 'ի յերեսս երկրին հայոց եւ ձեռագործէ ժողովրդեան Հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի կերակրապետութեան:

ԳԼՈՒԽ 70.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն Պարսկայ Հայոց եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի Տանն Հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօնի կերակրապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Բարդուղիմէոս Թրազու յիշխեսցես 'ի վերայ ամենայն կերակրոց 'ի յերեսս երկրին Հայաստանեաց, յորդորելով զի վարելով ցանիցեն ամենայն դաշտ յերեսս երկրի, զի մի' մնասցէ դատարկ քայլ մի եւ ով ոք որ կաղանայցէ վարելոյ եւ ցանելոյ զոր ինչ պատճառի որ իցէ՝ ազդ արասցես իշխան աշխարհին յայնմիկ, զի Օգնական նմայ լինիցի եւ ցանք նոցա կատար հասանիցէ, եւ եթէ արգելում մի ծայրագոյն գտցիս ազդ մեզ արայ, ամենայն պտղոյ, ցորենոյ, գինոյ, ձիթոյ եւ զոր ինչ կերակրոց բաժինն տանն հայոց ըստ Օրինաց գթածութեամբ հաւաքէ' 'ի շտեմարանն Տանն Հայոց եւ յինն հանէ եւ յանձնէ իշխան յաշխարհին յայնմիկ, զի նայ վաճառելով գինն նորայ մուծանէ ընդ գանձարանն Հայոց, պատուիրեմք քեզ Տեառն Բարդուղիմէոսիդ զգոյշ լեր զի տարեկան կերակուրն բնակողաց յաշխարհին

մերոյ մնասցէ անարատ 'ի շտեմարանի չոր եւ յստակ, եւ 'ի միջի ամրոցի ապահով, որում աշխարհի որ իցէ, եւ ունիս իշխանութիւն որոնել 'ի Տանէն Հայոց աշխարհագիրն յիմանալ դու թիւ ժողովրդեան հայոց, եւ թիւ արկանել տարեկան կերակուրն 'ի վերայ բոլոր ժողովրդեան, որ հարկաւոր է ամենայն միոյ անձանց ունիլ քեզ կերակուր 'ի շտեմարանս վասն միոյ անձի երիս բեռն ցորեան նոյն թուաւ հաւաքել 'ի միջէ ամենայն գաւառաց, եւ ամրափակէ հարկաւոր տեղիս համահաւասարութեամբ քանակութեան անձանց ըստ իւրաքանչիւր ժողովրդոց համեմատութեամբ 'ի մէջ ամուր պարսպաց, եւ երկու տարէն կերակուր 'ի մէջ քաղաքաց, գաւառաց եւ գեօղերայից, որ բոլորն լինի կերակուր երից ամաց, եթէ աւելի քան զայս եւ պակաս ազդ մեզ առնել, եւ նոյն գունակ յարդ եւ գարի եւ կորեկ եւ այլն, վասն անասնոց, եւ որում դաշտ աշխարհի եւ գաւառի, որ 'ի ժամանակի իշխանութեան քոյ ծնանի նորագոյն բոյս եւ առաստասցի պատուելի քեզ առնէ մէնջ Տանն Հայոց, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի Գանձապետութեան:

ԳԼՈՒԽ 71.

Տեսանելով մեր ընդունելութիւն Կորճակայ Հայկա' եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ լինիլ 'ի Տանն Հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօնի գանձապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Փիլիպպոս Փոքր Աղբակու լինիցիս իշխան գանձապետութեան, զի որում աշխարհէ եւ քաղաքէ զոր ինչ գանձ որում իշխանէ եւ պաշտօնի, որ յանձնեսցի քեզ գանձն ստանասցես եւ տացես նոցայ թուղթ ստացելոյ որքանութեան դրամացն, զոր ինչ թուղթ 'ի քէն ստացեալ որ ոք քանակութեան գանձոց 'ի ձեռս ում որ գտցի նոյն թուղթ ընդունելի մեզ որքայնութիւնն բանին, եւ իբրեւ մեր ստացեալ, եւ պատուիրեմք քեզ զի պահելով գանձն Տանն Հայոց 'ի ամուրս քաղաքի եւ տացես համար 'ի դրունս Տանն Հայոց ամենայն ամսոյ եւ սպասիցես մերոյ հրամանի, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի Երկրաչափութեան:

ԳԼՈՒԽ 72.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհին Վասպուրականի եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի Տանն Հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօն երկրաչափութեան ժամանակաւ երիս ամաւ, զի Տեառն Ստեփաննոս գողթանու իշխեսցես 'ի երեսս երկրին Հայաստանեաց չափելոյ, եւ տուաք իշխանութիւն քեզ չափելով բաժանեսցես ըստ իւրաքանչ յաշխարհ յաշխարհէ, գաւառ 'ի գաւառէ, եւ հաստատեսցես վիճակ քաղաքաց, վանօրէից ըստ Օրինաց եւ տուեցելոց եւ խոստմանց

տանէն հայոց, եւ բայցայայտնեսցես ’ի յերեսս թղթոյ բոլոր երկիրն Հայաստանեաց մէջ սահմանի իւրեանց լերամբ, անտառիւք, լճակաւ, գետօրէիւք, աղբիւրօք եւ այլն, տուաք իշխանութիւն քեզ, զի արգելեսցես ամենեցւոյն ո'վ ոք որ իցէ, որ յօրինել կամեսցի տուն եթէ գտցի կամք նորայ արտաքոյ սովորութեան հայոց եւ ’ի դրունս շարից եւ կամ մերձ ամենայն ամրոցաց եւ բերթօրէից եւ ամենայն ամրոցի վիճակէ, եւ միշտ պահել պարտէ քեզ մերձ ամենայն մայրաքաղաքաց դաշտ մի լայն արձակ ’ի վերայ քաղցր ջրոյ վասն իջանելոյ 60 հազար զինուորս, եւ միոք ’ի տեղին յայնմիկ շինեսցի տուն եւ տնկեսցի այգիս, եւ տուաք իշխանութիւն քեզ ’ի ծախիւք Տանէն Հայոց բանալ ճանապարհս մերձագնացս, եւ խորտակիլ բլուրս, եթէ գուցէ արժանի շահաւէտութեան անցուցանել ջուր ’ի մի տեղէ առ միւս, եւ պատուիրեմք քեզ ջանալ եւ հոգս տանիլ ’ի վերայ աշխարհիս եթէ արժան տնկել յանտառ, կամ հատանել եւ զամենայն զոր ինչ պատճառ որ հարկաւորեսցի առատանալոյ աշխարհն մեր, գրուեցաւ ’ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի Պետ Տկարաց:

ԳԼՈՒԽ 73.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին Արարատեան, եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ ’ի վերայ երդման քոյ հաստատեցաք ’ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ ’ի Տանն Հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօնի տկարաց պետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Յովհաննէս Դվնու իշխեսցես ’ի վերայ ամենայն տան տկարաց, որում պահպանի ’ի Տանէն Հայոց, տուաք իշխանութիւն քեզ ծախիւք Տանն Հայոց յօրինել մերձ ամենայն մայրաքաղաքաց լայնարձակ տուն վասն բնակութեան տկարաց եւ խոցելոց, պատուիրեմք զգոյշանալ եւ գտանիլ բժիշկ վասն դարմանելոյ տկարաց, եւ որոնել ’ի երեսս երկրին մերոյ ’ի դաշտս ծաղկանց, եւ կղեվս անտառից, եւ արմատս խոտոց, ո'չ թէ միայն վասն բժշկութեան դեղօրէից նոցայ, նա' եւս լուս ածելոյ պարգեւք գաղտնի, որ այժմոյս ’ի մէնջ մեր անծանօթ, գուցէ ելանելով զանազան ծաղկունք սերմարունք կղեվ տակռիք, որ հարկաւորեսցի ժողովրդեան մերոյ եւ այլոց բազմաց, զի կարի ընթանալ առ ’ի վաճառ ’ի տարր յաշխարհ, տուաք իշխանութիւն քեզ ամենայն զօրութենէ զգոյշ լինիլ զի մի' մնցէ ’ի բնութիւն ազգին հայոց եւ աշխարհն մեր բորոտութիւն, այսպիսի աղտս հան ’ի միջէ տկարաց եւ յաշխարհէ, քաղաքէ եւ ամենայն բնակութենէ մերմէ, բնակեցոյ ’ի տեղի բնակութեան առանձին ’ի վերայ անմարդաբնակ լերանց, դարմանէ նոցայ մինչեւ փարատեսցի իսպառ ապա թոյլ տուր նոցա շրջիլ ’ի յերեսս յերկրի մերոյ ազատ, եւ պատուիրեմք քեզ զի մի' խնայեսցես բժիշկ եւ դարման ’ի հասարակ ազգէն հայոց եթէ գտցի տնանկ եւ աղքատ ծախ մխիթարելոյ նորա ’ի Տանէն Հայոց հատուցումն լինիցի, եւ ունիս իշխանութիւն ծախիւք Տանն Հայոց պահել ամենայն տկարս ըստ իւրաքանչ քաղաքի յստակ զգեստիւք եւ բարեխառն կերակրօք գիտութեամբն ըստ իւրաքանչիւր աշխարհաց իշխանի քաղաքին, գրուեցաւ ’ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի Հազարապետութեան:

ԳԼՈՒԽ 74.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան 'ի աշխարհէն Տայքու, եւ թուղթ փոխանորդութեան նոցայ առ քեզ Մկրտիչ Աքուլեցւոյդ, երդմնելով քոյ առաջի ա'տենի տանուտերաց հայոց հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ Տանն Հայոց տուաք իշխանութիւն քեզ պաշտօնն հազարապետութեան 'ի վերայ գնդին զօրաց ժամանակաւ երիս ամաւ, զի դու քաջ հազարապետդ Մկրտիչ Աքուլեցոյ կացցես եւ մնասցես հազարապետ եւ հրամայեսցես 'ի վերայ գնդի հազար զօրաց, նոցա որ յանձնեսցի քեզ 'ի քաջախոհեան սպարապետէն Հայոց, եւ ջանասցես 'ի գործ ըստ Օրինօքն Հայաստանեաց, առ որ որում հրամայեսցէ քեզ քաջախոհեան սպարապետն Հայոց, բայց 'ի յիշխելոյ 'ի վերայ Տանն Հայոց, տուաք իշխանութիւն քեզ կապել զինուորս քոյ բանիւ եւ երկաթիւ, եթէ 'ի տեղի որում գտցիս դու ոչ իցէ' զօրագլուխ բարձր աստիճանաւ քան զքեզ, այսմ մտածութեամբ որ հատուցանես վնասն կալանաւորութեան նորա եթէ նա առաջի ատենի դատաստանի գտցի անպարտ, տուաք իշխանութիւն քեզ պահելոյ հաստատուն ամենայն հատոր յօրէնս 'ի վերայ ամենայն զինուորաց քեզ յանձնեցեալ որ ըստ արժանեաց գործոց ձեռաց իւրաքանչիւր գործոց ընդունեսցեն հատուցումն վճռաւ դատաստանաւ ըստ Օրինօք Հայաստանեաց, գրուեցաւ եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի պաշտօն Հարկաց կարգադրութեանց:

ԳԼՈՒԽ 75.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան Բարձրահայկայ եւ թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի Տան Հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց եւ պաշտօնի հարկաց դիւրութեան պետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Մկրտիչ Կարնու յիշխեսցես 'ի վերայ ամենայն հարկաց մաքսից առ 'ի դիւրութիւն կողմն ժողովրդեան մերոյ, զի ոչ ոք հարկապահանջք եւ մաքս առուք, հաս բաժնատէրք մի՝ նեղելով եւ խաբէութեամբ, եւ կամ յերկիւղալի առնելով հանիցեն հատ մի ցորենոյ յաւելի քան թէ կարգադրութիւնն հայոց 'ի ժողովրդենէ մերմէ, եւ տուաք իշխանութիւն քեզ ջատագով լինիցիս 'ի կողմանէ հասարակ ժողովրդոց բոլոր Հայաստանեաց ընդ դէմ մաքսապետաց եւ հարկապահանջից, եւ ձեռնատու նոցայ լինիցիս զի մի' մտցէ զանգատ նոցայ 'ի դրունս դատաստանի մերոյ ընդ դէմ զրկօղաց նոցա, եւ թոյլ մի' տացես հարկապահանջաց զի հանիցեն հարկ, հաս բաժի'ն եւ այլն 'ի մաքուր յնդուց, եւ նուազն թողցեն վասն ժողովրդեան, թէ ոչ համահաւասար զոր ինչ տուրք 'ի Տեառնէ տուեցեալ 'ի յերեսս դաշտի նոցայ իւրաքանչիւր բաժնաւ գտցի, եւ զամենայն զոր ինչ ռահիւ որ կարի ըստ Օրինօք դիւրին առնիլ վասն ժողովրդեան, լեր ջատագով եւ Տէր քեզ Օգնական, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ նամակի 'ի պաշտօնի Ռոճկահատոյց:

ԳԼՈՒԽ 76.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն Տայիքու եւ թուղթ փոխանորդութեան նոցայ քեզ, եւ 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի տանն հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց եւ պաշտօնի ռոճկահատուցման պետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Զաքարայ պարտիզաց փորու զիշխեսցես 'ի վերայ ամենայն զօրաց զինուորութեան ռոճկաց, եւ հատուցումն ռոճկաց ամենայն պաշտօնատարաց, ըստ իւրաքաչիւր հատուցումն լինիցի 'ի ականատեսութեան քոյ ամենայն ամսոյ, եւ 'ի վերայ թղթոյ ռոճկա ընկալութեան լինիցի ձեռնադրեալ 'ի քէն ապա հատուցումն ստանայցէ 'ի գանձարանէն, պատուիրեմք քեզ զի զգոյշ լինիցիս զի ռոճիկ հասարակ զինուորաց որ ելանէ 'ի Տանէն Հայոց, անթերի մտցէ 'ի ձեռն զինուորին մերոյ ըստ իւրաքանչ առաջի աւուրն ամսոյ եթէ առողջ եւ եթէ տկար անձանց, եւ դրամն հատուցանելոյ ռոճկի պիտոյ է յատկապէս ընտիր եւ յստակ լինիլ եւ ոչ հին եւ մի' մաշեալ եւ զոչ ինչ պակասութեամբ, զի մի' գուցէ զինուորն մեր կորուսանիցէ լոման մի պղնձոյ 'ի հասարակօրէն ռոճկէ իւրմէ քանզի վարձ վաստակոյ իւր է, որում տքնի ցայգ եւ ցերեկ վասն Տանն Հայոց հաւատարմաբար, եւ լցուսցէ Տէր ամենայն պակասութիւն նոցա բարեվարիւք 'ի այսմ աշխարհի եւ 'ի փառս յաւիտենական 'ի հանդերձելումն, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ Վաշխա Պարտու:

ԳԼՈՒԽ 77.

Յայտնի լինի ամենեցուն, որ ես Մարտիրոս որդոյ Բարսեղի 'ի գեօղաքաղաքէ Լօռի կատարելապէս պարտական եմ առ Տեառն Վրթանէսի որդոյ Սեղբեստրոսի քաղաքէն Աստապատու բովանդակն տուգանօքն երկու հարիւր դահեկան երծաթ, հատուցումն նորին լաւ եւ հաստատապէս առնելն իմ առ նոյն Վրթանէսի եւ կամ իւր կտակակատարին ժառանգին եւ անուանելոյն, պարտական արարի իմ անձն կտակակատարն ժառանգն եւ անուանեալն յատկապէս վկայից ներկայութեան ում 'ի այսմ ձեռգրեցի եւ կնքեցի 'ի քաղաքն Լօռի յայսմ աւուր հոկտեմբերի ամսի տասն եւ ութն յամի Տեառն մերոյ փրկչին մէկ հազար եօթն հարիւր եօթանասուն եւ մէկ:

Միեւնոյն վերոյ անուանեալ Մարտիրոս փոխեմ առեալ եւ ընկալեալ եմ վերոյ անուանեալ Վրթանէսէ բոլոր ստուգապէս բովանդակն մին հարիւր հատ դրամ երծաթ հայոց որ ընթանայ առ 'ի վաշխի հարիւրին վեց 'ի մի տարէն որ հատուցանեմ միեւնոյն ժամոյն որ պահանջէ:

Այժմ դաշնադրութիւնս այս պարտականութեանս այսպէս է, որ եթէ վերոյ անուանեալ Մարտիրոսս կամ իմ կտակակատարն ժառանգն եւ անուանեալն լաւ եւ հաստատապէս հատուցումն առնեմ առ ասացեալ Տեառն Վրթանէսի կամ կտակակատարին ժառանգին եւ անուանելոյն իւրոյ բոլոր ստուգապէս բովանդակն մին հարիւր երծաթէ դրամն հայոց հանդերձ վաշխիւն որ վերա կբերէ 'ի յայսմ, այնուհետ այս տուգանս պարտուս անարժան լինի եւ անկարող եթէ կատարումն սորայ անդրադարձն կլինի ամենայն կերպիւ արժանաւոր կլինի եւ կարող,

Վկայեմք, որ ձեռնադրեաց,

կնքեաց եւ յանձնեաց.

Մանասէ որդի Գրիգորի.

Յարութիւն որդոյ Մինասայ.

Մարտիրոս որդոյ Բարսեղի.

Օրինակ Զերծա պարտուց:

ԳԼՈՒԽ 78.

Յայտնի լինի ամենեցուն որ ես Մանասէ որդոյ Սիմէօնի 'ի գեօղէ Մեղրու կատարելապէս պարտականամ առ պարոն Սամուէլ որդոյ Աթանէսի 'ի գեօղէն յԵղվարդայ, բովանդակն տուգանօքն վեց հարիւր դահեկան երծաթ հատուցումն նորին լաւ եւ հաստատապէս առնելն առ նոյն պարոն Սամուէլ, կամ իւր կտակակատարին ժառանգին եւ անուանելոյն, պարտական արարի իմ անձն կտակակատարն ժառանգն եւ անուանեալն հաստատապէս վկայից ներկայութիւնում 'ի յայսմ ձեռդրեցի եւ կնքեցի 'ի գեօղն Մեղրի յայսմ աւուրս յուլիսի ամսի տասն եւ ութն յամի Տեառն մերոյ փրկչին մէկ հազար եօթն հարիւր եօթանասուն եւ երեք 1773:

Միեւնոյն վերոյ անուանեալ Մանասէ որդոյ Սիմէօնի առեալ եւ ընկալեալ եմ վերոյ անուանեալ պարոն Սամուէլ, որդոյ Աթանէսի բոլոր ստոյգապէս բովանդակն երեք հարիւր դահեկան հայոց երծաթ որ ընթանայ առ 'ի պատասխանի 'ի վերայ բարի կարաւանի ընդ բեռինս, որում կարաւանապետն է պարոն Մաղաքիայ որդոյ Սարգսի սեբաստացւոյ, կալ եւ ելանելն 'ի քաղաքէն Գանջու առ 'ի քաղաքն Արզրում, որ է Կարին, եթէ ուղիղ ճանապարհաւ, եւ կամ այլ քաղաք եւ գեօղ մտանելով մինչեւ ասացեալ կարավանն ընդ բեռամբ իմով ամբողջ հասանելն Կարին քաղաք եւ իջուցանել բեռինս 'ի սովորական տեղի իջեւանի, վասն այս ճանապարհորդութեանս շահ վարի հարիւրին տասն եւ երկու եթէ ընթացս այս կատարի զամիսս չորս աւելի քան զայն կրկնակի շահն ըստ անցելոյն ժամանակին, եւ 'ի վեր յիշեցեալ երիս հարիւր դահեկանի հասարակապէս վնասն եթէ ճանապարհի, գետօրեաց, անձրեւից, թշնամեաց, հրոց, աւազակաց եւ այլն վերաբերէ առ կողմն ասացեալ պարոն Սամուէլ որդոյ Աթանէսի:

Այժմ դաշնադրութիւնս այս պարտականութեանս այսպէս է, որ եթէ վերոյ անուանեալ Մանասէս որդոյ Սիմիօնի կամ իմ կտակակատարն ժառանգն եւ անուանեալն լաւ եւ հաստատապէս հատուցումն առնեմ առ ասացեալ պարոն Սամուէլ որդոյ Աթանէսի կամ իւր կտակակատարին ժառանգին եւ անուանելոյն բոլոր ստոյգապէս բովանդակն երեք հարիւր դահեկան երծաթն որ է յիմն այս պարտականութեանս հանդերձ շահիւն որ վերա կբերէ' 'ի յայսմ, յետ քսան եւ մի աւուրս անվնաս հասանելոյ վերոյ ասացեալ կարաւանն իմով բեռամբ առ ասացեալ կարաւանահանգիստն Կարինու, որ է Արզրում եւ եթէ կորնչիցի ասացեալ կարաւանում բեռինս իմ այն որ փրկի պարտէ կատարումն առնուլ որպէս հասարակաց սովորութիւնն, այնու հետ այս տուգանագիրն անարժան կլինի եւ անկարող, եթէ կատարումն սորին անդրադարձն կլինի յանժամ 'ի վեր յիշեցեալ տուգանն ամենայն կերպիւ արժանաւոր կլինի եւ կարող, թուղթս զերծապարտից իրեք միմեանց համեմատ տվի միայն մինն 'ի սոցանէ ունի արժողութիւն, որմնովն որ հատուցումն առնեմ մնացորդ երկուսն անարժան լինիցի:

Վկայեմք, որ ձեռնադրեաց,

կնքեաց եւ յանձնեցին.

Մարկոս որդոյ Ղեւոնդի.

Վրթանէս որդոյ Միքայէլի.

Մանասէ որդոյ Սիմէօնի.

Օրինակ Տուն կամ Երկիր գնելոյ:

ԳԼՈՒԽ 79.

Յայտնի լինի ամենեցուն, որ ես Մարտիրոս որդոյ Բաղրամի յաշխարհէն Աղձնու եւ 'ի գաւառէն Պատիկու 'ի գեղջէն Փէրիրու վաճառեսցի տունն իմ որ կայ կազմեալ 'ի փողոցն վարդանեանց դրկից Մարտիրոսի որդոյ Մնացականի հարաւ կոյս, եւ Փիլիպպոսի որդոյ Ղազարու 'ի հուսիս կոյսն, եւ

չափաւորութեամբ 'ի ափէ յարեւելեան կողմանէ առ արեւմուտ մինչեւ 'ի ծայր վաթսուն կանգուն, եւ 'ի հուսիսու առ հարաւ քառասուն կանգուն եւ երկու ըղուկ, այս միջոց բոլոր երկիրս շրջապատեալ պարսպիւք եւ շինութեամբ հիմանէ մինչեւ 'ի վեր կազմելոք թէ քարիւ, թէ փայտիւ, թէ երկաթիւ եւ զամենայն զոր ինչ 'ի նմայ ծառիւք բուսօք ջրհորօք եւ ակն ջրուց աղբերիւ բոլորովին վաճառեսցի Տեառն Դանիէլի որդոյ Պօղոսի մերոյ գեօղի բնակող վաճառականի չորս հարիւր քառասուն հայոց դրամ երծաթոյ, եւ բոլոր այս երծաթն ընկալայ 'ի մէջ ձեռին իմոյ գինն վերոյ ասացեալ տանն իմոյ, 'ի վերայ այս հատուցման թողի ամենայն կարողութիւն տէրութեան որ ունէի ես 'ի վերայ ասացեալ տանն, եւ բոլորովին տվի վերոյ յիշեալ Տեառն Դանիէլին եւ արարի նմայ տէր եւ ժառանգորդ 'ի վերայ վերոյ ասացեալ տանն մինչեւ յաւիտեան վասն հաստատութեան բանիս ձեռնադրեցի առաջի ատենի իշխանին աշխարհին մերոյ եւ կնքեցի թուղթս վաճառելոյ տանս այսմ աւուր դեկտեմբարի ամսոյ 15. յամի Տեառն փրկչին մերոյ 1773. 'ի գեօղն Փէրիս:

Վկայեմք, որ ձեռնադրեաց,

կնքեաց եւ յանձնեաց.

Մարտիրոս քեօֆխայ Փէրիու.

Բաղրամ որդոյ Մարտիրոս.

Մարտիրոս որդոյ Բաղրամի.

Օրինակ նամակի զինուորական իշխանութեան 'ի վերայ Մայրաքաղաքաց:

ԳԼՈՒԽ 80.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան 'ի յաշխարհէն Տուրուբերանոյ, եւ թուղթ փոխանորդութեան նոցա ընդ քեզ Սահակայ Բագրատոնիդ, եւ երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց Հայոց հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ Տանն Հայոց, տուաք քեզ նամակ պաշտօնի իշխանութեան մայրաքաղաքին Յերեւանու, որ է 'ի աշխարհին Արարատեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու խոհեմազարդ Սահակ Բագրատօնիդ կացցիս եւ մնասցես զօրագլուխ 'ի վերայ բոլոր զօրաց քաղաքին Երեւանու ընդ խորհրդակցօք քովք, հրամայեսցես 'ի վերայ զօրաց ամենեցեւոյն որք կան եւ բնակին 'ի վիճակս քաղաքին Յերեւանու ըստ կերպին եւ նմանութեան որպէս հրամայէ պատուելի նախարարն Հայոց 'ի վերայ ամենայն զօրութեան զինուորաց 'ի յերեսս բոլոր Աշխարհին Հայոց, եւ դու 'ի Սահակ Բագրատոնիդ ընդ խորհրդակցօք քով, եւ զօրագլուխ զինուորօք քով պահպանել աշխարհն Արարատեան ընդ Օրինօքն Հայաստանեաց, եւ տուաք իշխանութիւն քեզ 'ի վերայ վիճակին աշխարհին Յերեւանու գործել ամենայն բարիս որպէս գլուխ 62. յօրէնս մեր եւ չար ոչ մի, եւ լինիլ պատրաստ պատասխանելոյ դու վասն ամենայն գործոց ձեռաց քոց, եւ տուաք իշխանութիւն քեզ 'ի բերմանէ վիճակի քոյ ստանալ զանձարանէ քաղաքին Յերեւանու հատուցանել ռոճիկս պաշտօնատարաց Տանն Հայոց տալով 'ի նմայ ըռսիտ, եւ նոյն ըռսիտն համարեսցի առաջի ատենի տանուտերաց իբր դրամս, տուաք հրաման քեզ զի ամենայն շաբաթի յղեսցես քարտէզն քոյ ամենայն լրիւ աշխարհէ վիճակէ քումէ ազդ առնելով զամենայն զոր ինչ առաջի ատենի տանուտերաց հայոց եւ թուաբանութիւն աշխարհագրութեան զինուորաց վիճակին Յերեւանու հանդերձ թվաւ ննջեցելոց, համարն եկամտից եւ ծախից եւ այլն, որ կատարելապէս ընծայեսցես առ դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց ձեռամբ փոխանորդի քոյ, ամենայն տարւոջ յամսեանն յունվարի մին թուէն տուաք իշխանութիւն քեզ զի պահեսցես վարպետ զինուորութեան եւ ամենայն կարգադրութեան, եւ հրամայեմք քեզ կալ եւ մնալով հաստատուն 'ի վերայ ամենայն Օրինաց հայոց, յատկապէս 'ի գլուխ 101-երորդ Օրէնս, զի կրթեսցի եւ ուսումնաւորեսցի ամենայն զինուորս բնակեալ 'ի յերեսս երկրի վիճակին Երեւանու, եւ տուաք հրաման քեզ 'ի ժամանակի խաղաղութեան եւ պատերազմի ամենայն շաբաթի ընծայեսցես լուր կացութեան աշխարհին եւ կառավարութեան քոյ 'ի դրունս տանն հայոց, եւ կալով մնասցես 'ի վերայ պաշտօնի իշխանութեան վիճակի քոյ հաւատարիմ Տանն Հայոց, գրուեցաւ 'ի դրունս եւ այլն:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մ. Ի.

Մ. Գ.

Ս. Տ.

Վ. Տ.

Գ. Տ.

Օրինակ Ուխտադրութեան:

ԳԼՈՒԽ 81.

Յայտնի լինի ամենեցուն, որ ես Սողոմոն որդի Մինասայ Գանձակու վաճառականս, եւ Հայրապետ որդի Միքայէլի Ճարաբերթու հովիւս միասին ուխտ եղաք եւ միջի մերոյ դաշինս հաստատեցաք, որ ես Միքայէլ հովիւս պարտական արարի իմ անձն եւ կտակակատար եւ ամենայն ստացուածքն Տեառն Հայրապետի որդոյ Միքայէլի որ ներքոյ թուէն վեց ամիս ժամանակաւ 'ի քաղաքն Գանձակու յանձնեմ Տեառն Միքայէլին երիս հարիւր զառինս, որ հարիւրն 'ի սմանէ խօի, եւ երկու հարիւր ոչխար, նա'եւս վեց բեռ անարատ եղ, ամբողջ տկերաւ, եւ երկոտասան բեռ բարեհամ պանիր, երեք բեռ մոմ, եւ չորս բեռ մեղր յստակ, որում զինն սոցայ այսօր հաւանեցաք եւ ուխտ եղաք այսինքն՝

300 զառինք ամէն մի զառն մի դահեկան երծաթի,

որ բովանդակի հայոց դահեկան երծաթ..... 300

6 բեռ եղ, մի բեռն 50 դահեկան երծաթի..... 300

12 բեռ պանիր, մի բեռն 50 դահեկան..... 600

3 բեռ մոմ, մի բեռն 100 դահեկան.....300

4 բեռ մեղր մի բեռն 50 դահեկան..... 200

Բովանդակի դահեկան երծաթի.....1700

Եւ 'ի վերայ դաշնադրութեանս ես Հայրապետս այսօր ընկալայ 'ի ձեռանէ Տեառն Սողոմոնի մին հազար դահեկան երծաթի հայոց, եւ մնացորդ դահեկանն յետ յանձնելոյ վերոհիշեալ բանին առ Տեառն Սողոմոնի ստանայցեմ, եւ ես Սողոմոնի որդի Մինասի պարտական արարի իմ անձն կտակակատար եւ ամենայն ստացուածքն առ Հայրապետ հովուին Ճարաբերթու, որ վերոյ յիշեալ բանքն սահմանեալ ժամանակին մէջ քաղաքին Գանձակու, զի յանձնելէն յետ ընկալնում եւ զինն նորա որպէս 'ի վեր յիշատակեալ զոր ինչ հատուցի այսօր 'ի սմանէ զուտ մնացորդ եօթն հարիւր դահեկան երծաթի հայոց հատուցանեմ առ Միքայէլ հովուին կամ իւր տեղակալին առանց պատճառ, եւ մեք Սողոմոն եւ Հայրապետս կրկին ուխտադիր եղաք, որ ո'վ ոք 'ի մէնջ պակասեսցի 'ի վեր ուխտադրութենէ պարտաւոր լինիցի հատուցանել տոկոս զամենայն արժանաւորութեան վերոյ բանին ամենայն հարիւրի քսանովն եւ յետս դարձցի դահեկան այժմոյս ստացեալն, այսպէս հաստատեցաք դաշինս ուխտի մերոյ երկու միմեանց համեմատ, մին ես Սողոմոնս ձեռնադրեցի վասն Հայրապետին եւ մին ես Հայրապետս ձեռնադրեցի վասն Սողոմոնի 'ի դրունս Գանձակու այսմ աւուր ապրիլի ամսի տասն յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Մանկասար որդոյ Սիմէօնի.

Բաղդասար որդոյ Գաբրիէլի.

Սողոմոն որդի Մինասայ.

Հայրապետ որդոյ Միքայէլի.

Օրինակ Դաշնադրութեան վասն Հարսանեաց:

ԳԼՈՒԽ 82.

Յայտնի լինի ամենեցուն, որ մեք Աբրահամ որդոյ Ադամի գեղջէն Կարփու, եւ Հեղիսաբեթ դուստր Եղիազարի գեօղէն Մուղնու ուխտ եդաք եւ դաշինս հարսանեաց մէջ մեր հաստատեցաք, որ ես Աբրահամս հարստութենէ իմմէ այսօրս մին հազար հայոց դահեկան երծաթի տէր եւ ժառանգ արարի պատուելի Եղիսաբէթ դուստր Եղիազարի, որ զոր ինչ ձախորդութիւն 'ի վերայ ստացուածոց իմոց, եւ կամ եթէ վախճան կենաց իմոց հասանի, եւ կամ զոր ինչ աջողութիւն որ զամենայն աւուրս կենաց իմոց հասանիցի 'ի վերայ ստացուածոց իմոց զամենայն զոր ինչ զուտ եւ յստակ մնացորդէ իմմէ առաջին ժառանգորդն 'ի ստացուածոց իմոց մին հազար երծաթէ դահեկան տէր է պատուելի Եղիսաբեթ դուստր Եղիազարին զի տիրեսցէ եւ վայելեսցէ որպէս ինքն կամի, նաեւ ուխտ եդի եւ պարտական իմ անձն արարի առ ասացեալ պատուելի Եղիսաբեթն, որ ներքոյ թուէն վեց շաբաթ ժամանակաւ ամուսնանամ ընդ իւր ըստ Օրինօք հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ եւ զամենայն աւուրս կենաց իմոց ես եւ ծնեալք յինէն որդիք եւ դստերք զոր ինչ Տէր Աստուած տացէ մեզ կալով մնամք հաստատուն 'ի կարգս ամուսնութեան եւ մկրտել 'ի Քրիստոս զորդիս մեր ըստ Օրինօքն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ: Նոյն գունակ ես Եղիսաբեթ Մուղնու եւ դուստր Տեառն Եղիազարի ընդունեցի դաշինս եւ զամենայն զոր ինչ 'ի վեր գրեցեալ, եւ ուխտ եդի որ ամուսնանամ ընդ պարոն Աբրահամ Կարփու որդոյ Ադամի եւ 'ի ժամանակի բոլոր կենաց իմոց կալով մնամ հնազանդ Օրինացն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ եւ հաւատարիմ առն իմոյ:

'Ի վերայ այս ուխտադրութեան դաշինս տոկոսի ընդունեցաք եւ յանձն առաք 'ի վերայ մեր որ զոր ինչ 'ի վերոյ ուխտադրութեան ով որ 'ի մէնջ պակասեսցի եւ 'ի կատար հասուցանելն խնայեսցի՝ պարտաւոր լինի հատուցանել հինգ հազար դահեկան երծաթ 'ի տունն ողորմութեան հայոց:

Այսպէս կատարեցաւ դաշինս ուխտադրութեան մերոյ կամաւ եւ յօժարութեան մերոյ եւ ընդունելութեամբ ծնօղաց եւ ազգականաց մերոց 'ի վերայ այս ցանկալի խորհրդեանս միաբան յուսալով 'ի Տէր սպասիմք զի մեզ արժանի արասցէ եւ սրբութեամբ հասուցէ կէտ ժամանակին Սուրբ ամուսնութեան զի կարօղ լինիցիմք ընդունիլ Օրհնութիւն 'ի Տեառնէ արարչէն մերմէ ձեռամբն քահանայի Սուրբ Եկեղեցւոյն հայոց աճելոյ բազմանալոյ վասն պաշտման Տեառն արարչին մերոյ եւ Օգնական բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց ամէն: Դաշնագիրս երկու միմեանց համեմատ ձեռնադրեցաք, մինն ես Աբրահամս ձեռնադրեցի վասն պատուելի Եղիսաբեթի, եւ մինն ես Եղիսաբեթս ձեռնադրեցի վասն Տեառն Աբրահամու 'ի գեօղն Մուղնու յայսմ աւուր Օգոստոսի ամսի վեց յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին յանձնեցին.

Սիմէօն որդոյ Մարկոսի.

Աթանաս որդոյ Կիրակոսի.

Աբրահամ որդոյ Ադամի.

Յեղիսաբեթ դուստր Եղիազարի.

Օրինակ Գանգատագրի առ յապարանն Դատաստանի:

ԳԼՈՒԽ 83.

Առ Պատուելի Դատաւորքն Յապարանի Դատաստանի 'ի մէջ Երեւան քաղաքին:

Ձերոյ գանգատող Սարգիս Բամբակայձորու

հողագործ ընդ դէմ Դատախազ Միքայէլ

ձկնորս Վահանու, երկայնամիտ լերուք:

Ներքոյ գանգատողն յամսեանն սեպտեմբերի թուին փրկչին 1770 միով վաշխապարտ թղթով յանձնեցի դատախազ Միքայէլ ձկնորսին Վահանու երկու հարիւր քսան ղուռուշ հռոմէացուց դրամ, որում պատասխանէ մերոյ հայոց երկու հարիւր վաթսուն եւ չորս երծաթ դրամ, եւ դատախազն այս գանգատողիս ուխտեաց զի հատուցանել 'ի վեր ասացեալ դրամն ժամանակաւ երկու ամաւ հանդերձ

վաշխիւ ’ի ամենայն մի հարիւրի ’ի մի տարին 6 ղուռուշովն, վասն հաստատելոյ խօսքն զանգատողիս ներփակեցեալ ’ի այսմ ընծայեցի առ ’ի ատենն պատուելի յապարանիս Օրինակն վաշխապարտուց դատախազին նշանաւորեալ Ա. եւ յետ անցելոյ լրումն ժամանակին, ուխտի մերոյ զանգատողս բազմիցս անգամ սիրով եւ բարեկամութեամբ ելի ’ի խնդիր դատախազէ դրամիս եւ վաշխին մինչեւ ցայսօր ո'չ զտի հատուցում, վասն այս պատճառի հայցեմ զի ելցէ պատուելի յապարանէն կոչումն դատախազին եւ իսկոյն պարտաւորել նմայ տալ երաշխաւոր վասն անձին իւրոյ մտանել ’ի դատաստան, եւ ակն ունեմ ’ի արդարութենէ դատողութեան ձերոյ զի հրաման տացէք դատախազին այս զանգատողիս, զի անթերի հատուսցէ դրամն այս զանգատողիս վաշխիւն հանդերձ ծախիւն զոր ելանէ դատաստանիս, փոխանակ այսքան բարութեան հատուցանէ Տէր վարձս ձեր ’ի հանդերձելումն:

Գրուեցաւ ’ի դրունս մայրաքաղաքին Երեւանու:

Այս աւուր 3 հոկտեմբերի ամսոյ եւ ’ի

թուին Տեառն փրկչին 1768. ձեռամբ

Էլիազ ատենաբանիս եմուտ ’ի ատեանն

պատուելի յապարանի յԵրեւանու:

Օրինակ յանդիմանելոյ դատախազին ընդ դէմ զանգատողին:

ԳԼՈՒԽ 84.

Առ Պատուելի Դատաւորն Յապարանի Դատաստանի մէջ Երեւան քաղաքի:

Ձերոյ Դատախազ Միքայէլ ձկնորս

Վահանու ընդ դէմ զանգատող Սարգիս

Բամբակաձորու, երկայնամիտ լերուք:

Ներքոյ դատախազն ընթերցաւ զանգատն զանգատողի ընդ դէմ իւր, գիտաց զամենայն զոր ինչ ’ի նմա, եւ այժմոյս խոնարհաբար պատասխանէ ընդ դէմ զանգատողին իւրոյ եւ վկայիւք հաստատել կարէ անիրաւաբար հայցուածքն զանգատօղին եւ կամ ագահութեան նորա որում կամի անիրաւաբար զրկել դատախազին ձերոյ ’ի իրաւանց իւրոյ, թէպէտ ես խոստովանիմ զի թուղթն վաշխապարտի ’ի ձեռին զանգատողի, որում խօսի զանգատողն հաւաստի ձեռնադրեցաւ ’ի այս դատախազէ, այլ որքանութիւն որ յիշեցեալ ’ի մէնջ այսինքն երկու հարիւր եւ քսան քուռուշ դրամն հռոմոց զանգատողն ո'չ լցոյց ’ի ձեռն այս յանդիմանողիս եթէ ո'չ միայն ղուռուշ հարիւր եւ ութսուն, եւ ’ի մնացորդ քառասուն ղուռուշն ուխտեաց զի միջոցաւ մի ամսով տացէ այս դատախազիս երկու լիտր քղամիտ, որում հարկաւոր իւր յօրինելոյ ուռկայն ձկնորսի իմոյ, եւ այս դատախազս ընդունելով այս պայմանի եւ հաւատալով ուխտադրութեանն զանգատողին ձեռնադրեցի թուղթն վաշխապարտից բովանդակեալ երկու հարիւր եւ քսան ղուռուշի եւ յանձնեցի զանգատողին՝ յուսալով զի ’ի միջոց միով ամսաւ գտից քղամիտն եւ ընթացից ’ի գործ ձուկ յորսի, այս անիրաւ զանգատողս ո'չ միայն թուլանալով անցուց սահման ժամանակին ուխտադրութեան իւրոյ, որ ո'չ յանձնեաց քղամիտն մինչեւ անցաւ ժամանակն տարուն ձուկ որսելոյ, եւ եղեւ ծայրագոյն վնաս այս դատախազիս, որ վնասս այս մի' լինիցի պակասագոյն քան թէ երեսուն դրամ երծաթ հայոց, նա' եւս յետ վեց ամիս ժամանակէ յուղարկեաց խոստացեալ քղամիտն իւր, որ տեսաք եւ հաստատեցաք զի էր փթեալ որ ո'չ էր արժանի ոչ ինչ իրաց, բազմիցս անգամ պատգամօք, եւ Բամբկաձոր գնացող արամբ գրեցաք առ զանգատողն եւ ազդ նմայ արարաք զի քղամիտն իւր փթեալ է, եւ այս դատախազս ո'չ յանձն առնու եւ ո'չ ընդունի փոխանակ քառասուն ղուռուշի, այս զանգատողն ո'չ ետ պատասխան դատախազիս եւ ո'չ բանիւ եւ ո'չ գործօք մխիթարեաց, եւ քղամիտն այն անկեալ մնաց եւ կայ մինչեւ ցայսօր, յետ լրումն ժամանակին պայմանին վաշխապարտին իմոյ զանգատողն սկսեաց յորդորել դատախազիս առ ’ի հատուցում թղթոյն ձեռնադրեցելոյն վաշխապարտութեան իմոյ, այս դատախազս խոստացաւ զանգատողին հատուցանել 180 ղուռուշն վաշխիւն անցելոյ ժամանակին, եթէ զանգատողն յետս դարձուցէ վնասն յանդիմանողիս 30 դահեկան երծաթն, որ ’ի պատճառէ կաղանալոյ իւրոյ եւ ’ի հարկաւոր ժամանակի ո'չ առաքելոյ

քղամիտն, եւ զանգատողն ոչ հաւանելով բանից դատախազիս եմուծ զանգատն իւր 'ի պատուելի յապարանս ջանալով եթէ կարի անիրաւացի իվերայ այս դատախազիս:

Այլ արդ դատախազս պատրաստէ հատուցանել պարտն իւր հարիւր եւ ութսուն ղուռուշ հանդերձ վաշխիւն, որ վերաբերէ առ այնմ, եթէ զանգատողն յետս դարձուցանէ վնասն դատախազիս երեսուն դահեկան երծաթն հայոց հանդերձ թղթաւ վաշխապարտութեան իմոյ, եւ դատախազս ակն ունի 'ի արդարութենէ պատուելի յապարանի, որ 'ի մէջ մտաց իւրեանց երկայնամիտ լիցեն, զի անիրաւութիւն 'ի զանգատողէ ծնեցաւ, եւ հրաման տայցեն որ զամենայն զոր ինչ ծախ դատաստանի եթէ 'ի զանգատողէ եւ դատախազէ, միայնակ զանգատողն հատուցանէ, վասն զի դատախազն ամենայն ժամ խոստացաւ հատուցանել զոր ինչ պարտն իւր եւ զանգատողն ո'չ կամեցաւ, եւ 'ի վերայ անիրաւութեան իւրոյ եմոյծ զինքն 'ի դատաստան վասն 'ի վեր ամենայն ասացելոյս, ունեմ վկայ զի արդարացուցանէ բանն իմ, եւ յաւել քան զայս կամ եւ սպասիմ հրամանին պատուելի յապարանիս եւ այլն:

Գրուեցաւ 'ի դրունս Մայրաքաղաքին Յերեւանու, յայսմ աւուր 10 նոյեմբերի ամսոյ եւ յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1768. ձեռամբ Սարգիս ատենաբանիս եմուտ 'ի յատեանն պատուելի յապարանի Յերեւանու:

Օրինակ թղթոյ վճռոյ որ ելանէ դատաստանէ:

ԳԼՈՒԽ 85.

'Ի պատուելի յապարանէ դատաստանի մայրաքաղաքին Յերեւանու եղեւ վճիռ 'ի վերայ զանգատող Սարգսի Բամբակաձորոյ հողագործի, եւ դատախազի Միքայէլ ձկնորսի Վահանու, զի դատախազն հատուցանել պարտէ զանգատողին երկու հարիւր երեսուն եւ չորս հայոց դահեկան երծաթ 'ի անցելոյ ժամանակ յամսեանն սեպտեմբերի վեց յամի Տեառն փրկչին մերոյ 1770 թուէն մինչեւ ցայսօր վաշխիւ 'ի մի հարիւրին տարէն վեցովն, նա' եւս յետս դարձուցանէ երկու լիտր քղամիտն որ ունի զանգատողէն որում կացութեամբ որ կայ այսօր, եւ զանգատողն յետս դարձուցանել պարտէ թուղթ վաշխապարտի դատախազին եւ արասցէ նմայ անհոգս եւ ազատ 'ի պարտուց եւ ծախ դատաստանի ըստ իւրաքանչ կողման հատուցանել պարտէ միմիայն զանգատողն եւ դատախազն մնասցէ ազատ: Գրուեցաւ 'ի դրունս պատուելի յապարանի դատաստանի Յերեւան քաղաքի, յայսմ աւուր ապրիլի 10. յամի Տեառն փրկչին մերոյ 1772:

Կնիք Պատուելի յապարանի Դատաստանի, Երեւանոյ.

Եմուտ 'ի համարս վճռոյ ձեռամբ իմով.

Մանասէ Գծագիր. .

Օրինակ թղթոյ ստացեալ իրաց յաղագաւ:

ԳԼՈՒԽ 86.

Ստացայ ես Բաղրամ որդոյ զեբեդեա 'ի ձեռանէ Տեառն Մանասէ որդոյ Պարուրայ վեց հարիւր դահեկան երծաթի հայոց, վասն սմայ խոստացայ եւ սովաւ պարտաւոր արարի զիս, զի 'ի վեր ասացեալ վեց հարիւր դահեկանն պակասեցուցանեմ 'ի պարտուց Տեառն Մանասէի, որ պարտէ զիս միով վաշխապարտիւ թուաւ յունիսի 5. յամի Տեառն 1768. քանակութեամբ երեք հազար չորս հարիւր դահեկան երծաթ, հաստատութիւն բանիս ձեռնադրեցի առ յայսմ աւուր 'ի քաղաքի Անի յամսեանն յունիսի 10. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1769:

Մանասէ որդոյ Պարուրայ.

600 դրամ երծաթ.

Օրինակ թղթոյ արձակման 'ի Տարապարտուց:

ԳԼՈՒԽ 87.

Յայտնի լինի ամենեցուն, որ մեք ներքոյ ձեռնադրողք Աթանաս որդոյ Կիրակոսի գեղջէն Մեղրու, Կիրակոս որդոյ Մլքեսեդի գեղջէն Յեղվարդու երկայն ժամանակաւ ընդ միմեանց առ եւ տուր արարաք,

եթէ վաճառականութեամբ, եթէ պարտայտութեամբ եւ եթէ երկիր վարձու եւ դաշտ ճարակելոյ խաշանց եւ այլն, եւ 'ի սկիզբ մերոյ առ եւ տրից ընդ միմեանց մինչեւ ցայսօր 'ի միջի մեր ձեռնադրեցաք բազում կերպիւ գրեանք եթէ դաշանց եւ եթէ պարտուց եւ եթէ ստացելոց կատարումն ամենայն գործոց մերոց այսօր այս եղեւ որ ամենայն համար 'ի մէնջ մեր անցելոց բանից համեմատելով փակեցաք, զոր ինչ պակասութիւն 'ի առ եւ տրէ մերմէ ընդ միմեանց լցուցաք մնացորդ պարտ մեր ընդ միմեանց անթերի հատուցումն արարաք, եւ երկուց կողմանց գոհութեամբ մին զմին անպարտ արարաք, եւ ազատապէս արձակում տուաք միմեանց 'ի վերայ այս եւ զամենայն զոր ինչ բան եւ գործ որ 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր մէնջ մեր միմեանցէ ընդ միմեանց անցեալ բոլորովին խփեցաք, եւ այսուհետ անյիշելի արարաք հանդերձ ամենայն կերպիւ թղթոց 'ի մեր երկուց կողմանց ձեռնադրեալք, զոր ինչ 'ի մի կողմանէ առ միւսն որում ժամանակի եւ որում ձեռի որ երեւեսցի անարժան արարաք թուղթ արձակութեանս երկու միմեանց համեմատ գրեցաք եւ մեր Աթանաս եւ Կիրակոս առաջի վկայից ձեռնադրեցաք եւ կնքեցաք որ ըստ իւրաքանչ ոք ունելով մի վասն անհոգս զինքն պահելոյ սկզբանէ մինչեւ ցայսօր ամենայն հարկից որ եղեւ 'ի մէնջ մեր, գրուեցաւ յայսմ աւուր 'ի գեօղն Մեղրու ապրիլի ամսի 14. յամի Տեառն փրկչին մերոյ էր 1767.

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Կիւրեղ որդոյ Աստուածատրոյ.

Սինաքարիմ որդոյ Ասանէթի.

Աթանաս որդոյ Կիրակոսի.

Կիրակոս որդոյ Մլքեսեդի.

Օրինակ թղթոյ Երաշխաւորութեան անձանց:

ԳԼՈՒԽ 88.

Յայտնի լինի ամենեցուն որ ես զեբեդեայ որդոյ Կարապետի գեղջէն յԵղվարդու ետու անձն իմ երաշխաւորութիւն 'ի տեղի պարտուց Միքայէլի որդոյ Գաբրիէլի նոյն յԵղվարդու բնակողի խոստացայ առաջի ատենի պատուելի յապարանի քաղաքին յԵրեւանու որում ժամանակի որ հրաման պատուելի ապարայնէ ելցէ կոչումն 'ի վեր ասացեալ Միքայէլ որդոյ Գաբրիէլի պատրաստ 'ի ատենի կացցէ, այլ եթէ փախիցէ նա' ես զեբեդայ որդոյ Կարապետի կացից 'ի ատենի պատուելի յապարանի, եւ յանձն առից զամենայն պարտս Միքայէլի, եթէ նա' իցէ կենդանի եւ փախուցեալ, այլ եթէ բնականապէս մեռեալ ո'չ մնասցէ պարտ երաշխաւորութեան 'ի վերայ իմ, հաստատութիւն բանիս ձեռնադրեցի 'ի յայսմ աւուր 'ի մայրաքաղաքն յերեւան յամսեանն մարտի 16. յամի Տեառն փրկչին մերոյ 1767:

Վկայեմք, որ ձեռնադրեցին,

կնքեցին եւ յանձնեցին.

Զեբեդեայ որդոյ Կարապետի.

Կիւրեղ որդոյ Աստուածատրոյ.

Սինաքարիմ որդոյ Ասանէթի.

Օրինակ թղթոյ երաշխաւորութեան վասն ընչից:

ԳԼՈՒԽ 89.

Յայտնի լինի ամենեցուն որ ես Յովսեփ Յարեմատացիս ետու անձն եւ ամենայն ստացուածքն իմ երաշխաւորութիւն 'ի տեղի պարտուց Մարտիրոս եղբօր իմոյ, որում պարտէ թղթաւ վաշխապարտիւ միով թուաւ սեպտեմբերի 15. յամի Տեառն 1767. բովանդակն երեք հարիւր դահեկան երծաթոյ առ Տեառն Կիրակոս Բամբակաձորոյ, որ եթէ 'ի վեր ասացեալ եղբայր իմ Մարտիրոսն պակասեսցի հատուցանել 'ի վեր ասացեալ պարտս իւր, պարտաւոր արարի անձն եւ ամենայն ստացուածքն իմ, զի ես հատուցից պարտն եղբօր իմոյ առ Տեառն Կիրակոսի Բամբակաձորու առանց տալու պատճառոյ,

գրուեցաւ յայսմ աւուր ’ի քաղաքն Յարեմատայ յամսեանն յունվարի տասն յամին Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1767:

Վկայեմք, որ ձեռնադրեաց,

կնքեաց եւ յանձնեաց.

Յովսէփ Յարեմատացի.

Մարտիրոս որդոյ Սարգսի.

Մովսէս որդոյ Յոնանու.

Օրինակ թղթոյ կտակի ննջեցելոց:

ԳԼՈՒԽ 90.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Կտակ յետ մահուան հաստատուն է որպէս հրամայէ Սրբազան առաքեալն Պօղոս, արդ այժմ ես Ստեփաննոս որդոյ Սիմէօնի գեղջէն Մանազկերտու ազգաւ հայ մկրտեալ եւ հաւատացեալ ’ի Քրիստոս իմ կամաւն եւ իմ յօժարութեամբն եւ ամենայն զգայարանօք առողջ կտակս արարի առաջի Աստուծոյ եւ մարդկան որ յետ մահուան իմոյ հաստատուն լինիցի այսինքն:

Նախ ինձ կտակակատար կարգեցի երէց որդին իմ Զաքարիայ եւ եղբայրն իմ Նաւասարդ, եւ յատկապէս բարեկամն իմ Միքայէլ որդի Պետրոսի որ սոքայ միաբան ինձ կտակակատար լինիցեն մինչեւ զոր ինչ ’ի յայսմ կտակիս յիշեցեալ կատար հասուցանիցեն: Երկրորդ զամենայն զոր ինչ ստացուածք իմ ’ի յերեսս երկրի եթէ ’ի աշխատանաց իմոց, եւ եթէ ’ի նախնեաց իմոց ինձ մնացեալ բոլորն հաւաքեն վաճառելոյն վաճառեն, պահելոյն գին դնեն զոր ինչ եւ որքան որ զամենայն ինչս իմ բովանդակի ’ի նմանէ նախ հատուցանէն ծախ թաղման իմոյ հասարակ Օրէն: Երրորդ հարկ եւ մաքս հաս եւ բաժին Տանն Հայոց: Չորրորդ հարկ պաշտման քահանայից, եւ ապա զամենայն պարտս իմ որում ցուցանէ դաֆտարն իմ մնացորդ զուտ ստացուածքն իմ որպէս ’ի վայր:

Հատուցանեն բաժին հոգւոյ իմոյ մի քառասուն պատարագէց վասն թողութեան մեղաց իմոց, քսան դահեկան երծաթ առ Սուրբ Աթոռն Էջմիածին, տասն դահեկան երծաթ ’ի վանս Սուրբ Կարապետայ եւ տասն դահեկան երծաթ խոստովանահօրն իմոյ Տեառն Կիրակոսի, եւ յիսուն դահեկան երծաթ Տունն ողորմութեան Հայոց:

’Ի ամենայն ստացուածքէ իմմէ քանի որ լինիցի ամենայն մի հարիւրի հինգ վարձս ընկալցեն կտակակատարքն իմ, եւ յաւելորդ նեղութիւնն իւրեանց զոր կրեն ’ի վերայ բանին իմոյ Տէր հատուցանէ նոցայ վարձս իւրեանց ’ի հանդերձելումն:

Զամենայն զոր ինչ մնացորդք ստացուածք իմ ’ի յերեսս երկրի եթէ տուն, եթէ այգի, ագարակ, անտառ, խաշինք, անասունք, ոսկի, երծաթ, ակունք եւ զամենայն զոր ինչ եւ որքան որ բովանդակի համահաւասար տասն բաժին արասցեն եւ յանձնեսցեն երիս որդաց եւ երկուս դստերաց եւ կնոջ իմոյ, այսմ մտածութեամբ զի Զաքարիայ եւ Մաղաքիայ եւ Աթանէս որդիք իմ, եւ Դշխոյն կինն իմ ըստ իւրաքանչ ոք ֆի ոմն երկու բաժին, եւ ֆի ոմն մին բաժին դստերք իմ, այսպէս բաժանելով ամենեցուն բաժին յանձնեսցեն իւրաքանչիւր տէրանց, եւ նոքայ ստանայցեն իբր ժառանգութիւն իւրեանց վայելեսցեն ըստ կամաց եւ ըստ հաճոյից իւրեանց:

Գոհանամ զքէն Տէր որ ետուր ինձ այս ժամանակս բարի որ հաստատեսցի ’ի միտս իմ յետին կարծիս սրտի իմոյ որում գրեցի ’ի վեր, եւ արարեր զիս արժանի որդիս ծնանիլ վասն քեզ միայնուտ պաշտելոյ, այլ այժմ աղաչեմ զքեզ Տէր քաւեա զմեղս յանցանաց իմոց եւ պահեա հոգի եւ մարմին իմ անարատ մինչեւ ’ի Օր մահուան իմոյ, եւ յետ ելանելոյ աստի ’ի մարմնէ ընկալ զհոգի իմ ’ի տեղի ցանկալի տեսութեան արարչիդ իմոյ, եւ ապա արժանի ’ի աւետաւոր հրամանիդ մտանել ’ի կեանս յաւիտենական ամէն, գրուեցաւ ’ի գեօղն Յեղվարդ յայսմ աւուր 15. սեպտեմբերի ամսոյ յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

Վկայեմք, որ ձեռնադրեաց եւ կնքեաց.

Ստեփան որդոյ Սիմէօնի.

Մարտիրոս որդոյ Փիլիպպոսի.

Սարգիս որդոյ Վրթանէսի.

Օրինակ թղթոյ ազատութեամբ բանալոյ շուկայ մէջ քաղաքաց:

ԳԼՈՒԽ 91.

'Ի Սահակայ Բագրատոնէ ծայրագոյն իշխանէ մայրաքաղաքին յԵրեւանու եղեւ խոստացեալ առ Մկրտիչ որդոյ Վրթանէսի նոյն քաղաքի վաճառականի զի ունի ազատութիւն բանալ շուկայն 'ի փողոցս քաղաքին վաճառելով զամենայն զոր ինչ կերակուր, զգեստ, ոսկի, երծաթ եւ ամենայն հրահայելիք եւ ակունք եւ ակունք եւ ամենայն սերմ եւ բանճար խոտոյ մինչեւ փայտ պահելով զիւրն եւ զինչս իւր 'ի ներքոյ սահմանին հայոց՝ հատուցանելով հարկ եւ մաքս եւ այլն, եւ արգելեցաք նմայ զնելոյ եւ վաճառելոյ դեղօրեայք որ իցէ մահացուցիչ, բայց եթէ դարսան վասն բժշկութեան վաճառիցէ առն որում գտցի 'ի գնողէն երաշխաւոր եւ պահել պարտէ անթերի չափս եւ կշիռս հաւասար ըստ սահմանին հայոց, եւ 'ի գործ վաճառութեան եթէ գնելոյ եւ եթէ վաճառելոյ իրաց զգոյշ լինիցի, զի մի' խաբեսցի արանց միամտից եւ ռամկաց, եւ մի' գնեսցի իր ինչ չափազանց յեժան որում ձգտի 'ի միտ զի կարի գողացեալ, եւ մի վաճառեսցի չափազանց թանկ իբր խաբեցեալ, որ 'ի վերայ այդպիսի պատահմանց դատաստան ընդունելոյ հարկեսցի, գրուեցաւ 'ի դրունս մայրաքաղաքին յԵրեւանու, յայսմ աւուր մարտի ամսի չորս, յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773:

'Ի Սահակ Բագրատոնի.

Օրինակ 'ի հրովարտակի ելեալ 'ի Նախարարէ:

ԳԼՈՒԽ 92.

Կամիւն ամենակարողին Յաստուծոյ Սմբատ նախարարն Հայոց, Թորգոմանց, Ալանաց եւ այլն, հրամայէ քեզ Տեառն Սիմէօն քաջ սպարապետիդ Հայոց պատրաստիլ խումբս եւ կազմել գունդս զօրաց երիս զօրութեամբ անպակաս զէն եւ զասպարիւք համահաւասար այր եւ ձիով, հրացիւք եւ հրացի զինուք երիս զօրագլխիւք երեսուն եւ երիս հազարի զինուորօք, ապա խաղացոյ գունդ մի 'ի երիս զօրութեան առ յաշխարհն Տուրուբերան 'ի դաշտն երկրի 'ի թիկուն Աղթամար ծով, զի կացցեն պատրաստ ընդ դէմ Պարսից, եւ գունդն երկրորդ խաղացոյ առ յարեւմուտ աշխարհն երկրորդ Հայոց 'ի դաշտն Սեվաստ զի կացցեն պատրաստ ընդ դէմ Յունաց, եւ գունդն երրորդ պահելով պատրաստ 'ի դաշտին Արարատեան 'ի ժամանակի հարկաւորութեան, եւ տուր հրաման զօրագլխաց իմոց ընդդիմանալով սաստեսցեն ամենայն զօրութեան պարսոց եւ յունաց, զի ոչ ոք զօրութիւնք զինուորեալ կարի ոտնամուխ առ աշխարհն մեր լինիլ, եւ ով ոք յանդգնեսցի 'ի բերանոյ սրոյ մերոյ մաշեսցի, եւ պահեա դրունս մեր ամուր ընդ դէմ պարսոց եւ յունաց, զի մի' ելցէ կերակուր եւ զէն 'ի մէնջ առ նոցայ, քան զի լրտեսք մեզ պատմեն պատրաստութիւն պարսոց եւ յունաց վասն պատերազմի, թէպէտ դեսպանք մեր կարի սիրով ընկալեալ նոցայ մինչեւ յամսեանն Օգոստոսի 18. այլ հարկաւոր է պատրաստել մեզ որպէս նոքայ եւ այլն:

Եղեւ 'ի դրունս շօշու 'ի ատենի ծածուկ խորհրդարանի, յայսմ աւուր փետրվարի ամսոյ 5. յամի Տեառն փրկչին մերոյ 1765:

Հաստատեցաւ 'ի մէնջ խորհրդակցած

ծածուկ խորհրդարանին.

Կնիք Նախարարին Հայոց.

Մաղաքիայ Գծագիր.

ԳԼՈՒԽ 93.

Ով ոք փոխանորդ 'ի յորում գաւառէ եթէ պաշտօնի 'ի տանուտէրութեան, եթէ իշխանութեան եթէ մեռցի եւ եթէ վասն մեղաց իւրոյ անկանիցէ 'ի պաշտօնէ, փոխանակ նորայ կրկին ընտրեսցի 'ի գաւառէ

իւրմէ այլ ոք, որպէս հատոր տասն եւ չորսերորդ յօրէնս, եւ մտցի 'ի տեղի ննջեցելոյ ժամանակաւ մնացորդի ժամանակին անցելոյն որում տուեալ էր նմայ յառաջնում:

ԳԼՈՒԽ 94.

'Ի միջոց երից ամաց ժամանակի 'ի պատճառէ մեռանելոյ, եւ կամ 'ի պատճառէ մեղաց իւրոյ անկանելոյ նախարարն 'ի պաշտօնէ 'ի տեղի նորայ մտցի երկրորդ խորհրդակիցն, եւ ընկալցի հրովարտակ պաշտօնատարութեան 'ի Տանէ Հայոց ըստ Օրինօք, պատուեսցի մէնջ հայոց պաշտօնատար նախարարութեան որպէս 51երորդ յօրէնս, ելանելով երկրորդ խորհրդակիցն 'ի տեղէ խորհրդակցութենէ առ 'ի պաշտօն նախարարութեան մնալով աթոռ նորայ դատարկ, յայնժամ 'ի վեր ելցեն ամենայն խորհրդակիցք ըստ իւրաքանչիւր աստիճանի մի աստիճան 'ի վեր եւ 'ի տեղի երեքտասան աստիճանին որ մնասցէ դատարկ ընտրեսցի այր ոմն նոր 'ի Տանէն Հայոց եւ հրովարտակաւ մուծցէ առ 'ի տեղի երեք տասաներորդ աստիճանն խորհրդակցութեան զի գտցի լրումն երկոտասան խորհրդականաց միշտ անպակաս:

ԳԼՈՒԽ 95.

'Ի պատճառէ մահու եւ կամ 'ի գործոց ձեռաց մեղաց եթէ անկցի խորհրդակից ոմն 'ի տեղի անկելոյն ելցէ եւ մտցէ նա' որ էր քաշ աստիճանաւ եւ ներքոյ նմա, եւ ամենեքեան ներքոյ անկելոյ առն ելցեն աստիճանէ իւրմէ մի աստիճան 'ի վեր, զի դատարկացի աստիճանն երեք տասան եւ 'ի տեղի դատարկ աստիճանի ընտրեցեալ լինի այր արժանի 'ի Տանէն Հայոց եւ նստցի աթոռ երեք տասաներորդ աստիճան խորհրդակցութեան հրովարտակու 'ի տանէն հայոց, ըստ նմանութեան 94երորդ յօրէնս:

ԳԼՈՒԽ 96.

'Ի պատճառէ լրումն ժամանակէ իջանելով նախարարն 'ի պաշտօն նախարարութենէ կարի մտանել 'ի պաշտօն տանուտէրութեան, եթէ ժողովուրդ գաւառի իւրոյ տացեն նմա թուղթ փոխանորդութեան եւ իջեալ 'ի գահէ նախարարութենէ մի' լիցի նախատինք մէջ ազգին Հայոց, թէ ոչ պատիւ գործոյն նորայ բարեպէս կատարելոյն:

ԳԼՈՒԽ 97.

'Ի վերայ ամենայն պաշտօնատարի հաստատելով վկայիւք կաշառ առութիւն նորայ իսկոյն անկցի նա 'ի պաշտօնէ իւրմէ եւ մի' երբէք մտցի պաշտօն 'ի ժամանակս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ 98.

Ամենայն պաշտօնատար յառաջ քան զստանալ նմայ նամակ պաշտօնի իւրոյ պարտէ երդնուլ 'ի վերայ Սուրբ կտակարանի խոստանալով կալ եւ մնալ նմա հաւատարիմ Տանն Հայոց, որպէս 37երորդ յօրէնս:

ԳԼՈՒԽ 99.

Ամենայն իշխան 'ի վերայ քաղաքաց ընդ երեսս բոլոր վիճակի իւրոյ ունիցի զօրութիւն իբրեւ նախարարութեան:

ԳԼՈՒԽ 100.

Ամենայն իշխանանիստ քաղաքի առաքեսցի 'ի Տանէն Հայոց երկուս զօրագլուխս, եւ մի Օրինագէտս մինն պաշտօնի սպարապետութեան միւսն ասպետութեան եւ Օրինազէն դատաւորութեան:

ԳԼՈՒԽ 101.

Բոլոր աշխարհն ընդ հովանաւորութեան Հայոց 'ի ծայրագոյն մայրաքաղաքէ մինչեւ 'ի կրտսեր գեօղս, եւ 'ի մէնջ վրանաբնակաց հարկ լիցի ամենայն քաղաքի, գեօղի որ իցէ մինչեւ տուն քսան եւ հինգ պահել 'ի միջի իւրեանց վարպետս երկուս, մինն վասն ուսուցանելոյ մանկանց հայոց բառիւ եւ տառիւ ընթերցմունս, եւ մի վասն ուսուցանելոյ տղայոց կրթութիւն արհեստն զինուորութեան, եւ ամենայն արու եւ էգ պարտաւոր լինի ուսանիլ ընթերցմունս, եւ ամենայն արու ընթերցմունս եւ արհեստս զինուորութեան ամենեքեան միակերպ առանց ոչինչ զանազանութեան:

ԳԼՈՒԽ 102.

Կարգ լիցի համրելոյն ժամս աւուրց եւ գիշերոյ մերոյ 'ի մէջ գիշերէն որում ընթանայ արեգակն ընդ ծագիլ առաւօտս յիշեսցի մի ժամ առաւօտեան մինչեւ 'ի կէսօր, որում գտցի արեգակն 'ի վերայ գլխոյ մերոյ եղիցի երկոտասան ժամ աւուրց, եւ 'ի անկանիլն արեգական ընդ արեւ մուտս յետ կէս աւուրց համարեսցի մի ժամ երեկոյեան մինչեւ 'ի մէջ գիշերն յիշեսցի երկոտասան ժամ գիշերոյ:

ԳԼՈՒԽ 103.

Տարեմուտ տարոյն 'ի յամսեան նաւասարդի եղեւ մէնջ Ազգին Հայոց, որում ոչ համեմատի ընդ չորս եղանակի տարւոյն, եւ ո'չ ցուցանէ սկիզբ ո'չ գառնան, ո'չ ամառան, ո'չ աշնան, եւ ո'չ ձմեռան, վասն որոյ անուանք ամսոց հայոց միայն մնասցէ վասն հաստատութեան բազում գրեանց մէջ հայոց, այլ տարեմուտն մեր սկսանի յունվարի վեց Օր տօնի ծննդեան եւ յայտնութեան փրկչին մերոյ Քրիստոսի, եւ անուանք ամսոց հայոց յիշեսցի ընդ գործս:

ԳԼՈՒԽ 104.

Յատկապէս աւուրս միոյ շաբաթոց բաժանումն լիցի այսպէս.

2. շաբաթ աւուր նախարարն խորհրդակցօք գտցի 'ի յապարանն ծածուկ խորհրդարանի:

3. շաբաթ աւուրն դատաւորք 'ի յապարանն դատաստանի:

4. շաբաթի աւուրն ըստ իւրաքանչ գործս իւրոյ:

5. շաբաթի աւուրն Տանուտէրք գտցին 'ի Տանն Հայոց:

6. ուրբաթի աւուրն ամենեքեանն ընդ գործս իւր:

7. շաբաթի աւուրն մասնաւոր իշխանք ընդ մանր դատողութիւն ի' վերայ աշխարհի:

8. Կիրակի աւուրն հանգիստ եւ միտս առ Տեառն Արարիչն Աստուած:

ԳԼՈՒԽ 105.

Ծանդրութիւն կշռոց մերոց 'ի վերայ Աշխարհին Հայոց այսպէս լիցի.

Կրտսերն մի ցորեանի ծանդրութիւն:

Ամենայն չորս ցորեան մի ղրէթ որում աշխարհ ճանաչէ ղրաթն:

24 ղրէթն մի դրամ, եւ եթէ երծաթ,

եթէ պղինձ պարտէ ունիլ

ծանդրութիւն 24 ղրէթի:

60 ղրէթն մին դահեկան երծաթի եւ կամ ոսկոյ:

124 ղրէթն մին տէրունի երծաթէ եւ կամ ոսկոյ:

24000 ղրէթն մին կշիռ:

480000 ղրէթն մի բեռն:

Այսպէս կշռեսցի ծանդրութիւն ամենայն կշռելոյ իրաց:

ԳԼՈՒԽ 106.

Չափս երկրի ամենայն իրաց համարեսցի այսպէս.

նախ 1. մատնաչափ որ է 'ի լայնութիւն միոյ միջամատի:

2. մատնաչափն անուանի. մի յօդ

4. մատն եեեեեեե մի ուղուկ

8. մատն եեեեեեեե մի քիլ

16. մատն եեեեեե մի ոտնաչափ

40. մատն եեեեեեե մի քայլ

80. մատն եեեեեեե մի գիրկ

125. քայլն եեեե մի ասպարէզ

1000. քայլն եեեե մի մղոն

3000. քայլն եեեեե մի ֆարսաղ

Այսպէս չափեսցի երկիր եւ զամենայն զոր ինչ չափելոյ:

ԳԼՈՒԽ 107.

Բոլոր երկիրն հայոց քլաւ քայլիւ եւ ասպարիզաւ չափեսցի, եւ ըստ սահմանի նախնեաց լայնատարածութիւն ամենայն աշխարհաց բլրիւ, գետօրէիւք, աղբերամբ եւ լճակաւ կարգադրեսցի սահմանս զի մի' ոք իշխեսցի աւելացուցանել, կամ պակասեցուցանել քիլ մի տեղի:

ԳԼՈՒԽ 108.

Ով ոք 'ի պաշտօնէից առանց պատճառոյ տկարութեան ծուլասցի մտանել 'ի հարկս իւր, հատուցանէ տուգանս հինգ դահեկան երծաթ մինչեւ երիս անգամ եթէ լրբութեամբ հատուցանէ եւ ոչ կարգադրի, անձն իւր մտցի 'ի բանտ 12 աւուր ժամանակաւ:

ԳԼՈՒԽ 109.

Ամենայն երկիրն Հայոց դաշտ եւ բլուրք, լերինք եւ անտառք եթէ տէրունի եւ եթէ սեպհական ժառանգութիւն ամենայն իշխանաց եւ ժողովրդոց եւ եկեղեցականաց ամենայն տարուջ եւ 'ի պատեհ ժամանակի վարեսցի, ցանեսցէ եւ պարարտեցուսցէ առ 'ի առատութիւն:

ԳԼՈՒԽ 110.

Ով ոք որ անցուցանէ ժամանակս վարելոյ արտս տնկելով այգիս, ամայի թողուլով երկիրս իւր՝ 'ի կողմանէ տէրունական վարեսցի յերկիրն նորա, եթէ Տէր ազարակին ո'չ ելցէ' առ 'ի խնդիր ազարակին իւրոյ մինչեւ երիս ամս ազարակն այն 'ի տունս հայոց գրեսցի:

ԳԼՈՒԽ 111.

Ամենայն դեկտեմբերի ամսոյ ամենայն իշխան 'ի վերայ Աշխարհի Հայոց համարն աշխարհագրութեան բնութեանս մարդոյ արուի եւ էգի երիս աստիճանաւ տղայ, երիտասարդ եւ ալեւորի ձեռնադրեալ իւրով ձեռամբ ընծայեսցէ առ տունն հայոց, որ մատուսցի առաջի ատենի տանուտերաց յունվարի մի եւ մտցէ համարն աշխարհին իւրեանց:

ԳԼՈՒԽ 112.

Ամենայն ոք որ ինչս իւր յափշտակեսցի աւազակաց եւ ինքն ջատագովելով ո'չ կարասցէ զերծուցանել իրս իւր, եւ եթէ գուցէ զի վիրաւորեսցէ զինքն 'ի աւազակէն կամ գողէն այրն այն համարն կորուցեալ ընչին իւրոյ, մատուսցէ առ իշխանն նոյն աշխարհին եւ երդմնեսցէ 'ի վերայ Սրբոյ կտակարանին զի հաւաստի կորուսեալ իրն առն յայնմիկ իբր այսքան իշխան աշխարհին յայնմիկ

պարտաւորէ հատուցանել նմայ արժանաւորութեան կորուսեալ իրաց եւ յինքն որոնելով գտցի գող եւ կամ աւազակն ընկալցի հատուցումն իւր ’ի նմանէ եւ անձն նորա դատեսցի ընդ Օրինօք:

ԳԼՈՒԽ 113.

Ամենայն ոք առանց հարկաւորութեան արժանոյ մի' ելցէ ’ի տանէ եւ ’ի բնակութենէ իւրմէ յետ ինն ժամ երեկոյեան առ այլ, եթէ հարկն պարտաւորեսցի նմա ելանել, պարտէ նմա ունիլ ընդ իւր լոյս ճրագի, եթէ ո'չ ըմբռնեսցի գիշերապահն նմա եւ դիցէ ’ի բանտի մինչեւ ցառաւօտ, եւ քննեսցի այրն եթէ գտցի անմեղ արձակեսցի նոյն աւուր, եթէ գտցի մեղաւոր պատժեսցի ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 114.

Ամենայն եկեղեցւոյ կազմել գտանի երկու սեղանս վասն մատուցման սրբոյ պատարագի, մի ’ի սեղանոյ կատարեսցի պատարագն ժամ արշաւալոյսի որում ընդունեսցեն Օրհնութիւն ծերք, պառաւունք եւ եւ ալեւորք, եւ ’ի վերայ միոյ սեղանոյ մատուսցի պատարագ եօթն ժամ առաւօտու, որում ընդունեսցեն զօրհնութիւն երիտասարդք կանայք եւ կուսանք, մի' ոք տիկին, եւ կամ աղախինք, եւ հասարակ դստերք ժողովրդոց եւ մանկունք մի' ելցէ ’ի տանէ եւ բնակութենէ իւրմէ առաջ քան ծագելոյ արեգական, բաց ’ի տօնից սրբոց ընտանեօք միաբան:

ԳԼՈՒԽ 115.

Ով ոք գտցի յանկարծակի մէջ տան եւ բնակութեան իւրոյ ’ի գիշերի յետ ինն ժամ երեկոյեան ոմն սուսերօք վառեալ, կարող է սպանանել նմա, եւ արիւն նորայ ’ի ձեռանէ սպանողի մի' խնդրեսցի:

ԳԼՈՒԽ 116.

Ամենայն ոք որ կամեսցի հիմն տան արկանել մէջ քաղաքի ընկալցի սահման երկրաչափէն քաղաքի:

ԳԼՈՒԽ 117.

Ամենայն տեղիս ’ի վերայ Աշխարհին Հայոց թփանկ շինողն շինեսցի մեծութեամբ լայնութեամբ եւ ամենայն կերպարանօք յամահաւասար որ չախմախ գուլի եւ սմբէն մինն միւսին Օգնական լինի:

ԳԼՈՒԽ 118.

Ամենայն արու որ հասանի ’ի հասակս երկոտասան ամաց հարկ ’ի վերայ ծնողաց լիցի առաջին ժառանգութենէ ’ի ստացուածքէն իւրեանց գնեսցեն թփանկ մի եւ սուսեր մի տացեն տղային եւ հարկիցեն նմա մտանել արհեստս զինուորի:

ԳԼՈՒԽ 119.

Ամենայն որ ցուցանէ առաջի ատենի տանուտերաց արհեստս նորագոյթ եւ շահաւէտութեան վասն հասարակաց բարութեան ’ի վերայ Աշխարհին Հայոց գտցի պարգեւս ըստ արժանաւորութեան բանին իւրոյ:

ԳԼՈՒԽ 120.

Ամենայն ոք որ հոչակեսցի եւ հաստատեսցի առաջի ատենի տանուտերաց գաղտնի խորհուրդ եւ գործ չարութեան որում կարի վնասել հասարակ ժողովրդոց եւ Տանն Հայոց պարգեւս գտցէ, այլ եթէ ստութեամբ եւ նախանձու մատնիցէ այր արդար՝ պատժեսցի:

ԳԼՈՒԽ 121.

Ամենայն մարդ կարող է վաճառել ստացուածս իւր բաց ’ի բնութիւն մարդկան:

ԳԼՈՒԽ 122.

Կատարելապէս վաճառելն, պարտ է գնողն ստանասցէ վաճառողէն թուղթ ձեռնադրեալ երկու վկայիւք՝ եթէ ոչ անկատար լիցի:

ԳԼՈՒԽ 123.

Ամենայն թուղթ ում ոք որ իցէ ձեռնադրեալ եթէ վասն վաճառանաց եթէ դաշնադրութեան եւ այլն՝ եթէ գտցի ընդ դէմ Օրինաց հայոց եւ կամ ընդ դէմ բնական բնութեան մարդոյ անարժան լիցի:

ԳԼՈՒԽ 124.

Վարձս դրամոյ առանց վտանգի շահեցուցանելոյ մի' լիցի աւելի շահ քան թէ 'ի մի հարիւրին տարէն վեց:

ԳԼՈՒԽ 125.

Աւելի քան թէ մի հարիւրին տարէն վեց, վարձ 'ի վերայ դրամոց գտացողն երկու պատկեայ շահ յետս դարձուսցէ 'ի նմայ յորմէ ստացաւ:

ԳԼՈՒԽ 126.

Դրամն միայն քսան եւ չորս ղրէթ ծանդրութեամբ կարէ ոսկէ եւ արծաթէ եւ 'ի պղնձէ, կամ 'ի կապարէ լինիլ այլ դահեկան, եւ տէրունին պիտոյ է երծաթէ եւ ոսկոյ միայն լինիլ, եւ տիպ 'ի վերայ նոցայ նշան տէրունական սուրբ խաչի թուաւ ժամանակի տպման, եւ միւս յերեսն գրեցեալ բարի կացութիւն հայոց եւ անուն նոյն տեղի որում տպեսցի:

ԳԼՈՒԽ 127.

Օգնութիւն 'ի Տանէն Հայոց լիցի 'ի վերայ ամենայն արհեստաւորի յատկապէս փիլիսոփայութեան, աստղաբաշխութեան, բժշկութեան, երաժշտութեան, ճարտասանութեան եւ այլն:

ԳԼՈՒԽ 128.

Ամենայն Օտարական եթէ հաւատացեալ 'ի Քրիստոս եթէ անօրէն ազատապէս կարէ մտանել Աշխարհս Հայոց կալ եւ բնակիլ ընդ հովանաւորութեան Տանն Հայոց ազատապէս պաշտել զԱստուածս իւր, ըստ սովորութեան իւրոյ հատուցանելով հարկ եւ մաքս եւ պատիւս, եւ ընդունիլ դատաստան ըստ Օրինօք հայոց 'ի վերայ գործոց ձեռաց իւրոց, եւ կրկին եթէ կամի ելանել ստացուածօք իւրօք առ աշխարհն իւր որում ժամանակի որ ինքն կամեսցի հատուցանել պարտէ տասանորդ ստացուածոց իւրոց, եւ մնացորդն ազատ լինի տանելոյ ուր որ ինքն կամեսցի:

ԳԼՈՒԽ 129.

Մի' ոք իշխեսցի նախատանօք եւ կամ հայհոյութեամբ բանալ բերանս իւր ընդ դէմ պատուոյ եւ պաշտելոյ առն ումեք ով որ իցէ:

ԳԼՈՒԽ 130.

Ստացուածք անձամբ աշխատեցեալ ամենայն արանց յետ մահուան իւրոյ եթէ գտանիցի կտակն ննջեցելոյն կատարումն առցէ 'ի վերայ բանին նորայ ըստ գրեցելոյ կտակին, եթէ ո'չ ստացուածքն ննջեցելոյն բաժանեսցի 'ի վերայ մնացորդաց իւրոց:

Նախ ծախ թաղման ննջեցելոյն.

Երկրորդ վարձ բնակութեան տանն եւ վարձ սպասաւորաց:

Երրորդ ծախ պաշտօնէի, ըստ արժանոյ.

Չորրորդ կէսն 'ի բոլոր ստացուածոց կնոջս եւ կամ առն եթէ ո'չ ունեսցեն զաւակ.

Հինգերորդ մի 'ի երից բաժնոյ կնոջն եւ կամ առն եթէ ունիցին զաւակ.

Վեցերորդ երկու 'ի երիս բաժնոյն որդոյ եւ մին դստերն զի համարեսցի երկու որդին եւ մի դուստրն.

Եօթներորդ եթէ ո'չ ունիցի զորդիք եւ ո'չ դուստր դարձցի առ ծնողս ննջեցելոյն.

Ութներորդ եթէ ո'չ ունիցի ծնող դարձցի առ եղբայրս եւ քեռն իւր.

Իններորդ եթէ ո'չ ունիցի դարձցի առ 'ի սերունդսն եղբարց:

ԳԼՈՒԽ 131.

Ամենայն երիտասարդ որ խօսի ընդ կուսի առ 'ի ամուսնութիւն պարտէ ընդունելութիւն երկուց կողմէ ծնողաց, եթէ ո'չ ունի ծնողս 'ի որ ոք մերձաւոր ընտանեաց, եւ թուղթ հրամանի իշխանի տեղոյն որում բնակին ամուսնացողքն, յայնժամ քահանայէն Օրհնեսցէ առ 'ի ամուսնութիւն:

ԳԼՈՒԽ 132.

Ամենայն այր եւ կին ամուսնացեալք վախճանելով մինն եթէ գտցի 'ի մէջ սոցա թուղթ դաշնադրութեան հարսանեաց ստացուածք ննջեցելոյն կատարումն առցէ ըստ դաշնադրութեան նոցա, եթէ ո'չ ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 133.

Ամենայն գեօղ եւ գաւառ որում գտցի բնակողք մինչեւ երկու հազար տուն 'ի մէնջ, եւ կամ 'ի միոյ կողմ գաւառին 'ի անառիկ տեղիս շրժապատեսցի ամուր պարսպօք, եւ 'ի միջի շտեմարանօք եւ սենեկօք այնքան մեծութեամբ որ գտցի բնակութիւն եւ տեղի ապահովութեան երկու հազար տանց եւ խաշանց եւ ապրանաց եւ պաշարաց ամաց միոյ:

ԳԼՈՒԽ 134.

Իշխան 'ի վերայ ամենայն Աշխարհին Հայոց պարտաւոր լիցի 'ի ժամանակի աշնան եւ հնձելոյ ցորենոյ պարտաւորեսցէ ժողովրդեան բնակողաց 'ի յերեսս ամենայն գաւառաց իշխանութեան իւրոյ, զի 'ի տանէ եւ 'ի նոր ցորնէ իւրմէ ըստ իւրաքանչ ոք հարիւր կշիռ ցորեան մուծանիցէ 'ի շտեմարանս ամրոցի գաւառին իւրոյ եւ 'ի հին ցորենէ հանիցեն փոխարէն ցորեան անցելոյ տարուն առ տունն իւրեանց:

ԳԼՈՒԽ 135.

Որում տեղի եւ որում գաւառի 'ի յերեսս Երկրին Հայոց գուցէ ժանտ, մորեխ, կարկուտ եւ այլ զոր ինչ վնասակար, որում աւերեսցէ սերմանեցեալս եւ ժողովուրդ մնասցէ թափոր 'ի կերակրոց իւրաքանչիւր այսպիսի ոքս գտցի՝ 'ի շտեմարանէն ամրոցէ գաւառի իւրոյ 25 կշիռ ցորեան վասն կերակրոյ իւրոյ եւ 25 կշիռ ցորեան վասն սերմանելոյ իւրոյ առանց գնոյ եւ առանց հատուցանելոյ փոխարէն, բայց 'ի շնորհաց տանէն հայոց.

ԳԼՈՒԽ 136.

Ամենայն իշխան 'ի վերայ Աշխարհին Հայոց պարտ է պատրաստել մէջ ամենայն ամրոցաց 'ի ներքոյ իշխանութեան իւրոյ ծախիւք Տանն Հայոց չափաւոր վառօղս, հացս, փայտս, վառելիքս, աղս եւ տիկ բառնալոյ ջրոյ, եւ կաշի վասն տրեխի, եւ կացին վասն հատանելոյ փայտի եւ բահս, եւ ամենայն չորս եղանակս տարոյն չորս անգամ առաքեսցէ վերատեսուչս այրս հաւատարիմս զի ականատեսութեամբ տեսցէ եւ պակասութիւնն եւ լրումն բանին երդմամբ բացատրեսցի 'ի ատենի յիշխանին զի պակասութիւնն լցուսցէ:

ԳԼՈՒԽ 137.

Որում տեղի եւ որում ժամանակի յերեսս Երկրին Հայոց եթէ 'ի ժամանակս խաղաղութեան, եւ եթէ պատերազմի ով ոք թշնամի որ յարիցէ 'ի վերայ մեր որում ստանայցէ աւար, եւ կամ կողոպտիցէ, եթէ գաւառն եւ կամ աշխարհն այն ազատապէս ջատագովելով անկանելով 'ի բերանոյ սրոյ մինչեւ եօթն այրս եւ ոչ կարացէ զերծուցանել զինչս իւրեանց եւ թշնամին աւարս յարիցէ, կորուստն ընչից գաւառին յայնմիկ հատուցէ Տունն Հայոց առ կորուսանողն իբր հատուցեալ պարտս իւր:

ԳԼՈՒԽ 138.

Ամենայն ոք բնակեալ 'ի յերեսս երկրին եւ հովանաւորութեամբ Տանն Հայոց եթէ անկանիցի ձեռս թշնամեաց գերի՝ Տունն Հայոց պարտաւոր է փրկել նմայ եւ դարձուցանել 'ի տուն, եւ 'ի բնակութիւնս իւր:

ԳԼՈՒԽ 139.

Ամենայն արհեստաւոր թղթաշինութեան պարտ է յօրինել չափաւոր թուղթ եւ գերազանց եւ պատուականագոյն քան զամենայն թուղթ, նշանաւ 'ի մէջ թղթոյն գառնմի դրօշակաւ եւ թուաւ տարոյն, միայն վասն Տանն Հայոց այնքան որ հարկեսցի Տանն եւ իշխանութեան Հայոց ստանալով զին թղթին իւրոյ:

ԳԼՈՒԽ 140.

Ամենայն թուղթ պարտուց, դաշանաց, վաճառելոց պաշտօնատարութեանց հրովարտակ իշխանութեանց եւ այլն, պարտէ գրել 'ի վերայ թղթոյն տէրունւոյ որում ունի նշան գառին:

ԳԼՈՒԽ 141.

Ամենայն ոք 'ի յերեսս Երկրին Հայոց որ ունի գանգատս պարտ է գրել նմայ 'ի վերայ թղթոյ տէրունւոյ ձեռամբն ատենաբանի միոյ, եւ տացէ 'ի տունն դատաստանին աշխարհին իւրոյ, եւ դատախազն պարտ է պատասխանել նմայ, գրեցեալ 'ի վերայ թղթոյ տէրունւոյ. եւ 'ի յամէն կողմանց երկուս անգամս վիճաբանութիւնս, յետ այնորիկ ընդունեսցի վճիռս իւր 'ի ատենէ դատաստանի 'ի վերայ թղթոյ տէրունւոյ:

ԳԼՈՒԽ 142.

Ամենայն վճռոյ հատեցեալ 'ի յերեսս երկրին հայոց 'ի տեղիս՝ տեղիս իշխանութենէ դատաստանի ընդ հովանաւորութեամբ Տանն Հայոց, եթէ ոչ բաւականացի գանգատող եւ կամ դատախազ 'ի վճռոյն հատեալ 'ի վերայ իւրեանց, ազատապէս կարէ խնդիրս 'ի տանէն դատաստանէն առնել զի մուծցէ Օրինակն գանգատի եւ պատասխանոյ դատախազին ընդ յապարանս դատաւորաց Հայոց, եւ անտի գտցի վճիռ եւ դատաստան իշխանաց Աշխարհին Հայոց, եւ ամենայն տուն դատաստանաց պարտեն տալ նոցա ազատութիւն ըստ խնդրուածոց նոցա եւ յապա զոր ինչ վճիռ 'ի յապարանէն եւ դատաւորաց Հայոց ելցէ, նայ լիցի յետին վճիռ եւ նովաւ բաւականացեն:

ԳԼՈՒԽ 143.

Ամենայն ոք բնակեալք 'ի ներքոյ հովանաւորութեան Հայոց՝ ազատապէս կարող է գանգատել ընդդէմ ամենայն արանց, եթէ նախարարին տանուտէրի խորհրդակցի դատաւորի, իշխանի եւ կամ հասարակ ժողովրդոց, դատախազն պարտէ պատասխանել գանգատողին, եւ ընդունիլ վճիռս դատաստանի, 'ի վերայ իւր ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 144.

Ամենայն ոք որում պատասխանէ ընդ դէմ գանգատողին պարտ է երդմնուլ 'ի վերայ բանին գրեցելոյ իւրոյ, այսինքն թէ պատասխանն որ գրեաց արդար է:

ԳԼՈՒԽ 145.

Ամենայն ոք որում իցէ 'ի նմանէ գանգատեցեալ պարտ է հանդիմանողն տալ երաշխաւոր դատաստանին այր մի թղթաւ ձեռնադրեալ երաշխաւորութեան այսմ մտածութեամբ զի դատախազն եթէ փախիցէ երաշխաւորն գտցի 'ի տեղի նորայ, եթէ ո՛չ տացէ երաշխաւոր հանդիմանողն մտցի 'ի բանտ մինչ ելցէ վճիռ 'ի վերայ բանին նորա:

ԳԼՈՒԽ 146.

Ամենայն դատախազ եթէ մտցի 'ի բանտ վասն պարտուց, գանգատողն պարտէ հատուցանել վասն կերակրոյ եւ հարկաւորութեան նորա ամենայն աւուր մին դրամ երծաթոյ:

ԳԼՈՒԽ 147.

Որում բանտ արկեալ վասն պարտուց եթէ ո՛չ գտցի ամենայն աւուր մի դրամ երծաթոյ մինչեւ երիս աւուրս՝ բանտ արկեալն ազատ լիցի 'ի պարտուց, եւ 'ի հրամանի վճռոյն ելցէ ազատապէս 'ի բանտէն առ ուր եւ որ ինքն կամիցի, գանգատողն կորուսցէ ինչս իւր:

ԳԼՈՒԽ 148.

Բանտ պարտուց եղիցի բնակութիւն յստակ որում ոչ բերէ վնաս առողջութեան բանտ արկեալ անձանց:

ԳԼՈՒԽ 149.

Բանտն քրէական ըստ արժանի գործոյն մեղաւորաց:

ԳԼՈՒԽ 150.

Ամենայն չորս եղանակս տարւոյն եղիցի դատաստան քրէական մեղաց ընդ ամենայն իշխանութիւնս Հայոց սրբեսցի բանտն վճռաւ ըստ Օրինաց:

ԳԼՈՒԽ 151.

Ամենայն գանգատող եւ դատախազ որում գտցի անպարտ, եւ կամ անիրաւութեամբ եւ նենգութեամբ գանգատեցեալ եւ ընդիմացեալ պարտէ մեղաւորն հատուցանել ծախն երկուց կողմից լեալ 'ի դրունս դատաստանի եւ վնասն կորուսանելոյ ժամանակին արդարոյն:

ԳԼՈՒԽ 152.

Ամենայն ոք 'ի ձեռագործ իրաց Աշխարհէն Հայոց ազատապէս կարէ հանիլ առ 'ի տարր յաշխարհ վասն վաճառականութեան, բայց զէն եւ գործիք ձեռաց զամենայն զոր ինչ ոսկոյ եւ երծաթոյ եւ գործիք պատերազմի արգելեալ լիցի:

ԳԼՈՒԽ 153.

Ամենայն որ ոք մուծանէ ոսկի եւ երծաթ 'ի տարր յաշխարհէ առ Աշխարհն Հայոց, գտցի շնորհս 'ի Տանէն Հայոց եւ ազատ 'ի հարկից եւ մաքսից:

ԳԼՈՒԽ 154.

Ամենայն ոք որ հանող ոսկոյ եւ երծաթոյ 'ի Աշխարհէն Հայոց թէ տացէ երաշխաւոր, զի փոխանակ հանելոյ աշխարհէն մին հարիւր դահեկանս կրկին մուծանէ մին հարիւր եւ երեսուն դահեկանս ժամանակաւ մինչ 'ի երկուս ամս գտցէ արձակութիւն հանելոյ որքան որ կարող գտանի:

ԳԼՈՒԽ 155.

Մի' ոք իշխանաց աշխարհի եւ ժողովրդենէ համարձակեսցի խառնել զինքն ընդ խորհուրդս, կամ գործս եկեղեցականաց, բայց պաշտօնն երից փոխանութեան:

ԳԼՈՒԽ 156.

Մի' ոք եկեղեցականք համարձակիցէ մուծանել զինքն ընդ խորհուրդ կամ գործս իշխանութեան եւ կամ աշխարհականաց, բայց փոխանորդ էկլէզիաստիկաց 'ի տանուտէրութեան:

ԳԼՈՒԽ 157.

Ամենայն աշխարհի 'ի յերեսս Երկրին Հայոց ծախիւք Տանէն Հայոց շինեսցի տուն զարգացուցանելոյ մանկունքն անօրէնութեամբ ծնեալ կաթնատուաւ կերակրօք հանդերձիւ մինչեւ հասակս եօթն ամ:

ԳԼՈՒԽ 158.

Ամենայն աշխարհի 'ի երեսս երկրին ծախիւք Տանէն Հայոց շինեսցի դպրատունս 'ի միում աշխարհի երկուս, մի ուստերաց եւ մի դստերաց անօրէնութեամբ ծնեցելոց զի ուսուսցի ընթեռնուլ տառիւ եւ բառիւ հայոց մինչեւ երկոտասան ամս հասակի նոցայ եւ յապա թողցի ազատ:

ԳԼՈՒԽ 159.

Ամենայն ոք որ գտցի պատանի եւ դստրիկ 'ի վեր քան թէ երկոտասան ամօք որբ եւ այրի պարապ ընդ գործս աղաւաշի, հարկ 'ի վերայ նորայ լիցի զի ըմբռնեցեալ մուծանէ ընդ իշխանն աշխարհին յայնմիկ եւ իշխանն դիցէ նմայ 'ի վերայ գործի արհեստի:

ԳԼՈՒԽ 160.

Ամենայն ոք զոր ինչ ընդունեսցի կամ խոստանասցէ նմա կալ եւ մնալ 'ի վերայ ընդունելութեան եւ խոստման իւրոյ եւ հատուցանել խոստացեալս իբր պարտականի:

ԳԼՈՒԽ 161.

Ամենայն կաղ եւ կուր, ծեր եւ պառաւ, աղքատ որ ոչ ունիցի ուստերս եւ դստերս մխիթարեսցի 'ի Տանէն Հայոց, լցուցանելով կարիքս անձին իւրոյ չափաւորապէս:

ԳԼՈՒԽ 162.

Մէնջ ամենայն հայոց պատրաստ գտցի տեղի դեղօրէից վասն բժշկութեան տկարաց, աղքատաց ծախիւք Տանն Հայոց բժշկաւ հանդերձ եւ ձրի բաշխեսցի 'ի վերայ ամենայն կարօտելոց առանց վարձու:

ԳԼՈՒԽ 163.

'Ի միջի ամենայն պտղոց եւ բուսոց ուտելեաց 'ի բուսմանէ Երկրէն Հայոց, միմիայն արհամարեալ լիցի պտուղն անուանեալն բակլայ, եւ բուսն անուանեալն սիբեղ եւ կոտեմ, մի' ոք վարեսցի այսոքիկ 'ի արտի իւրում, զի յոյժ վնասակար է բնութեան մարդոյ:

ԳԼՈՒԽ 164.

’Ի յերեսս երկրին եւ ’ի Տանն ամենայն իշխանութեան Հայոց զօրութիւն զինուորաց մնասցէ ’ի ձեռին զօրագլխոյն աշխարհին յայնմիկ հնազանդ հրամանի իշխանին աշխարհին յայնմիկ ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 165.

Ամենայն պարտապան որ ’ի պարտոյ ոսկոյ եւ երծաթոյ, կամ զինոյ, ցորենոյ որ ոչ իցէ, պարտ քրէական զի մտեալ լինիցի ’ի բանտ, եթէ գուցէ գտանիցէ երաշխաւոր ժամանակաւոր վասն անձին իւրոյ եւ թղթաւ ձեռնադրեցեալ երաշխաւորին տացէ բանտապանին իւրոյ՝ կարող է ելանել ’ի բանտէն ամենայն երեկոյեան շաբաթու որում լուսանայ միաշաբաթն ազատապէս մտանել տուն եւ բնակութիւնս իւր եւ բոլոր Օրն կիրակէի մտանել տուն Տեառն Աստուծոյ եւ շրջել ’ի քաղաքի եւ նոյն Օրն ժամ երեկոյեան դառնալ անդրէն ’ի բանտ:

ԳԼՈՒԽ 166.

Ամենայն բանտ արկեալ պարտու ոսկոյ եւ արծաթոյ բայց ’ի քրէական մեղաց եթէ գուցէ զի փախիցէ ’ի բանտէ, իշխան աշխարհին յայնմիկ պարտական լիցի հատուցանել պարտն նորայ որում ունի ’ի բանտ արկանողին:

ԳԼՈՒԽ 167.

Ամենայն հարկ մաքս եւ բաժին տարեկան բերմանէ Երկրին Հայոց թէ ’ի պտղոց, թէ ’ի բուսոց, թէ անասնոց, սողնոց եւ թռչնոց հանեալ լինի բաժին Տանն Հայոց յամսեանն սեպտեմբերի, կէսն բերմունք աշխարհին եւ կէսն ըստ արժողութեան տարւոյն, ոսկի եւ երծաթ եւ բերմունք աշխարհին բոլորն հատուցում լինի յամսեանն սեպտեմբերի առ ’ի շտամարանս տէրունական ’ի նոյն աշխարհին, այլ ոսկի եւ երծաթն երից անգամ եւ երիս ժամանակաւ, մի՝ ’ի յամսեանն հոկտեմբերի, մի ’ի յամսեանն յունվարի վերջին հատուցումն ’ի յամսեանն մայիսի:

ԳԼՈՒԽ 168.

Բաժինն Տանն Հայոց ’ի բերմանէ աշխարհէն Հայաստանեաց համարեսցի բանիւ համարոյն գաւառապետաց մի քննեսցի եւ մանրամասնաբար որոնեսցէ, եթէ ոչ ստասցէ քաղցրութեամբ ամենայն գաւառէ ըստ համեմատութեամբ համարին գաւառապետին իւրոյ:

ԳԼՈՒԽ 169.

Որում աշխարհի եւ ’ի գաւառի գտցի գաւառապետ դաւաճան որում զրկեալ լիցի Տանն Հայոց, ’ի բերմանէ պտղոյն աշխարհին իւրոյ անկցի գաւառապետութենէ, եւ ազարակն նորա եօթն ամս մանրամասնաբար քննութեամբ հանեսցի բաժին Տանն Հայոց եւ ոչ ներեսցի նմայ շիւղ մի յարթի:

ԳԼՈՒԽ 170.

Ամենայն իշխան ծայրագոյն իշխանութենէ մինչեւ մասնաւոր իշխանութիւնք ով ոք որ իցէ եթէ գտցի կաշառառութիւն նա իջցէ փառաց եւ իշխանութենէ իւրմէ, եւ հատուսցէ կաշառն առ առն յորմէ ընկալաւ, եւ այնքան եւս վասն Տանն ողորմութեան Հայոց, եւ այրն այն նախատեցեալ լինի առաջի ամենեցոյն եւ անկցի իշխանութենէ իսպառ:

ԳԼՈՒԽ 171.

Ամենայն մեղաւոր քրէական որում ելանէ վճիռ մահու ’ի վերայ նորա եթէ գտցի թողութիւն ’ի նախարարէ Հայոց, կեանք նորա թողեալ լինի նմայ այլ ո'չ գտցէ պատիւ եւ ոչ պաշտօն ոչ ոք պաշտօնատարութեան:

ԳԼՈՒԽ 172.

Ամենայն իշխանք եթէ ծայրագոյն, եթէ մասնաւոր, եթէ 'ի կարգէ զինուորութեան, եւ կամ կառավարութեան ամենայն կերպիւ բարիս ազատապէս գործել կարէ, այլ չար ոչ մի, եւ եթէ բարեգործութիւնք ուրեմն պատուեցեալ լինի 'ի մէնջ, եւ հատուցումն բարեաց գործոց իւրեանց ըստ հաւատոց մերոց ստանասցեն 'ի հանդերձելումն, եւ 'ի գործս անօրէնութեան գործողն դատաստան ընդունեսցեն ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 173.

Արհեստաւոր մինչ ո'չ գտցի թուղթ վկայական ձեռնադրեալ 'ի վարպետէ իւրմէ, որում խոստովանէ զի սա' կատարեալ է մի' յիշխեսցի ըստ անձին ընթանալ 'ի գործ արհեստին իւրոյ:

ԳԼՈՒԽ 174.

Ամենայն ոք որ ստանայցէ սպասաւոր եւ կամ աղախին վարձու պարտ է ձեռնադրեալ լինիցի դաշնադրութիւն պաշտօնին եւ վարձուն եւ ժամանակ սպասաւորութեան:

ԳԼՈՒԽ 175.

Ո'չ ոք տէր եւ կամ տիկին վասն մեղաց սպասաւորի եւ աղախնոյ իւրոյ մի' կարողասցի հարկանել զան յաւելի քան թէ երկոտասան դալար փայտիւ 'ի տեղի փափուկ մսի, որ ոսկր նորայ մի' փշրեսցի եւ եթէ սպասաւոր կամ աղախին երկոտասան զանիւն մի' գտցի կառավարեալ տացի 'ի ձեռն իշխանին տեղի բնակութեան իւրեանց, զի իշխան այնմիկ պատժեսցէ ըստ արժանեաց մեղաց նոցայ:

ԳԼՈՒԽ 176.

Ամենայն սպասաւոր եւ կամ աղախին եթէ գուցէ զի մի' գտցի 'ի տանէն Տեառնէ եւ կամ տիկնոջէ իւրմէ բաւական կերակուր, հանդերձ, ռոճիկ ըստ համեմատութեան դաշնադրութեան իւրոյ մինչ երիս ամիսս ազատ լինի 'ի դաշնադրութեան սպասաւորութենէ իւրմէ կարող է առաջ քան զլրումն ժամանակի խոստման իւրոց ելանել ուր եւ ինքն կամի:

ԳԼՈՒԽ 177.

Մէջ ամենայն աշխարհին 'ի յերեսս Երկրին Հայոց լինիցի տուն ողորմութեան զի հովանաւորեսցէ կաղ եւ կուրս եւ ամենայն անկարս:

ԳԼՈՒԽ 178.

Ամենայն ոք որ կամեսցի տալ ողորմութիւն եթէ տնանկի, եթէ որբի եւ տկարաց՝ տացէ առ տանն ողորմութեան:

ԳԼՈՒԽ 179.

Ամենայն տուն ողորմութեան կառավարեսցի ձեռամբ եօթն հօր որում ասի հայրք որբոց, եւ ստացուածք տանս շահեցուցանեն վարձիւ 'ի վերայ արանց երաշխաւորաւ, եւ հայրք այսոքիկ ամենայն երիս տարւոջ մի անգամ նորոգեսցի համեմատելով ստացուածքն:

ԳԼՈՒԽ 180.

Ով ոք որ ծախիւք իւրովք, եւ կամ ժողովածու դրամօք կամեսցի սեղան եւ արասցէ հրաւիրում հանդիսի, նա' ինքն բազմեսցի 'ի գլուխ սեղանւոյն:

ԳԼՈՒԽ 181.

Ամենայն արու բնութիւն մարդոյ պատուելով փառաւորեսցի, էգս բնութեան մարդոյ եւ Օգնական արդարութեան նմայ լիցի:

ԳԼՈՒԽ 182.

Ամենայն կանայք եւ դստերք գլուխն բաց երեսն բաց ազատապէս շրջեսցեն բայց 'ի տան Տեառն Աստուծոյ քողաւորեալ:

ԳԼՈՒԽ 183.

Որում տան որ ոչ գտցէ էգ 'ի բնութենէ մարդոյ եթէ ամուսնացեալ եւ եթէ յազգականութեամբ ընդ այրս ոչ ոք կին եւ դուստր մի' մտցէ 'ի տունն այնմ, բայց մայր եւ քեռ բնակողին տանն այրն յայնմիկ, բայց 'ի տօնի հանդիսի որում կարող են մտանել բազմութեամբ 'ի միասին:

ԳԼՈՒԽ 184.

Ոչ ոք այր եւ կամ կին յանդգնելով ո'չ մտցէ 'ի տունն այլոց առանց ընդունելութեան Տեառն տանն յայնմիկ:

ԳԼՈՒԽ 185.

Ոչ ոք պաշտօնեայ որ ոք յիշխանի որ իցէ ո'չ կարէ խորտակել դրունս եւ մտանել տուն այլոց, եթէ արդարոց եւ եթէ մեղաւորաց եւ կալանաւոր առնել մեղաւորն, բայց եթէ դուռն բաց գտցէ կարող է մտանել ըմբռնել մեղաւորն ըստ հրամանի Տեառն իւրոյ:

ԳԼՈՒԽ 186.

Զեռ պաշտօնէի իշխանին հրամանաւ իշխանութենէ Տեառն իւրոյ շոշափելով 'ի վերայ ում ոք որ իցէ իսկոյն նա' կապեալ է եւ պարտ է նմայ հնազանդաբար երթալ զհետ պաշտօնատարին ուր եւ հրամայիցէ պաշտօնատարն:

ԳԼՈՒԽ 187.

Որ ոք երկու այր եւ կամ կին բնականապէս բարկացեալ եւ 'ի վերայ միմեանց յարեալք ո'չ ոք 'ի կողմ կալ մի' գտցի, բայց խաղաղութիւն քաղցրաբան խօսիւք:

ԳԼՈՒԽ 188.

Ամենայն ուստերս եւ դստերս հայոց ստանասցեն ժառանգութիւն նախնեաց իւրեանց, յետ քսան եւ մի ամաց հասակի իւրեանց:

ԳԼՈՒԽ 189.

Ամենայն ոք երիտասարդ եւ կամ այրի եթէ հաւանեցուցանիցէ կոյս դստեր միոյ տալով նմայ միայն դաստիարակ մի արժանոյ տասն դրամ պղնձոյ եւ խառնակեսցէ ընդ նմայ, պարտաւոր լինի ամուսնասցի ընդ նմայ ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 190.

Ամենայն զէն եւ գործիք պատերազմի մտցէ առ Աշխարհն Հայոց ազատ լիցի հարկից եւ մաքսից:

ԳԼՈՒԽ 191.

Աւազակ ոմն եթէ մէջ աւազակութեան իւրոյ գուցէ գտցի ջատագովութիւն եւ 'ի ձեռանէ ջատագովողէ մեռցի աւազակն, արիւն աւազակին մի' խնդրեսցի 'ի ջատագովողէ:

ԳԼՈՒԽ 192.

Ամենայն ոք որ ձեռս 'ի վեր կալցի եւ իշխեսցէ եւ հարկանեսցէ ումեք, եւ կամ վիրաւորեսցէ, հատուցանել պարտ է պարտս գիշատող ինքնակալութեան իւրոյ այսպէս.

Հարկանողն եթէ հսկայ է եւ բարկացող մտցի 'ի բանտ մինչեւ մեղմասցի եւ խոնարհեսցի:

Եթէ հարուստ է հատուցանէ տոկոս անիրաւ գանձոց իւրոց զի իջցէ հպարտութենէ:

Եթէ իշխանազուն եւ փառասէր է հարկանելով գան հայրցի նմայ հռչակաւոր տեղի:

Եթէ աղքատ է եւ անկարգութենէ գոյացեալ 'ի բնական եռացմանէ արենէ, ընդունեսցի 'ի վերայ իւր զի ստանասցէ 'ի ձեռանէ առն յայնմիկ գանս նման նմի որպէս յինքն եհար նմայ:

ԳԼՈՒԽ 193.

Քահանայ լուծեալ 'ի կարգէն եւ մտեալ 'ի կարգ աշխարհականաց, մի' գտցի շնորհ եւ կամ շուք ոչ ոք պաշտման:

ԳԼՈՒԽ 194.

Թուղթ պարտուց 'ի կնոջ ամուսնացելոյ տուեալ առ այլ անարժան է:

ԳԼՈՒԽ 195.

Թուղթ պարտուց կնոջ ամուսնացելոյ եթէ գտցի առն կնոջ յանմիկ գործս վաճառականի 'ի տարր յաշխարհ արժան է մինչեւ 'ի միոյ տարոջ երկու հարիւր դահեկան երծաթի ո'չ եւս աւելի քան զայս:

ԳԼՈՒԽ 196.

Ամենայն աղաւաշ խաղացող թէ թղթաւ եթէ ջօնկով ճանաւ եւ այլն, ցերեկն գտեալ ըմբռնեսցի եւ կողոպտեսցի զոր ինչ գտցի 'ի ձեռին եւ տացի Տանն ողորմութեան Հայոց, այլ 'ի գիշերն վասն անցուցանելոյ ժամանակ երկայնութեան գիշերի խաղացողքն մի շահեսցի եւ կորուսցի աւելի քան թէ երկու դահեկանս արծաթի, յաւելի քան զայս անարժան է եւ պարտաւոր տուգանաց:

ԳԼՈՒԽ 197.

Ամենայն ոք որ բանասցէ բերանս իւր բանիւ նախատանաց ընդդէմ ում որ իցէ թէ ընչի թէ պատուոյ՝ պարտէ ընդունիլ դատաստան, եւ եթէ բան բերանոյ իւրոյ ո'չ կարասցէ արդարացուցանել վկայիւք եւ հաստատել առաջի ատենի՝ դատաստանի պատիժս գտցի:

ԳԼՈՒԽ 198.

Ամենայն իր վաճառեալ 'ի յումեքէ եթէ գնողն կիսագին լինի գնեալ, եթէ գուցէ իրն այն լինի գողացեալ եւ երեւեսցէ տէր իրին այնմիկ ազատապէս ստասցէ իրն իւր առանց հատուցման:

ԳԼՈՒԽ 199.

Դստերք հայոց տի հասակի ամուսնութեան իւրեանց յետ չորեքտասան ամաց, եւ ուստերք յետ եօթին եւ տասն ամաց, յառաջ քան զայն ժամանակ արգելեալ իցէ:

ԳԼՈՒԽ 200.

Ամենայն պատիժ 'ի վերայ քրէական մեղաւորաց կատարեսցի 'ի վերայ մեղաւորին, թէ մեղաւորն գուցէ տի հասակի իւրոյ աւելի քան թէ ութնեւտասն ամաց, եթէ պակաս, խրատելով արձակեսցի իբր մանուկ:

ԳԼՈՒԽ 201.

Մի' արժեսցի թուղթ ձեռնադրեալ 'ի վերայ որում բանի որ իցէ, մինչ ձեռնադրողն չիցէ լցեալ տի հասակի իւրոյ ութն եւ տասն ամաց:

ԳԼՈՒԽ 202.

Մի' լիցի երաշխաւոր վասն ո'չինչ իրի, ո'չ քահանայ, եւ ո'չ կին:

ԳԼՈՒԽ 203.

ՄԻ' լիցի կտակակատար ննջեցելոյ էկլէզիաստիկ:

ԳԼՈՒԽ 204.

Մի' ոք այլ ազգ գտցէ պաշտօն 'ի Տանէն Հայոց բայց 'ի սեպհական ազգեն հայոց եւ աւանդութեամբ Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ:

ԳԼՈՒԽ 205.

ՄԻ' ոք հաւատացելոց 'ի Քրիստոս այլ աղանդաւ գտցի պաշտօն 'ի Տանէն Հայոց բայց աւանդութեամբ Սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 206.

Ով ոք ամուսնացեալ միով ամուսնութեամբ գտցի շնորհ 'ի Տեառնէ որ բազմեսցի 'ի վերայ սեղանոյ տան իւրոյ, այր եւ կին երկոտասան որդոք, սոքայ ամենայն աւուրս այս ցանկալի ժամանակին կենաց իւրեանց 'ի Տանէն Հայոց գտցեն երկոտասան հացս:

ԳԼՈՒԽ 207.

Ամենայն վճիռ 'ի որում դատաստանէ եւ 'ի աշխարհէ եւ իշխանութենէ որ ելցէ, բայց քրէական մի' ոք ունիցի իշխանութիւն յետս դարձուցանելոյ եւ զանազան կերպս փոխարկելոյ, բայց ծայրագոյն յապարանն դատաստանի Հայոց, եթէ յառաջ քան զհնգետասան աւուր յետ վճռոյն յայտնի առնեն դատաստանի կամքն իւրեանց զի հաճեցան մուծանիլ 'ի յապարանն, եւ յետ անցանելոյ հնգետասան աւուրն վճռոյ, նա' վճիռն մնայ հաստատուն եւ արդարութիւն մէջ զանգատողի եւ դատախազի:

ԳԼՈՒԽ 208.

Ամենայն ոք որ գտցի վճիռ դատաստանի, բայց քրէական մեղաց 'ի մասնաւոր դատաստանէ աւուր վճռոյ մինչեւ հնգետասան աւուրց ունի ժամանակ եւ արձակութիւն ըստ կամաց իւրոց, եթէ ընդունելոյ եւ եթէ հերքելոյ եւ մուծանելոյ ծայրագոյն յապարանն դատաստանի, յետ անցելոյ հնգետասան աւուր ժամանակի վճռոյն հաստատուն մնասցէ վճիռն եւ մի' խախտեսցի:

ԳԼՈՒԽ 209.

Ամենայն վճիռ, բաց քրէական, յետ հնգետասան աւուր եթէ զանգատողն մի՝ ստասցի առնելիքն իւր համեմատ վճռոյն իւրոյ կարող է խնդրել դատաստանէն ըմբռնել անձն, կամ ստացուածքն պարտականին:

ԳԼՈՒԽ 210.

Ամենայն զանգատող որ ըմբռնելով անձն պարտականին եւ մուծանելով 'ի բանտ ստացուածքն պարտականին ազատ լինի եւ բանտ արկեալն կացցէ եւ մնասցէ 'ի բանտի մինչեւ հատուցանէ յետին լոմանն պարտուց իւրոց:

ԳԼՈՒԽ 211.

Ամենայն զանգատող եթէ ըմբռնեսցի ստացուածքն պարտականին իւրոյ անձն պարտականին ազատ մնասցէ, մինչեւ հաւաքելով ամենայն ստացուածքն պարտականին, եթէ ոչ բաւեսցի պարտուց նորա, յայնժամ կարող է ըմբռնել անձն պարտականին եւ մուծանել 'ի բանտ եւ դարմանել նմայ ըստ Օրինօք մինչեւ մին տարի, յետ մին տարուց եթէ պարտականն ընդունեսցի տալ նմայ նոր թուղթ պարտուց երիս ամաց ժամանակաւ տացէ եւ ելցէ 'ի բանտէն եթէ ոչ կացցէ 'ի բանտի մինչեւ երիս ամս, յետ երից ամաց ազատ լիցի ելցէ եթէ պարտն լիցի մինչեւ հարիւր դահեկան, եթէ յաւելի մնասցէ 'ի բանտի մինչեւ հատուցանիցէ:

ԳԼՈՒԽ 212.

Ամենայն պարտական եթէ յառաջ քան զգանգատելոյն պարտատիրաց իւրոց յօրինեսցի համարս ամենայն ստացուածոց իւրոց եւ պարտուց եւ մուծանէ տուն դատաստանի որում աշխարհի ինքն բնակի, եւ երդմնեսցի առաջի դատաւորի արդարութիւնն յօրինեալ համարոյն իւրոյ, նոյն ժաման զտցի թուղթ ազատութեան 'ի պարտուց, եւ յանձն արասցէ ամենայն ստացուածս իւր 'ի ձեռին դատաստանի, զի դատաստանն, ընտրելով ոմն յանձնեսցի ստացուածքն պարտականին 'ի ձեռին ընտրելոյն իւրոյ հրամանաւ, զի վաճառեսցի ստացուածք պարտականին, 'ի նմանէ հատուցանէ ֆի հարիւրին հինգ վարձ վաստակող առն ընտրելոյն, եւ հարիւրին մին կերակուր պարտականին, եւ հարիւրին իննսուն եւ չորս, մնացորդն հաւասարապէս բաժանեսցի 'ի վերայ պարտատերաց, եւ պարտականն ազատ մնասցէ 'ի մնացորդ պարտուց իւրոյ:

ԳԼՈՒԽ 213.

Ամենայն պարտական որ թաքուցանէ ինչս իւր 'ի պարտատերէ իւրմէ եւ զինքն յօրինեսցի առաջի դատաստանի համարս սուտ, եւ եթէ հաստատեալ զտցի ստացուածք նմայ զաղեալ, պարտականն այն մի' զտցի ազատութիւն 'ի պարտուց հատուցանիցէ զաղեալ իրս եւ ինքն մտցի 'ի բանտ, մինչեւ հատուցանէ պարտս իւր:

ԳԼՈՒԽ 214.

Հատուցումն վասն պարտուց քրէական մեղաց ոչ այլ ոք հատուսցէ բայց միայն անձն մեղաւորին որում գործ ձեռաց նորա գործեցաւ մեղս քրէականս:

ԳԼՈՒԽ 215.

Ամենայն որ պարտական ոսկոյ, երծաթոյ, ձիթոյ եւ զինոյ եւ ամենայն ինչ 'ի վերայ աշխարհի հատուցանել պարտ է պարտականն ստացուածքս իւր եւ ստացուածքս կնոջ իւրոյ, եւ անձն միմիայն պարտականին մտցի 'ի բանտ, կին եւ որդիք դստերք եւ ամենայն սերունդաւ եւ ազգականաւ անձամբք, եւ ստացուածոք ազատ լինեն, բայց ստացուածքէ կնոջ եւ պարտականին:

ԳԼՈՒԽ 216.

Ամենայն կին ամուսնացեալ որում այրն նորա բանտ արկեալ իցէ, կարող է ազատապէս մտանել 'ի բանտ կալ եւ ելանել եւ մնալ ընդ առն իւր եթէ ինքն կամեսցի:

ԳԼՈՒԽ 217.

Ամենայն երաշխաւոր եթէ ո'չ յանձնեսցի 'ի ձեռն դատաստանի պարտականն որում յինքն նմայ երաշխաւոր կարգեցաւ հատուցանէ ինքն ըստ անձամբ պարտն պարտաւորին մի եւ նոյն կերպ որպէս պարտականն փախուցեալ:

ԳԼՈՒԽ 218.

Մեղաւոր ոմն քրէական ո'չ կարէ տալ երաշխաւոր եթէ ո'չ անձն իւր կացցէ 'ի բանտի մինչեւ դատեսցի, եթէ զանգատ 'ի վերայ մեղաց նորայ երկբայելի լիցի կարէ դատաստանն ընդունիլ երաշխաւոր, բայց երաշխաւորն այն պարտ է լինիցի այր արժանի տէր ստացուածոց յաւելի քան թէ տասն բիւր դահեկան երծաթի, եթէ մեղաւորն դատապարտեսցի մահ եւ փախիցէ, եւ երաշխաւորն ոչ կարացի յանձնել մեղաւորն 'ի ձեռն դատաստանի մինչեւ ամիսս վեց երաշխաւորն պարտական լիցի հատուցանել առ Տունն ողորմութեան Հայոց հինգ բիւր դահեկան երծաթ եւ յինքն մտցէ 'ի բանտ ամիսս վեց, այնուհետ ազատ լիցի եւ ոչ ոք դատաստան սորա կրկին երաշխաւորութիւն մի ընդունեսցի:

ԳԼՈՒԽ 219.

Ամենայն մեղաւոր քրէական դատապարտեալ 'ի մահ, եթէ փախիցէ պատկեր ձուլածու նորայ կախիցէ 'ի կախաղանի եւ ինքն ամենայն ժամանակս կենաց իւրոց որում կողմ Աշխարհին Հայոց ըմբռնեալ մատնեցի 'ի դատաստան յամանգամայն մեռցի:

ԳԼՈՒԽ 220.

Ամենայն ինչ եւ ստացուածք քրէական մեղաւորաց դատապարտեցեալ մեռուցելոց կացցէ եւ մնասցէ ազատ վասն ժառանգութեան ընտանեաց իւրեանց:

ԳԼՈՒԽ 221.

Արհեստաւորն որում կախէ ոք 'ի կախաղանէ եւ հանէ զլուխ մահապարտից 'ի անդամէ, անպատիւ լիցի եւ մի մտցի 'ի այլ գործ եւ 'ի Տանէն Հայոց հատուցանի ապրուստ նորայ:

ԳԼՈՒԽ 222.

Դատաստան 'ի վերայ քրէական մեղաց կատարեսցի չորս անգամ 'ի մի տարու եւ 'ի չորս եղանակս տարուն ամենայն անգամ քանի աւուր որ հարկաւոր լիցի դատել 'ի դատաստանի:

Մարտի. ... 21

Յունիսի.... 21

Սեպտեմբերի . 21

Դեկտեմբերի.. 21

ԳԼՈՒԽ 223.

Ամենայն քրէական վճռեալ 'ի մահ եթէ յինքն կամեսցի երիս ամիսս 'ի բանտի շղթայիւք կացցէ եւ գործ մեղաց եւ վճիռ մահու նորայ մտցի առ ծայրագոյն յապարանն դատաստանի, եւ անտի առ ատեանն նախարարին, եթէ կարի լինիլ ներումն մեղաց նորայ այլ յառաջ քան զերիս ամիսս, եթէ նախարարն մի' բաշխեսցի կեանս նորայ ընդունելութեամբ Տանն Հայոց մեռցի:

ԳԼՈՒԽ 224.

Ոչ ոք դատապարտեալ 'ի մահ մի' գտցէ կեանս բաշխեցեալ 'ի նախարարէն, բայց այն որ Տունն Հայոց ընդունիցէ նմա տալ կեանս, այլ այն որ ո'չ ըստ վճռոյ հատեալ դատաստանէն մեռցի:

ԳԼՈՒԽ 225.

ՄԻ՝ ոք դատաւորք դատապարտեսցի 'ի մահ բարկութեամբ վասն գործոց մեղաց մեղաւորին, այլ գթութեամբ, եւ մահ մեղաւորին վասն նշաւակի կենդանեաց, զի զսպեսցեն կենդանիքն վարքս իւրեանց 'ի չարագործութենէ:

ԳԼՈՒԽ 226.

Որում դպիր ատենաբան որ գտցէ հնարս զի Օրինօք զերծուսցէ մեղաւորն 'ի վճռոյ մահուանէ սիրեցեալ լինի ամենեցոյն:

ԳԼՈՒԽ 227.

Ամենայն մանկաբարձ որ վտանգաւոր ծննդենէ ծնուցանէ երեխայս ծնողն եւ ծնեալն մնասցէ կենդանի, ստանայցէ Տանէն Հայոց մի դահեկան երծաթ:

ԳԼՈՒԽ 228.

Ամենայն բժիշկ որ փարատէ ցաւս մահացուցիչ տկարաց եւ առողջացուցանէ 'ի Տանէն Հայոց եւս գտցէ մի դահեկան երծաթ:

ԳԼՈՒԽ 229.

Ամենայն մանկաբարձ եւ բժիշկ որ ներքոյ կառավարութեան իւրոյ մեռցի տկարն եւ ծնողն եւ կամ երեխայն ամենայն մեռելոյ մանկաբարձ կամ բժիշկն մի' գտցէ վարձ աշխատանաց եւ զին դեղօրէից իւրոց:

ԳԼՈՒԽ 230.

Ամենայն բժիշկ եւ մանկաբարձ պարտէ հասանիլ Օգնութիւն տկարի եւ ծնողի համանգամայն որ լսէ հրաւիրումն:

ԳԼՈՒԽ 231.

Ամենայն տարւոջ եւ ամենայն ժամանակի ըստ տարբերութեան պատահմանց եթէ հարկաւորեսցի ամենայն հատոր եւ հատորք Օրինաց որում ընդունելի ամենայն հայոց գտցի արձակապէս կարող է հաստատել եւ հռչակել ամենայն ժողովրդոց եւ մուծանել ընդ Օրէնս մեր:

ԳԼՈՒԽ 232.

Ամենայն տանուտէր փոխանորդ 12000 տանց արժան է ընդունիլ 'ի առաքողէ իւրմէ տարէն 3000 դահեկան երծաթ, զի մնասցեն զինքեանք անպակաս 'ի հարկաւորութենէ եւ ազատ եւ ոչ պաշտօնեա ումեքէ բայց 'ի յաշխարհէ իւրմէ եւ ջատագով ընդ դէմ ամենայն անօրէնութեան գործողաց ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 233.

'Ի Սրբոյ Աթոռէն Հայրապետութեան Ամենայն Հայոց, Արք Եպիսկոպոս մի ընտրեսցի զի մտցէ առ Տունն Հայոց տեղի փոխանորդի ամենայն էկլէգիաստիկաց, եւ Եպիսկոպոսն այն ընդ ամենայն բան խորհրդոյ համարեսցի իբրեւ երկու տանուտէր մի հոգեւոր եւ մի մարմնաւոր եւ սայ նստցի 'ի վերայ երկրորդ աթոռոյն 'ի առաջի աստիճանի աջ թեւին Տանն Հայոց, սա' ստանայցէ Հայրապետէ Հայոց տարէն 3000 դահեկան երծաթ վասն ծախոյ իւրոյ:

ԳԼՈՒԽ 234.

Տունն Հայոց շինեսցի մէջ ամուր աշխարհի եւ մայրաքաղաքի որում գտցի պալատն նախարարին եւ պարսպեալ հովանաւորութեամբ պահակօք եւ 'ի միջի նորայ խորան մի մեծ արեւելից առ արեւմուտս 'ի կողմն արեւելեան երկու աստիճանաւ, եւ 'ի վերայ առաջի աստիճանի միմիայն աթոռ մի նախարարին եւ աջ կոյս նորայ 'ի վերայ երկրորդ աստիճանի Եպիսկոպոս տանուտէրն, 'ի նմանէ վայր ըստ երրորդ, չորրորդ եւ այլն մինչեւ կէս տանուտէրք հայոց ըստ իւրաքաչիւր աթոռի, նումր մնէն մինչ 'ի վայր, եւ 'ի ձախուստ կողմանէ 'ի վերայ երկրորդ աստիճանի, այլ կէս տանուտէրքն 'ի ձախակողմն նախարարին

մինչեւ 'ի վայր, ամենեքեան ունիցին աթոռս մինչ վայր, եւ համար տանուտերաց որում ամենեքեան ծանիցեն այրն որում աշխարհի փոխանորդէ եւ որում աթոռի բազմենայ եւ որ համար աթոռ տեղի իւր:

Նախ նոմրայ 1	Նախարարն բազմող միայնակ ի վերայ աթոռի առաջի աստիճանի, եւ 'ի յանդիման աթոռի նորայ սեղան մի, եւ 'ի վերայ սեղանոյ թագ մի եւ սուսեր մի յառաջի նախարարին:
2.	Արք Եպիսկոպոսն 'ի վերայ երկրորդ աստիճանին եւ աջակողմն նախարարին, եւ առաջի սու բ սեղան մի փոքրիկ ի վերայ սեղանոյն աւետարան մի եւ խաչ մի:
3, 4, 5, 6, 7.	'Ի վերայ երկրորդ աստիճանին աջակողմն Եպիսկոպոսին տանուտերք աշխարհի մինչեւ 'ի վայր:
8, 9, 10, 11, 12, 13, 14.	'Ի վերայ երկրորդ աստիճանին ձախակողմն նախարարին բազմեսցի ըստ իւրաքանչ 'ի վերայ աթոռին իւրոյ մինչեւ 'ի վայր:

ԳԼՈՒԽ 235.

Խորանն որում բազմին տանուտէրք նա' է Տանն Հայոց Օրէնք կարգադրութեան սոցայ լիցի Թագաւոր Հայոց, սովաւ գտցի բոլոր Ազգն Հայոց համախոհ Թագաւոր 'ի վերայ յԱշխարհին Հայաստանեաց կալով եւ մնալով 'ի վերայ իրաւանց եւ արդարութեանց ըստ կերպին եւ համեմատութեան Օրինաց, որում յուսամ զի թագաւորութեանս պակասութիւն մի լիցի:

ԳԼՈՒԽ 236.

Ամենայն ոք ստացեալ պաշտօն որում աստիճանի որ իցէ՝ ոչ ոք կարող լիցի հանել եւ կամ իջուցանել նմայ 'ի պաշտմանէ, բայց գործ մեղաց ձեռաց իւրօք, եւ մահ կենաց, եւ լրումն ժամանակի պաշտօնի իւրեանց:

ԳԼՈՒԽ 237.

Ամենայն իջուցեալ ոք 'ի աստիճանէ պաշտօնի ով որ իցէ, եւ կամ անկեցեալ 'ի պաշտօնէ, ո'չ ոք վերստին նմայ նորոգել կարէ, բայց Տունն Հայոց տանուտէրամբ:

ԳԼՈՒԽ 238.

Ամենայն թուղթ ընդունելութեան երդման պաշտօնի եւ այլ, գրեցեալ լինի Օրինակօք որում բացատրի վասն բանին յայնմիկ, եւ թուղթն այն անցանէ մէջ դաֆտարին Տանն Հայոց եւ 'ի յապարանն դատաւորին, եւ 'ի ծածուկ խորհրդարանի նախարարին որում քաղաքի որ ձեռնադրեցաւ:

ԳԼՈՒԽ 239.

Ամենայն պաշտօնեայ որում աստիճանի եւ պաշտօնի որ կոչեցեալ իցէ որ 'ի վեր քան թէ տասնապետ որում ժամանակի եւ որում տեղի որ կամեսցի յետս դարձուցանել պաշտօնս իւր կարող է ինքն մնասցէ ազատ, բայց եթէ նա կրկին ցանկասցէ պաշտօնի մի՝ գտցէ 'ի տեղի իւր, եթէ ոչ երիս աստիճան քաշ տեղի:

ԳԼՈՒԽ 240.

Ամենայն ոք որում աստճանի որ գտցի վեր 'ի տասնապետէ պաշտօնն նորա լիցի ժամանակաւ երիս ամօք:

ԳԼՈՒԽ 241.

Ամենայն պաշտօնատար ծառայեցեալ հաւատարմաբար ժամանակս պաշտօնի իւրոյ, եթէ յետ երիցի ամաց հաճեսցի ընդ միտս տանուտերաց պաշտօնեայ նմա մնալ, կացցէ եւ մնասցէ 'ի տեղի իւրում եւ կրկին հաստատեսցի թղթաւ հրամանաւ, թէ ինքն եւ առաքողն իւր եւս կամիցեն:

ԳԼՈՒԽ 242.

Պաշտօն Դատաւորութեան, իշխանութեան, զինուորութեան, խորհրդակցութեան մինչ նախարարութիւն, մի' ոք գտցի իշխանութիւն զի ելցէ 'ի աստիճանէ իւրմէ 'ի վեր առաւել քան թէ շարս ամենայն ժամ եւ ամենայն տեղւոջ, եթէ մահու մեռելոց եւ եթէ վասն գործոց մեղաց, եւ եթէ 'ի լրմանէ ժամանակի պաշտօնի անկելոց 'ի աստիճանէ, ով ոք իշխան որ իցէ 'ի տեղի նորայ մտցէ այն որում ներքոյ նորայ էր, եւ 'ի ներքոյ նորայ, ամենեքեան միմիայն մի աստիճան բարձրասցեն, զի փոխանակ յետին դատարկ մնալոյ աստիճանի մտցէ այլ ոք ընտրեալ 'ի Տանէն Հայոց, բայց տանուտէրն որ հարկաւոր է լցցի տեղի անկելոյն 'ի բնիկ տեղակալէ իւրմէ 'ի ծածուկ խորհրդակցէ ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 243.

Ամենայն առաջնորդ մէնջ ամենայն տեղիս դատողութեան, նա միայն ունիցի բերան տալոյ վճիռ միեւնոյն հրաման որում հաճեսցի կամաց խորհրդակցաց իւրոց ձեռնադրեալ գծագրէ:

ԳԼՈՒԽ 244.

Նախարարն Հայոց համարեսցի երկուս այրս եւ երկուս կամս:

ԳԼՈՒԽ 245.

Ամենայն առաջնորդք 'ի միջի ամենայն գործոց համարեսցի երկուս այրս եւ երկուս կամս:

ԳԼՈՒԽ 246.

Ամենայն հրաման եւ վճիռ որում տեղեաց եւ որում միաբանութենէ որ ելանէ եթէ գտանիցի իբր քսան եւ չորս դատաւոր կամք նոցա գտանի զանազան 'ի ժամանակի վճռոյ, հաւաքելով կամք նոցա ամենեցուն եթէ երեքտասան 'ի մի եւ մետասան 'ի միւս կամս լիցեն, որում կողմ գտանելով միմիայն մի կամք յաւելի վճիռն 'ի կամս նոցա ելցէ եւ մնացորդքն հնազանդել պարտ են 'ի առաւելութեան արանց կարծեաց:

ԳԼՈՒԽ 247.

Ամենայն պաշտօնատար պահել պարտ է ընդ իւր նամակ պաշտօնի իւրոյ հին եւ նոր առ 'ի վկայութիւն կրկին պաշտօնի հաստատել արժանաւորութիւնն իւր:

ԳԼՈՒԽ 248.

Ռոճիկ ամենայն պաշտօնատարի բայց 'ի փոխանորդաց յաշխարհաց ամենայն ամսի հատուցեալ լինիցի իշխանէն 'ի տեղի որում բնակի պաշտօնատարն հանելով 'ի նմանէ ըռսիտ:

ԳԼՈՒԽ 249.

Ով ոք որ շինեսցի տուն հարկ լիցի ստանալ հրաման ճարտարապետէ յԱշխարհէն, եւ Օրինակ վասն խորութեան եւ հաստատութեան հիման եւ շարն փողոցի համահաւասարութեան եւ հեռաւորութիւն չափաւորութեան 'ի ամրոցէն:

ԳԼՈՒԽ 250.

Ամենայն տուն պարտ է տալ ջրհեղելոյ հարաւ կոյս դրացուն իւրոյ ընդ իւր առ հիւսիս կոյս եւ ձգելոյ ձիւն տան առ հիւսիս կողմ:

ԳԼՈՒԽ 251.

Ամենայն տուն ունի արձակութիւն ձգել ձիւնն տանն իւրոյ առ փողոց սահմանն տան իւրոյ, եւ նմանապէս յեղուլ ջուրն անձրեւաց:

ԳԼՈՒԽ 252.

Ամենայն մարդիկ որք դրացի լինելով տանց կամին կազմել զտունս իւրեանց մինչեւ ցեօթն աստիճանս բարձրութեան, պարտ են տալ տեղի մի քայլ երկրէն իւրմէ առ հարաւ կոյս դրացւոյ վասն հեղելոց ջրոյ եւ այլն, եւ եթէ դրացին ո'չ կամի 'ի բարձրութենէ նորա տեսանել տուն իւր կարող լինիցի շարել պարիսպ այնքան բարձր որ ինքն կամեսցի առ 'ի արգելուլ տեսարանն բարձրաբերձ տանց:

ԳԼՈՒԽ 253.

Եթէ բարձր աստիճանիւ տուն գտցի առաջագոյն շինեցեալ 'ի նմա հիւսիս կոյս յետոյ, ով ոք յապա' շինողք տանց իւրեանց կարող լիցի 'ի վերայ երկրին իւրոյ շարել պարիսպ որքան բարձրութեամբ որ ինքն կամեսցի 'ի անտեսչութիւն մէջ տան իւրոյ եւ հեղիցէ ջուր եւ ձիւն առ տուն եւ փողոցն իւր:

ԳԼՈՒԽ 254.

Ոչ ոք փողոց գտցի պակասագոյն լայնութեամբ քան թէ քսան քայլ:

ԳԼՈՒԽ 255.

'Ի վերայ ամենայն կտեր 'ի վերայ շուրջ պարսպին շարեսցի պարիսպ բարձրութեամբ երկու կանգուն վասն ապահովութեան արանց տանն բնակողաց զի մի անկանիցին 'ի վայր:

ԳԼՈՒԽ 256.

Ով ոք ունի արձակութիւն հեղուլ առ փողոց ամենայն զոր ինչ աղտեղի ո'չ 'ի տանէ եւ ո'չ 'ի ասպարանէ, եւ ոչ 'ի բաղնսէ, զամենայն զոր ինչ աղտեղի պարտ է խոր թաղել 'ի սիրտ երկրի:

ԳԼՈՒԽ 257.

Ոչ ոք այր աղտեղի իրօք կարի եռացուցանել երկիր, բայց 'ի աղբէ անասնոց եւ թռչնոց, հոտեալ ձկնոց, եւ մեռելոտի անասնոց եւ կտրրմոխրէ եւ կնճեռնէ, յաւելի քան զայս արգելեալ իցէ:

ԳԼՈՒԽ 258.

Ոչ ոք եթէ քրիստոնեայ եւ եթէ հեթանոս 'ի ձեռանէ ումեքէ զի եթէ կռտեսցի մարդ եւ արասցէ նմայ չէզօք, կռտողն մահու մեռանիցէ:

ԳԼՈՒԽ 259.

Ով ոք մանկապահ որպէս ռամկօրէն դէտայ, եթէ խառնակեսցի ընդ արու մանուկն իւր 6 շաբաթ մտցէ բանտ, եւ ամենայն աւուր հինգ շաբաթի մերկացուցանել նմայ 'ի փողոցս շրջելոյ արբեցուցանեն վաթսուն ղամչի 'ի տեղի փափուկ մսի նորա, եւ յետ վեց շաբաթու հերծցեն հեր գլխոյ նորա եւ արձակեն նմայ խայտառակութեամբ:

ԳԼՈՒԽ 260.

Ամենեքեան եթէ վաճառական, եթէ զինուոր, եթէ արհեստաւոր հովիւ եւ հողագործ եւ զոր ինչ աստիճանի իշխան եւ որում արհեստի արհեստուոր, զոր ինչ որ գնեսցի հաւանելով բանին եւ գնին իրաց գնելոց, պարտ են գնող եւ վաճառողն ձեռս ընդ միմեանց տալով հաստատեսցեն առաջի դալալի առ 'ի վկայութիւն առք եւ ծախսն, եւ ամենայն զոր ինչ ձեռնատուութիւն միմեանց եղելոց վաճառողն վաճառեալ է եւ գնողն գնեալ կրկին յետս մի' դարձցի:

ԳԼՈՒԽ 261.

Որում ձեռի գտցի ստատիպ դրամ եթէ ոսկոյ եթէ երծաթոյ եւ կամ պղնձի եւ կապարի պարտ է նա' ցուցանել թէ յումեքէ ստացաւ եւ որում պատճառի եմուտ 'ի ձեռն իւր:

ԳԼՈՒԽ 262.

Մէջ ամենայն քաղաքաց քանիս դրունս որ իցէ, եւ քանիս փողոցս որ իցէ բոլորն անուանեսցի յատուկ անուամբ, փողոցք եւ դրունք որ ոք մտանելոյ եւ որ ոք ելանելոյ, եթէ հեծեալ եւ եթէ հետեւակ, որ միշտ ընթացք նոցայ գտցի մի 'ի յետուստ միուսի որ ոչ ոք հանդիման միմեանց, եւ 'ի դրունս քաղաքի յերեսս երկրի եթէ 'ի դաշտի եւ եթէ ուր եւ իցէ ամենայն երթ եւ գալացող թէ հեծեալ թէ հետեւակ հանդիպելոյ միմեանց երկու կողմանց պարտ լիցի դառնալ առ աջ թեւ զի բացցի ձախ թեւ ճանապարհ անցանելոյ ընդ միմեանց, այլ զամենայն զոր ոք 'ի ընթացս իւր ընդ դէմ 'ի վեր ասացելոյս եթէ գտցի վնաս յումեքէ ծնեցեալ 'ի պատճառէ յանդգնութեան նա' հատուցանել պարտ է վնասն վնասեալ առն:

ԳԼՈՒԽ 263.

Ոչ ոք կարէ բեկանել հատանել ճուդ, միրգ եւ թուփ մի ծառոյ այլոց, բայց Տեառն իւր:

ԳԼՈՒԽ 264.

Ոչ ոք կարէ քաղել փայտ 'ի անտառէ այլոց, բայց 'ի անտառէ իւրմէ գնեցեալ կամ 'ի Տանէն Հայոց նամակօք նմա տուեցեալ եւ կամ ինքն վասն իւր տնկեցեալ:

ԳԼՈՒԽ 265.

Ամենայն զոր ոք քաղեսցի փայտ յանտառէ իւրմէ, մի' խլիցէ արմատ ծառոյն եթէ գուցէ վասն յատկապէս բարութեան հանել հարկաւորեսցի արմատն 'ի տեղւոյ նորա, պարտ է կամ տնկել այլ ծառ, կամ վարել ցորեան, կամ տնկել այգի, կամ շինել տուն զի երկիր մի' մնասցէ ամայի:

ԳԼՈՒԽ 266.

Ամենայն աղքատ կարող է մտանել ամենայն անտառ եթէ տէրունի եթէ ժողովրդոց հաւաքել թուփ, միրգ, մեղր եւ ձու թռչնոց վասն կարեաց իւրոց, մերթ հատուցանելոյ ոչինչ 'ի ո'չ ումեք:

ԳԼՈՒԽ 267.

Ով ոք որ սպանիցէ առջ եւ գայլ որքան գլուխ եւ տուտ առջոյ եւ գայլից յանձնեն 'ի դրունս իշխանի աշխարհին յայնմիկ 'ի Տանէ Հայոց շնորհեսցեն նմայ ըստ իւրաքանչ գլխոյ մի դահեկան երծաթ եւ գլուխն թաղեսցեն երկիր մնասցէ ներքոյ պահակի երիս աւուրս:

ԳԼՈՒԽ 268.

Մէջ բոլոր Աշխարհին Հայոց եթէ 'ի յերեսս դաշտաց եւ եթէ մէջ քաղաքաց եւ գեղօրէից սահմանաւ բաժանեսցի ջուրս իւրաքանչիւր երկրի հարկաւորութեան, եւ դաշնայտրեսցի զի իւրաքանչիւր ոք ստանայցեն առանց աղմկի, եւ ո'չ ոք համարձակեսցի կողոպտել բաժինն դրացուն անկարգութեամբ:

ԳԼՈՒԽ 269.

Ամենայն մարդ պարտ է նշանաւորել նշանաւ իւրով մատակս ձիոց եւ խաշանց եւ ամենայն անասնոց, եւ զամենայն զոր ինչ ոսկի, երծաթ եւ պղնձէ անօթ, եւ զամենայն զարդ տանն իւր զի ծանիցէ իւրն եւ Օտարն:

ԳԼՈՒԽ 270.

Ամենայն թուղթ պարտուց եթէ անցանիցէ ժամանակ մինչեւ տասն ամ եւ միջոց անցելոց ամաց պարտաւոր եւ պարտատէրն մի' յիշեցուցանեն ընդ միմեանց առնելիք եւ տալիքս միմեանց, մնալով իբր մեռեալ մինչեւ տասն ամ յետ լրումն տասն ամաց պարտն այն անյիշելի լինի եւ թուղթն անարժան:

ԳԼՈՒԽ 271.

Ամենայն հակառակութիւն 'ի վերայ ամենայն իրաց որում քաղաքի որ իցէ հարկաւոր է դատել 'ի մէնջ դատաստանի նոյն քաղաքին, եւ եթէ 'ի վճռոյն այնմիկ մի' բաւեսցի զանգատող եւ դատախազն կարող է յառաջ քան զ15 աւուր ժամանակի յետ վճռոյն իւրոյ մուծանել 'ի բարձր դատաստան, այլ եթէ 'ի վճռոյ դատաստանի քաղաքին իւրոյ բաւականասցի, եւ կամ տասն եւ հինգ աւուր ժամանակն անցանի, եւ կամ յառաջ քան զ15 օր մուծցէ 'ի բարձր դատաստան եւ զտցի վճիռ 'ի բարձր դատաստանէ այն իցէ արդարութիւն որ ոչ երբէք կրկին յիշել կարասցէ, եւ ո'չ ոք դատաստան 'ի վերայ վճռեալ բանի կրկին ունկս դնիցէ:

ԳԼՈՒԽ 272.

Ամենայն վկայութիւն 'ի յումեքէ որ հարկեսցի եթէ յառնէ, եւ կամ եթէ կնոջէ վկայն եւ վկայութիւն հարցանողն պիտի մտանել 'ի խորան առանձին եւ փակել դրունս, եւ նախ երդմնեցուցանել վկայն 'ի վերայ սրբոյ աւետարանի որ զոր ինչ հարցմունք 'ի նմանէ արասցէ վկայն վկայեսցէ աննախանձաբար, եւ ամենայն զոր ինչ վկայութիւն որ ելցէ 'ի բերանոյ վկային երդմնեցելոյն նոյն վկայութիւն շարեսցի 'ի վերայ թղթոյ, եւ վկայն ձեռնադրեսցէ, եւ վկայութիւն առնողն հաստատեսցի ձեռամբ իւրով գրելով այսինքն՝ Մարտիրոս որդոյ Բաղրամի 'ի գէղջէն Ճիրականի սեպտեմբերի ամսի 14 յամի Տեառն 1771 առաջի իմ երդմնեցաւ եւ վկայեաց զոր ինչ 'ի վեր գրեցեալ, եւ ձեռնադրեաց, եւ այս թուղթ վկայականի պարտ է ամրափակել եւ կնքել կնքաւ վկայութիւնս առնողին, եւ յերեսին գրել սա է վկայութիւն Մարտիրոսի որդոյ Բաղրամի, առ 'ի հաստատութիւն բանին զանգատող Մաղաքիայ որդոյ Զաքարիայի որ եմոյծ 'ի ատենի դատաստանին մայրաքաղաքին Երեւանոյ, եւ թուղթն այն ամուր կնքօք ընծայել առ 'ի ատենն դատաստանի, զի ոչ ոք յառաջագոյն իմացէ բանն վկայութեան վկային, մինչեւ 'ի ժամանակն վճռահատութեան բացցի առաջի ատենի դատաւորաց եւ այլն:

ԳԼՈՒԽ 273.

Որում տան եւ կամ փողոցի ով ոք յանկարծ մեռանիցէ ով ոք որ մերձ 'ի նմայ եթէ ընտանի եւ եթէ օտարական գտեալ անդ 'ի ժամանակի մահուան առն յայնմիկ, պարտ է մնալ անդ անշարժ եւ ազդ առնել տունն դատաստանի դատաւորի քաղաքին, եւ 'ի դատաստանէ պարտ են առաքել մի 'ի դատաւորաց եւ մի բժիշկ զի երթիցեն որոնեսցեն պատճառն մահուան եւ ընդունեսցեն վկայութիւն 'ի արանց մերձ դիոյն ննջեցելոյն, այս վկայութիւնս կարի հռչակաւոր լինիլ, եւ ապա տացեն հրաման դին թաղելոյ:

ԳԼՈՒԽ 274.

Ով ոք որ խաբէութեամբ եւ գաղտնի եթէ այր եւ կամ եթէ կին որ ամուսնասցի ընդ երկու կին, եւ կամ թէ ընդ երկուս այրս, կինն առաջին ամուսնացեալ ընդ առն մնայ նմայ ամուսին կնութեան, եւ եթէ առն երկուց կանաց ամուսնացեալ ունիցի զաւակս 'ի երկրորդ կնոջէ թողեալ է 'ի կամս երկրորդ կնոջ, եթէ կամեսցի ինքն ունենալ զաւակն պահէ վասն իւր, եթէ ո՛չ տացէ առ առն, եւ պարտէ ընդունիլ եւ կերակրել զարգուցանել նոյն զաւակաց որպէս անօրէնութեան զաւակս իւր:

ԳԼՈՒԽ 275.

Ամենայն հրահայելիք այն որ զուտն է եւ անարատ եւ կամ 'ի բովս մաքրեալ նմայ ծանիցեն աստիճան մի հարիւր, այսինքն մաքուր եւ կատարեալ եւ ով ոք 'ի նմանէ աստիճանաւ քաշագոյն արժանաւորութիւնն կացցէ ըստ համեմատութեան աստիճանի:

ԳԼՈՒԽ 276.

Դահեկան հայոց տպեցեալ 'ի վերայ ոսկոյ, երծաթոյ, կապարի եւ 'ի վերայ պղնձոյ, ըստ իւրաքանչիւր աստիճանի, եւ ծանրութեան կշռոյ այսինքն որպէս 'ի վայր:

Դրամն երծաթէ աստիճանաւ 80 կշռով 24 դրէթ

Դահեկան երծաթէեեե

3 Վրանապետաց 200 600
3 Կերակրապետաց 200 600
3 Գանձապետաց 200 600
3 Երկրաչափապետաց 200 600
3 Պետ տկարաց 200 600
90 Հազարապետաց 200 18000
900 Հարիւրապետաց 100 90000
9000 Տասնապետաց 15 135000
27000 Այր եւ ձիոյ 10 270000
52955 Յետ հետեւակաց 7 370685
90000 Զինուորաց 'ի մի ամսոյ ռոճիկ
բովանդակի դահեկան երծաթ……910835
Որում բովանդակի ռոճիկն
բոլոր տարէն դահեկան երծաթ……10930020
Շինութիւն ամրոցաց տարեկան ծախ. 200000
Յօրինելն վրանաց……100000
Տարեկան զինուց……200000
Յաւելորդ կերակրոց……300000
Գին 2400 բիւր կռիռ Աղի որ հատանի
ի յերկրէ վարձիւ իւրով……240000
Ծախ տան տկարաց……100000
Ծախ դեղօրէից եւ վարձ բժշկաց……100000
Ծախ տանց աղքատաց եւ տնանկաց……100000
Ծախ ուսման որբ մանկանց……100000
Բոլոր տարեկան ծախն
բովանդակի լաք ըռուփի……12370020
1237 բիւր եւ 20 դահեկան երծաթ հայոց:

ԳԼՈՒԽ 279.

Ըստ Օրինօք Հայաստանեաց հրամանովն նախարարին երիս խումբս զօրաց յանձնեսցի երիս զոյնաւոր սպարապետաց զի կառավարեսցի այր եւ ձին ասպետօք եւ հետեւակօք եւ այր ձիօք համախոհ սպարապետօք հրամանաւ եւ բերանիւ նախարարին հնազանդ հրամանին տանուտերաց Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 280.

Ամենայն գունդ զինուորաց 'ի ժամանակս պատերազմի ծանիցեն զօրագլուխս իւրեանց իբր նախարար, եւ ամենայն կուսակալք նորայ ըստ կարգի աստիճանին իւրեանց, երկրորդէ մինչեւ քանից երորդ որ լիցի անկանելով առաջինն 'ի տեղի նորայ ծանիցեն ամենեքեան երկրորդն նմանապէս ըստ կարգի, որքան որ անկցի տեղի անկելոյն լցցի երկրորդն նորին:

ԳԼՈՒԽ 281.

Ամենայն զինուոր կարէ արձակիլ 'ի վերայ այնմ, որում զօրագլուխ իւր հրամայէ, բայց 'ի վերայ միաբան տանուտերաց, Տանն Հայոց, եւ ընդ դէմ հրամայեցելոց Տանէն Հայոց:

ԳԼՈՒԽ 282.

Զինուոր ամուսնացեալ հատուցանէ կէս ռոճիկի իւրոյ կնոջ իւրոյ:

ԳԼՈՒԽ 283.

Ամենայն յաղթող զօրագլուխ 'ի վերայ գերեզմանի իւրոյ կարող է գտանիլ մատուռ շինեցեալ ծախիւք իւրովք:

ԳԼՈՒԽ 284.

Նախարարն զարդարի փառօք եւ արժան կարգի պաշտօնի իւրոյ այսպիսեօք.

Ուրար սեաւ 'ի պարանոց 'ի թիկնամէջ:

'Ի վերայ ուրարոյ ոսկայտիպ առիւծն մի:

Ճառագայթ մի ակամբ փայլածու 'ի վերայ ձախու կրծոց:

Եւ 'ի միջի ճառագայթի գառն աստուծոյ դրշակ խաչիւ:

Եւ զնջիլն մի ոսկէ 'ի պարանոց եւ 'ի ծայր զնջլին ձիաւոր մի ոսկէ:

Եւ վերարկուն փելոն մի սեաւ երկայն, եւ 'ի ներս փելոնի մորթ մկան ղաղոմէ սուր ընդ մէջ ածեալ, ցուպ իշխանական 'ի ձեռին, եւ թագ պսակ, 'ի գլուխն 'ի վերայ գագատին խաչ:

ԳԼՈՒԽ 285.

Սպարապետն կարմիր դրօշակի ինքն գնդապետիւք, սպարապետիւք, հազարապետիւք, հարիւրապետիւք եւ ամենայն զինուորօք ունել պարտ է:

Գտակն կարմիր մորթ 'ի յերեսս:

Կապէն կարմիր:

ԳԼՈՒԽ 286.

Սպարապետն կապուտ դրօշակի զօրօք հանդերձ:

Գտակն կապուտ մորթ.

Կապէն կապուտ:

ԳԼՈՒԽ 287.

Սպարապետն դեղին դրօշակի:

Գտակն դեղին.

Կապէն դեղին:

ԳԼՈՒԽ 288.

Ամենայն պաշտօնատար զօրօք իւրօք 'ի խմբից կարմիր սպարապետի 'ի վերայ իւրեանց նշանս տանիցէ այսինքն.

1) Սպարապետն ուրար կապուտ պարանոց 'ի թիկնամէջն:

2) Գնտապետն փունջ կապուտ 'ի վերայ գտակի:

3) Ասպետն փունջ կապուտ 'ի վերայ երկու յուսոց իւրոց:

4) Հազարապետն համար պետութեան իւրոյ նումրով 'ի վերայ յուսոյ կապուտ:

5) Հարիւրապետն երիս չուան կապուտ գոյնաւոր մի կանգունաչափ ապրշմէ յուսին կախ:

6) Տասնապետն մի չուան 'ի մի կանգունաչափ կապուտ յուսէն կախ նիզէն 'ի ձեռն իւր, սուր ընդ մէջ:

7) Ամենայն զինուոր 'ի ներքոյ խմբին կարմիր սպարապետին տանիցէ նումբրն հազարապետին իւրոյ կապուտ թելով քաշած 'ի վերայ կապի քամակին իւրոյ որ ծանիցէ որում հազարապետի է այս:

ԳԼՈՒԽ 289.

Սպարապետն կապուտ ըստ վերոյ գրեցելոյն ուրարն փոնջն եւ չվանն նօմրն կարմիր եւ զինուորքն կարմիր:

ԳԼՈՒԽ 290.

Սպարապետն դեղին ըստ վերոյ գրեցելոյն սպիտակ ուրարով եւ փնջով եւ չուանով, եւ զինուորքն սպիտակ թելի գրով համարն հազարապետին իւրեանց ընդ քամակն:

ԳԼՈՒԽ 291.

Ամենայն տանուտեարք խաչ 'ի պարանոցի կախեալ:

ԳԼՈՒԽ 292.

Ամենայն իշխանք խաչ մի 'ի ձախու կրծոց կախեալ:

ԳԼՈՒԽ 293.

Մայր դատաւորն կշիռ մի 'ի ձախու կրծոց կախեալ:

ԳԼՈՒԽ 294.

Ամենայն դատաւորք փելոն մի սեաւ ձիք 'ի վերայ իւրեանց:

ԳԼՈՒԽ 295.

Ամենայն խորհրդակիցք սուր մի զառով քաշած 'ի վերայ ձախու կրծոց:

ԳԼՈՒԽ 296.

Ամենայն դպիր հայելի մի ոսկապատ 'ի վիզն:

ԳԼՈՒԽ 297.

Ամենայն գծագիր գրիչ մի ոսկւոյ 'ի վիզն:

ԳԼՈՒԽ 298.

Ամենայն գանձապետ մի ոսկէ տէրունի ոսկէ զնջլով 'ի վիզն:

ԳԼՈՒԽ 299.

Ամենայն գաւառապետ մի երծաթէ տէրունի 'ի վիզն:

ԳԼՈՒԽ 300.

Որովհետեւ ծայրագոյն գաւազանն մտցէ մէնջ մեր 'ի շառաւիղէ Սրբազանից մերոց ձեռամբ Արք Եպիսկոպոսին եւ եօթն իշխանաց մերոց, որում ձեռնադրի մայր դատաւորն տալոյ իշխանութիւն իշխանական գաւազանի զինուորութեան նոցա որում գտցի ընտրեցեալ 'ի Տանէն եւ 'ի տանուտերանց Հայոց, ուրեմն պարտ է ամենայն մայր դատաւոր 'ի առաջին աւուր իշխանութեան իւրոյ տացէ իշխանութիւն գաւազանի ընդ երկրորդ դատաւորին զի մայր դատաւոր ով ոք որ իցէ եթէ մահու մեռցի, եւ կամ վասն մեղաց իւրոց անկցի 'ի կարգէ աստիճանէ, նոյն աւուրն երկրորդ դատաւորն գտցի

պատրաստ եւ տացի իշխանութիւն երրորդի իւրոյ, զի մնացորդ դատաւորն ունիցի իշխանութիւն տալոյ իշխանական գաւազանի, զի շառաւիղ իշխանութեանս մի' անջատեսցի:

ԳԼՈՒԽ 301.

Պարտ է ամենայն զօրապետաց զի լինիցին պատրաստ 'ի պահակս իւրեանց, ամենայն երեկոյեան շաբաթոյ արասցէ ընթեռնուլ յօրէնս զինուորութեան 'ի մէջ բանակի, եւ 'ի յունկս զինուորաց իւրոց:

ԳԼՈՒԽ 302.

Պարտ է ամենայն զօրագլուխ 'ի ամենայն ամսի յանկարծակի թուաբանել զօրս բանակի իւրոյ, եթէ գուցէ գտցի պակաս թուաւ 'ի վերայ թղթոյ գրեցեալ պակասութիւն հանդերձ պատճառօքն ընծայեսցէ 'ի սպաս սպարապետին իւրոյ:

ԳԼՈՒԽ 303.

Պարտ է ամենայն զօրագլուխ 'ի ամենայն տեղի երեսս երկրի պահակաց պատրաստի զօրաց ամենայն երեկոյեան ժամու աչօք տեսանել եւ ձեռամբ շօշափել զէնս եւ զգեստս զինուորաց պակասութիւն կարգադրել:

ԳԼՈՒԽ 304.

Ամենայն զինուոր պարտ է պահել զգեստս իւր մաքուր եւ հերն իւր յօծեալ:

ԳԼՈՒԽ 305.

Ամենայն զինուոր պարտ է ունենալ զէնս յստակ օծեալ իւղով եւ պատրաստ:

ԳԼՈՒԽ 306.

Ամենայն զինուոր պարտ է ունենալ ընդ քսակս իւր:

12 կառտուշ վառյօդ գուլովն:

4 չախմախի քար:

1 չախմախ բանող:

1 շիշ նօսր եղ վասն օծանելոյ զէնս:

ԳԼՈՒԽ 307.

Ամենայն զօրագլուխ 'ի ամենայն տեղէ երեսս երկրէ պարտական է կացութիւն զօրաց իւրոց 'ի վերայ թղթոյ ազդ առնէ չորս անգամ 'ի մի տարոյ ըստ իւրաքանչ եղանակի տարոյն պետին իւրոյ այսմ կերպիւ:

Տասնապետն ազդ առնէ հարիւրապետին իւրոյ:

Հարիւրապետն ազդ առնէ հազարապետին իւրոյ:

Հազարապետն ազդ առնէ զօրագլխին իւրոյ:

Զօրագլուխն ազդ առնէ սպարապետին իւրոյ:

Սպարապետն ազդ առնէ նախարարին իւրոյ:

Նախարարն ազդ առնէ 'ի դրունս Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 308.

Ամենայն կապեալ եւ բանիւ արարեալ որ ոք զինուոր իշխանէ որ իցէ եթէ սպարապետէ մինչեւ 'ի պաշտօն հարիւրապետ եւ իշխան աշխարհի հրամանաւ կապեալ հնազանդին իւրոյ, ոչ ոք կարէ արձակել բայց վճիռն դատաստանին ըստ արժանոյ վարձոյ գործոց ձեռաց կապողաց եւ կապելոց:

ԳԼՈՒԽ 309.

Նախարարն հայոց ունի իշխանութիւն 'ի վերայ ամենայն պաշտօնատարի 'ի կարգէն զինուորութեան բանիւ առնել եւ կալանաւորել, այլ հանելն պաշտօնէ կալանաւորին պարտ է լիցի վճռաւ դատաստանի 'ի պատճառէ մեղաց գործոց ձեռաց իւրոց:

ԳԼՈՒԽ 310.

Ամենայն պաշտօնատար բանադրեալ եթէ 'ի նախարարէ եւ եթէ 'ի Տանէն Հայոց, եւ եթէ զոր ինչ ծայրագոյն իշխանէ որ իցէ կալով մնացէ բանադրեալ, եւ 'ի տեղի նորա մտցի տեղակալ նորայ մինչեւ բանադրեալն դատեսցի 'ի դատաստանի, եթէ առաջի ատենի կացցէ անպարտ կարի նորոգել նմայ եւ նստուցանել 'ի աթոռ պաշտօնի իւրոյ:

ԳԼՈՒԽ 311.

Աւարն ստացեալ 'ի թշնամեացէ 'ի ժամանակի պատերազմի ժամ պատեհի բաժանեսցի 'ի վերայ զինուորաց այս կերպիւ.

Ոսկի, երծաթ, ակունք եւ ամենայն զարդք ճոթանք, ձի եւ ամենայն անասունք, խաշին, ցորեան, եղ, ձէթ, գինի բոլորն հարկաւոր է հաւաքել եւ հոչակաւոր վաճառել, զի ով ոք որ կամի գնեսցի զամենայն զոր ինչ գին որ ելցէ եւ գին ասացեալ աւարին բաժանեսցի այսպէս:

Բաժին նախարարին 'ի մի հարիւրին. 5

Բաժին Սպարապետաց 10

Բաժին Ասպետաց 8

Բաժին Թոփչի բաշունց 8

Բաժին Լրտեսպետաց 2

Բաժին Կերակրապետաց 2

Բաժին Երկրաչափապետաց 5

Բաժին Հազարապետաց 5

Բաժին Հարիւրապետաց 3

Բաժին Տասնապետաց 1

Բաժին Զօրաց այր եւ ձիոց 16

Բաժին Հետեւակ զօրաց 31

Այսպիսի բաժանի ամենայն մի 100

Եւ ամենայն 'ի վեր ասացեալ իշխանք ստանասցեն 'ի վեր յիշեցեալ բաժինս ո'չ թէ վասն իւրաքանչիւրոք թէ ո'չ որում վայելէ սպարապետին, լիցի բոլոր սպարապետաց քանիցս հոգի որ իցեն, նմանապէս միւս իշխանաց որում հարիւրին 5, որում վայել է հազաապետի հարկաւոր է բաժանիլ 'ի վերայ ամենայն հազարապետաց քանի անձինք որ իցեն, յետ այս բաժանմանէ, հարիւրին տասն եւ վեց որում վայել է այր եւ ձիոց զինուորաց, հարկաւոր է բաժանիլ 'ի վերայ բոլոր զինուոր ձիաւորաց, եթէ հասարակ, եթէ ասպետ, հազարապետ, տասնապետ եւ տղայոց ձիաւորից համահաւասար, նոյն գունակ հարիւրին 34, որում վայել է հետեւակ զինուորաց հարկաւոր է հաւասարապէս բաժանիլ 'ի վերայ սպարապետաց, հազարապետաց, հարիւրապետաց եւ տղայ զինուոր հետեւակաց, ո'չ ոք զրկեսցի ումեք 'ի բաժնոյ աւարէ իւրմէ եթէ գուցէ ոք զրկող դատաստան ընդունիցէ:

ԳԼՈՒԽ 312.

Ամենայն տկար զինուոր եւ մարտիրոսեցեալ 'ի այնմ պատերազմի ստանասցէ բաժին 'ի աւարի բոլոր ժամանակ այնմ պատերազմի ստացեալ, միեւնոյն գունակ որպէս կենդանիս եւ առողջս:

ԳԼՈՒԽ 313.

Ամենայն կին ամուսնացեալ ընդ առն զինուորի որ իցէ տղայ եւ ոչ կարգաւոր եւ իշխան եթէ մարտիրոսացի առն նորայ մէջ պատերազմի, եթէ կին նորայ մի գտցի այլ այր զի ամուսնացի, Տունն Հայոց հարկաւոր է տացէ մի 'ի չորից բաժնոյ ռոճկի առն առ կին նահատակելոյն, բոլոր ժամանակս կենաց կնոջն, եւ եթէ կինն նորայ գտցի այլ այր եւ ամուսնացի Տունն Հայոց ազատ լիցի 'ի վեր ասացեալ ծախուց:

ԳԼՈՒԽ 314.

Բաժին աւարաց նահատակաց ստացի առաջի ժառանգ նահատակին, եթէ ո'չ գտցի ժառանգ, հատուցանել պարտ է մերձաւոր յազգականի իւրոյ ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 315.

Ոչ ոք գերի 'ի պատերազմի եթէ քրիստոնեայ եւ կամ հեթանոս մի' վաճառեսցի, այլ մեղմ եւ հանդարտ պահեսցի մինչեւ 'ի ժամանակի խաղաղութեան, եթէ գտցի գերի մեզանէ 'ի ձեռինս թշնամեաց փոխեսցի, եթէ ո'չ 'ի ժամանակի խօսելոյ խաղաղութեան ըստ արժանւոյ որքանութեան գերեցելոյ հարկադրեսցի թշնամւոյն հատուցանել փոխանակ գերեցելոց մերոց այն որ արժան իցէ, եւ հաստատելոյ խաղաղութեան ամենայն գերեցեալ ազատ լինի կալ եւ ելանել, ըստ նմանութեան դաշնադրութեան խաղաղականի:

ԳԼՈՒԽ 316.

Ամենայն կարգաւոր եւ իշխան գերի եթէ երդմամբ եւ ձեռնադրեալ թղթիւ խոստանասցէ որ 'ի բոլոր ժամանակ այնմ պատերազմի որում ինքն գերեցաւ մինչեւ 'ի ժամ խաղաղութեան հաստատելոյ, ո'չ ձեռս 'ի վեր մի կալցի ընդ դէմ Հայոց Զօրաց, եւ որում ժամու հրաւիրեսցի գերեցողն իւր իսկոյն հնազանդեալ եկեսցի եւ ընդունեսցի կեանս գերութեան իւրոյ նմայ տացի թուղթ ազատութեան շրջելոյ 'ի յերեսս երկրի 'ի տեղի որում գերի առնողն խոստանայցէ նմայ, եւ նա' ելցէ եւ սպասիցէ 'ի ժամանակի խաղաղութեան, յետ խաղաղութեան ընթանասցէ ըստ համեմատութեան դաշնոյ խաղաղութեան:

ԳԼՈՒԽ 317.

Ծախ կերակրոյ, զգեստի, դարմանի եւ այլն գերելոց ամենայն ամսի պարտ է տէրութիւն թշնամոյն որում գերեցաք զինուորս 'ի նմանէ նա' հատուցանէ գերողաց, թէ խնայեսցի հարկադրի գերիս իւր մտանել 'ի պաշտօն ծառայութեան հայոց, որում գործի որ հարկաւորեսցի հայոց:

ԳԼՈՒԽ 318.

Ով ոք զինուոր եւ զօրագլուխ 'ի թշնամեաց հանդիպելով առ զինուոր եւ կարգաւորս հայոց ձքելով զէնս իւր 'ի յերեսս յերկրի եւ յանձն արասցէ անձն իւր 'ի գերութիւն նա' ազատ լինի 'ի սպառմանէ:

ԳԼՈՒԽ 319.

Հարկաւոր է մեզ տալ յատկապէս պահպանութիւն 'ի ժամանակս պատերազմի ընդ կանայս եւ դստերացս թշնամեաց որում գործս բոլորովին դժուարին թուին ընդ սովորութեան բարբարոսաց, սովաւ սիրեցեալ պատուեցեալ գտցի յազգն հայոց 'ի մէնջ թշնամեաց մերոց, եւ սովաւ հնազանդին նոքայ մեզ հաւատարմաբար:

ԳԼՈՒԽ 320.

Որում յաշխարհ, քաղաք եւ բերթօրեայք զի դաշնադրութեամբ ըմբռնեսցուք որում դաշին որ հաստատեալ իցէ պարտ է մեզ կալ եւ մնալ 'ի վերայ դաշանց անխախտելի:

ԳԼՈՒԽ 321.

Համապատասխանութիւնք ժամանակի պատերազմի մնասցէ արձակ մէնջ զօրապետաց միայն, եւ պատգամատար ելցեն ընդ դրօշակաւ սպիտակ 'ի ձեռին, այս դրօշակս իցէ՝ նշան ընդունելի պատգամաբերին եւ տանին ազատ, սա ինքն ընդ թղթաւ պատգամաւ իւրով մտցէ 'ի բանակ, ամենայն գիշերապահ եւ պահակք գտանելով սմայ պահպանութեամբ հասուցանեն 'ի բանակս իւրեանց, քօղ 'ի տեսակս կապեալ հասուցանեն 'ի դրունս զօրագլխին, նմանապէս պատասխան նամակին իւրոյ առցէ եւ քողաւորեալ աչօք ելցէ 'ի բանակէ եւ մտցէ առ բանակն թշնամոյն:

ԳԼՈՒԽ 322.

Ով ոք 'ի մէնջ զինուոր, եթէ հասարակ ժողովուրդ 'ի ժամանակի պատերազմի, եթէ գուցէ հարկաւորութիւն ինչ գրել առ բարեկամ եւ ընտանին իւր, որում իցէ բնակեալ ներ կառավարութեան թշնամու, գրեցեալն իւր բացարձակ ընծայեսցէ առ զօրագլուխն մեր զի սա՝ առաքեսցէ ընդ պատգամատարաւ իւրով առ քաղաքն, եւ կամ բերթն թշնամեաց եւ գտցէ պատասխան բացարձակ հանձնեսցի Տեառն իւրոյ եթէ իցէ յստակ եւ մաքուր 'ի ամենայն լրոյ պատերազմական:

ԳԼՈՒԽ 323.

Ամենայն շրջապատեալ քաղաքի եւ ամրոցի բնակիչք եթէ զինուոր եւ եթէ հասարակ ժողովուրդ, յետ շրջապատելոյ մերոյ մինչեւ հնգետասան աւուր ժամանակի ունի արձակութիւն անձամբ ընտանեօք ընչօք ելանել 'ի քաղաքէն եւ ամրոցէն թշնամեաց մերոց 'ի դրունս, եթէ հատուցանիցէ մեզ միայն տասանորդս հանեալ ընչից իւրոյ, եւ յինքն մնալով մեզ պանդուխտ ազատապէս ելցէ կալով մնասցէ ազատ 'ի յերեսս երկրի մերոյ ուր եւ կամեցի, եւ յետ խաղաղութեան նոյն պատերազմի կրկին ազատ լիցի, եթէ կամի ելանել ընչօք առ սեպհական աշխարհն իւր, եթէ յաւելի քան թէ հնգետասան աւուր՝ պարտ է ստանալ հրաման 'ի զօրագլխէ շրջապատողէ եւ ապա ելանել, յայնժամ զօրագլուխն ունի արձակութիւն տալոյ հրաման եւ կամ խնայելոյ, եթէ տացէ հրաման, հարկադրեսցի ելանողին հատուցանել 'ի հանեալ ստացուածոց տասնէն երկու եւ կամ երիս զամենայն ըստ խոստման ժամանակի, որպէս 'ի վեր վասն ժամանակի հնգետասան աւուր ելանողաց:

ԳԼՈՒԽ 324.

Մի՝ երբէք գերեսցի էգս 'ի բնութենէ մարդոյ ո՛չ քրիստոնէի եւ ո՛չ հեթանոսի գերի, եւ ամենայն ժամ եթէ 'ի ժամանակս պատերազմի եւ եթէ խաղաղութեան ամենայն էգ 'ի բնութենէ մարդոյ ազատ լիցի բայց 'ի մեղաց գործոց ձեռաց իւրոց:

ԳԼՈՒԽ 325.

'Ի ժամանակի պատերազմի որ ոք յազգէ որ իցէ, եւ կամ 'ի յազգէ թշնամեաց, եթէ 'ի յազգէ յայնմանէ որում հռչակի պատերազմն եթէ գտցի ոք վաճառականք ընչիւք իւրօք 'ի ժամանակի խաղաղութեան մտեալ 'ի յաշխարհս մեր եւ կամ պանդուխտ բնակեալ 'ի յաշխարհն մեր եւ կամ դրամն իւր փոխ տուեալ յազգին մերոյ, կալով մնասցէ ազատ ընչիւք իւրօք, եթէ կամեսցի ելանել առ աշխարհն եւ ազգն իւր իւրեանք միայն գտցեն թուղթ ազատապէս ելանելոյ 'ի թուէն հռչակմանէ պատերազմի մինչեւ քառասուն եւ հինգ աւուր միջոց ժամանակաւ ելանելոյ, ելցեն եւ պահպանութեամբ մերով մինչեւ մտցեն առ յազգս իւրեանց, եւ զամենայն զոր ինչ ստացուածք նոցայ մնասցէ 'ի աշխարհ մեր 'ի ձեռին փոխանորդին իւրեանց մինչեւ 'ի ժամանակն խաղաղութեան, եւ ապա՝ հանեսցեն յաշխարհէ մերմէ, եւ յետ քառասուն հինգ աւուր ժամանակի հռչակմանէ պատերազմին ոչ ոք կարէ ելանել, եթէ ո՛չ պարտ է նոցա կալ եւ մնալ բնակեալ 'ի յերեսս երկրի մերոյ մաքուր 'ի ամենայն կերպ կողմնակալութենէ 'ի գործէ, եւ լուր պատերազմէ 'ի երկուց կոյս, այսինքն կողմն յազգին իւրոյ եւ թշնամոյն մերոյ, եւ կամ կողմն մեր մինչեւ ժամ խաղաղութեան:

ԳԼՈՒԽ 326.

’Ի ժամանակի պատերազմի եւ կամ խաղաղութեան եթէ միջէ թշնամեաց եւ եթէ բարեկամաց, ով ոք քրէական մեղօք մեղուցեալ փախչի եւ անկանի երկիրն մեր, հովանաւորութեան Տանն Հայոց անձն նորա զերծցի ’ի մահուանէ պարտուց իւրոց, եւ գտցի պահպանութիւն, եւ ո՛չ ոք ունիցի իշխանութիւն հանիլ նմայ ’ի Տանէն Հայոց, բայց եթէ Տեառն յայնմիկ տացէ ներողութիւն մեղաց նորայ ’ի կեանս եւ ապա եթէ առն այն կամի ելանել ’ի մէնջ, ազատապէս կարէ ելանել առ ու որ ինքն կամի:

ԳԼՈՒԽ 327.

Ամենայն փախստական ’ի ամենայն ազգէ որ լինիցի եթէ մտցի աշխարհն մեր գտցի պահպանութիւն ’ի մէնջ ըստ Օրինօք մերոյ, բայց եթէ պարտական ոսկոյ եւ երծաթոյ, ցորենոյ, գինոյ եւ ձիթոյ եւ այլն, ամենայն ժամ պարտ է նմայ հատուցանել պարտս իւր ըստ օրինօք, բայց պարտ մեղաց քրէականի որ ազատ լիցի, եւ եթէ զողացեալ եւ յափշտակեալ զամենայն զոր ինչ այլոց ըստ Օրինօք մերոց յետս դարձուցանի Տեառն իւրոյ, անձն իւր միայն փրկեսցի ’ի պատժոյ դատաստանի եւ յինքն մնայ նախատանօք:

ԳԼՈՒԽ 328.

Վասն բանակի մերոյ ’ի դաշտի պարտ է ’ի տեղի ոտաց ճանապարհ իւր բրեսցի խոր, խորութեամբ իբր մի գիրկ, եւ կամ քսան եւ չորս ուղուկ եւ միջոց հնգետասան աւուր լցցի հողով եւ բանասցի այլ իմ հոր ’ի այլ իմ կողմ վրանի իւրոյ զի գառշահոտութիւն աղտեղեաց մի՛ վնասեսցի զօրաց, եւ ’ի միջոց ամենայն հնգետասան աւուր ամենայն վրան հաւաքեսցի աղբ անասնոց իւրոյ եւ ’ի հրով այրեսցի:

ԳԼՈՒԽ 329.

’Ի դաշտս երեսս երկրի որում խաղայ բանակս մեր ոչ ոք դաշտի մի՛ նստցի ’ի յաւելի քան թէ քառասուն աւուրս, եթէ չիցէ վասն շրջապատութեան տեղեաց եւ ամրոցաց թշնամեաց մերոց, թէ ո՛չ խաղասցի ’ի տեղիս վասն մնալոյ յօթն եւ երկիր յստակ վասն առողջութեան արանց բանակին մերոյ:

ԳԼՈՒԽ 330.

’Ի ժամանակի պատերազմի որում դաշտի որ իջեւանեսցի բանակս մեր ջուր ըմպելոյ ’ի աղբերաց եւ կամ ’ի ջրհորս ջրոց, նախ փորձեսցի ջուրն տալով ըմպել շանց եւ իշոց, եթէ գտցի մաքուր ապա իջցէ բանակն ’ի վերայ ջրոյն, եւ յամենայն ժամանակ կալոյ նոցա ’ի հարկաւորութիւն նոյն ջրոյն ըմպելոյ կացցէ պահակ ’ի վերայ ջրոյն ցայգ եւ ցերեկ զի մի՛ ’ի թշնամեաց ապականեալ գտցի ջուրն:

ԳԼՈՒԽ 331.

’Ի ամենայն տեղի իջեւանու բանակի թշնամեաց մերոց մի՛ իջցէ բանակն մեր անպատրաստ քանզի երբեմն կարի դաւաճանութիւն թշնամեաց թաղեալ վառհոդ տալ վնաս մեծ մեզ:

ԳԼՈՒԽ 332.

’Ի դաշտ բնակեալ բանակք մեր ուր որ իցէ վրան զօրագլխի անդ հաստատեալ կացցէ երկու դրօշակս որում աւուր եւ ժամու զի մի ’ի երկուս դրօշակի իջուցեալ երեւեսցի, սա՛ իցէ նշան զի յայնմ գիշեր եւ կամ վաղիւն առաւօտու խաղալոցէ բանակս առ այլ, եւ իջուցեալ դրօշակն առաջագոյն խաղասցի եւ իջցէ ’ի տեղի որում սահմանեալ իցէ վաղիւն իջանելոյ բանակի անդ ’ի յոտս կանգնեալ հաստատեսցի դրօշակն եւ անդ կանգնեսցի վրան զօրագլխին, որպէս առաջնում, նոյն գունակ ամենայն ոք ’ի բանակէ առաքեսցեն նախնթացս, եւ երկրորդ վրանս սպասաւորք հանդերձ, զի կազմեսցեն տեղի բնակութեան իւրեանց ըստ իւրաքանչիւր տեղի, վաղիւն ելանելով զօրք բանակի այր եւ ձիօք եւ հետեւակօք խաղալով ’ի նորում իջեւանս իւրաքանչիւր ոք գտցեն վրանս եւ տեղիս իւրեանց պատրաստ միեւնոյն կերպարանօք որպէս առաջինն:

ԳԼՈՒԽ 333.

’Ի ժամանակի խաղալոյ բանակի ’ի տեղիս՝ տեղիս հարկաւոր է ամենայն հազարապետ գնդաւ իւրով կարգաւ ընթանասցէ մի' խառնեսցի ’ի միոյ գնտէ զօրք առ ’ի գունտս միւսոյ:

ԳԼՈՒԽ 334.

Ամենայն հազարապետ ’ի ժամանակս թէ իջեւանի, եւ կամ թէ ’ի ընթանալոյ պարտ է լինիլ գնտաւ իւրով մի խումբ հանդերձ թօփով, վառյօդով եւ ամենայն հարկաւորութեամբ իւրով պատրաստ որպէս առ ’ի դիմամարտել:

ԳԼՈՒԽ 335.

Երկրաչափն բանակին պարտ է մի աւուր յառաջ քան զխաղալն բանակին առ այլ դաշտ մտցէ ’ի դաշտն եւ բաժանեսցի երկիր եւ ջուր վասն իջանելոյ բանակին կարգաւ, փորձեսցի ջուր եթէ գտցի մաքուր վասն ըմպելոյ արանց եւ անասնոց:

ԳԼՈՒԽ 336.

’Ի ամենայն տեղի որում իջեւանի բանակ շուրջ նոքօք մղոն մի հեռի ’ի բանակէ կացցի երիս տասնապետս երեսուն զինուորօք տասն ’ի սոցանէ այր եւ ձիոյ, քսան ’ի սոցանէ հետեւակ, եւ բոլոր շուրջ բանակաւ հեռի ’ի միմեանց մի մղոնաւ քանիցս գունտ երեսուն անձամբ որ որում կարէ քողաւորել բոլոր բանակն, այսպէս կալով մնասցեն զգոյշ, զի ոչ ոք ’ի այլ տեղէ մտանիլ կարիցէ ’ի բանակն առանց գիտութեան այն շրջապատեալ պահակաց, եւ ով ոք մերձենալով հասիցեն ’ի մերձ սոցայ, սոքայ նախ ազդ առնիցեն զօրապետի բանակին եւ հրամանաւ նորայ մտցէ մտանողն ’ի բանակն մեր, եթէ ’ի ժամ պատերազմի, եւ կամ խաղաղութեան, եւ եթէ ով ոք ’ի թշնամեաց յանկարծ արձակմամբ ելցէ ’ի վերայ բանակի մերոյ, սոքայ շրջակայ պահակս շեշտապի տացեն լուր մեծ բանակին, եւ եթէ գուցէ հանդիպեսցի ’ի գիշերի որում կողմ բանակի զի գտցի արձակող նոյն կողմ վառեսցեն հարթ տեղի բարձր եւ կրակեսցեն մի թօփ, սա' լիցի նշան ազդ առնելոյ բանակին զի թշնամին ’ի այնմ կողմ մերձ է, եւ այս պահակք շրջակայ բանակին փախեսցի ամենայն երիս աւուր մի անգամ այլ եթէ ժամանակ պատերազմի ամենայն աւուր մի անգամ:

ԳԼՈՒԽ 337.

Ոչ ոք այր ’ի որում կոչում կոչեցեալ իցէ, եւ ո'չ զէն եւ ո'չ կերակուր եւ ո'չ զանձ, եւ ո'չ անասուն եւ ոչինչ ելցէ ’ի բանակէ առանց թղթոյ հրամանի սպարապետին բանակին, զոր ինչ առանց հրամանի արգելցի ’ի շրջակայ պահակաց մինչ գտցի հրաման ելանելոյ:

ԳԼՈՒԽ 338.

Ամենայն գիր մտանող ’ի բանակն հարկաւոր է մտցի ’ի ատեն եւ ’ի տեսչութիւն սպարապետին եւ ամենայն գիր ելանող բանակէ հարկաւոր է ելանել հրամանաւ սպարապետին, եւ զամենայն զոր ինչ գրեցեալք եթէ արտաքոյ մտեալ ’ի բանակս, եւ եթէ ’ի բանակէ ելանող առ այլ յաշխարհ, սպարապետն ունի իշխանութիւն բանալոյ եւ կարդալոյ եթէ ունիցի երկմտութիւն ինչ ’ի վերայ գրէրոնցն, եթէ գտցի անարատ ’ի երկմտութենէ իւրմէ՝ իւրով կնքաւ յղեսցէ առ ’ի առաջադրեալ տեղի գրոյն տեառն իւրոյ ուր եւ իցէ:

ԳԼՈՒԽ 339.

Ամենայն զօրագլուխ հարկաւոր է պահել ընդ իւր զամենայն զոր ինչ պատուէր ’ի սպարապետէ իւրմէ, եւ ’ի ժամ պակասելոյ որում զօրագլխոյ որ իցէ զամենայն զոր ինչ նամակ եւ հրովարտակ եւ պատուէր եւ հրաման ստանացէ տեղակալ ննջեցելոյն, զի կարի ունիցի լուս պատուիրանաց Տեառն իւրոյ ’ի վերայ գործի զօրաց իւրոց եւ այլն:

ԳԼՈՒԽ 340.

Ամենայն իշխան եթէ ծայրագոյն եթէ փոքրիկ պակասելով եթէ մահու, եւ կամ եթէ 'ի պատճառէ մեղաց, նոյնժամայն երկրորդ նորայ մտցի 'ի տեղի նորայ, եւ ամենեքեան ըստ կարգի հնազանդել նմայ պարտին որպէս առաջնում, մինչեւ վերստին հաստատեսցի նա' 'ի Տանէ Հայոց նամակօք:

ԳԼՈՒԽ 341.

Ոչ ոք մտցէ 'ի պաշտօն տանուտէրութեան եւ ո'չ իշխանութեան 'ի յայս, բաց նոքայ որ լինիցին ընտրեալ փոխանորդ 'ի գաւառէ իւրեանց ըստ Օրինօք Հայաստանեաց:

ԳԼՈՒԽ 342.

Ամենայն վրէժխնդրութիւն 'ի միջի նախատողի եւ նախատեցելոյ պարտ է միմեանց երկուց անձամբ միայն լինի գիտութեամբ եւ ընդունելութեամբ երկոցունց, այլ ո'չ գաղտնի եւ դաւաճանութեամբ, եւ եթէ նախատօղն զղջասցի եւ զոչէ մեղայ նախատեցեալն պարտ է թողուլ նմայ, եւ եթէ 'ի պատճառէ այսպիսի վրէժխնդրութեան մինն մեռցի 'ի ձեռանէ միւսոյն նա' որ կենդանի մնացեալ մեռցի ըստ Օրինօք հրամանաւ դատաստանի:

ԳԼՈՒԽ 343.

Սովորութիւն եթէ գիշեր եւ եթէ ցերեկապահ զօրաց լինիցի, զի որում գունտ զօրաց որ լինիցի իբր երկու հազար եւ մին հարիւր զինուորք, որ 'ի սոցանէ մին հազար եւ չորս հարիւր հետեւակք եւ եօթն հարիւր այր եւ ձիոյ, պարտ է սոցայ երիս բաժինս առնել, իւրաքանչիւր զօրագլխօք, մի 'ի երից բաժնի որ համարի իբր եօթն հարիւր զինուորք, որում չորս հարիւր վաթսուն եւ վեց 'ի սոցանէ հետեւակ, եւ երկու հարիւր երեսուն եւ չորս այր եւ ձի, սոքայ 'ի երից աւուր մի անգամ լինիցին պահակ բաժանեալ 'ի հարկաւոր տեղիս եւ միւս մի բաժին եօթն հարիւր զինուորք 'ի տեղի եւ բնակութեան պատրաստականի ընդ զէնս պատրաստ, մնացորդ եօթն հարիւր զինուորս 'ի գործս իւրեանց եւ զբօսանս, այսպէս խաղալով որ 'ի ամենայն մի մասն 'ի միջի երից աւուրց մի անգամ տքնիցէ պահակութեամբ, մի աւուր պատրաստ 'ի տեղ պատրաստութեան եւ միւս աւուր 'ի զբօսանս:

ԳԼՈՒԽ 344.

Սա' լինիցի նշան յանկարծակի հարկաւորութեան, զի որում աւուր դրօշակ գնտոյ ցուցանէ յեղձուցեալ կախեալ 'ի փայտէ եւ թնդանօթ մի վառեալ, պարտ է ամենայն զինուոր 'ի այս գնտէ եւ դրօշակէ ընդ մէջ կալեալ եւ զինուորեալ պատրաստ 'ի յոտս կացցէ եւ սպասէ հրամանի զնդապետին իւրոյ, եւ եթէ 'ի գիշեր պարտ է հուր արկանել ընդ հարթ 'ի տեղի դրօշակի, եւ երեք թնդանօթս վառել, ծանիցէ նոյն որպէս ասացի վասն ցերեկի:

ԳԼՈՒԽ 345.

Ամենայն բնութիւն մարդոյ զոր ինչ պաշտօնի եւ կառավարութեան որ իցէ մինչեւ ցտեառք տանց եւ հասարակ ընտանեաց որ ոք ծախ վասն կարեաց անձանց, որ ոք հատուցում ռոճկաց 'ի սպասաւոր եւ աղախնեաց (բայց հարկից եւ մաքսից), զոր ինչ դրամ եթէ ոսկոյ եւ երծաթէ եւ պղնձէ եւ լոմանէ որ 'ի ձեռանէ իւրմէ հատուցանել պարտաւորեսցի վասն ծախելոյ 'ի վերայ հարկաւորութեան իւրոյ, եւ հատուցանելոյ գին գնեցելոյ իրաց վասն ծախի իւրոյ եւ ռոճկի որ ոք պաշտօնի եւ կամ սպասաւորի, ունի ազատութիւն հանել տասանորդս, մնացորդն միայն հատուցանել ում որ իցէ:

ԳԼՈՒԽ 346.

Ամենայն պաշտօնատարք եթէ իշխան, եւ եթէ սպասաւոր, եւ եթէ վարձկան եթէ վաճառական եւ զամենայն զոր ինչ վաճառող 'ի միտս իւր տպաւորեալ ունիցի զի 'ի ժամ ընդունելոյ ռոճիկս, եւ գին վաճառելոյ իրաց իւրոց ստանալոց է միմիայն ինն 'ի տեղի տասնաց, այսինքն ընդունելի եղեալ գին

արդեան եւ ընչից իւրոց որ քան որ իցէ, հատուցանողն հանիցէ տասանորդս եւ մնացորդ միայն հատուցանէ:

ԳԼՈՒԽ 347:

’Ի պատճառէ Օրինացն գլուխ 346 տասանորդէ ստացեալ բանն պարտ է լինիլ կամ ոսկի եւ կամ երծաթ, եւ այս հրահայելիք պիղծ լիցի վասն ամենայն բնութեան մարդոյ բնակողաց ’ի Հայաստանեաց յաշխարհի վասն ծախելոյ եւ վայելելոյ, եթէ ո'չ իւրաքանչիւր ոք ամուր եւ ապահով եւ թագստի տեղի պահել պարտ են անշարժ վասն յանկարծահաս պատուհասի եւ հարկաւորութեան ժամանակի, որ եթէ ’ի ոչ ոք պատճառէ զերծանիլ եւ փրկիլ ոչ կարի, սա' լիցի ծախ վասն փրկութեան իւրաքանչիւր պահողաց:

ԳԼՈՒԽ 348.

Ամենայն եւ ով ոք անօրէնութեան ծնեալ երեխայ ’ի յերեսս Աշխարհին Հայաստանեաց եթէ արու եւ եթէ էգ, անուանակոչութեամբ եւ ’ի յիշելոյ անունն նմայ թէ ում որդի եւ կամ յումմէ դուստր՝ մի լիցի ոչ ոք այլ անուամբ ’ի կողմանէ հայրութեան, բայց անուն սրբոյն որում աւուր երեխայն այն մկրտի ’ի տօնի նորա անուն նոյն սրբոյն եղիցի անուն հօր նմայ, թէպէտ մայր նորա անօրէնութեամբ յղացաւ եւ բնականապէս ծնաւ, այլ ’ի շնորհէ սրբոյ աւետարանի մկրտութեան մկրտեալն զտցի շնորհ տանիլ ’ի վերայ իւր որդիութիւն որում սրբի տօնի օր մկրտեցաւ:

ԳԼՈՒԽ 349.

Մի' ոք անօրէնութեան ծնունդ թէ արու եւ թէ էգ մի' յիշխեսցի ժառանգ եւ ժառանգորդ լինիլ հօր, քան զի ոչ ոք կարէ հաւատալ թէ յումմէ ծնաւ, բայց ’ի վկայութեան մօր իւրոյ, եւ ով ոք մայր որ այնքան լրբասցի մինչ անկողինն մաքուր ամուսնութեան իւրոյ պղծեալ ծնցի անօրէնութեամբ զաւակ, վկայութիւն նորայ անարժան է, վասն այսորիկ բարձցի ժառանգութիւն ամենայն անօրէնութեամբ ծննդոց, բայց այն որ պիղծ հայր եւ մայր նորայ ընդ կտակս մահուան իւրեանց շնորհեսցեն նմայ, սա' եւս ոչ հռչակելով իբր մասն ’ի ստացուածէ իւրեանց ժառանգութիւն անօրէնութեամբ ծնեցելոց իւրեանց, եթէ ո'չ միայնակ տալով պարգեւ իբր Օտարաց, այլ եթէ լրբեցեալն յիշատակեսցի ’ի կտակս իւր յայտնելով անօրէնութեամբ ծնեալս իբրեւ ժառանգորդ իւր զոր ինչ ’ի նմայ տուեալ, անարժան տուրք համարեսցի, եւ մի' զտցի նաեւ Օրինօք ժառանգք կարեն արհամարհել, եւ զրկել նմայ ’ի այն նուիրանաց:

ԳԼՈՒԽ 350.

Կարգ վաճառելոյ երկիր եթէ ’ի մէջ քաղաքաց եւ ’ի յերեսս երկրի դաշտաց անուն Օրինաւոր վասն վաճառելոյ երկիր, յիշեսցի յազարակ մի որ զտցի երկայնութեամբ 240 ուղուկ եւ լայնութեամբ 160 ուղուկ որում համապատասխանէ երկայնութեամբ 60 ոտնաչափ եւ լայնութեամբ 40 ոտնաչափ, սա' յիշեսցի ’ի միջի մեր յազարակ մի եւ ամենայն գնողն եւ վաճառող ըստ արժանեաց յերկրին խօսելով զին յազարակի միոյ, որում քանակութեամբ որ հաճեսցի կամաց գնողին եւ վաճառողի հաստատելով զին յազարակի միոյ եւ ապա չափեսցի երկիր որքան յազարակ որ իցէ հատուցանէ գնողն զին իւրաքանչ յազարակի եւ չափ լինիլ սորայ պարտ է այսպէս, որ ամենայն 38400 բազմացուցեալ ուզուկ համարեսցի մի յազարակ այսինքն.

Երկայնութիւն մի յազարակի.	240 ուղուկ
Լայնութիւն.....	160 ուղուկ
	000
	1410
	240
բովանդակ բազմացելոյ	38.400 բազմացուցեալ ըղուկ:

Եւ որ յաւելի կամ պակաս 'ի մի յագարակի համարեսցի միեւնոյն որպէս 'ի վեր այսպէս.

Երկիր երկայնութեամբ.....	12400 ուղուկ
Եւ լայնութեամբ	685 ուղուկ
	62000
	99200
	74400
բովանդակի բազմացուցեալ	8494.000 ուղուկ

Որում գոյացաւ բազմացուցանելով ուզուկս 84 բիւր եւ 9 հազար եւ քառասուն ուղուկ, ամենայն 38400 ուղուկս յագարակ մի համարելով համարի յագարակս 273 եւ 28, տուկրայ որ ամենայն 100 տուկրայ համարի մին յագարակ:

ԳԼՈՒԽ 351.

Եթէ 'ի Տանէն Հայոց եւ եթէ իւրաքանչիւր ոք վաճառողաց զոր ինչ յերկիր 'ի սահմանս որում քաղաքի զի թղթաւ տացցի եւ կամ վաճառեսցի յումեք, պարտ է թուղթն այն ունիլ նումրս եւ օրինակել 'ի տան դատաստանի քաղաքին համեմատութեամբ եւ համարաւ, որ եթէ գուցէ գնող եւ կամ վաճառող յերկրին կորուսանիցէ թուղթն՝ կարի նշանաւորութեամբ նումրովն գտանել կրկին 'ի տանէ դատաստանի քաղաքին իւրոյ:

ԳԼՈՒԽ 352.

Ով ոք որ կորուսանիցէ թուղթ յերկրին իւրոյ 'ի պատճառէ կերիչ որթանց, եւ 'ի կիզմանէ հրոյ, եւ կամ թրջեալ ջրոյ փթեալ եւ այլն, նա' եթէ կացուցանիցէ առաջի ատենի դատաստանին քաղաքին իւրոյ երիս վկայս 'ի դրացեաց եւ 'ի գեօղէ իւրմէ, զի նոքա երդմնելով տացեն վկայութիւնս իւրեանց թէ սա' այրս հաւաստի է Տեառն տանն որ 'ի գեօղն Մեղրի եւ կամ 'ի որում գեղի 'ի փողոցն Գասպարէնց, հարաւ կոյս դրացի Մարտիրոսի, եւ հիւսիս կոյս Բաղրամի յարեւել կոյս դրացի Մաղաքիէ, եւ տունն որոյ յարեւելեան կողմանէ առ արեւմուտ երկայնութեամբ 240 ուղուկ եւ լայնութեամբ 160 ուզուկ եւ թուղթ տանն էր նումր 2814 եւ այլն եւ ապա' դատաւոր քաղաքին համեմատելով ընդ նումրն դաֆտար օրինակի տացէ նմայ նոյն նշանաւորութեամբ եւ չափով թուղթ տան նմայ, եւ սա' թուղթս արժանի համարեսցի Տեառն ունիլ որում անուամբ որ իցէ, բայց եթէ ոչ ոք ոչ ելցէ եւ ունիցի թուղթ հին վաճառման 'ի վեր յիշեցեալ տանն 'ի ձեռին իւրում:

ԳԼՈՒԽ 353.

Սահման հանելոյ վիճակս 'ի վերայ իւրաքանչիւր 100 տղայից որ ելցէ 'ի միջէ միայն հինգ տղայս վասն զինուորութեան, ընկալ երկու հարիւր կտոր թուղթս եւ գրէ անուն 100 տղայից, իւրաքանչ անուն 'ի վերայ մի թղթու, ամրափակեայ յատուկ, այս 100 թուղթս ձգէ 'ի մէջ պարկի միոյ եւ առ միւսն 100 սպիտակ թուղթ 'ի վերայ 5 թղթոյ գրէ ,Զինուորե սա' հինգ թուղթս զինուոր անուամբ հանդերձ 95 թուղթ սպիտակաւ որ բովանդակի 100, սա' եւս ամրափակեայ եւ ձգէ 'ի այլ պարկս, եւ բազմացոյ ամենեցուն հանդարտ տեղիս եւ 'ի միջի նոցա յոտս կացս երկու պատանիս, եւ տուր նոցա 'ի վեր ասացեալ երկու պարկս որ ունի իւրաքանչիւր հարիւր թուղթն եւ հրամայէ նոցա խառնել եւ ապա նախ առնուլ յանունն Աստուծոյ 'ի բերանն եւ ապա իւրաքանչիւր տղայն դաստառակօք փակեա' ակն նոցա եւ տուր հրաման իւրաքանչ տղայն 'ի պարկէ իւրմէ հանել միմիայն մի թուղթ, որում անուն հանեալ գտցի 'ի միւս պարկէն

անուն ,Զինուորե նմայ ելաւ վիճակ զինուորութեան եւ որում տղայն անուն իւր ելցէ 'ի միւս պարկէ թուղթ սպիտակ նա' լինիցի ազատ երթայ 'ի խաղաղութեան:

ԳԼՈՒԽ 354.

'Ի դատաստանէ ամենայն քաղաքաց 'ի միջի դատաւորաց պարտ է ընտրել ամենայն ամսի այր մի եւ տալ իշխանութիւն նմայ ժամանակաւ մի ամսաւ յիշխել 'ի վերայ յանկարծակի գանգատաց թէ 'ի այգ եւ եթէ 'ի գիշերի եւ Օգնական լինիլ գանգատօղի եւ կալանաւոր առնել փախչօղի մինչեւ Օրն դատաստանի մուծանել նմայ 'ի դատաստան:

ԳԼՈՒԽ 355.

Իշխան ամսոյն ունի իշխանութիւն դատել այսոցիկ այսինքն, գանգատ եւ հայցմունք եթէ լինիցի քանակութեամբ մինչեւ քսան դահեկան երծաթի, եւ փոքրիկ հարկանօղք 'ի արբեցեալ արանց եւ բնական տղայաբար բարկութեամբ դղրդեալ, եթէ երկուց կողմանէ կամին հաշտել ըստ խնդրոյ հարկանողին ներողութեամբ, եւ կամ 'ի պատճառէ հայհոյելով միմեանց, եւ կամ ճարակելոյ անասուն միոյ 'ի արտն միւսին, եւ կամ հաւն եւ կամ աղաւնին դրացուն գտեալ 'ի տանն դրկցին, եւ կամ կողոպտեալ ջուր բաժին այլոց յոռոգանիլ արտն իւր, եւ կամ խածատել շուն անասնոյ այլոց, եւ ով ոք սպանեալ շուն այլոց, այսպիսի վնասուց, սա' դատաւորս դատելով բաւական լիցի, եւ մի' մտցի կրկին դատաստան, եւ դատաւորս այս պարտ է սոցայ դատել ըստ Օրինօք, եւ եթէ անօրէնութեամբ գանգատողն եւ կամ դատախազն ունի արձակութիւն գանգատել 'ի այս դատաւորէս 'ի Տունն Դատաստանի եւ գտցէ դատաստան 'ի վերայ անօրէնութեան դատաւորին ամսոյն:

ԳԼՈՒԽ 356.

Աղ եթէ քարէ եթէ փշուր 'ի հանքէ, եւ կամ 'ի ջրոյ շինեցեալ կացցէ եւ մնասցէ ժառանգութիւն Տանն Հայոց, եւ մի' ոք ձեռնամուխ լինիցի 'ի այս գործ:

ԳԼՈՒԽ 357.

Ամենայն վաճառելեաց միջնորդ, այսինքն դալալ, պարտ է պահել համար իրաց վաճառեալ եւ գնեալ իրաց, եւ մնալ վկայ զոր ինչ գին հաստատեցեալ 'ի վերայ բանին վաճառեցեալ, եւ ստանալ վարձ վաճառողէն հարիւրն մի, եւ գնողէն հարիւրին մի առանց աւելի:

ԳԼՈՒԽ 358.

Ամենայն տուն եթէ յԱստուծոյ, եթէ իշխանին, եւ թէ ռամիկ ժողովրդի կառավարեսցի հրամանաւ Տեառն տան իւրոյ, ով ոք բնակիչք 'ի նմա հնազանդեսցի հրամանի տան տեառն, բայց հրամանէ որ իցէ ընդ դէմ յօրինացն Տանն Հայոց, եւ ոչ ոք այր 'ի որոք տան մի' հնազանդեսցի հրամանի ումեք եթէ լինիցի ընդ դէմ յօրինացն Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 359.

Տանն յԱստուծոյ կացողք ըստ սահմանի էկլէզիաստիկաց, այլ ով ոք մտանող 'ի տուն Տեառն առ 'ի պաշտել զԱստուած կալով հեզ եւ խոնարհ իւրաքանչիւր աստիճանի 'ի տեղի իւր կացցի այսինքն.

Նախարարի 1 առաջի աստիճանի: Իշխանաց 2 Զօրագլխաց 3 Զինուորաց 4 Վաճառականաց 5 Հողագործից 6 Արհեստաւորաց 7

ԳԼՈՒԽ 360.

Ով ոք աղմկեսցի եւ բարձրաձայն կռուեսցի 'ի մէջ սուրբ Եկեղեցւոյ աւագերէցն եւ երիցփոխանն ունին իշխանութիւն հանել նմայ 'ի յերեսէ սրբոյ սեղանոյ առ արտաքս, ո'չ ոք ընդդիմասցի սոցա, եւ յետ արձակելոյ ժամին այրն աղմկող եթէ եկեղեցական յանձնեն Եպիսկոպոսին գաւառին յայնմիկ զի

դատեսցի, եթէ աշխարհական յիշխան քաղաքին զի վճռեսցի այսպիսի մեղաւորիս զի մտցէ 'ի բանտ քսան եւ մի աւուր ծախիւք իւրօք եւ ապա' ելցէ, եւ եթէ այրս այսպիսի մեղուցեալս լրբաբար կրկին մեղիցէ՝ մտցէ' բանտ եւ հատուցանեսցէ տասն դահեկան տան աղքատաց, եթէ դեռ եւս մի' զսպեսցի վարք իւր մտցէ 'ի բանտ եւ զան հարեսցեն հռչակաւոր տեղի քսան եւ չորս ղամչի:

ԳԼՈՒԽ 361.

Աստիճան կանաց 'ի տան Տեառն 'ի վերայ իւրաքանչիւր աստիճանի այսինքն.

Տիրուհի 1 առաջի աստիճանի: Իշխանուհիք 2 Տիկինք զօրագլխաց 3 Զինուորաց, վաճառականաց, հողագործաց, արհեստաւորաց 4

ԳԼՈՒԽ 362.

Ով ոք բարկացեալ ըստ անձամբ վրէժ հայցէ 'ի բարկացանողէ իւրմէ, եթէ բարկացանողն մեղմաբար հրաւիրեսցի նմայ դատաստան բարկացեալն ո'չ ունիցի իշխանութիւն այլ իմն վրէժխնդրութեան բայց զանգատեսցի 'ի Տունն Դատաստանի եւ գտցի վճիռ արդարութեան:

ԳԼՈՒԽ 363.

Ով ոք բարկացեալ եւ անձամբ վրէժխնդրող յետ երիս անգամ հրաւիրելոյ բարկացանողին զի ելցէ ընդդէմ իւր եւ տացէ անձամբ վրէժ բարկութեան սրտի իւրոյ, եւ ընդդիմանայ բարկացողն երիցս անգամ խնայելով, եւ առաջի վկայից խոստանալով զի ամենայն պարտ մեղաց իւրոց հատուցանելու յօժար է, եթէ ելցէ հրաման դատաստանի եւ 'ի գանգատէ բարկացողի, յետ այսորիկ եթէ բարկացողն ամբարշտեալ ելցէ 'ի վերայ ընդդիմակացի իւրոյ, եւ 'ի պատճառէ բարկութեամբ արձակմանէ իւրոյ եւ ընդդիմակացն 'ի ջանացողութենէ փրկութեան անձին իւրոյ, զուցէ անկանիցի բարկացողն եւ մեռցի, եւ ընդդիմակացս վկայիւն հաստատեսցի առաջի ատենի դատաստանի, որ յինքն երիս անգամ հրաժարելով խոյս ետ ելանել ընդդէմ առն բարկացողի եւ խոստացաւ հատուցանել նմայ զամենայն պարտս մեղաց իւրոց, որ առ բարկացողն եթէ գտցի պարտաւոր առաջի ատենի դատաստանի, եւ բարկացողն ո'չ լուաւ եւ յինքնակամ սրտիւ արձակեցաւ 'ի վերայ ընդդիմակացի եւ ընդդիմակացն ընդիմանալով փրկել զանձն իւր պատահեցեալ զի անկեալ եւ մեռեալ, բարկացողն արիւն նորայ 'ի ընդիմակացէ մի' խնդրեսցի:

ԳԼՈՒԽ 364.

Ոչ ոք Հայրապետ, Նախարար, Եպիսկոպոս, տանուտէր, քահանայք, յիշխանք աշխարհի մի' հրամայեսցեն 'ի վերայ ո'չ ումեք արտաքոյ աստիճանի իւրեանց, եւ կամ յաւելի քան զայն, որ տուաւ նոցա ըստ իւրաքանչիւր կարգի եթէ էկլէզիաստիկէ, եւ եթէ 'ի Տանէն Հայոց:

ԳԼՈՒԽ 365.

Հայրապետ, Նախարար, Եպիսկոպոս, տանուտէր, քահանայք եւ ամենայն կարգի յիշխանք աշխարհի արտաքոյ աստիճանի իւրեանց իւրաքանչիւր անձամբ ըստ բնական եւ բանական բնութենէ իւրեանց ըստ կամաց եւ ըստ հաճոյից իւրաքանչիւրոյ շարժիլ գործել զամենայն աւուրս կենաց իւրեանց, թէպէտ բնական բնութիւն մարդոյ յորդորէ այլ պարտ է նոցայ ընդունելով յանձն առնուլ 'ի վերայ իւրեանց վարձս գործոց իւրաքանչիւր ձեռաց 'ի յօրինացն հայոց:

ԳԼՈՒԽ 366.

Ոչ ոք քահանայ ոչ դիցէ ձեռս իւր 'ի վերայ ո'չ ոք երիտասարդի եւ կուսի, եւ առն եւ կնոջ Օրհնելոյ առ 'ի ամուսնութիւն եթէ չիցէ ծուխ եկեղեցւոյ իւրոյ, եւ յատկապէս հրաման եպիսկոպոսի գաւառի իւրոյ եւ ընդունելութիւն իշխան յաշխարհին ամուսնացողաց:

ԳԼՈՒԽ 367.

Ամենայն բնակիչք յԱշխարհին Հայոց, եթէ սեպհական Ազգէն Հայոց, եթէ պանդուխտ 'ի այլ ազգէ բնակեալ 'ի Հայս, ժամանակի խաղաղութեան կարող է ստանալ հրաման իշխան աշխարհէն իւրմէ ելանել ընչիւք եւ ընտանեօք առ այլ յաշխարհ ուր եւ ինքն կամեսցի, այլ եթէ գաղտնի եւ առանց հրաման ելցէ զոր ինչ ստացուածք նորայ ձեռս անկանիցի 'ի տունս աղքատաց, գրեսցի զի լինիցի ժառանգութիւն տանն աղքատաց Հայոց, եւ երկիրն նորայ դատաւոր յաշխարհին վաճառել կարէ եւ տալ թուղթ վաճառելոյ գնողին այն թուղթ վաճառելոյն համարեսցի իբրեւ վաճառումն սեպհական Տեառն փախստական առն, բայց յառնէ միայնակ փախչեալ 'ի պատճառն մարդասպանութենէ եւ կամ որ ոք քրէական մեղաց եւ կամ պարտուց ընչից ինչս նորա մնասցէ ժառանգութիւն ընտանեաց եւ պարտատերաց իւրոց:

ԳԼՈՒԽ 368.

Ամենայն իշխանք ամենայն Աշխարհին Հայոց մի' խնայեսցեն խնդրողաց տալ թուղթ արձակութեան ելանելոյ յինքն ընտանեօք եւ ամենայն ընչիւք առ այլ գաւառ եւ կամ տարր յաշխարհ, բայց ժամանակի պատերազմի մի' ելցէ եւ տարցէ ինչս իւր 'ի յաշխարհն թշնամեաց Հայոց, եթէ ո'չ ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 369.

Ամենայն առաջադրութիւնք 'ի միջի ամենայն բնակողաց Հայոց 'ի վերայ զոր ինչ եւ իցէ գործոց, հարկաւոր է ձեռնադրել թուղթ ուխտի եւ դաշնոյ, եւ 'ի նմայ յիշատակել տուգանքն ուխտազանց եւ դաշնաբեկ արանց տոկոս ըստ արժանւոյ գործին, որ եթէ գուցէ ով ոք գտցի ուխտազանց նա' ինքն իւրն դատապարտեալ հատուցանելոյ տոկոս ուխտազանցութեան իւրոյ:

ԳԼՈՒԽ 370.

'Ի մէնջ յԱշխարհին Հայաստանեաց բնակողաց, որ ոք այլ յազգ անօրէն եթէ հեթանոս, եթէ մահմետական, եթէ եբրայեցի եւ այլն ունին արձակութիւն ամենայն կերպ սովորական եւ վաղնջոց ծէս իւրեանց պահել, եւ 'ի միջի իւրեանց որ ոք տարաձայնութիւն եթէ ելցէ հարկաւորէ ըստ սովորութեան իւրեանց 'ի միջի իւրեանց ինքեանք ընտրել դատաւոր եւ ձեռնադրել թուղթ տոկոսի, զի հնազանդեսցեն հրամանի դատաւորաց իւրեանց (բայց 'ի մահ) եւ որ այսպէս ո'չ ոք դատաւոր եւ Տուն Դատաստանի մի' յիշխեսցի 'ի վերայ սոցայ, այլ եթէ սոքայ ըստ կամաւ ելցեն եւ գանգատեսցեն 'ի Տուն Դատաստանի հարկաւոր է դատաւորն ընդունեսցի կամք յանդիմառոին գանգատողի իւրոյ, եթէ յանդիմանողն նա' կամի մտանել դատաստան, ապա ըստ Օրինօքն Հայոց դատեսցեն նոցա, եթէ ո'չ պարտաւորեսցէ նոցա զի ընտրեսցեն դատաւոր 'ի միջի իւրեանց, ընդունեսցեն վճիռ 'ի դատաւորացէ իւրեանց ըստ հնոց սովորութեան յազգին իւրեանց, բայց 'ի մեղաց քրէական որ ամենեքեան պարտ են ընդունիլ վճիռ դատաստանի յաշխարհին հայոց, որում իւրեանք բնակին:

ԳԼՈՒԽ 371.

Ոչ ոք սպասաւոր 'ի որ ոք իշխանի եւ իշխանութենէ հրամանաւ որ իցէ մի' մտցի 'ի սենեակս կանաց, յատկապէս կանաց ամուսնացելոց, զի մաքուր է եւ դալար, ո'չ ոք աղմուկ եւ դղրդում եւ տարակուսութիւն ո'չ ցանկամք ծնողաց մերոց կանաց եւ ապագայ ծնանելոյ վասն մեր որդոց մայրց, վասն որ ոք պարտականութեան որ իցէ, բաց վասն քրէական եւ մահապարտ առն ըմբռնելոյ յաղագաւ:

ԳԼՈՒԽ 372.

Ամենայն ծայրագոյն իշխան 'ի վերայ վիճակին իւրոյ յաշխարհին ունի զօրութիւն հրամայելոյ խորհրդակցօք հանդերձ, ըստ համեմատութեան Օրինացն Հայոց, եւ ամենայն զօրագլուխ եւ որ ոք մասնաւոր յիշխանք նոյն վիճակի յաշխարհի ճանաչել պարտ են զօրութիւն նորայ, իբրեւ զօրութիւն

Տանն Հայոց, եթէ գտցի անթերի եւ անսխալ համեմատ Հայաստանեաց, եւ ոչ ինչ մազ մի չափաւորութեան եւ արժանաւորութեան ընդ դէմ Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 373.

Ով ոք հրաւիրեսցի բարեկամաց իւրոց 'ի տունս իւր պատուելոյ նոցայ ճաշ եւ ընթրիս, եթէ իշխանաց եւ եթէ բամբշաց, եւ եթէ հասարակ ժողովրդոց եւ տիկնաց, պարտ է ճանաչիլ աստիճանս իշխանաց եւ բամբշաց, եւ ապա' հարկաւոր է հրաւիրումն շարել 'ի յերեսս թղթոյ, ծանուցանելով սեղանն իւր որ ունի այսքան աթոռ բազմելոյ, երկրորդ նշանաւորեսցի անունք հրաւիրեցելոց համարաւ այսինքն.

Նօմրայ 1 Մարտիրոս առաջի 'ի աջ զթեւ.2 Բաղրամ երկրորդ

3 Յարութիւն երրորդ

4 Մաղաքիայ չորրորդ

5 Զաքարիայ հինգերորդ

6 Մանասէ վեցերորդ

Այսպէս 'ի ձախ թեւ:

Եւ այսպէս համարելով մինչեւ որքան անձինք որ լինիցին զի հրաւիրեալք անձինք առաջագոյն ծանիցեն աստիճան բազմենալոյ իւրաքանչիւրոց 'ի վերայ սեղանի զի մի' գայթակղեսցեն, ո'չ ոք մի' յանդգնեսցի յիշխել նստուցանել զինքն 'ի տեղի այլոց, այսպէս յառաջ քան զխոստանալն իւրաքանչիւրոք մտանել 'ի տեղի հրաւիրեցեալ տան, երկայնամիտ լինելով եթէ հաճեսցի կամացն իւր նոյն կարգաւ բազմիլ 'ի սեղան երթիցէ, եւ եթէ գտցի անպատուութիւն ինչ 'ի աստիճանի իւրոյ, մերումն խնդրելով հրաժարեսցի. այսպէս լինիցի սահման 'ի վերայ բամբշաց եւ տիկնոց եթէ բազմիլ 'ի սեղան եւ եթէ 'ի յոտս կալ առ 'ի կաքաւ, եւ ո'չ ոք յիշխան եւ հասարակ այր բամբուշ եւ հասարակ տիկին որ 'ի տան հրաւիրեալ մի' գտցի, հարբեալ եւ անպատեհ շարժեալ, եւ բանալ բերանս իւր համարձակ, եւ եթէ գուցէ այսպիսի անպատեհ շարժող առն այն եթէ այր եւ եթէ կին ով ոք որ իցէ՝ ո'չ ոք կրկին հրաւիրեսցի նմայ 'ի հանդէս եւ եթէ 'ի պատճառէ ընտանեակցութենէ հրաւիրողի հարկեսցի ումեք հրաւիրել, այլ հրաւիրեալքն ամենայն խոյս տացեն եւ ներողութիւն խնդրեսցեն եւ ոչ ոք մտցէ 'ի հանդէսն որում աղմկողն հրաւիրեալ գտցի:

ԳԼՈՒԽ 374.

Ամենայն իշխան քաղաքաց ամենայն տարւոջ չորս անգամ արասցեն հանդէս եւ հրաւիրեսցեն նշանաւոր արք 'ի ճաշ, եւ արք եւ կանայք ընթրիս եւ կաքաւել. մի

Յունվարի 6 տօնի սրբոյ յայտնութեան ձմռան.

մի Յունվարի Տօնի Սրբոյ Յայտնութեան ձմեռն

մի . . Տօնի Սրբոյ Յարութեան գարնան.

մի . . Տօնի Վարդավառի 'ի ամառնան.

մի . . Տօնի Սուրբ Խաչի 'ի աշնան.

Մինչ դեռ բազմեալ 'ի սեղանն ճաշի ուտել եւ ըմպել իւրաքանչիւրոք, որում բնութիւն իւր խոստանասցէ յետ ագենելուն հարկաւոր է յիշխան քաղաքին առնուլ բաժակ գինով 'ի ձեռս իւր եւ այց արասցէ բարձրաձայն հնչմամբ 'ի աջ եւ ձախ թեւ ընդ իւր բազմողաց ասելով այսինքն.

Առաջին անգամն բարի կեցութիւն ամենայն հայոց, եւ սմայ վառեսցեն շուրջ պարսպի եղեալ թոփերն.

Երկրորդ անգամն, երկայն կեանս Նախարարին Հայոց Վրթանայ սմայ... 21 թոփ

Երրորդ անգամն, երկայն կեանս Հայրապետին Հայոց տեառն Զաքարիէ

եւ բոլոր Եպիսկոպոսաց..... 19 թոփ

Չորրորդ անգամն, առատ պտղաբերութիւն տնկոց Հայաստանեաց ..... 17 թոփ

Հինգերորդ անգամն, սէր դրացեաց մերոց հաստատուն ընդ Հայք ..... 15 թոփ

Վերջ բարի հանգստութիւն հրաւիրեալ եղբարց …….. 13 թօփ

Եւ ապա' յոտս կացցեն գոհութեամբ ելցեն ամենեքեան առ տունն իւրեանց, եւ ընթրիսն յիրիկուան հանդարտ եւ խաղաղութեամբ ո'չ երբէք յաւելորդութիւն ըմպելոյ, եւ ո'չ այլ ինչ համարձակաբար խրախճանութիւն եւ ո'չ ումեք կենաց յաղագաւ ըմպել եւ ո'չ թօփ վառել բայց հեզ եւ խոնարհ եւ մեղմ շարժմամբ, ամենայն այր ջանայ ծառայել կանանց Օգնական նոցայ լինիլ սրբութեամբ ուտացանել եւ ըմպել նոցայ քիչ գինի ջրով խառնեալ, եւ տալ տեղի նոցայ լսել ձայն երգոց տաղուաց եւ նուագարանաց, եւ կաքաւել հեզութեամբ եւ ամօթխածութեամբ եւ միաբան ուրախ լինիլ 'ի առաքինութիւնս իւրեանց մինչեւ բոլոր գիշերն եթէ կամին, եւ իւրաքանչ ոք ազատապէս կարէ ելանել առ տունն իւր որում ժամի որ ինքն կամի:

ԳԼՈՒԽ 375.

Ուր ոք տան որ լինիցի կին յղի 'ի ժամ ծնանելոյ նորայ հարկաւոր է հրաւիրել քահանայ ոմն զի բերցցէ ընդ իւր սրբազանագործիք մկրտութեան դրոշմի եւ հաղորդելոյ հանդերձ սուրբ աւետարան խաչիւ եւ այլ հարկաւոր զգեստիւք 'ի տունն ծնանելոյ կնոջ, եւ պատրաստ ընդ կենալ մինչեւ կինն ծնցի, եթէ գուցէ ծնեալն տկար եւ այլ որ ոք պատճառի որ տա' տեղի կասկածանաց պահելոյ նմայ մինչեւ ժամանակ սահմանի եկեղեցւոյ այսինքն, եօթն աւուր, եւ ապա' մկրտիլ, իսկոյն մկրտեսցի դրոշմեսցի վերջին Օծումն տացի եւ հաղորդեսցի երեխայն, յառաջ քան զվնաս ինչ 'ի վերայ կենաց երեխային յանձն առնուլն, այլ եթէ երեխայն առողջ թոյլ տացէ նմայ մկրտիլ, յաւուրն սահմանի:

ԳԼՈՒԽ 376.

Մի' ոք առանց հրաւիրելոյ մի' մտցէ 'ի տուն ո'չ ծնեալ մանկանց եւ ո'չ ամուսնացեալ արանց եւ կանաց վասն շնորհաւորելոյ ծնունդ նորայ մանկան եւ հարսանիսն ամուսնացելոյ, եւ ամենայն ընտանի եւ Տեառն տան որում գտցի ծնունդ եւ ամուսնութիւն, հարկաւոր է հրաւիրել նոցայ որում ինքեանք սիրեն եւ ցանկան տեսանել ընդ խրախճանութիւնս իւրեանց, հրաւիրումն հարկաւոր է լինիլ, այսպէս որ 'ի յերեսս միոյ թղթոյ շարեսցի, այսինքն.

Եղիսաբեթ տիկին ամուսին պարոն Մաղաքիայի դեկտեմբերի ամսի 14 պատկեր աւուրն երեքշաբթի առաւօտեան 6 ժամին ծնաւ մանուկ մի արու սպասաւոր ձեր եւ մխիթարութիւն ծնօղաց իւրոց շնորհօքն Աստուծոյ ծնեալ եւ ծնօղն առողջ են հանդերձ բոլոր ընտանեօք, սպասին ցնծութեամբ ընդունիլ սէր ձեր 'ի առաջի մեր դեկտեմբերի 17, պատկեր աւուր շաբաթ առաւօտեան եօթն ժամէն մինչեւ ցը 10 ժամ. նոյն աւուր յիրիկուան 5 ժամէն մինչեւ ցը ութն ժամ, ով ոք 'ի ձէնջ կամի փառաւոր մեզ առնել պատուելով մեզ 'ի նոյն սահմանեալ ժամանակի պատրաստի գտցի մեզ շնորհակալութեամբ, եւ այսպէս հարսանեաց:

Եւ բարութիւն բանիս յոյժ լիցի նախ որ մի անգամ միմիայն պատրաստութեամբ եւ միջոց մի աւուր ժամանակաւ փրծանի 'ի զանազան ծախէ եւ նեղութենէ, եւ նոյն Օրն 'ի տունն նորա նմանի իբր տօն հանդիսի գեղեցիկ փայլմամբ եւ այլն:

ԳԼՈՒԽ 377.

Ոչ ոք առանց հրաւիրում մի' մտցէ 'ի տուն ննջեցելոյ ո'չ ընկերակցութիւն դիոյն առ 'ի գերեզման, եւ ո'չ մխիթարելոյ մնացորդաց, բայց 'ի նոցանէ որ գտցեն զինքեանց հրաւիրեալ, նա'եւս հրաւիրեալքն եթէ դասք քահանայից, եւ եթէ հասարակ ժողովրդոց ո'չ լինիցի վասն բազմենալոյ 'ի ճաշ եւ ո'չ ընթրիս, եթէ ո'չ միայն պատուել մնացորդս ննջեցելոյն ելցեն 'ի տանէ ընկերակցութեամբ դիոյն մինչեւ 'ի Եկեղեցի, կալով մնասցեն մինչեւ կատարեսցի թաղումն դիոյն, եւ ընկերակցութեամբ մնացորդաց ննջեցելոյն յետս դարձցեն 'ի տուն, ամենեքեան գրկեալ համբուրեսցեն մնասցորդս ննջեցելոյն մխիթարական բանիւ, եւ ելցեն իւրաքանչիւր 'ի տուն իւր, տան ննջեցելոյն 'ի նոյն աւուր մի' պատրաստեցի կերակուր վասն այլոց, ո'չ քահանայից ո'չ աղքատաց, եւ ո'չ հասարակ ժողովրդոց, բայց բնակողաց տանց, եւ յաւուրն եօթներորդի մնացորդացէ ննջեցելոյն լինիցի հրաւիրումն բարեկամաց եւ քահանայից իւրեանց 'ի ճաշ, ում եւ որ քան արանց որ յինքեանք կամեսցեն, եւ եթէ հրաւիրումս եօթներորդի աւուր թաղման ով ոք

ո'չ կամի առնել, եւ կամ զանց արասցէ, նմա ամօթ մի' լինիցի, եւ եթէ ննջեցեալն լինիցի այր ուրեմն հրաւիրեալ ընկերակիցք հարկաւոր է լինիցեն միայն արու, եւ եթէ ննջեցեալն իցէ կին հրաւիրեալքն կարի լինիլ այրք եւ կանայք, եւ հասարակապէս ծախ ննջեցելոց իցէ եթէ թաղման եթէ պաշտօնի եթէ բաժին բարեկամաց այսինքն,

Եպիսկոպոսաց իւրաքանչիւր անձանց

դահեկան երծաթէ. . . 4

Վարդապետաց . . . 1

Քահանայից . . կէս 1 2

Սարկաւագաց. . . . 1 4

Գերեզման բրօղաց. . . 2

Դին 'ի գերեզման դագաղակրաց. 2

Հասարակ հրաւիրեալ ժողովրդոց արանց իւրաքանչիւր անձանց կտաւ սպիտակ վեց կանգուն:

Աղքատքն կարող են հրաւիրել ընկերութիւն եւ երթացողն պարտ են անխնայ երթալ եւ մի' սպասել 'ի վեր յիշեցեալ սովորական հատուցման ոչ ինչ, բայց վարձ վաստակոց իւրեանց հատուցենէ նոցայ Տէր 'ի հանդերձելումն, եւ մերձաւորք ննջեցելոց առաւել փառաւորել կարեն ննջեցեալս իւրեանց պահելով ստացուածս ննջեցելոց վասն ուստերաց եւ դստերաց ննջեցելոց, քան թէ բաշխել այլոց, եւ մերձաւորք ննջեցելոյն պարտ է իւրաքանչիւրոք ելցեն 'ի գործս իւրեանց, սուգ նոցա միմիայն երիս ամիս զգեստ սեաւ զգենուլ բաւական լինիցի:

ԳԼՈՒԽ 378.

Ոչ ոք եկեղեցականք, տնանկ եւ աղքատք մի' բարկանասցեն 'ի վերայ սահմանին կարգադրութեան մերոյ, 'ի գլուխ 377, յօրինաց, վասն զի Ազգն Հայոց ո'չ խնայէ ողորմութիւն պաշտօն պատարագէց եւ մխիթարութիւն տնանկաց եւ աղքատաց, եթէ ո'չ ամենայն զօրութենէ պահէ 'ի միտս իւր անպակաս առնել նոցա 'ի ամենայն հարկաւորութենէ 'ի աշխատանաց եւ արդեանց հարուստ կենդանի արանց զգուշութեամբ Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 379.

Որ ոք կին 'ի միջի ժամանակի տեռատեսութեան իւրոյ թոյլ մի' տացէ մերձենալ ընդ իւր առն իւր, եւ որ ոք այր եթէ բռնադատութեամբ մերձեսցի ընդ կին իւր ժամանակի տեռատեսութեան պատժեսցի, զի մի ծնցի որդի բորոտ ապականութիւն յԱշխարհին Հայոց:

ԳԼՈՒԽ 380.

Ամենայն տէր սպասաւորի, աղախնոյ եւ ծառայի շաբաթն վեց աւուր կրթեսցի աշխատան 'ի նոցանէ, եւ 'ի եօթնում աւուր օր մի, կամ յաւուրն կիրակէի, կամ որում աւուր անվնաս գործին իւրոյ համարեսցի ազատ 'ի գործոց արասցէ, եւ ամենայն սպասաւոր եւ աղախին եւ ծառայ ունի արձակութիւն մի աւուր 'ի մէջ եօթն աւուրց հանգչիլ մտանել 'ի տունս աղօթից եւ 'ի դաշտս վասն զբօսնուլ եւ կամ լերինս վասն հորոյ, եթէ չիցէ օրն կիրակի եւ կամ աղբերունս եւ գետս վասն լեղանալու, միմիայն մի ցերեկ այսինքն երկոտասան ժամ ժամանակաւ, իբր ելցէ հինգ ժամ առաւօտեան եւ դարձցի եւ մտցի 'ի տուն հինգ ժամ յերեկոյեան:

ԳԼՈՒԽ 381.

Ո'չ ո'ք ունիցի իշխանութիւն հարկանել կանաց բայց յիշխանք համեմատութեան վճռոյ դատաստանի վասն գործոց ձեռաց մեղաց նոցայ, եւ այրն ամուսնացեալ կնոջ 'ի տեղի փափուկ մսոյ, եւ զգուշութեամբ զի մի' վիրաւորեսցի եւ կամ խորտակեսցի ոսկերս կնոջ իւրոյ, մինչեւ երկոտասան դամչի:

ԳԼՈՒԽ 382.

Ամենայն ուսուցիչք դստերաց նախ ջանասցեն ուսուցանել աշակերտքս իւրեանց ամօթխածութեամբ, եւ պատիժն նոցա միայն արգելուլ 'ի շարժմանէ (այս քան) ժամ ըստ արժանոյ մեղաց նորա, այլ եթէ գտցի դուստր ոմն բնութեամբ զոռոզ զի հարկեսցի սաստել գանիւք նմայ վարպետ նորայ կարող է գան հարկանել նմա ձեռամբ կանանց ղամչաւ մինչեւ ինն ղամչի ըստ արժանաւորութեան մեղաց եւ ըստ կարեաց անդամոյն մեղաւորի զգոյշ լինիլ զի մի' վիրաւորեսցի, յատկապէս պատկերն նորայ, եւ մի' փշրեսցի ոսկերս եւ մի' մտցէ 'ի սիրտ նորայ յերկիւղ անփարատելի զի զրկեսցի նմա 'ի ծնանելոյ:

ԳԼՈՒԽ 383.

Ամենայն դուստր մաքուր պահեալ սրբութիւն կուսութեան իւրոյ ընծայեալ առ ամուսնացեալ առն իւրոյ, ունի պատիւ ելանել դաշտ 'ի զբօսանս, մտանել հանդէս, բազմիլ 'ի սեղան եւ կաքաւել ընդ ամենայն բդեշխ պատուելի տիրուհիս հայոց, այլ դուստր ապականիչ սրբութեան կուսութեան իւրոյ յառաջ քան զամուսնանալն իւր եթէ ընդ առն որում յետոյ ամուսնացեալ, եւ եթէ ընդ այլ այր նախատեալ լինիցի 'ի միջի պատուելի կանաց հայոց եւ ոչ ոք թոյլ մի' տացէ սմա մտանել առ խումբս իւրեանց:

ԳԼՈՒԽ 384.

Ո'չ ոք այր մի' տացէ ընդունելութիւն իւր առ ոչ ոք Եպիսկոպոսի ձեռնադրել քահանայ ոմն պաշտօնի իւրեանց եկեղեցւոյ մինչ սարկաւագն հասակաւ մի' լինիցի երեսուն ամեայ, եւ եթէ յաւելի քան զերեսուն ամաց ահա' բարեգոյն:

ԳԼՈՒԽ 385.

Ո'չ ոք իշխանի մի' ընդունեսցեն կրօնաւոր պակասակեան քան թէ յիսուն եւ հինգ ամաց, շրջիլ 'ի յերեսս երկրի մէջ քաղաքաց եւ բնակութեանց, եթէ 'ի գործ նուիրանաց եւ կամ քարոզութեան որ ամենայն նուիրակ եւ քարոզիչ կրօնաւոր մտանող 'ի մէջ ժողովրդի, պարտ է լինիլ ամաւ յիսուն եւ հինգ ամաց, եւ եթէ յաւելի բարեգոյն որ ո'չ պակաս ամօք քան թէ 55, եւ ամենայն տեղիս շրջող 'ի յերեսս երկրի որում գտցի կրօնաւոր երիտասարդ հարկաւոր է ըմբռնել նմայ եւ յանձնել եպիսկոպոսին իւրոյ զի մուծցէ 'ի վանքն իւր միայնակցութեան որում յինքն խոստացեալ կալով մնալ միայնակեաց եւ կրօնաւոր:

ԳԼՈՒԽ 386.

Ամենայն երից ամաց մի անգամ սովորութիւն լինի հայոց մի եւ նոյն տարեմտի որ նորոգի Նախարարն Հայոց 'ի նոր նախարարէ, ելցէն երկոտասան այր խոհեմ, հեզ, երկայնամիտ եւ հասակաւ լիքն իբր հալեւոր առ 'ի դրունս ամենայն վանօրէից կրօնաւորաց եւ ապաշխարողաց խնդրել արձակութիւն 'ի առաջնորդէ վանքին եւ մօրէ ապաշխարողաց մտանել 'ի վանքս առանձին լսել փափագ սրտից կրօնաւորաց եւ ապաշխարողաց, եւ 'ի միջի նոցա եթէ գտցի որոք կրօնաւոր եւ ապաշխարող որ յատկապէս ցանկայ եւ կամի ելանել 'ի վանքէն եւ մտանել յաշխարհ, եւ ըստ Օրինօք ամուսնանալ, շարեսցեն թուղթ պաղատանաց նորայ առ Հայրապետն Հայոց ձեռնադրեսցի ելանողն եւ վկայութեամբ լսող առաքելոյն նախարարի հաստատեալ թուղթն պաղատանաց բերել առ նախարարն, եւ նախարարն հանեսցի Օրինակ թղթոց որ քան որ իցէ եւ ծածկաբար ընծայեսցէ առ սպա'ս Հայրապետի խնդրելով դատաստան արդարութեան եւ հրաման շնորհաց զի արձակեսցի նոցայ եւ նոքայ ելցեն առ 'ի ամուսնութիւն եւ լիցին իբրեւ աշխարհական:

ԳԼՈՒԽ 387.

Որպէս Օրէն է մեզ 'ի ժամանակն պատերազմի ընդ ումեք թշնամւոյ մերոյ որ ոք ամրոց շէնք եւ բանակ ընդ պատերազմաւ ստացեալ զամենայն ինչս 'ի նմայ աւար զօրաց մերոց լինիլ, այլ անդրադարձն սորայ զոր ինչ գաւառ, գեօղարէնք եւ շէն թշնամեաց 'ի ժամ պատերազմի առանց ընդդիմամարտութեան հնազանդելոյ մերոյ զօրաց պահպանութիւն մեր 'ի վերայ նոցայ եւ 'ի վերայ

ընչից նոցայ լինիցի, վասն որոյ պարտ է պահպանել նոցայ իբր եւ ժողովուրդ մեր եւ թոյլ տալ նոցա կալ եւ մնալ 'ի տեղի իւրեանց ազատապէս վայելել ինչս իւրեանց միմիայն հարկ եւ մաքս եւ հաս եւ բաժին որ տալոց էին տերանց իւրեանց՝ տացեն մեզ եւ մնասցեն իբր մեր ժողովուրդ, զամենայն ժամանակս մինչ կալով մնասցէ բանակ եւ իշխանութիւն մեր անդ, եւ 'ի ժամ չուելոյ բանակին մերոյ անտի, ո'չ ոք 'ի մէնջ ունիցի արձակութիւն գերել նոցայ եւ շարժել նոցայ 'ի տեղէ 'ի տեղ իւրեանց եւ աւար յառնել 'ի յընչից նոցայ, կալով մնասցեն նոքայ 'ի տեղի իւրեանց հնազանդելով սեպհական տերանց իւրեանց:

ԳԼՈՒԽ 388.

Եթէ գուցէ թշնամին մեր 'ի ժամանակի պատերազմի գերեսցէ հասարակ ժողովրդենէ մերմէ, որ ոչ իցէ' զինուոր եւ ոչ առեալ զէ'ն եւ ոչ ընդդիմացեալ թշնամւոյն, հանիցէ 'ի տանէ եւ 'ի բնակութենէ իւրմէ առ այլ եւ աւար յարիցէ ստացուածք նորայ, պարտ է մեզ թիւ արկանել այնպիսի անձինք գերեցեալքն մեր եւ արժանաւորութիւն աւարից որ քան որ իցէ եւ մի' տալ խաղաղութիւն թշնամւոյն մերոյ մինչ յետս դարձուսցէ գերեալս մեր ընչիւք, եւ յաւելորդապէս մի եւ նոյն քանակութեամբ անձինք եւս 'ի ժողովրդենէ իւրմէ, եւ ինչ 'ի ստացուածէ իւրմէ յաւելցի մեզ իբր տոկոս վասն անկարգ արարմանց, որ խաղացուց սառն արեամբ կացող ժողովուրդն մեր 'ի սեպհական բնակութենէ իւրմէ, որ ո'չ ձեռն 'ի սուր առեալ եւ ո'չ ընդդիմացեալ նմայ, եւ յանձն առեալ հատուցանել նոցայ հարկ, մաքս, հաս եւ բաժինն որում հատուցանէր մեզ:

ԳԼՈՒԽ 389.

Մերոյ ըմբռնեցեալ տեղեաց որ 'ի թշնամեաց մի' աւերեսցի տուն եւ բնակութիւն եւ շէն հասարակ ժողովրդոց, բայց յայնմանէ որ հարկաւոր լինիցի դաշտեցուցանել շուրջ ամրոցի բերթօրէից առ 'ի ապահովութեանց, եւ որ ոք ամրոց թշնամեաց պատերազմու ստացեալ, եթէ հարկաւոր լինիցի մեզ աւերել եւ քակել վասն աջողութեան պատերազմի մերոյ պարիսպն եւ բուրջն ամրոցաց եւ բերթօրէից եւ տուն վառյօղի եւ ջաբախանայի, եւ բնակութիւն զինուորաց միայն աւերեսցի:

ԳԼՈՒԽ 390.

Ամենայն գաւառք, յագարակք, գեօղ, այգեստանք, անտառք, մորենի եւ ամենայն ազգ անասունք, թռչունք եւ ամենայն կաի եւ կարասիք դրացեաց մերոյ եւ որոց Օտարականաց որ իցէ' 'ի ժամանակի թշնամանալոյ ընդ մեզ եւ պատերազմի մատնելով նոցա ներպահպանութեան մերոյ համարեսցի իբր սեպհական ժառանգութիւն մեր, եւ նմանեսցի հնազանդողաց մերոց եւ հատուցանօղաց սովորական հարկ, մաքս, հաս եւ բաժին առ մեզ պահպանութիւն մեր 'ի վերայ նոցա մի եւ նոյն լինիցի որպէս 'ի վերայ սեպհական յազգին մերոյ բնակեցելոյ 'ի Հայաստան:

ԳԼՈՒԽ 391.

Որ ոք գաւառաք, քաղաք եւ գեօղք եւ բնութիւն մարդոյ 'ի յաշխարհէն թշնամեաց 'ի ժամանակի պատերազմի հնազանդելով մեզ գտանելով պահպանութիւն 'ի մէնջ դաւաճանասցի, սա'պիսի մեղաւորն եւ մեղաւորք դատաստան ընդունիլ արժան է ըստ համեմատութեան վնասու դաւաճանութեանց իւրեանց մինչեւ 'ի մահ, եւ գերութիւն եւ ինչս նոցա աւար, վճիռ մեղացս կարէ ելանել սպարապետէ մերմէ որ հրամայէ 'ի վերայ նոյն գնդի զօրաց որ դաւաճանն գտաւ հնազանդեցեալքս իւր, ըստ արժանաւորութեան վնասու դաւաճանութենէ իւրեանց:

ԳԼՈՒԽ 392.

Ամենայն ծախ 'ի վերայ ամենայն իրաց որ հատուցումն վերաբերէ 'ի Տանէն Հայոց առնելոյ, ծախողն նոյն դրամին պարտ է համարն արարեցեալ ծախին իւրոյ արդարութեամբ շարեսցի, եւ առաջի դատաւորի միոյ երդմնեսցի 'ի վերայ սրբոյ կտակարանի, խոստվանելով թէ գրեցեալ համարն իւր իրաւ եւ արդար է, եւ ատենի նոյն դատաւորի ձեռնադրեսցի համարն իւր, եւ ապա' լինիցի հատուցումն 'ի Տանէն Հայոց:

ԳԼՈՒԽ 393.

Ոչ ոք թաքստեան պահիցէ 'ի տան եւ 'ի այգոյ եւ 'ի հանդի իւրում մեղաւոր եթէ քրէական եւ եթէ պատժոյ արժան, եւ եթէ պարտական, եւ եթէ գողացեալ ինչ պահիցէ ընդ իւր, որ փախուցեալ 'ի բանտէ եւ 'ի ձեռանէ գանգատողէ եւ կամ գողացեալ 'ի սեպհականութենէ, սա' թագստեան պահողս պարտական լիցի մտանիլ 'ի բանտ ծախիւք իւրօք, կալով մնասցի 'ի բանտի մինչեւ վճիռ ելցէ 'ի վերայ գողին եւ սպանողին, սա' թագուցանօղս ընկերակից լինիցի մահապարտին մինչեւ տեղի կախաղանի մեղաւորին, եւ քրէական մեղաւորն մեռցի եւ թագուցանօղն ազատեսցի 'ի մահուանէ ելցէ նախատանօք առ տուն իւր եւ զամենայն զոր ինչ թագուցեալ 'ի գողացեալ իրաց յետս դարձուցէ 'ի դրունս դատաստանի վասն սեպհական տեառն ընչից:

ԳԼՈՒԽ 394.

Օրէնս Հայոց տուաւ ազատութիւն ամենայն բնութեան մարդոյ զի ամենայն մարդ ազատապէս կարէ գործել բարի եւ զչար, կամաւորապէս յանձն առնուլով 'ի վերայ իւր 'ի օրինացն հայոց վարձ գործոց ձեռաց իւրոց, այլ հարկաւոր է ամենայն բնութիւն մարդոյ ունիլ բնականապէս ամօթխածութիւն իւր եւ շարժումն իւր 'ի ամենայն գործս պահել, ըստ չափաւորութեանն իւրաքանչիւր աստիճանի, զի մի' լրբեսցի, քանզի լրբութիւն առն լկտոյ հարուցանէ բարկութիւն եղբօր, եւ բարկացեալ այրն ոչ կարէ գործել բարի, վասնորոյ լրբութիւն եւ անզգամութիւն արանց առաջի ատենի ամենայն դատաստանի համարեսցի իբր մեղք արժանի պատժոյ, եթէ հարուստ, հատուցանել տուգանս 'ի տունն աղքատաց, եթէ աղքատ մտանիլ 'ի բանտ, այլ եթէ աղքատ եւ երիտասարդ հարկանել գանս:

ԳԼՈՒԽ 395.

Օրէնս Հայոց հրամայեաց 'ի վերայ ամենայն քրիստոնեայ ժողովրդոց իւրոց զի յաւուրն կիրակէի մտցէ 'ի տուն Տեառն եւ ընդունեսցի շնորհ Սուրբ պատարագի, այլ զօրականք հայոց եթէ 'ի մէջ քաղաքաց եւ եթէ 'ի յերեսս դաշտի ներքոյ վրանաց բնակօղաց, իւրաքանչիւր գունտ որում տեղի եւ 'ի հրամանի որում սպարապետի որ իցեն, յաւուրն կիրակէի պարտ է զօրագլուխն նոցայ բոլոր զօրքն իւր երիս բաժինս բաժանել եւ երիս անգամ մուծանել 'ի տունս Տեառն վասն աղօթելոյ:

1 բաժին առաւօտէն 7 ժամին:

1ե ե ե 9 ժամին:

1 ե ե ե 11 ժամին:

Զի ամենայն ժամ երկու 'ի երիս բաժնոյ զօրաց մնասցեն 'ի տեղի իւրեանց պատրաստ եւ մի 'ի երից բաժնոյ որ ելանէ 'ի յաղօթս պարտ է ունիլ զօտի 'ի մէջ ածեալ սուսերօք, իւրաքանչիւր զինօք պատրաստութեամբ մինչեւ դրունս սրբոյ Եկեղեցւոյ եւ անդ հանգուցանել 'ի յերեսս երկրի զէնս իւրեանց համարեալ կարգելով չափաւոր պահակ 'ի վերայ զինուցն անդ թողելոյ, եւ ինքեանք մտցեն 'ի տուն Տեառն եւ կացցեն յաղօթս, յետ կատարելոյ սրբոյ պատարագին կարգաւ ելցեն 'ի դրունս 'ի ձեռս կալցեն իւրաքանչիւր զէնս իւրեանց երթայցեն 'ի տեղի իւրեանց եւ ապա 'ի տեղէ իւրմէ ելցէ միւս գունտն առ դրունս սրբոյ եկեղեցւոյ:

ԳԼՈՒԽ 396.

Ոչ ոք 'ի մէջ Ախարհին Հայոց ակնկալութիւն ունիցի զի լինիցի պատուեցեալ 'ի ումեքէ, բայց 'ի բարութենէ գործոց ձեռաց իւրոց այլ եթէ գուցէ զի յումեքէ լինիցի պատուեցեալ եթէ խորհրդով: Բանիւ եւ գործով պարտ է նմա յոյժ քաղցր դիմօք հեզ եւ խոնարհութեամբ շնորհ ընկալ 'ի նմանէ լինիլ զի նա' արժան է շնորհակալութեան, 'ի պատճառն երախտագիտութեան նորայ, զի նա ծանեաւ բարոյականութիւն առն արժանի պատուոյ:

ԳԼՈՒԽ 397.

Օրէն է մեզ ո'չշաղախիլ 'ի գործս եկեղեցականաց եւ թոյլ մի' տալ էկլէզիաստիկս շաղախիլ ընդ գործ աշխարհականաց մերոց, այլ կարգադրութիւնք վասն կառավարութեան ժողովրդեան որ ոք սահման որ էկլէզիաստիկ նորում շարել կամիցի հարկաւոր է լինիլ ընդունելութեամբ Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 398.

Ամենայն հատոր Օրինացս ունի բազում մասունս որ կարի 'ի ձեռանէ արանց իմաստնոց բացատրել զամենայն զոր ինչ բացատրութիւնք յօրինացս եթէ բարեպէս զի հաճեսցի 'ի կամս Տանն Հայոց պատուեսցեն, բայց 'ի յայնմանէ որ լինիցի ընդ դէմ բնութեան մարդոյ:

ԳԼՈՒԽ 399.

Ամենայն բնութիւն մարդոյ բնակողաց 'ի յերեսս Երկրի Հայոց, ազատապէս զգեսցի հանդերձս իւր ձեռագործէ Աշխարհէն Հայոց, այլ նոքա որ յաւելորդասցեն զգենուլ ձեռագործս տարր յաշխարհի, եթէ արու եւ եթէ էգ, եթէ իշխան, եթէ պաշտօնատար, հարկեսցի հատուցանել ոմն 'ի տալոյ միոյ քսան դահեկան երծաթ առ Տունն Հայոց վասն սնոտի պարծանաց իւրոյ զի ձգտեցաւ միտս առն յայնմիկ առաւելագոյն փայլիլ 'ի մէնջ հասարակաց:

ԳԼՈՒԽ 400.

Ամենայն ոք որ հանիցէ ոսկի եւ կամ երծաթ իւր 'ի Աշխարհէն Հայոց առ 'ի տարր յաշխարհ պարտաւոր է հատուցանել Տանն Հայոց մի 'ի երից բաժնոյն հանելով երկուս բաժինս տարցէ ուր եւ ինքն կամիցի:

ԳԼՈՒԽ 401.

Ամենայն ոք 'ի որ ոք ընծայիւք եթէ գանձիւ եւ պատուական իրօք հաւանեցուսցէ ամուսնացեալ կանանց եւ խառնակեսցի ընդ նմայ, տոկոս գանձից իւրոց հատուցանիցէ զի իջցէ 'ի հպարտութենէ հարստութեան իւրոյ:

ԳԼՈՒԽ 402.

Ամենայն ննջեցեալ եթէ չիցէ նմայ ժառանգ եւ ազգական մինչեւ եօթն պորտն մերձաւոր, ստացուածքն նորայ գրեսցի ժառանգութիւն Տանն Աղքատաց Հայոց:

ԳԼՈՒԽ 403.

Ամենայն մարդ կարող է տնկել ծառ ընդ փողոցս 'ի սահման տան իւրոյ, զամենայն զոր ինչ պտուղ եւ եկամուտ ելցէ 'ի ծառոյ ստանայցէ տնկողն հատուցանելով տասանորդն 'ի Տունն Հայոց:

ԳԼՈՒԽ 404.

Ամենայն մարդ կարող է տնկել ծառ 'ի դաշտի պռուկն ճանապարհաց 'ի յերեսս յերկրի տէրունի, զամենայն զոր ինչ պտուղ եւ եկամուտ ելցէ 'ի ծառոց ստանայցէ տնկողն հատուցանելով տասանորդն 'ի Տունն Հայոց:

ԳԼՈՒԽ 405.

Ամենայն մարդ ունի արձակութիւն ծախիւք իւրօք կազմել կարմունջս 'ի վերայ գետոց եւ 'ի վերայ աղտատուկ տղմի 'ի նմայ տացէ Տունն Հայոց նամակ հարկա'պահանջութեան 12 ամաց ժամանակաւ որ հաւաքէ 'ի անցաւորաց կարմնջէ այսինքն.

մարդն ձիաւոր 2 լման

մարդ եւ կին հետեւակ 1 լման

բեռն ձիոյ, ջորոյ, իշոյ, եզան եւ ըղտոյ 2 լման

կառն 4 լման

մարդ եւ թէ կին 'ի վերայ իւրեանց բեռնաւն 1 լման

Եւ միջոց երկոտասան ամաց շինող կարմընջին ծախիւք իւրօք հոգասցէ նորոգումն, յետ լրումն երկոտասան ամաց կարմունջն մնասցէ ազատ եւ ծախն նորոգութեան 'ի Տանէն Հայոց եւ հարկն անցաւորաց մտցէ առ 'ի Տունն Հայոց:

ԳԼՈՒԽ 406.

Ով ոք ունիցի երկիր 'ի փապարս լերանց որում կարիցէ հանել քարեզ անցուցանելով ջուր 'ի յերեսս երկրի, եթէ կամիցի նա' ծախիւք իւրօք բանալ քարեզ եւ հանել ջուր, եւ ջուրն այն վաճառել առ այլ, ազատ լիցի 'ի այսպիսի արդեանց հատուցանելով տասանորդն եկամտի ջրից իւրոյ տարեկանի իւրոյ առ Տունն Հայոց:

ԳԼՈՒԽ 407.

Ամենայն մարդ կարող է ծախիւք իւրօք կազմել կամ ջրաղաց 'ի վերայ երկրին իւրոյ 'ի ափն գետոց, եւ կամ հողմ աղացս 'ի վերայ բլրի իւրոյ որքան որ կամի, հատուցանելով տասանորդս 'ի տարեկան եկամտէ իւրմէ 'ի Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 408.

Ամենայն Տեառն յերկրի եթէ 'ի յերեսս դաշտի, եւ ե~թէ 'ի մէջ քաղաքաց եւ գեօղից, եթէ կազմեալ տանց եւ եթէ այգեստանեաց, եւ եթէ ամայի դաշտից եւ այլն, եթէ թղթաւ գնեալ 'ի յառնէ վաճառողէ, եւ եթէ հրամանաւ ստացեալ 'ի Տանէն Հայոց, եթէ գուցէ զի գտցի 'ի խոր սրտի յերկրին իւրոյ, եւ կամ 'ի միջի ջրհորի, եւ կամ 'ի յոտս հիմանց տանց, եւ որ ոք տեղիս տեղիս միջի սահմանի գնեալ յերկրին իւրոյ, եթէ ոսկի, երծաթ զոր ինչ հրահայելիք եւ այլ, թէ ակունք պատուականք եւ այլն, բոլորովին ժառանգութիւն իւր է, այսինքն գնողին. եւ 'ի Տանէն Հայոց ստանողին որն որ իցէ ո'չ տունն հայոց եւ ոչ վաճառողն ո'չ յիշխեսցի ունիլ մասն եւ ոչինչ, բայց 'ի այսպիսի գտուածոյս միմիայն մի անգամ հատուցանել պարտ է տասանորդ իրին գտեցելոյ 'ի Տունն Հայոց մնացորդն կացցէ ժառանգութիւն նմայ:

ԳԼՈՒԽ 409.

Ամենայն ոք 'ի վարձու բնակող 'ի տան այլոց, եւ վարձու վարող յագարակս այլոց, եւ վարձու տնկող այգիս եւ զոր ինչ յերկիր այլոց, եթէ գտցի 'ի միջի յերկրի զոր ինչ եւ իցէ վարձ գտանողին լինիցի տասանորդ գտեալ իրին, եւ մի տասանորդ եւս ընծայեսցի 'ի Տունն Հայոց մնացորդն մնայ ժառանգութիւն Տեառն յերկրին:

ԳԼՈՒԽ 410.

Որովհետեւ Տունն Հայոց պահպանեսցէ աշխարհ զինուորօք եւ տացէ ազատութիւն Ազգին Հայոց, եւ պարսպօք փակեսցի ամուրս եւ հացօք կերակրելով, սերմօք Օգնական լինելով ազգին իւրոյ, հատուցանելով կողոպտեալս 'ի թշնամեացէ, դարձուցանելով զերեալս, կերակրելով անկարս, դարմանելով տկարս, զարգուցանելով գաղտնի ծնեալս, զերծուցանելով բոլոր աշխարհ եւ Ազգն Հայոց 'ի լծորդութենէ ծառայութեան այլ ազգաց, պահպանելով ընդ հովանաւորութեան, եւ այլ ամենայն բարութիւն որպէս հաստատի օրինաց մերոց, հարկ 'ի վերայ աշխարհին եւ բնակողաց կայ, զի ըստ բնական բնութեան ազատի, որ ո'չ կարէ յանձն 'ի վերայ իւր առնուլ պարտս եւ ո'չ նախատինս, նոյն զունակ բոլորով սրտիւ յանձն առաք հատուցանել առ Տունն Հայոց, եւ պահպանիչն մեր, հարկ, մաքս, հաս, բաժինս, պատիւս եւ հնազանդութիւնս մեր ընդ Օրինաց մերոց 'ի ծննդոց բնութենէ մարդոյ, տղայիւք եւ պտղոյ բուսոյ բերմանէ աշխարհէն մերմէ, եւ 'ի ծննդոց անասնոց եւ գազանաց եւ սողնոց,

ծովէ, գետօրէից եւ ’ի թռչնոց ’ի վերայ երկրի մերոյ, եւ ’ի աճմանէ գնելոյ, եւ վաճառելոց արդեանց, եւ ամենայն տուրք, բարիք եւ պարգեւք կատարեալք որ ’ի Տեառնէ կամեցողութենէ ’ի յերկրէ մերմէ բղխի ամենայն ստացուածոց տարեկանաց ամենեքեան պարտիմք հատուցանել տասանորդս ’ի Տունն Հայոց առանց ձանձրանալոյ, քանզի ո՛չ ումեք հատուցանեմք եթէ ո՛չ մեզ, եւ ո՛չ ուրեք պատճառի թէ ո՛չ իրաւամբ եւ արդարութեամբ պարտս մեր:

ԳԼՈՒԽ 411.

Եթէ կամաւորապէս մտցեն ’ի պաշտօնս զինուորութեան երիտասարդ եւ տղայս հայոց իբր զի[ն]նսուն հազարս բարիոք լինի, եթէ ո՛չ Տուն Հայոց հանիցէ ’ի մէնջ ամենայն զաւառէ եւ բնակութենէ Աշխարհին Հայոց վիճակաւ տղայս եւ երիտասարդս հինգ ’ի միոյ հարիւրէ, վասն պաշտօնի զինուորութեան եօթն ամ ժամանակաւ պահեսցէ ռոճկաւն Տանն Հայոց կառավարելով ըստ Օրինօք, եւ յետ եօթն ամաց ազատ լինի դարձցի ’ի տուն եւ ’ի բնակութիւնս իւր:

ԳԼՈՒԽ 412.

Ամենայն ծննդոց կենդանեաց, անասնոց եւ անբանից ամենայն տարոյ ծնեցելոց, որում բոլոր աշխարհ ստանայ, ’ի նմանէ հատուցանէ տասանորդս:

ԳԼՈՒԽ 413.

Ամենայն սողնոց, թռչնոց, ծննդոց հատուցանել տասանորդս:

ԳԼՈՒԽ 414.

Ամենայն ծառոց, տնկոց բուսոց բերմանէ տասանորդս:

ԳԼՈՒԽ 415.

’Ի բերմանէ որթանց որթանց աբրիշումին տասանորս:

ԳԼՈՒԽ 416.

’Ի անտառէ որում տեղիս հատեալ փայտէ կրթեալ մեղր եւ մոմէ տասանորդս:

ԳԼՈՒԽ 417.

Ամենայն իր ձեռագործ վաճառելոյ անցուցանելով ’ի աշխարհէ առ միւս աշխարհ, որում աշխարհ մտանէ հատուցանէ հարիւրին հինգ:

ԳԼՈՒԽ 418.

Ամենայն բնութիւն մարդոյ բնակեցեալ ’ի յերեսս երկրին Հայաստանեաց՝ եթէ ’ի սեպհական Ազգէն Հայոց եւ եթէ այլ ազգք պանդխտացեալք եթէ արու եւ եթէ էգ, պարտ լինի նոցայ ստանալ աղ ’ի Տանէ Հայոց իւրաքանչ ամենայն անձանց տարեկան վասն միոյ անձի մի կշիռ, եւ գինն նորայ հատուցանել Տանն Հայոց մին դահեկան երծաթ հայոց:

ԳԼՈՒԽ 419.

Գինոյ վաճառն տասանորդն:

ԳԼՈՒԽ 420.

Հիլ, մեխակ, ջավզ, կոճ, բիբար, շաքար, հալդի, որում աշխարհ մտցի հարիւրին հինգ:

ԳԼՈՒԽ 421.
Թամբաքուն մի կշիռ ծանդրութիւն հատուցանիցէ տասն դահեկան երծաթ 'ի Գանձարանն Հայոց:

ԳԼՈՒԽ 422.
Լօնդրայ, սամուր, զօջան եւ այլ ամենայն մազեղէնն ամենայն աշխարհի հարիւրին հինգ:

ԳԼՈՒԽ 423.
Ամենայն ձեռագործ տարր յաշխարհէ առ որում Աշխարհ Հայոց մտանելով հարիւրին հինգ:

ԳԼՈՒԽ 424.
Ամենայն ակունք պատուականք, մարգարիտ որում աշխարհէ մտցէ հատուսցէ հարիւրին երկու:

ԳԼՈՒԽ 425.
Կլեկ, արճիճ, պղինձ, երկաթ, ջաստ հարիւրին հինգ:

ԳԼՈՒԽ 426.
Սադրի կօշիկ հագանողն հատուսցէ տարէն երկու դրամ երծաթ, կանայք ազատ:

ԳԼՈՒԽ 427.
Ձառ զօտիկ եւ զառ հաշիայ զգենողն տարէն տասն դահեկան, կանայք ազատ:

ԳԼՈՒԽ 428.
Սամուր զգենողն տարէն տասն դահեկան, կանայք ազատ:

ԳԼՈՒԽ 429.
Երծաթապատ զգեստօք ձի հեծնողն տարէն տասն դահեկան:

ԳԼՈՒԽ 430.
Ոսկապատն... 20 դահեկան:

ԳԼՈՒԽ 431.
Ակունքապատն.. 100 դահեկան:

ԳԼՈՒԽ 432.
Մարմարէ հաւզ տան շինողն տարէն 20 դահական:

ԳԼՈՒԽ 433.
Սեաւ քարէ հաւզ տարէն 5 դահեկան:

ԳԼՈՒԽ 434.
Ճիշով ռուսի ունեցողն տարէն 10 դահեկան:

ԳԼՈՒԽ 435.
Նախշուն օթախ ունողն եւ 'ի նմայ բնակողն տարէն 5 դահեկան:

ԳԼՈՒԽ 436.

Հայելի մեծ քան թէ մի կանգուն պահողն տարէն 2 դահեկան:

ԳԼՈՒԽ 437.

Ապրշմէ խալու վրայ նստողն տարէն 5 դահեկան:

ԳԼՈՒԽ 438.

Երկու շաթիր ջլաբում տանողն տարէն 5 դահեկան:

ԳԼՈՒԽ 439.

Երեք, չորս եւ որքան յաւելի քան թէ մին շաթիր տանողն ամենայն մի շաթրին հինգ դահեկան երծաթ:

ԳԼՈՒԽ 440.

Ամենայն մարդ արձակապէս հեծնուլ կարէ կառս միոյ ձիով, այլ եթէ յաւելի հատուցանէ հարկս որպէս 'ի վայր.

2 ձիով կառեթն հարկս

տարէն. . . . . 10 դահեկան երծաթ

4 նոյն. 20

6 նոյն. 40

8 նոյն. 80

10 նոյն մայր դատաւորք եւ իշխանք . 160

12 նոյն ոչ ոք հեծնուլ կարէ բաց նախարարն 320

ԳԼՈՒԽ 441.

Ամենայն թուղթ տէրունի որում աշխարհի որ ձեռնադրի հատուցանէ Տանն Հայոց ըստ իւրաքանչիւր աստիճանի որպէս 'ի վայր.

Թուղթ Նախարարութեան . 5000 դահեկան

Խորհրդականութեան . 1000

Մայր դատաւորութեան . 500

Դատաւորութեան . 100

Ատենաբանութեան . 100

Դպրութեան . 100

Ծերակուտութեան տանուտէրութեան 10

Իշխանութեան . 1000

Սպարապետութեան . 3000

Ասպետութեան . 2000

Հազարապետութեան . 500

Հարիւրապետութեան . 100

Տասնապետութեան . 5

Վարպետութեան . 10

Գաւառապետութեան . 100

Գեօղապետութեան քեօֆխայ . 10

Լրտեսպետութեան . 100
Զինապետութեան . 100
Վառյօղպետութեան . 50
Կառապետութեան . 100
Վրանապետութեան . 100
Կերակրոց պետութեան . 1000
Հրացու զինապետութեան . 100
Գանձապետութեան . 3000
Գնդապետութեան . 1000
Երկրաչափութեան . 1000
Դրօշակակալութեան . 10
Պարտաւորութեան ֆի հազարին . 1
Վնասա' պարտաւորութեան հազարին 1
Ղաբալէն վաճառեալ երկրին եւ տան հազարին 5
Դաշնադրութեան . 5
Հարսանեաց . 3
Թուղթ հրամանի 'ի վերայ ում որ իցէ հատուցանէ 5
Թուղթ կտակի . 1
Թուղթ վճռոյ . 10
Թուղթ գանգատոյ եւ պատասխանոյ 5
Թուղթ ստացելոյն . 1
Թուղթ արձակման . 2
Երաշխաւորութեան . 2
Տեղակալութեան . 1
Շոկայակալութեան . 2

ԳԼՈՒԽ 442.

Երծաթապատ սեղանօք բազմողն հատուցանէ տարէն 100 դահեկան երծաթ:

ԳԼՈՒԽ 443.

Ոսկապատ սեղան բազմօղն հատուցանէ տարէն 1000 դահեկան երծաթ:

ԳԼՈՒԽ 444.

Չինի ամանով սեղան բազմօղն 10 դահեկան երծաթ:

ԳԼՈՒԽ 445.

Ամենայն իր վաճառեալ արտաքոյ շուկայի 'ի յերեսս ամենայն երկրի հատուցանէ հարիւրին հինգ, որ երկու կէս իսմանէ վաճառողն երկու կէս գնողն:

ԳԼՈՒԽ 446.

Ամենայն խանութ, քարվան, սրահ, կերակրի տուն զոր ինչ տարեկան շահեսցի տացէ տասանորդ:

ԳԼՈՒԽ 447.

Մեղրոց եւ մոմից տասանորդն:

ԳԼՈՒԽ 448.

Գաւառէ առ գաւառ անցանողաց բեռինս տացեն ճանապարհաց բեռանց կերակրոց թէ ձիոյ, ըղտոյ, ջորոյ, եզան եւ իշոյ 10 դրամ պղնձի: Բեռանց ամենայն ապրանաց 1 դահեկան երծաթի:

ԳԼՈՒԽ 449.

Ամենայն հանք եթէ ոսկոյ եթէ երծաթոյ, երկաթի, պղնձի, կապարի եւ այլն, բայց աղի՝ ամենայն ոք կարէ հանել հատուցանելով ստացեալ հրահանգին տասանորդն ծախն հանողէն ելցէ:

ԳԼՈՒԽ 450.

Ամենայն ոք ոսկի եւ երծաթն իւր արձակապէս մուծանել կարէ ’ի տուն տպելոյ դրամոց զի տպեսցի, հատուցանելով հազարին երկու եւ կէս ծախ նորայ:

ԳԼՈՒԽ 451.

Ամենայն տուն եւ բնակութիւն արժանաւորութեան իւրոյ գնոյն համարեսցի նմա տարեկան եկամուտ, եւ զոր ինչ եկամուտ տարեկանի ’ի նմանէ հատուցանել պարտ է ամենայն մի հարիւրի տարէն մին:

ԳԼՈՒԽ 452.

Ամենայն ծանրութիւն կշռոց, չափս չափելոյ եւ չափարան պարտ է կնքիլ ’ի կնքաւ իշխանութենէ ’ի ամենայն տարւոջ համահաւասար գտեալ ըստ օրինաց, բառնալով յաւելորդութիւն եւ պակասութիւնքն նոցին, եւ ծախ կնքելոյն հանիլ տասն դրամ պղնձոյ:

ԳԼՈՒԽ 453.

Ամենայն ոսկի, երծաթ, պղինձ, կապար ով ոք որ մուծէ ’ի տիպ դահեկանի, ծախ եւ վարձ տպելոյ հատուցանել պարտ է ’ի մի հազարին երկու եւ կէս:

ԳԼՈՒԽ 454.

Ամենայն մարդ հաւանեցուցանող ’ի միջի վաճառողաց եւ գնողաց զամենայն զոր ինչ ապրանաց վաճառելոյ, զոր ինչ վարձ որ հաւանեցուցանողն գտցի ’ի նմանէ տասանորդն հատուցանէ ’ի գանձարանն Հայոց:

ԳԼՈՒԽ 455.

Ամենայն քարակիտ եւ աղիւսագործ կիր եւ գաջ շինող որքան որ հանիցէ ’ի յերկրէ եւ լերանց հատուցանէ տասանորդս:

ԳԼՈՒԽ 456.

Ամենայն ձիթահանք թէ ձիթենոյ թէ կատվահատից եւ այլ զոր ինչ հատ որ կթի ձէթ, եւ ամենայն ձիթոց հատ հատուցանել տասանորդս:

ԳԼՈՒԽ 457.

Լուղն, կխտորն, լեղակն, յինէն կամ խիներէն, բամէն՝ տասանորդն:

ԳԼՈՒԽ 458.

Զամենայն զոր ինչ մտեալ 'ի յորում քաղաք 'ի մէջ Աշխարհին Հայոց, եթէ վաճառեսցի, հատուցանել պարտ է 'ի գնոյ հարիւրին հինգ, բայց ակունք հարիւրին երկու, ոսկի եւ երծաթ մտանելն ազատ:

ԳԼՈՒԽ 459.

Ամենայն ձեռագործ եթէ յաշխարհէ մերմէ, եւ եթէ 'ի տարր յաշխարհէ եկեալ ընդ մեզ եթէ բեհէզ, եթէ բամբակէ, եթէ կտվահատէ, եթէ բրթէ, եւ կամ ոսկաթել եւ երծաթաթել յօրինեալ, (բայց 'ի հրահայելեաց ձեռագործից), պարտ է կնքել 'ի ծայրն բանին կնքաւ Տանն Հայոց, 'ի քաղաքին որում գտանի իրն, եւ 'ի նմանէ հանել հարիւրին հինգ հարկն, եւ որ ոք ձեռագործ որ ոչ ունիցի նշան կնքոյ լուանողն եւ ջարադանայ յառնողն մի' լուասցի եւ մի' յօրինեսցի, եւ ում ոք ձեռի եւ որ ոք որ գտանիցի ձեռագործ առանց կնիք, նա' հատուցանէ հարկն եւ ընդունեսցի կնիք 'ի վերայ ձեռագործին:

ԳԼՈՒԽ 460.

Ամենայն արու ով ոք որ իցէ եթէ համարձակեսցի լրբաբար ձեռս ձգել եւ շօշափել եւ կամ ամօթ առնել կանանց պատժեսցի:

ԳԼՈՒԽ 461.

Ով ոք որ լրբաբար մտցէ 'ի տուն այլոց վասն աղմկի եւ վասն ըստ անձին վրէժխնդրութեան՝ բնակողք տան ազատապէս հարկանել եւ դուրս ձգել մինչ խոցել, այլ ոչ սպանել:

ԳԼՈՒԽ 462.

Ամենայն ոք որ ստութեամբ ձեռնադրէ այլոց անուամբ թուղթ՝ հրով կիզեսցի ձեռն ձեռնադրողին, եւ եթէ հրովարտակ, եւ կամ հրաման ինչ 'ի ժամանակի պատերազմի մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 463.

Ամենայն ոք որ նենգաւորութեամբ հրաձիկ առնէ գեօղ կամ տունս իւր եւ կամ այլոց զի նովաւ այրեսցի եւ մեռցի ոք, նա' եւս մահու մեռցի, եւ եթէ 'ի այրեցմանէ ոչ ոք մեռցի հատուցանէ միայն արժանաւորութիւնն այրեցեալ իրին:

ԳԼՈՒԽ 464.

Ամենայն ոք որ սպանցէ այր կամ կին, մանուկ եւ կամ երեխայ եւ որում չափի եւ որում հասակի որ իցէ բնութիւն մարդոյ մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 465.

Ամենայն ոք որ բռնադատութեամբ լլկեսցի եւ խայտառակեսցի ամուսնացեալ կնոջ եւ դստերկոյս մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 466.

Ամենայն ոք զի գողանասցէ ինչ արժանոյ իբր մի հարիւր դրամ երծաթոյ մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 467.

Ամենայն լրտես 'ի թշնամեաց 'ի ժամանակ պատերազմի ըմբռնեցեալ իսկոյն մեռցի:

ԳԼՈՒԽ 468.

Ամենայն դեղակուր ընդ ումեմն արասցէ եւ նովաւ հանիցէ նմայ 'ի կենաց եթէ գաղտնի եթէ խաբէութեամբ մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 469.

Աւազակ ըմբռնեցեալ հաստատելով 'ի վերայ նորա գործ աւազակութեան որում աւազակեալ լինի ինչ իբր արժանոյ 100 դահեկան երծաթի մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 470.

Ով ոք որ համարձակեսցի եւ հարկանեսցէ քահանայի Օծեալ Տեառն հրացեալ երկաթիւ կիզեսցի ձեռ նորայ, այլ եթէ քահանայ ոք բարկացեալ հարկանիցէ ումեք իշխանի եւ կամ հասարակ ժողովրդի ընկալցի զան 'ի նմանէ որում էհար նմայ այնքան որում բարկութիւն իւրեանց խոստանայ, բայց 'ի սպանմանէ:

ԳԼՈՒԽ 471.

Ամենայն արբեալ եթէ ժամանակի արբեցութեան իւրոյ սպանցի ումեմն նա' եւս արբեցեալ մեռցի:

ԳԼՈՒԽ 472.

Ամենայն արբեցեալ որ խոցեսցի ումեմն նմա եւս արբեցեալ պատժեսցի:

ԳԼՈՒԽ 473.

Ով ոք որ առանց հրամանի իշխանութեան տպեսցի դրամս եթէ երծաթի եւ կամ պղնձի եւ այլն մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 474.

Ամենայն ոք որ զողանասցի 'ի ծանրութենէ կշռոյ հրացեալ երկաթիւ փափուկ միսն նորա կիզեսցի, մինչեւ այրն այն ըմբռնեսցի կիզեցեալ երիս անգամս չորս երրորդի մեռցի:

ԳԼՈՒԽ 475.

Ամենայն ոք արու 'ի բնութիւնս մարդոյ խառնակցեալ ընդ արուի, եւ ընդ գազանի եւ անասնոյ խառնակողն եւ խառնակցեալն 'ի միջի հրոյ այրեսցի:

ԳԼՈՒԽ 476.

Մի' ոք պահեսցէ ընդ տանն իւր շուն յառ զի մի' խայծատեսցի արանց եւ խաշանց, եթէ պատահաբար խայծատեալ Տեառն շանն կամ տացէ շունն իւր խայծատողին, կամ հատուցումն արասցէ խայծատելոյն, նա եւս եթէ հատուցումն խայծատելոյն արասցէ եւ անհոգս կալով զի շունն այն կրկին խայծատէ, սատակեսցի շունն եւ Տեառն նորա մտցէ բանտ երեսուն աւուր ծախիւք իւրօք:

ԳԼՈՒԽ 477.

Ում որ խաշին մատակ եւ զամենայն զոր ինչ անասուն որ պատահաբար ճարակեսցի արտս, եւ կամ հանդս եւ կամ դաշտս այլոց, հատուցանէ զին ճարակեալ խոտոց եւ ամենայն բուսոց առ տեառն իւրոյ:

ԳԼՈՒԽ 478.

Ով ոք որ երդմնելով տացէ վկայութիւն սուտ, զամենայն զոր ինչ վնաս եղեալ 'ի սուտ վկայութենէ իւրմէ, հատուցանէ վնասելոյն եւ յինքն մտցէ 'ի բանտ ժամանակաւ վեց ամիս, եւ 'ի ատենէ դատաստանէ գրեսցի թուղթ յայտնութեան եւ պնդեսցեն 'ի նշանաւոր տեղիս առ 'ի տեսարան անցաւորաց, զի ամենեքեան ծանիցեն առն այն ստախօս եւ երդմնազանց, եւ եթէ վկայութիւն սուտ գտցի 'ի վերայ քրէական մեղաց, որ 'ի պատճառէ վկայութեան նորա բարձցեալ իցէ կեանս մեղաւորի, եւ ապա' հռչակեսցի ստութիւն վկային, նոյն սուտ վկայն մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 479.

Ով ոք որ չափազանց վարեսցէ կեանս իւր եթէ պենիլ եւ հանդէս առնել, եւ դատարկաբանութեամբ եւ զամենայն զոր ինչ իրօք տալ վատ նշաւակ ժողովրդոց յարուցանել նախանձ արանց բարեաց, նախ եւ երկրորդ անգամ խրատեսցի քաղցրութեամբ 'ի մայր դատաւորէ աշխարհին, եթէ նա ո'չ զսպեսցի վարքն իւր՝ մտցէ 'ի բանտ մինչ ընդունի բարեպէս կալ ամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ 480.

Որում զօրագլուխ եւ կամ զինուոր եթէ յանդգնեսցի հրամանի Տեառն իւրոյ 'ի ժամանակի պատերազմի եւ 'ի ժամու ճակատամարտի՝ մտցէ 'ի բանտ եւ եթէ բարձրացուսցէ ձեռս իւր 'ի վերայ Տեառն իւրոյ եւ հարկանէ, իսկոյն մեռցի:

ԳԼՈՒԽ 481.

Որում զօրագլուխ եւ կամ զինուոր 'ի ժամանակի խաղաղութեան ընդդիմանայցէ Տեառն իւրոյ, իսկոյն անկցի 'ի ազատութենէ եւ իշխանութենէ մտցէ 'ի բանտ զի դատեսցի:

ԳԼՈՒԽ 482.

Ամենայն զինուոր պաշտօնեայ եւ կամ զինուորք պաշտօնեայք 'ի ժամանակի պատերազմի փախեցեալ 'ի գնտէ իւրմէ առ թշնամիս Հայոց, եթէ ըմբռնեսցի, եթէ ըմբռնեցեալն գտցի միմիայն մի մեռցի, եթէ իցեն բազումք որոնելով հաստատեսցեն նախագուշակք եւ առաջնորդք մեռցեն, մնացորդքն գան յարիցեն եւ յապա գտցեն ազատութիւն:

ԳԼՈՒԽ 483.

Ամենայն ոք 'ի ժամանակի պատերազմի եւ կամ խաղաղութեան եթէ զինուոր, եթէ աշխարհական եթէ կողոպտեսցէ հաւկիթ մի եւ այլ ամենայն զոր ինչ, եւ կամ եթէ ճարակեսցէ արտս ում ոք որ իցէ զանս ընկալցի, եւ հատուցանել պարտ է իրն այն, եւ կամ արժանն երկայպատիք առ տեառն ընչից:

ԳԼՈՒԽ 484.

Ամենայն իշխան որում աստիճանի որ իցէ եթէ ապստամբեսցի ընդ դէմ տանն եւ օրինացն Հայոց՝ ինքն համակցօք իւրօք մահու մեռցի, եւ որդիք նոցայ մի' մտցէ ոչ ոք պաշտօն իշխանութեան մինչեւ եօթն ցեղն սերնդոց:

ԳԼՈՒԽ 485.

Ամենայն իշխան որում աստիճանի որ իցէ եթէ դատեսցէ ոք ինքնակալ կամօք ընդդէմ Օրինաց անկցի իշխանութենէ եւ դատաստան յանձն առնու 'ի վերայ իւր, ըստ Օրինօք:

ԳԼՈՒԽ 486.

Ամենայն իշխան եթէ 'ի կարգէն զինուորաց, եւ եթէ կառավարիչ աշխարհի յանդգնեսցի հրամանի տանուտերաց Տանն Հայոց, իսկոյն անկցի 'ի իշխանական ազատութենէ եւ կալանաւորեալ լինիցի 'ի կուսակալէ եւ երկրորդէ իւրմէ արկաթակապ մտցի 'ի բանտ եւ ընդունեսցի դատաստան ըստ Օրինօք, եւ հատուցանէ անձամբ վնասն յանդգնութեան իւրոյ մինչեւ 'ի մահ:

ԳԼՈՒԽ 487.

Զինուոր գիշերապահ եթէ 'ի ժամ պաշտման քնեսցի, պատժեսցի:

ԳԼՈՒԽ 488.

Ով ոք զինուոր եւ կամ զօրագլուխ թշնամեաց, տալով անձն իւր գերութիւն հայոց, եւ յառաջ քան զփոխիլ նմայ ընդ գերիս մեր եւ կամ առաջքան թէ խաղաղութիւն 'ի այնմ պատերազմի, եթէ առնու սուր եւ կամ արձակեսցի ընդ դէմ հայոց, եւ կամ 'ի ձեռս վեր կալցի առ 'ի հարկանել եւ կամ հարկանիցէ, եւ կամ փախիցէ մահու մեռանիցէ:

ԳԼՈՒԽ 489.

Ով ոք զինուոր եւ զօրագլուխ եթէ սպանիցէ գերիս իւր անմեղ 'ի մէնջ սառն արեան մահու մեռանիցէ:

ԳԼՈՒԽ 490.

'Ի ժամանակի պատերազմի եւ խաղաղութեան ամենայն էգ 'ի բնութենէ մարդոյ թէ քրիստոնեայ թէ հեթանոս ազատ լինի 'ի գերութենէ, եւ եթէ կին ամուսնացեալ ընդ առն, եւ դուստր կուսաք թշնամեաց 'ի ժամանակի պատերազմի կամաւ ընդունեսցի վարձ մինչեւ մի դահեկան երծաթ եւ նաղդ գտցի 'ի ձեռանէ զինուորէ մերմէ եւ խառնակեսցի ընդ նմայ, Օրէնս մեր մի' յիշխեսցի 'ի վերայ սոցայ, այլ ով ոք զինուոր եւ կամ պաշտօնեայ բռնադատութեամբ խառնակեսցի ընդ կին եւ կամ դուստր թշնամու, եթէ 'ի ժամ պատերազմի եւ կամ խաղաղութեան՝ դատաստան ընդունիցի ըստ Օրինաց Հայոց:

ԳԼՈՒԽ 491.

Որ ոք քաղաք եւ բերդօրեայք շրջապատեցեալ մէնջ որում իշխան քաղաքին եւ կամ բերդապան դաշինս խօսելով յանձնել խոստանայցէ, եւ 'ի ժամանակի յանձնարարութեան դաւաճան գտցի, եւ 'ի դաւաճանութենէ յայնմանէ անկանիցի մինչեւ 24 տղայ զինուորաց մերոց, որում հարկեսցի զօրք մեր արձակմամբ սուսերս 'ի ձեռին մտանել բերդն, զամենայն զինուոր եւ զօրագլուխ 'ի թշնամեաց մի' մնասցէ կանդանի 'ի բերանէ սուսերաց մերոց, եւ եթէ գուցէ կենդանի ըմբռնեսցի իշխան քաղաքին եւ կամ բերդապանն յայնմիկ, իսկոյն նախատանաք կախիցէ 'ի փայտէ 'ի գլուխն դռան քաղաքին կամ բերդին, եւ զամենայն զոր ինչ 'ի քաղաքն եւ կամ բերդն որ գտցի աւար լինիցի զինուորաց մերոց, եւ յառաջ քան զբամբիռն ներողութեան հնչիլն՝ զամենայն զոր ինչ խայտառակութիւն 'ի զինուորաց մերոց 'ի վերայ թշնամեաց բնակողաց անտի մի' մտցի 'ի դատաստան:

ԳԼՈՒԽ 492.

'Ի մէնջ շրջապատեալ որում քաղաքի եւ բերդի ընթանողք առանց հրամանի Տեառն շրջապատողաց եթէ գտցի նա' գող է եւ աւազակ, պարտ է նմայ որոնել զամենայն զոր ինչ պատճառէ մտանելն նմայ մէնջ շրջապատութեան, ընդունի դատաստան ըստ Օրինաց:

ԳԼՈՒԽ 493.

'Ի ժամանակի պատերազմի կերակուր, ոսկի, երծաթ, գործիք պատերազմի 'ի տանէ եւ 'ի յԵրկրէ Հայոց առ տուն եւ յերկիր, եւ կամ բանակս թշնամեաց մտանելն արգելեալ իցէ, եւ ով ոք որ գաղտնի մուծանէ, եթէ ըմբռնեսի բանն աւար հարեսցի եւ այրն մտցէ բանտ եւ դատաստան ընդունեսցի ըստ արժանի գործոց իւրոյ:

ԳԼՈՒԽ 494.

Ով ոք զինուոր 'ի կարգէ զինուորութեան 'ի աստիճանէ տասնապետութենէ մինչեւ ցնախարարութեան եթէ ընդունեսցի նախատինս 'ի յումեքէ 'ի վերայ իւր եւ մնասցէ առանց վրէժխնդրութեան, իսկոյն անկցի 'ի կարգէ, զի ոչ կարաց պահել պատիւ կարգ աստիճանի ազատութեան իւրոյ, բայց 'ի խելագար յառնէ:

ԳԼՈՒԽ 495.

Բնականապէս 'ի մէջ բնութեան մարդոյ ծնեալ ունիմք զի բարկանայ ամենայն բնութիւնք մարդոյ, իւրաքանչիւր անձամբ բարկացեալ ընդ դէմ ընդդիմակաց իւրոց եթէ արու եւ եթէ էգ, ոչ ոք խառնեսցի ընդ մէջ նոցայ, եթէ երկու բարկացեալք դաշնադրեսցեն ընդ միմեանց եթէ սրով եթէ փայտիւ կարող են արձակել 'ի վերայ միմեանց եւ խնդրել վրէժ մինչեւ ցը մերձ 'ի մահ, 'ի այսպիսի յանձանց վիրաւորեալն եւ ոսկերս փշրեցեալն ակն եւ ատամն աւերեալն մի' լինիցի տեղի զանգատելոյ 'ի դատաստանի, եւ ո'չ ոք դատաւոր վրէժխնդիր մի' լինիցի, վասն զի ըստ կամաւ եւ յօժարութեամբն իւր 'ի վերայ իւր յանձն էառ, այլ եթէ գտցի մեռեալ՝ սպանողն նորայ մահու մեռցի:

ԳԼՈՒԽ 496.

Մահապարտն եթէ գտցի էկլէզիաստիկ աստիճանաւորէ, մինչեւ վարդապետ, յանձնեսցեն եպիսկոպոսին իւրոյ, եւ եպիսկոպոսն յանձնեսցէ Հայրապետին Տանն Հայոց, վճռաւն մահու նորա, եւ նոքա աներեւոյթ արասցեն մահապարտն, ըստ սովորութեան էկլէզիաստիկաց, յետ կատարելոյ այսպիսի յանձնարարութեան, եթէ մահապարտն այն կրկին երեւեսցի 'ի յերեսս երկրի 'ի տեսակս որ ոք առն պարտ է ըմբռնել նմա եւ մուծանել առ ատենի դատաւորի՝ հաստատելով առն այն մահապարտ յանձնեցեալ Տեառն իւրոյ վասն մեռելոց եւ եկաց իսկոյն մեռցի:

ԳԼՈՒԽ 497.

Եթէ գուցէ յետ լնանելոյ թիւ երից ամաց փոխանորդաց յաշխարհաց, ով ոք 'ի յորում աշխարհէ եւ փոխանակ որում գաւառէ որ իցէ որ ո'չ նորոգեսցի փոխանորդս սահմանեալ ժամանակի վասն որ ոք պատճառի որ իցէ, առաքօղք նոյն փոխանորդին պարտաւոր լինին ընդունել փոխանորդն իւրեանց կրկին երիս ամս տեղի փոխանորդութեան իւրեանց, եւ հատուցանել տանն ողորմութեան մին հազար դահեկան երծաթ տուգանս վասն յանդգնելոյ յօրինաց:

ԳԼՈՒԽ 498.

'Ի պատճառէ տարբերութեան ժամանակի եթէ 'ի մէնջ քաղաքաց, եւ կամ 'ի մէնջ բանակաց կարի ներել կամ ընդունիլ, կամ յաւելացուցանելոյ եւ պակասացուցանելոյ մաքսս կերակրոց զոր ինչ բարեգոյն 'ի խոստմանց ժամանակի:

ԳԼՈՒԽ 499.

Ամենայն վրան կանգնեցուցանելն 'ի բանակի մերոյ հարկաւոր է ըստ կարգադրութեան երկրաչափ իշխանին մերոյ եւ 'ի խաղալն մի տեղէ առ միւս յօրինեսցի նոյն, եւ ամենայն փողոց բանակի տացի անուն իւր եւ նշան զի դիւրին ել եւ մուտ եւ ծանօթութիւն բնակութեան լիցի:

ԳԼՈՒԽ 500.

Ամենայն մարդ ազատապէս կարէ խորհիլ, խօսել եւ գործել զամենայն զոր ինչ բարի եւ չար ըստ կամաց եւ հաճոյից իւրոց, ընդունելով 'ի վերայ իւր վարձ խորհրդեան եւ բանից բերանոյ եւ գործոց ձեռաց իւրոց թէ բարոյ եւ թէ չարի, զամենայն զոր ինչ հատուցում, պատիւ եւ կամ պատիժ 'ի դատաստանէ մերմէ պարտ է լինիլ 'ի բերմանէ կատարման գործոց բարեաց եւ չարեաց ըստ արժանաւորութեան բարոյ եւ չարին իւրաքանչիւր անձանց:

ԳԼՈՒԽ 501.

Որովհետեւ իշխանք աշխարհին մերոյ լինելոց է ընտրեցեալ 'ի ժողովրդենէ գաւառաց աշխարհէն մերմէ, որպէս գլուխ 14. յօրէնս, եւ իւրաքանչ ոք ունին ռոճիկս տարեկանս 'ի առաքօղէ իւրմէ իբրեւ 3000 դահեկան, վասնորոյ 'ի գլուխ 278, յօրէնս նշանաւորեալ ռոճիկս պաշտօնատարաց մերոց, ով ոք որ լինիցի յաւել արժանի քան զ3000 դահեկան, զոր ինչ յաւելորդն 'ի Տանէն Հայոց հատուցանի, եւ ումեք

արժանաւորութիւնն պաշտօնի պակասագոյն ռոճիկ քան թէ 3000 դահեկանս, զամենայն զոր ինչ յաւելի ստացեալն յետս դարձուսցէ առ առաքօղսն իւր:

ԳԼՈՒԽ 502.

Ով ոք որ գտցէ շնորհս լուսածել 'ի յերեսս յԵրկրին մերոյ Հայաստանեաց, ղռմզի որթն վասն ներկ առնելոյ, եւ բուսուցանել լեղակ, գործել բէգռաս, մահուդ ըստ կերպին եւ նմանութեամբ եւրոպացւոց, եւ գտանել անտառ այսինքն արմատ անուանեալն ջնսան, միմիայն մի անգամ գտցէ շնորհս 'ի Տանէն Հայոց այսպէս:

Ջանսան գտանողն դահեկան երծաթ. 10.000.

Ղռմզի որթն պատրաստողն 10.000.

Լեղակ բուսուցանողն եւ պատրաստողն 10.000.

Լօնդրա պատրաստողն 10.000.

ԳԼՈՒԽ 503.

Ով ոք ընդ ումեքէ որ զանգատեսցէ վասն քրէական մեղաւորի, եթէ սպանողի, եթէ վիրաւորողի, եթէ հարկանողի եւ եթէ նախատողի 'ի դրունս ամսէն դատաւորի, դատաւորն հրաւիրեսցի մեղաւորին եւ յայտնեսցի նմա զանգատն զանգատողին, եւ եթէ մեղաւորն սպանեալ ումեք իսկոյն դիցէ 'ի բանտ, եւ եթէ վիրաւորեալ, եւ կամ հարկանեալ, եւ կամ նախատեալ, առցէ մեղաւորէ երաշխաւոր անձին իւրոյ ըստ օրինօք, զի մեղաւորն պատրաստ լինիցի 'ի ատենի դատաւորաց 'ի ժամանակի քրէական մեղաց դատողութեան եւ թողցէ նմայ, եւ զանգատողն պատրաստեսցի զանգատն իւր Օրինաւոր սահմանաւ եւ պատրաստեսցի վկայքն իւր, զի հաստատեսցի զանգատն իւր առաջի ատենի դատաւորաց, այլ եթէ մեղաւորն ոչ տացի երաշխաւոր անձի իւրոյ, մտցէ 'ի բանտ ծախիւք զանգատօղին մինչեւ Օրն ելանելոյ վճիռ դատաստանի 'ի վերայ զանգատին իւրոյ:

ԳԼՈՒԽ 504.

Քրէական մեղաւորն ոչ ոք տեղի մի' դատեսցի, բայց 'ի քաղաքի որում գտցի իշխան եւ դատաւոր խորհրդակցօք եւ ատենաբան դպրիւք:

ԳԼՈՒԽ 505.

Հնգետասան աւուր յառաջ քան զդատողութեան քրէական մեղաւորի, եթէ մեղաւորն իցէ սպանանող հարցցի 'ի նմանէ ով ոք 'ի ազգէ իւրմէ ցանկայ զի դատեսցի զինքն, եւ մեղաւորն ունի արձակութիւն ընտրել երկոտասան այր 'ի ազգէ իւրմէ, կամ որ ոք այլ ազգէ, բայց 'ի մերձաւոր ազգականէ, եւ 'ի դռանէ դատաստանի ելցէ կոչումն 'ի նոյն երկոտասան անձանց, զի լինիցի պատրաստ Օրն որում նշանաւորեալ վասն դատողութեան:

ԳԼՈՒԽ 506.

'Ի դռանէ դատաստանէ ընտրեսցի իննսուն եւ չորս այր բարեգործ եւ համբաւոր, 70 'ի նոցանէ վասն որոնելոյ մաքրութիւն եւ կամ աղտեղութիւն մեղաւորի, եւ 24 'ի նոցանէ վասն դատելոյ, այլ 12 'ի 24 առնէ պիտոյ է լինիլ 'ի ընտրողութենէ մեղաւորի, որում լինիցի 'ի նմանէ զանգատեցեալ:

ԳԼՈՒԽ 507.

Օրն դատողութեան քրէական մեղաւորի ելցէ իշխան խորհրդակցօք հանդերձ գունտ մի զօրօք երկուս դրօշակօք եւ մտցէ 'ի յապարանն դատաստանի, եւ բազմեսցի վերին աստիճան, եւ 'ի ներքոյ աստիճանի նստցի դատաւոր քաղաքին ընդ խորհրդակցօք, եւ 'ի վայր աստիճանի դպիրք եւ ատենաբանք, եւ 'ի ատենի սոցա 94 նշանաւոր անձինքն, եթէ որոնողք, եւ եթէ դատողք: Նախ երդմնեցուցանեն 70 առն որոնողաց, եւ ապա 24 առն դատողաց 'ի վերայ սրբոյ Աւետարանի զի նոքա

խոստովան լինին առաջի ատենի իշխանի եւ դատաւորաց, այն որ ըստ օրինաց հայոց, եւ 'ի բնական բնութեան եւ բանական զօրութենէ հոգւոյ մարդոյ զկամս եւ զխորհուրդս եւ վճիռ իւրեանց տալոյ աննախանձաբար եւ անկողմնակալ վասն մեղուցելոյն, յետ երդմնեցուցանելոյ 70 որոնողքն 2 ատենաբանիւ բոլոր գրեցեալ անցք մեղաւորի մուծանեն 'ի խուց մի եւ փակեն դրունս եւ դնեն պահակ 'ի դռան, զի մի ելցէ եւ մտցէ ոք բայց ջուր վասն ըմպելոյ, եւ թոյլ տալ ելանելոյ վասն բնական հարկաւորութեան արտաքս ելանելոյ, եւ ընդ ելանողն ելցէ երկուս պահակս, զի ելանողն մի' խօսեսցի ընդ ումեք, մինչ կատարեսցի հարկաւորութիւնն իւր եւ կրկին մտցէ 'ի խուց, որում փակեալ 70, որոնողն կալով մնասցեն փակեալ դրամբ մինչեւ համահաւասարեսցի կամս եօթանասնից 'ի վիճաբանութենէ, այսինքն երկու տեսակս, կամ մեղաւորն յստակ եւ կամ աղտեղի եւ արժանի դատելոյ մի 'ի երկուց տեսակէ, որն որ հաստատեսցի 'ի միտ որոնողաց գրեսցեն 'ի վերայ թղթի եւ բոլոր 70 որոնողքն ձեռնադրեսցեն եւ ելցեն 'ի խցէ, առաջնորդն նոցայ ելցէ հանդերձ ձեռնադրեալ թղթաւ առաջի ատենի իշխանի եւ դատաւորաց բարձրաձայն ասիցէ... Յստակ եւ եթէ աղտեղի... Աղտեղի եթէ վճիռն որոնողաց ելցէ յստակ իսկոյն ազատեսցի մեղաւորն 'ի բանտէ առանց ո'չ մի խօսք յումեքէ, այլ եթէ վճիռն որոնողաց աղտեղի, իսկոյն մեղաւորն բերցեն 'ի ատեն իշխանաց եւ դատաւորաց, ընթեռնուցուն առաջի մեղաւորի զանգատն զանգատողին, եւ վկայութիւնք վկայից, եւ ատենաբանն հարց եւ փորձ արասցէ ընդ մեղաւորն ամենայն պարագայիւք պատճառն եւ կերպն յանցանաց, եւ 24 դատողքն միաբան լուիցեն ամենայն բան, եթէ ատենաբանի, եթէ 'ի բերանէ մեղաւորի, յետ կատարելոյ ամենայն խօսից, երիս անգամ ատենաբանն հարցանիցէ մեղաւորին եթէ ունի դեռ եւս ասելոյ, եթէ մեղաւորն ասիցէ ո'չ, յայնժամ ամենայն գրեանք եթէ զանգատողի, թէ վկայից վկայականի, եթէ մեղաւորի պատասխանք հանդերձ 24 դատող անձամբ մուծանեն 'ի սենեակ մի', եւ փակեն դրունս եւ դիցեն պահակ, որպէս ասացի 'ի վեր, վասն որոնողաց, զի կալով մնասցեն 24 դատողքն փակեալ 'ի խցին մինչեւ միաբանեսցի կամս իւրեանց, տայցեն վճիռ կամ մահու, կամ պատժելոյ, կամ տուգանաց, կամ փրկութեանց, եւ գրեսցեն վճիռն մեղաւորին, եւ 24 դատողքն ձեռնադրեսցեն եւ 'ի ձեռօքն առաջնորդի իւրեանց հանիցեն 'ի խցէ եւ ընծայեսցեն առ 'ի սպաս իշխանի եւ դատաւորաց, եւ ատենաբանն ընթեռնուցու բարձրաձայն, յետ ընթեռնլոյ նոյն վճռոյ 'ի յոտս կացցէ իշխանն եւ բերանօք իւրօք հրամայեսցէ այսինքն.

Եթէ արդարացեալ թոյլ տուք զրպարտեցեալդ երթիցէ 'ի խաղաղութեամբ:

Եթէ մահապարտ բառցէք 'ի միջէ աղտն աշխարհի:

Կամ հրացեալ երկաթիւ կիզեցէք ձեռն դորայ:

Կամ 300 դամչի գան հարէք արձակեցէք դմայ:

Կամ 500 դահեկան երծաթ առէք 'ի դմանէ, եւ տուք 'ի տունս աղքատաց:

Կամ զամենայն աւուրս կենաց իւրոյ կացցէ 'ի բանտ մինչեւ 'ի մահ իւր:

Յետ այսպիսի կատարելոյ եւ ելանելոյ վճռոյ, յայնժամ մեղաւորն կապանօք յանձնեսցի 'ի ձեռն զօրագլխի եւ դահճի, զի յետ տասն եւ հինգ աւուր վճռոյ կատարեսցի վճիռ մեղաւորին:

Օրինակ երդմնելոյ 94 արանց:

ԳԼՈՒԽ 508.

Երդմնողն առաջի ատենի դատաւորաց դնելով աջու ձեռն 'ի վերայ Սրբոյ աւետարանի, ձախու ձեռն 'ի վերայ կրծից, եւ խոստովան լինիցի այսինքն խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ մարդկան եւ 'ի ատենի իշխանի (այս անուն), զի պահեսցեմ սիրտ եւ միտք եւ կարծիքն իմ անարատ աննախանձաբար եւ որոնիցեմ անկողմնակալութեամբ եթէ երդմնողն դատաւոր եւ դատողքն ասիցեն դատիցեմ առանց կողմնակալութեամբ, եւ եթէ երկոտասան դատողն որ ընտրեցեալ 'ի մեղաւորէ լինիցի ջհուտ, կամ մահմետական, կամ հեթանոս, ջհուտն երդմնեսցի 'ի վերայ հին կտակարանի եւ մահմետականն 'ի վերայ ղոռանի, եւ հեթանոսն 'ի վերայ կռքի իւրոյ:

ԳԼՈՒԽ 509.

Որպէս քրէական մեղաւորն դատելոյ իւրաքանչ 'ի մի տարւոյ չորս ժամանակաւ. այսպէս եթէ քրէական մեղաւորն ըմբռնեսցի յառաջ քան զ15 աւուր դատելոյ նմայ, պարտ է մնալ 'ի բանտի երիս ամիս մինչեւ միւս ժամանակն, զի զանգատողն ունիցի ժամանակ յաւելի քան թէ հնգետասան աւուր պատրաստելոյ զանգատ եւ վկայքս իւր:

ԳԼՈՒԽ 510.

'Ի պատճառն երկայն ժամանակաւ Աշխարհն Հայոց ամայի մնացեալ 'ի որ ոք ծայրագոյն իշխանացէ սեպհական, ազգէ եւ աւանդութենէ հայոց, եւ պաշտօն թէ նախարարութեան, թէ իշխանութեան, յատկապէս զօրապետութեան հարկաւոր է լինիլ այր ուշիմ եւ գիտուն 'ի արհեստ կառավարութեան, վասն որոյ եթէ գուցէ զի 'ի միջի աշխարհէն ընտրեցեալ փոխանորդաց մի' գտցի բաւական արժանաւոր անձինք ազգէն հայոց եւ աւանդութեամբն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ որ արժանաւորութիւն ունենան 'ի պաշտօնի զօրապետութեան, յայնժամ հարկիւ ընդունել պիտոյ է ազգն հայոց, ունիլ զօրագլուխս, ճարտարապետս, երկրաչափս, թօփխանի գլխաւորս 'ի ազգէն վրաց, եթէ չգտանի 'ի ազգէն ռուստաց, եթէ չգտանի 'ի ազգէն նէմցայից, այսինքն ալմանէ երիս ամաւ ժամանակաւ, նամակաւ Տանուտերաց Հայոց, երդմնեցութեամբ, որպէս օրէն է Հայոց:

Օրինակ նամակի քաղաքապետութեան:

ԳԼՈՒԽ 511.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան 'ի աշխարհէն Փայտակարանոյ, եւ թուղթ փոխանորդութեան նոցա ընդ քեզ Վրթանայ Գետաշէնեցւոյդ եւ երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց Հայոց՝ հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ դու 'ի վերայ Տանն Հայոց, վասն որոյ տուաք քեզ նամակ պաշտօնի իշխանական Քաղաքապետութեան, զի դու պատուելի Վրթանէսդ իշխեսցես 'ի վերայ մայրաքաղաքին յԵրեւանու 'ի Արարատեան աշխարհ ժամանակաւ երիս ամաւ, տուաք իշխանութիւն քեզ ընտրել 'ի միջէ աշխարհէն Արարատեան այրս Օրէնագէտս երիս եւ տալ նոցայ պաշտօն խորհրդակցութեան քեզ երիս ամ ժամանակաւ, զի ընդ քեւ նստցեն աթոռ կառավարութեան, եւ տուաք իշխանութիւն քեզ զի տացես իշխանութիւն գաւառապետութեան, քեօֆխայութեան 'ի բոլոր վիճակին յԵրեւանու, պատուիրեմք քեզ զի քաղցրութեամբ կթեսցես պտուղ աշխարհին արարատեան ըստ Օրինօքն Հայոց, եթէ հարկ եթէ մաքս, եթէ հաս, եւ եթէ բաժին, եւ մուծանես 'ի գանձարանն եւ շտեմարանն Տանն Հայոց, 'ի վիճակի յԵրեւանու եւ պատուիրեմք քեզ զի 'ի գանձարանէ վիճակէ յԵրեւանու հատուցանես ամսէ ամիս զօրագլուխ իշխանին որում իշխէ 'ի վերայ զօրաց բնակելոց 'ի յԵրեւան, ռոճիկ զինուորաց եւ զօրագլխաց մերոց հանդերձ ամենայն հարկաւորութեանց բերդին յԵրեւանու, եւ 'ի զօրագլխէ եւ բերդապանէ մերմէ ստանայցես ռսիդ եւ նոյն ռսիդ 'ի ատենի տանուտերաց համարեսցի իբրեւ յստակ դրամ, եւ տուաք իշխանութիւն քեզ, զի պահել 'ի մէջ ամենայն գաւառաց սահմանին յԵրեւանու վարպետս զի ուսուցցէ ուստերաց եւ դստերաց ընթերցմունս եւ գրել հայոց տառիւ եւ բառիւ, եւ վարպետս զի ուսուցցէ ուստերաց արհեստն զինուորութեան, եւ պատուիրեմք քեզ զի լիքն պահեսցես շտեմարանն մեր անյապաղ հաց երկու ամաց վասն բոլոր բնակչաց 'ի սահմանն յԵրեւանու 'ի ամուրս մեր, լեր պատրաստ 'ի կառավարութիւնն քոյ, եւ հրամայեցաք քեզ զի հնազանդաբար յանձն առնուցուս ընդդէմ ամենեցւոյն մտանել 'ի դատաստան, եւ ըստ օրինօք վճռաց հնազանդիլ աննախանձաբար, եւ տուաք իշխանութիւն քեզ ստանալ պահպանութիւն զօրաց մերոց որ 'ի վիճակի յԵրեւանու, եւ պատուիրեմք քեզ զի 'ի չորս եղանակի տարւոյն ընծայեսցես 'ի դրունս բարեվարք Տանն Հայոց համարն եկամտից եւ ծախից եւ ծննդոց 'ի բնութենէ մարդոյ, եւ ննջեցելոց, եւ համարն բոլոր տարեկան մի անգամ տուաք իշխանութիւն քեզ աքսորել 'ի վիճակէն յԵրեւանու վատթարս, աղմկողս չար նշաւակս, զի ժողովուրդք մեր կալով մնասցեն ընդ ամենայն առաքինութեամբ զարդարեալ, տուաք իշխանութիւն քեզ զի խորհրդակցօք ընդունելութեամբ վաճառել երկիր առ սեպհական ազգն Հայոց վասն շինութեան թէ բնակութեան թէ այգոց եւ թէ վարելոց, եւ տալ նոցայ թուղթ հաստատութեան այս մտածութեամբ զի իւրաքանչ գնողն պարտաւոր լինիցի հատուցանել

հարկ, մաքս, հաս եւ բաժին 'ի Տունն Հայոց ըստ օրինօք, եւ պատուիրեմք քեզ զի ամենայն կառավարութիւնն քոյ պահեսցես ըստ նմանութեան եւ համեմատութեան Օրինացն Հայոց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց յայսմ աւուր 'ի յամսեանն յունվարի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք որ ձեռնադրեցին, կնքեցին եւ յանձնեցին.

Սեղբեստրոս Արք Եպիսկոպոս երկրորդ Տանուտէր.

Վրթանէս Կաղնոյ երրորդ Տանուտէր.

Միքայէլ իշխան.

Մանուել Գծագիր.

Գալստան Կաղզվանու չորրորդ Տանուտէր.

Օրինակ նամակի բերդապան իշխանութեան:

ԳԼՈՒԽ 512.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան 'ի գաւառէն Գուգարացւոց եւ թուղթ փոխանորդութեան նոցա ընդ քեզ տեառն Բաղրամայ Մարաշկերտու եւ երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց Հայոց հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ դու 'ի վերայ Տանն Հայոց, վասնորոյ տուաք նամակ պաշտօնի բերդապանութեան քեզ տեառն Բաղրամիտ երիս ամաւ ժամանակաւ, զի դու Բաղրամ Մարաշկերտուդ բնակեսցես 'ի ամուրն Յերեւանու եւ ըստ օրինօք կառավարեսցես թէ ամրոցն եւ թէ 'ի միջի նորա բնակեալ զինուորքն եւ ամենայն կերպում զէնն եւ շտեմարանքն թէ կերակրի եւ թէ վառհօղի եւ ամենայն հարկաւորութեան, հնազանդ Տանն Հայոց, եւ 'ի մէնջ մերմէ նամակօք կարգեցեալ քաղաքապետին Յերեւանու, եւ պատուիրեմք քեզ զի զամենայն զոր ինչ հարկաւորութիւն թէ ամրափակութեան բերդին, թէ հարկաւորութեան պաշարի, եւ թէ ռոճիկ զինուորաց 'ի քաղաքապետէ Յերեւանու ստանայցես, եւ փոխանակ նորայ ձեռնադրեսցես ռսիդ եւ ռսիդն քոյ 'ի ատենի Տանն Հայոց համարեսցի իբրեւ յստակ դրամ. գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ եւ բարեվարք Տանն Հայոց, այսմ աւուր յունվարի ամսոյ մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773:

Վկայեմք որ ձեռնադրեցին, կնքեցին եւ յանձնեցին.

Միքայէլ իշխան.

Մանուել Գծագիր.

Սեղբեստրոս Արք Եպիսկոպոս երկրորդ Տանուտէր.

Վրթանէս Կաղնու երրորդ Տանուտէր.

Գալստան Կաղզվանու չորրորդ Տանուտէր.

ԳԼՈՒԽ 513.

Ամենայն ամրոց բերդօրեայք պարտ է ունիլ ամենայն ժամ պահակս երկուս վառեալ զինուք իւրաքանչ 'ի դրունս ամրոցաց եւ 24 զինուոր մի զօրագլուխ պատրաստ ներս դռան եւ սոքայ փոխարկեսցի ամենայն երկու ժամ մի անգամ թէ ցայգ եւ թէ ցերեկ:

ԳԼՈՒԽ 514.

Ոչ ոք օտարական ելցէ եւ ոչ մտանիցէ 'ի ամրոց եւ բերդ մինչեւ մի' ունիցի հրաման իշխանցէ թէ ամրոցի եւ եթէ բերդի:

ԳԼՈՒԽ 515.

Երեկոյեան 9 ժամին փակեսցի դրունն ամրոցաց եւ բերդօրէից, միմիայն մնասցէ բաց դռնիկն որում հետեւակ միայն ունիցի ելեւմուտս իւրեանց մինչեւ 'ի մետասան ժամ գիշերոյ, յետ մետասան ժամն

հնչելոյ նաեւս փակեսցի դռնիկն եւ երկուս պահակս ելցեն 'ի գլուխ դռան տքնելով զգուշութեամբ մինչեւ 5 ժամ առաւօտն, յետ հնչմանէ 5 ժամուն հարիւրապետ մի ստանայցէ բանալիքն դրան ամրոցի 'ի բերդապանէ եւ բացցէ դրունն զի կալով մնասցէ բաց մինչեւ կրկին 'ի 9 ժամ երեկուն:

ԳԼՈՒԽ 516.

Փակիլն դռան ամրոցաց պարտ է լինիլ 'ի ձեռամբ հարիւրապետի միոյ, բանալիքն նորին ձեռօք յանձնեսցի 'ի ձեռս բերդապանին, նմանապէս առաւօտեան բանալն:

ԳԼՈՒԽ 517.

Ամենայն պահակ եթէ 'ի դրունս ամրոցաց, եթէ 'ի վառհօդի եթէ 'ի դրունս իշխանաց, եթէ 'ի դրունս զանձի եւ պաշարաց, եւ եթէ 'ի դրունս բանտարկելոց եւ որում տեցի որ իցէ մի' տքնեսցի յաւելի քան թէ 2 ժամ ժամանակ, զի ամենայն պահակ միջոց 2 ժամ ժամանակի փոխեսցի հանելով հինն մուծանելով նորն, զի տքնութիւնն զինուորին մերոյ 'ի միջոց 24 ժամ ժամանակի մի' լինիցի յաւելի քան թէ 8 ժամ, այսինքն չորս անգամ, ֆի մին անգամն 2 ժամ ժամանակաւ մնացորդ ժամանակն թէպէտ առ 'ի հանգիստ, այլ պատրաստ 'ի ժամագիր տեղի զօրագլխի իւրոյ:

ԳԼՈՒԽ 518.

Ամենայն մայրաքաղաք հարկաւոր է ունիլ չորս ծայրագոյն իշխանս, մի 'ի նոցանէ քաղաքապետութեան ընդ երիս խորհրդակցօք վասն կառավարելոյ քաղաքին եւ ընդ իւր գաւառաց գեղօրէից ստանօղ ամենայն եկամտից եւ հատուցանող ամենայն ծախից, եթէ զինուորական եւ եթէ սպասաւորական, եթէ շինութեան եւ եթէ պատրաստութեան պաշարաց եւ այլն, եւ մինն 'ի նոցանէ բերդապան, եւ մի 'ի նոցանէ զօրագլուխ կառավարիչ զօրաց, որում բնակեալ 'ի նոյն քաղաքի, եւ մի 'ի նոցանէ մայր դատաւոր, զի ընդ խորհրդակցօք իւրօք դատիցէ ամենայն բնութիւն մարդոյ որում բնակի 'ի Վիճակի նոյնոյ քաղաքի եւ վճռեսցէ վարձ իւրաքանչիւր գործոց ձեռաց, ըստ Օրինօք Տանն Հայոց ըստ նմանութիւն իւրաքանչիւր Օրինակաց:

Փորձառութիւն եկամտից եւ տարեկան ծախից Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 519.

Զամենայն զոր ինչ պտուղ 'ի բուսոց, տնկոց եւ 'ի սողնոց, թռչնոց եւ անասնոց, կերակրոց որ կերակրէ եւ յազեցուցանէ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս Երկրին Հայոց, համարեսցուք կերակրեալք անձինք արու եւ էգ 'ի ծերոց մինչեւ 'ի մանկունս, միմիայն անձինք եթէ գտցի 24 միլիոն, որում պատասխանէ 2400 բիւր անձինք, կերակուրս սոցայ թէ յաճախ եւ հարստութեամբ եւ թէ նուազ եւ աղքատութեամբ՝ մի 'ի վերայ միւսոյն ըստ իւրաքանչ անձանց տարեկան կերակրոց զին համարեցաք ամենայն մի անձին կերակուրս 'ի միոյ ամաց 40 դահեկան երծաթ, որ 'ի 24 միլիոն անձանց կերակուրք արժէ եւ բովանդակի 960 միլիոն դահեկան երծաթի, որում համապատասխանէ 960,000,000 լաք դահեկան երծաթ, սոցայ ամենայն ազգ կերակրոց տասանորդս մտանելոց է 'ի Գանձարանս Հայոց, որում բովանդակի տարեկան եկամուտ.

Եկամուտ կերակրոց միայն դահեկան երծաթ	960,000,000
Նոյն գունակ ծախ զգեստի 24 միլիոն անձանց, եթէ հարուստից եւ եթէ աղքատաց համարեցաք իւրաքանչիւր անձանց 10 դահեկան երծաթ, որում բովանդակի 240 միլիոն եւ 24000 բիւր մաքս եւ հարկս, սորայ 'ի հարիւրին հինգ մտանելոց է գանձարանն բովանդակի	12,000,000

Նոյն գունակ գին աղից իւրաքանչ անձանց մին դահեկանի 'ի մի տարւոջ 'ի վերայ 24 միլիոն անձանց դահեկան երծաթովն	24,000,000
Տարեկան եկամուտն բովանդակիլ դահեկան երծաթի	132,000,000

Մին հազար երեք հարիւր եւ 20 լաք, կամ 13 քրօր, 20 լաք, թող զայլ մասնաւոր եկամտից որ ոչ յիշեմք աստի, եւ 'ի վեր յիշեցեալ 13 քրօր, 20 լաք դահեկանն համապատասխանի 66 հարիւր հազար թուման պարսց 'ի բարբառս հնդկաց 13 քրօր եւ 20 լաք ըռուփի, եւ 'ի եւրոպացւոց փոքր աւելի կամ պակաս 62 միլիոն սպանիացւոց մառչիլ եւ 'ի օսմանցւոց երկու հարիւր վաթսուն հազար քիսայ, եւ ըստ հայոց տասն երեք հազար երեք հարիւր բիւր դահեկան երծաթի, թէպէտ 'ի վեր յիշեցեալ քանակութիւնն յոյժ ծանր երեւի կթել 'ի բնակչաց Աշխարհէն Հայոց, այլ ամենայն զոր ինչ անգիտութեամբ անհնարին, ուրեմն արհեստիւ դառնայ դիւրին եւ հնարաւոր, այս բովանդակն իւրաքանչիւր հատուցանողաց ո'չ բերէ ծանրութիւն իմն նոր, 'ի պատճառս վաղնջոց սովորութեամբ միշտ հատուցեալ այժմ եւս հատուցանեն, եւ 'ի բնական բնութեամբ ամենայն մարդ ուտէ եւ ըմպէ եւ զգենու, եւ ո'չ երբէք կերակուր եւ ըմպելիք 'ի նախնում ո'չ զերծաւ հատուցանելոյ հարկս տասանորդի եւ զգեստն հատուցանելոյ մաքսս հարիւրին հինգ թող զայսմ ժամանակիս որ գրէ թէ բոլոր Աշխարհն Հայոց 'ի լծորդութեան ծառայութեան այլ ազգաց հատուցանէ հարկս բուսոց, տնկոց այսինքն կերակրոց երիս 'ի մի տասանց, եւ ոչ պահպանեցեալ տիրաբար զի մնացորդս մնասցէ ժառանգութիւն աշխատօղաց եթէ ոչ՝ մնացորդն եւս զող եւ աւազակք յափշտակեն, եւ մեք ո'չ հարկադրեմք յաւելի քան թէ տասանորդս, եւ տիրապէս պահպանութեամբ անհոգս ամենայն կասկածանաց առնեմք, նա'եւս երաշխաւոր լինեմք հատուցանելոյ կողոպտեալս, գերեալս եւ այլն:

'Ի սմայ գտանի միայնակ գին աղի իբր հարկ 'ի վերայ ժողովրդեան, սա' եւս ունի բնականապէս պատճառս իւր, նախ ժողովուրդն համեսցի աղիւ Տեառնէ եւ տանէ իւրեանց զի բառնցի նախատինք հարկապահանջութեան, զի ոչ ոք գտցի գրաւ հատուցանօղ, եւ ո'չ ոք պահանջօղ, նա' եւս 24 միլիոն հոգիք ստանալով ազատութիւն անձանց, արձակութիւն ընդ ամենայն գործս հաստատութեամբ եւ տէր լինելով 'ի վերայ ամենայն ընչից իւրեանց՝ իբր թագաւոր իւրաքանչիւր անձինք ընկալնալով այսքան բարութիւն 'ի տանէ եւ 'ի պաշտօնատարացէ իւրեանց իւրաքանչիւրօք 'ի տարեկան հատուցանելով միմիայն մի դահեկան երծաթ, իբր ծաղիկ մի շնորհակալութեան, եւ գին աղից ծախելոց իւրոյ մի' լինիցի ծանր, զի 'ի վերայ իւրաքանչիւր անձանց համարի ֆի չորս Օրէն մի դահեկան պղնձոյ, այլ եւս կարի կարգադրել 'ի վերայ հարստից եւ աղքատաց ըստ կարողութեանց հատուցանօղաց:

Ակնարկութիւն 'ի վերայ տարեկան եկամտից եւ ծախուց

Տանն Հայոց:

ԳԼՈՒԽ 520.

'Ի 519 երորդ Օրէնս մեր եկամուտն Տանն Հայոց բովանդակի դահեկան երծաթ	132,000,000
'Ի 278 երորդ Օրէնս գումար տարեկան ծախուց Տանն Հայոց բովանդակի երծաթ	12,370,020
Զոր հանեալ 'ի եկամտէ մնացորդ տասն եւ մին քրօր իննսուն եւ վեց լաք քսան եւ ինն հազար ինն հարիւր ութսուն դահեկան երծաթն մնալոյ 'ի զանձարանի Տանն Հայոց վասն որ ոք հարկաւորութեան, ապագայ ժամանակի	119,629,980

ԳԼՈՒԽ 521.

Բոլոր ’ի վեր շարեցեալ եթէ քարօզ եթէ 520 գլուխ կարգադրութիւնս Օրինաց, է՝ միմիայն նշաւակ ազդ առնելոյ, այլ եթէ ’ի վեր բոլոր գրեցեալքն, եւ կամ ապա զամենայն զոր ինչ հատորք ’ի ումեքէ շարեցեալ՝ մի՝ ունիցի արժանաւորութիւն բայց ’ի յայնմանէ հատորաց որում հաճեսցի ’ի կամս բոլոր տանուտերաց եւ Հայրապետին եւ նախարարին եւ իշխանաց եւ զաւառապետաց Հայոց, եւ ձեռնադրեսցի ’ի նոցանէ, ապա՝ զտանիցի շնորհս արժանաւորութեան: